

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Միգրացիայի լուսաբանման ձեռնարկ
լրագրողների համար

Հեղինակ՝ Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն, Վիեննա, Ավստրիա

Պատվիրատու և ֆինանսավորող՝ Գերմանիայի Դաշնային արտաքին գործերի նախարարություն

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն, դեկտեմբեր 2020 թ.

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ՄԶՄԿ)
Gonzagasse 1
A-1010 Vienna
Austria
www.icmpd.com

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն

Վիեննա, Ավստրիա

Բոլոր իրավունքները պահպանված են: Այս հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պատճենահանվել կամ տարածվել որևէ ձևով կամ էլեկտրոնային, կամ մեխանիկական, այդ թվում՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկատվության պահպանման կամ տարածման որևէ համակարգի միջոցով, առանց հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվության:

Այս հրատարակությունը պատրաստվել է Գերմանիայի Դաշնային արտաքին գործերի նախարարության օժանդակությամբ: Այս հրատարակության բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՄԶՄԿ-ը, և այն չի արտահայտում Գերմանիայի Դաշնային արտաքին գործերի նախարարության կարծիքը:

«Գրե՛ք հակիրճ, որ նրանք ընթերցեն, շարադրե՛ք պարզ, որ նրանք գնահատեն, և պատկերավոր, որ հիշեն, բայց ամենակարևորը՝ գրե՛ք ճշգրիտ, որ նրանք առաջնորդվեն դրա լույսով»:

Ջոզեֆ Գուլիսցեր

Երբ 2019 թվականին մեկնարկեց ՄՈՄԵՆՏԱ ծրագրով մեր ճամփորդությունը, շատ աղոտ էինք պատկերացնում, թե այն ուր կհասցնի մեզ երկու տարի անց՝ 2020 թվականի ավարտին: Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության ֆինանսավորած ծրագրի սկզբնական նպատակն էր օրինական միգրացիայի մասին հաղորդակցման հարցերով վերապատրաստել Արևելյան գործընկերության պետությունների մեդիա մասնագետներին: Սակայն շատ շուտով ՄԶՄՄԿ-ի թիմը և ծրագրի՝ Եվրոպական Միության և Եվրոպական հարևանության երկրներից մեդիա փորձագետները գիտակցեցին, որ ընդհանուր նպատակի՝ Արևելյան Եվրոպայի երկրներում միգրացիայի հարցերի լուսաբանումը բարելավելու համար անհրաժեշտ են ավելի ամուր ցանցեր և համալիր մոտեցում: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ թիմը խնդրեց երկարեցնել ծրագրի ժամկետը և, դոնորի մեծ աջակցությամբ, ՄՈՄԵՆՏԱ ծրագրի երկրորդ փուլում մասնակից բոլոր վեց երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում համագործակցություն հաստատվեց ոչ միայն առանձին լրատվամիջոցների և անհատ լրագրողների, այլև լրագրողական միությունների հետ: Ավելին, ակնհայտ դարձավ մեդիայի ներկայացուցիչների համար միգրացիայի հարցերի լուսաբանման կարողությունների համապարփակ և սիստեմատիկ զարգացման մոդել ստեղծելու անհրաժեշտությունը: Այդ պահին ծնվեց այս հրատարակության գաղափարը:

Մեդիա ձեռնարկի մշակման առաջին քայլն էր՝ ապահովել փայլուն մեդիա փորձագետների՝ Օքսֆորդի համալսարանի Միգրացիայի, քաղաքականության և հասարակության կենտրոնից (COMPAS) Ռոբերթ ՄըքՆիլի և Մեդիա զարգացման գլոբալ ֆորումի (GFMD) մեդիա քաղաքականության հարցերով խորհրդատու և մեդիա զարգացման անկախ փորձագետ Թոմ Լուրի մասնակցությունը: Առաջադրանքն անավարտ կմնար առանց Արևելյան գործընկերության երկրների՝ միգրացիայի հարցերով փորձագետների և ծրագրային բոլոր գործընկերների՝ լրագրողական միությունների, ՄՈՄԵՆՏԱ-ի Ուսումնական ակադեմիայի շրջանավարտների, ՄԶՄՄԿ-ի և միգրացիայի հարցերով արտաքին այլ մասնագետների մասնակցության և խորհրդատվության: Հետևաբար, հաջորդ քայլն էր՝ ավելացնել տարածաշրջանային և միգրացիոն հարցերի փորձագիտությունը, գիտելիքը և կարիքների ընկալումը: Ի վերջո, թիմը հավաքեց և վերլուծեց արդեն գոյություն ունեցող ձեռնարկները, ուղեցույցները և փորձագետների առաջարկությունները: Ձեռնարկի յուրաքանչյուր գլուխ մշակվել է ներգրավված բոլոր դերակատարների հետ սերտ համագործակցությամբ, քանի որ դա ձեռնարկն օգտակար,

նորարարական և մնայուն դարձնելու միակ տարբերակն էր: Նայելով վերջնական արդյունքին՝ կարող եմ ասել, որ այդ ամենն իրագործվեց:

Լուսաբանելով միգրացիայի խնդիրները՝ մեղիան մեծ ազդեցություն ունի միգրանտների և միգրացիայի ընդհանուր պատկերի և դրանց ընկալման ձևավորման վրա: Հանրային կարծիքն, իր հերթին, ազդում է պետության մոտեցումների վրա և, արդյունքում, այն ձևավորում է քաղաքականության մակարդակում ընդունվող որոշումները: Այս շրջանը շարունակվում է, երբ մեղիան հանրության համար լուսաբանում է միգրացիոն քաղաքականությունը: Այս լույսի ներքո, ՄՈՄԵՆՏԱ-յի ձեռնարկում գործնական առաջարկություններ են ներկայացվում միգրացիայի հարցերի լուսաբանումը կատարելագործելու վերաբերյալ՝ բացատրելով միգրացիայի տերմինաբանությունը, ընդգծելով մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքը, քննադատելով աստվության խոսքը, ապահովելով հրապարակումների հավասարակշռվածությունը, խթանելով ապացույցների և փաստերի վրա հիմնված լուսաբանումը, խրախուսելով միգրանտների ձայների ներառումը: Հարցազրույցի վարման մեթոդների, աղբյուրների և փորձագետների ընտրության, տվյալների և պատկերների օգտագործման վերաբերյալ մասնագիտական խորհուրդներն ավելի են հարստացնում ձեռնարկը:

Աշխատանքն այսքանով չի ավարտվում: Միգրացիայի նկատմամբ հանրային վերաբերմունքի վրա մեղիայի ազդեցության աստիճանը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնք փոփոխվում են համատեքստից ելնելով, ինչը պահանջում է այդ համատեքստի լրացուցիչ ուսումնասիրություն: Տարբեր երկրների և տարածաշրջանների լրագրողներին անհրաժեշտ է առաջարկել ավելի թիրախային լուսաբանման կարողությունների զարգացման հնարավորություն: Հարկ է ստեղծել ավելի շատ ցանցեր, այդ թվում՝ համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետների հետ: Այս ամենը գործողություններ է պահանջում տարբեր մակարդակներում և զանազան շահակիրների հետ:

ՄԶՄՄԿ ՄՈՄԵՆՏԱ-յի թիմի անունից հրավիրում եմ միգրացիայի և մեղիայի հարցերով մեղիա մասնագետներին, քաղաքականություն մշակողներին և հետաքրքրված բոլոր անձանց՝ օգտագործել այս ձեռնարկը հավասարակշռված միգրացիոն պատմույթի ձևավորմանը նպաստող մեր համատեղ ջանքերում: Վերջապես, կարևոր եմ համարում շնորհակալություն հայտնել ձեռնարկի մշակմանը մասնակցած բոլոր անձանց՝ իրենց արհեստավարժության և նվիրման համար:

ՎԻՈՒԵՏԱ ՎԱԳՆԵՐ

ՄԶՄՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ծրագրերի
ղեկավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

- Ինչո՞ւ է պատրաստվել այս ձեռնարկը
- Ինչո՞ւ այժմ
- Ի՞նչ ակնկալել
- Ո՞ւմ համար է այն նախատեսված
- Ինչպե՞ս օգտվել ձեռնարկից
- Երախտագիտության խոսք

Գլուխ 1. Էթիկական հիմքեր

- Խարտիաներ, կանոնագրքեր և ուղեցույցներ
- «Միգրացիայի մեդիա յուսաբանման էթիկական խարտիա»
- Եզրակացություն

Գլուխ 2. Միգրացիան յուսաբանող հիշյալ լրագրող եք դուք

- Քաղաքական լրագրողներ
- Տնտեսություն և բիզնես
- Անվտանգություն, հասարակական կարգի պահպանում և օրենք
- Ներքին կյանքի, սոցիալական և կրոնական հարցեր
- Արվեստ և մշակույթ
- Արտասահմանյան, դիվանագիտական և միջազգային թղթակիցներ
- Զմասնագիտացող լրագրողներ
- Ֆոտոլրագրողներ
- Լուրերի խմբագիրներ, թողարկող խմբագիրներ և ստեղծագործական խմբեր
- Թողարկող լրագրողներ՝ խմբագրի տեղակալներ, վիդեո և հնչյունային խմբագիրներ
- Եզրակացություն

Գլուխ 3. Միգրացիայի յուսաբանման ոլորտի միտումները

- Միգրացիա. Ինչպե՞ս է քաղաքականությունն ադավաղում մեդիա յուսաբանումը
- Հետևանքներ պրակտիկայի համար
- Եզրակացություն

Գլուխ 4. Տերմինաբանություն

- Ներածություն
- Ինչպե՞ս օգտվել տերմինաբանական բառարաններից
- Առանցքային եզրույթներ և դրանց գործածությունը
- Տերմինաբանության սխալ օգտագործման, չարաշահման և սադրիչ գործածության տարածված օրինակներ
- Եզրույթներ, որոնցից պետք է խուսափել
- 1) Սահմանների հատում

- 2) Սեփական ծագման երկրից դուրս ապրել
- 3) Միգրացիոն տվյալներ և եզրույթներ
- 4) Կանոնավոր միգրանտների առանցքային դասակարգեր
- Ինպե՞ս կարելի է բարելավել տերմինաբանության գործածությունը
- Հարցեր նյութումների և լրագրողների միությունների համար
- Միգրացիոն եզրույթների՝ տվյալ երկրին բնորոշ գործածություն
- Եզրակացություն

Գլուխ 5. Միգրացիոն պատմություններ

- Միգրացիոն գործընթացներ
 - Միգրացիայի խթանիչներ
 - Ամենօրյա նկատառումներ
 - Օրինակի վերլուծություն՝ ներքին միգրացիա
 - Ճգնաժամ և միգրացիա
 - Միգրացիայի ձևեր
 - Աշխատանքային միգրացիա
 - Ուսում արտերկրում
 - Ընտանեկան միգրացիա
 - Անկանոն միգրացիա
 - Խառը միգրացիա
 - Փախստականներ և ապաստան
 - Օրինակի վերլուծություն՝ պատմության շարադրում և ապրումակցում
 - ԼԳԲՏԶԻ և ապաստան
 - Օրինակի վերլուծություն՝ տալ ձայնի հնարավորություն և պաշտպանել աղքատները
 - Ներքին տեղահանում
 - Օրինակի վերլուծություն՝ ներքին տեղահանված անձանց առնչվող լուսարանում
 - Մարդկանց թրափիրինգ և մաքսանենգություն
 - Միգրացիայի հետևանքները
 - Ինտեգրում, ուժացում և ժողովրդագրական փոփոխություն
 - Օրինակի վերլուծություն՝ նոր ժամանողներ
 - Անվտանգություն, ոստիկանական գործունեություն և օրենք
 - Արտաքսում և հարկադիր վտարում
 - Փոխանցումներ
 - Սփյուռք
 - Միգրացիայի կառավարում
 - Հասարակական կարծիք
 - Եզրակացություն

Գլուխ 6. Պատմության (ճիշտ) շարադրում

- Ներածություն
- Աղբյուրների և տեսակետների բազմազանություն
 - Օրինակի վերլուծություն՝ «Հեռացման օրագրեր»
- Գենդերային հարցեր և միգրացիա
- Աղբյուրների ձևավորում և պաշտպանություն

- Օրինակի վերլուծություն՝ «Սա կյանք չէ»՝ աղբբեջանցի միգրանտների հիասթափությունը Լեհաստանում
- Միգրացիան և ԲՈՎԻԴ-19-ը
- Միայ տեղեկատվություն և ասելության խոսք
 - Միայ տեղեկատվություն և միգրացիա
 - Օրինակի վերլուծություն՝ Միգրացիայի մասին «կեղծ նորությունների» հետաքննություն
 - Օրինակի վերլուծություն՝ Բազահայտել դավադրության տեսությունները միգրացիայի և մեդիայի մասին
 - Ասելության խոսք և միգրացիա
 - Օրինակի վերլուծություն՝ Միգրանտների դեմ ասելության խոսքի և պրոպագանդայի հետաքննություն
 - Օրինակի վերլուծություն՝ Ասելության խոսքի մասին հետազոտությունների օգտագործում
- Եզրակացություն
- Լուսանկարներ և պատկերներ
 - Օրինակի վերլուծություն՝ Պատկերներ և ներկայացում
 - Ռեսուրսներ
 - Դասարնթացներ
- Եզրակացություն

Գլուխ 7. Հարցագրույցներ

- Ներածություն
- Հարցագրույցի վարում միգրանտների հետ
- Հարցագրույցի վարում տրավմայի գոհերի հետ
- Հարցագրույցի վարում հյուրընկալող համայնքների հետ և բարդությունների հանգուցալուծում
- Եզրակացություն

Գլուխ 8. Ինչպես գտնել և օգտագործել փորձագետների

- Գիտնականներ
- Հետազոտական կենտրոններ
- Հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ)
- Քաղաքական գործիչներ
- Պետական մարմիններ և ազգային վիճակագրական կազմակերպություններ
- Միջկառավարական կազմակերպություններ
- Միություններ և գործարար միավորումներ
- Մարդու իրավունքների և ներգաղթի հարցերով փաստաբաններ
- Եզրակացություններ

Գլուխ 9. Տվյալներ և վերլուծություն

- Ինչպես վերլուծել աղբյուրները
- Տվյալների լրացրություն և վիզուալիզացում
- Օրինակի վերլուծություն՝ Տվյալների օգտագործման գրագիտության օգտագործում կոնտեքստ ներկայացնելու համար
- Եզրակացություն

- Ռեսուրսներ

Գլուխ 10. Միգրացիայի յուսաբանման բարելավում

- Ներածություն
- Մամուլի հարցերով խորհուրդները և կարգավորողները որպես նախապաշարման դեմ պայքարի գործիք
- Նյութումներ
- Քաղաքականություն մշակողներ
- Քաղաքականություն մշակողներ և համայնքի առաջնորդներ
- Լրագրությանն աջակցելու ծրագրեր
- Քաղաքացիական հասարակություն
- Լրագրողների վերապատրաստում և կրթություն
- Մրցանակներ
- Հետազոտություն
- Օրինակի վերլուծություն՝ Լուծումների լրագրություն

Գլուխ 11. Գործիքներ և ռեսուրսներ

- Երկրում միգրացիայի մասին տեղեկատվության աղբյուրներ
- Կարևոր միջազգային կազմակերպություններ
- Կարևոր քաղաքական նախաձեռնություններ
- Ապաստանի և միգրացիայի մասին միջազգային և ԵՄ օրենսդրություն
- Ռեսուրսներ միջպետական կազմակերպություններից
- Միգրացիայի և մեդիայի մասին հետազոտություններ
- Միգրացիայի յուսաբանմանն առնչվող խարտիաներ, կանոնակարգեր և ուղեցույցներ
 - Բազմազանություն և փոքրամասնություններ
 - Ատելության խոսք
 - Միայն տեղեկատվություն և միգրացիա
- Միգրացիայի տերմինաբանական բառարաններ
- Բանավեճեր բառամթերքի օգտագործման շուրջ
- Գենդերային հարցեր և մեդիա
- Միգրացիայի յուսաբանման մրցանակներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում ներկայացվում են ձեռնարկի նպատակը և դրանից օգտվելու ձևը:

Ինչո՞ւ է պատրաստվել այս ձեռնարկը:

Թեև վերջին տարիներին մշակվել են միազբացիայի վերաբերյալ բազմաթիվ նոր գործիքակազմեր և ուղեցույցներ, դրանց մեծ մասն արձագանք են որոշակի իրադարձությունների կամ մտածված (չմտածված) կերպով խիստ բնորոշ են որևէ երկրի կամ տարածաշրջանի համատեքստին: Որքան ուղեցույցներն ավելի բնորոշ լինեն երկրի միզբացիոն միտումներին և համապատասխան շահակիրների ներգրավվածության մակարդակին, այնքան ավելի դրանք կժառայեն իրենց նպատակին և լայն ընդունում կգտնեն:

Գերմանիայի Արտաքին գործերի դաշնային նախարարության ֆինանսավորմամբ Միզբացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը (ՄԶՄՄԿ) 2019 թվականին կազմակերպեց վերապատրաստման միջազգային միջոցառումների շարք Արևելյան Եվրոպայի երկրներում միզբացիան լուսաբանող լրագրողների համար: Միզբացիայի հարցերով մեդիայի ուսումնական առաջին ակադեմիայի (ՄՈՄԵՆՏԱ) հաշտությունից հետո Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի լրագրողների միությունները ցանկություն հայտնեցին շարունակել այս նախաձեռնությունը՝ որպես ՄՈՄԵՆՏԱ 2 ծրագրի մաս 2020 թվականին և պատրաստել միզբացիայի լուսաբանման ձեռնարկ, որը կօգնի լրագրողներին՝ անկողմնակալ, փաստերի վրա հիմնված և գրավիչ կերպով լուսաբանել այդ հարցերը:

Ձեռնարկը մշակվել է՝ գիտակցելով այն դերը, որը հանրային կարծիքի ձևավորման և միզբացիոն քաղաքականությունների իրազեկման գործում կարող է ունենալ մեդիան: Լրագրողների և մեդիա միությունների ֆոկուս խմբերի միջոցով ձեռնարկը հնարավորինս հարմարեցվել է Արևելյան գործընկերության (ԱԳ) տարածաշրջանի կարիքներին: Ֆոկուս խմբերի մասնակիցները (որոնք հատուկ կազմակերպվել էին այս ձեռնարկը մշակելու համար) համաձայնեցին, որ միզբացիայի մասին հավասարակշռված պատմույթ ձևավորելու համար հրատապ պետք է սովորեցնել լրագրողներին՝ ինչպես խուսափել միզբացիայի լուսաբանման որոշակի փոխաբերություններից և կարծրատիպերից, որոնք կարող են հանգեցնել խտրականության և քաղաքական խոսույթի բևեռացման:

Ինչո՞ւ այժմ:

- Լրագրողների՝ մինչև մասնագիտական գործունեություն սկսելը ստացած կրթությունը կամ կարիերայի ընթացքում նրանց վերապատրաստումը չի ապահովում միզբացիայի որակյալ լուսաբանման համար անհրաժեշտ համապարփակ հատուկ գիտելիքը և որոշումներ կայացնելու հմտությունները:
- Չանգվածային լրատվամիջոցներն աշխատում են խիստ բևեռացված և, երբեմն, լարված կամ գրաքննիչ քաղաքական միջավայրերում, ինչը հանգեցնում է միզբացիայի հարցերի այնպիսի լուսաբանման, որը կարող է իրական կյանքում վնաս

հասցնել միգրանտներին, ինչպես նաև աղճատել հանրային ընկալումը և, հետևաբար, քաղաքականություն մշակողների որոշումները:

- Ամբողջ աշխարհում ՉԼՄ-ներն առերեսվում են **վստահության և կայունության ճգնաժամի**¹ հետ: Լրատվամիջոցների դեպքում տնտեսական ճգնաժամը հանգեցրեց մի վիճակի, երբ նյութումները չունեին բավարար ռեսուրսներ և, հետևաբար, հետամուտ էին առցանց գովազդի նվազող եկամուտներ հայթայթելուն: Երբեմն, այս վիճակը կարող է հանգեցնել զիջումների մրցավազքի, որտեղ պարզեցումը, չափազանցումը և կարծրատիպերը ճնշում են համատեքստը, հավասարակշռությունը և նրբերանգները, որոնք անհրաժեշտ են միգրացիայի մասին պատմելու համար:
- **ՔՈՎԻԴ-19-ը** համավարակն արագացրել է տնտեսական և մամուլի ազատության բացասական միտումները, ինչը նշանակում է, որ լսարանի համար վստահելի լրագրություն ապահովելու նպատակով բազմաթիվ լրատվամիջոցներ և լրագրողներ կարող են ունենալ աջակցության կարիք:
- **ՔՈՎԻԴ-19-ն** էապես կրճատել է նաև առկա վերապատրաստման հնարավորությունները, ինչն ավելի քան երբևէ կիրառական է դարձրել գրավոր ուղեցույցները: Համավարակի հետևանքով նոր թափ են ստացել նաև միգրանտների նկատմամբ այլատյաց հռետորաբանությունն ու ռասիստական վերաբերմունքը:

Ի՞նչ ակնկալել:

- Միջազգային չափանիշների և տեղական փորձագիտության վրա հիմնված օրինակների ուսումնասիրության և լավագույն գործելակերպի միջոցով նույնիսկ դժվար իրավիճակներում հավասարակշռված, պատշաճ հետազոտված լուսաբանման հասնելու ուղեցույց:
- Օգնություն օգտատերերին՝ միգրացիայի վերաբերյալ գոյություն ունեցող գերիշխող մեդիա պատմություններն ավելի լավ հասկանալու, դրանք վերլուծելու, քննադատելու և դրանցից անկախ գործելու համար:
- Օրինակներ այն մասին, թե «ինչպես ճիշտ անելը» (էթիկական և իրավական տեսանկյունից) և «պատմության լավ շարադրելը» (որի կարիքը լրագրությունն ունի գոյատևելու համար) կարող են լինել նույն մանրադրամի երկու կողմերը:
- Միգրացիայի լուսաբանման առումով հիանալի մեկնակետ է «Նյու Յորք Թայմզ»-ի թղթակից Պատրիկ Քինգսլիի հետ այս [հարցազրույց](https://www.youtube.com/watch?v=tEWy1XU7XNA&list=PLXxzWkiXihue7dRH3_QceqpkBGJL-gQdI&index=9)², որտեղ վերջինս անդրադառնում է միգրացիայի ոլորտում լրագրողական իր փորձին, ուշադրության արժանի խնդիրներին և միգրացիայի լուսաբանման հետ կապված դժվարություններին:

Ո՞ւմ համար է այն նախատեսված:

- **Լրագրողներ.** ձեռնարկը նախատեսված է՝ որպես լրագրողների և խմբագիրների տեղեկատու կամ ինքնուսուցման ուղեցույց՝ նրանց կարիերայի բոլոր փուլերում:

¹ <https://www.digitalnewsreport.org/survey/2020/overview-key-findings-2020/>

² https://www.youtube.com/watch?v=tEWy1XU7XNA&list=PLXxzWkiXihue7dRH3_QceqpkBGJL-gQdI&index=9

- **Քարծրագույն ղեկավարություն և ավագ խմբագիրներ.** որոշ բաժիններ նախատեսված են բարձրագույն ղեկավարության և ավագ խմբագիրների համար, որպեսզի օգնեն նրանց՝ նկատի առնել այն քաղաքականությունները և գործելակերպը, որոնք կնպաստեն միգրացիայի լուսաբանմանը:
- **Ուսանողներ.** թեև ձեռնարկը նախատեսված է գործող մասնագետների համար, հուսով ենք, որ այն օգտակար տեղեկագիրք կլինի նաև լրագրություն ուսանողների և դասավանդողների համար:
- **Միգրացիայի հարցերի փորձագետներ.** թեև այս ձեռնարկը հատուկ նախատեսված չէ միգրացիայի հարցերի փորձագետների համար, նրանք կարող են օգտվել ձեռնարկից և ավելի լավ հասկանալ՝ ինչպես է կատարվում միգրացիայի լուսաբանումը:

Երբ հնարավոր է, տարբեր գործառույթներ ունեցող լրագրողներին են ներկայացվում խորհուրդներ, ուղղորդում և հատուկ առաջարկություններ, օրինակ՝ [Մտանձնել միգրացիայի որակյալ լուսաբանման պատասխանատվություն](#) գլխում:

Ինչպե՞ս օգտվել ձեռնարկից:

- **Երբ կարիքն ունես:** Հասկանում ենք, որ բազմազբաղ եք: Այդ պատճառով էլ ձեռնարկն, առաջին հերթին, կառուցված է այնպես, որ հնարավոր լինի օգտվել առանձին գլխից կամ ենթաբաժնից, որն անհրաժեշտ է ձեզ լուսաբանման, խմբագրման և հրապարակման ամբողջ ընթացքում: Ձեզ անհրաժեշտ թեմաները գտնելու համար օգտվեք բովանդակության էջից և ամբողջ ձեռնարկում առկա ուղղորդիչ պատուհաններից:
- **Մասնագիտական որակավորման բարձրացման համար:** Եթե ժամանակ ունեք՝ ընթերցեք ամբողջ ձեռնարկը: Հուսով ենք նաև, որ միգրացիայի հարցերով հետաքրքրված լրագրողները ժամանակ կգտնեն ընթերցել այն ամբողջությամբ և հաշվի առնել դրանում բարձրացված էթիկական և գործնական հարցերը՝ անհատական զարգացման և մասնագիտական որակավորման բարձրացման համար:
- **Ուրիշներին ուղղորդելու և ուսուցանելու համար:** Մի՛ պահեք այս ձեռնարկը միայն ձեզ համար: Օգտագործե՛ք այն գործընկերների հետ բանավեճեր խթանելու համար և նույնիսկ՝ որպես վերապատրաստման և կարողությունների ամրապնդման հիմք:

Հիշե՛ք, եթե ծանոթ չեք ձեռնարկում օգտագործվող եզրույթներին, կարող եք օգտվել [Տերմինաբանության](#) գլխից: Ձեզ հետաքրքրող հատվածներ կարող են լինել նույնիսկ [Միգրացիայի պատմություններ պատմելու մասին](#) բաժնում:

Երախտիքի խոսք

ՄՔՄՄԿ աջակցությամբ և փորձագիտական օգնությամբ ձեռնարկը հեղինակել են Ռոբերթ ՄրքՆիլը և Թոմ Լոուն:

Ռոբերթ ՄրքՆիլը վերջին 10 տարիների ընթացքում Օքսֆորդի համալսարանի Միգրացիոն դիտարանի տնօրենի տեղակալն է և Մեդիա և հաղորդակցության ղեկավարը: Իր գործունեության վաղ փուլում Ռոբը եղել է ՄԹ թերթերի և ամսագրերի, այդ թվում՝ «Լոնդրն իվինգ ստանդարթ»-ի, «Դեյլի միրրը»-ի, «Մանդեյ միրրը»-ի, «Ռեդ մեգրզին»-ի, ԲիԲիՍի Վայդլայֆի լրագրող, ինչպես նաև տարածաշրջանային թերթերի նորությունների բաժնի խմբագիր: Ռոբը կատարել է նաև ռազմավարական հաղորդակցման աշխատանք՝ հանդիսանալով «Քոնսըրվեյշն ինթերնեյշնլ»-ի մեդիա տնօրեն, «Օքսֆամ» ՄԲ-ի հանրության հետ կապերի ղեկավար, ՄԹ Բնության համաշխարհային հիմնադրամի մամուլի քարտուղար:

Թոմ Լոուն Մեդիայի զարգացման գլոբալ ֆորումի (GFMD) մեդիա քաղաքականության հարցերով խորհրդատու է և մեդիա զարգացման անկախ փորձագետ: Իր նախորդ աշխատանքն Էթիկական լրագրության ցանցում ընդգրկում էր միգրացիայի հարցերի լուսաբանման և այլ հարցերի մասով քարոզարշավների ղեկավարում, հետազոտություն և վերապատրաստում: Թոմը խմբագիր է աշխատել սուդանական նորությունների գործակալությունում և եղել ազատ լրագրող:

Ձեռնարկի խմբագիրներ՝

Վիոլետա Վազներ, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ծրագրերի ղեկավար

Քսենյա Պիլիպենկո, ծրագրի ղեկավար ՄՔՄՄԿ-ում

Հեղինակները և ՄՔՄՄԿ-ը ցանկանում են շնորհակալություն հայտնել՝

- Պրահայում գտնվող «Թրանզիշըն» մեդիա զարգացման կազմակերպության գործադիր տնօրեն և գլխավոր խմբագիր Ջերեմի Դրյուքերին՝ լուծումների լրագրության մասին գլխում օգտագործված նյութեր տրամադրելու համար.
- Մասստրիխտի Կառավարման բարձրագույն դպրոցի գիտաշխատող Միխաելա Վանորին, ով հեղինակել է ձեռնարկի գրախոսականը.
- Արևելյան գործընկերության երկրների հետևյալ լրագրողական միությունների, այլ լրատվամիջոցների ու միգրացիայի ոլորտի կազմակերպությունների ներկայացուցիչներին, ովքեր արժեքավոր կարծիքներ են ներկայացրել ձեռնարկում տեղ գտած թեմաների վերաբերյալ՝ Ադրբեջանի Ժուռնալիստների միության նախագահ Արիֆ Ալիևին, «Երիտասարդ Ժուռնալիստների ասոցիացիա» հայաստանյան ՀԿ-ի նախագահ Արման Ղազարյանին, Մոլդովայի Ժուռնալիստների միության գործադիր տնօրեն Նադինե Գոգուլին, Ուկրաինայի Ժուռնալիստների ազգային միության առաջին քարտուղար Լինա Կուշչին, բելառուս լրագրող Աննա Ռիբչինսկայային, Ադրբեջանի Ժուռնալիստների միությունից Էլչին Շիլալին, Վրաստանի Հասարակության հետ կապերի ինստիտուտի դասախոս Թինա Ծոմանիային.

- «Նյու Յորք Թայմզ» թերթի միջազգային թղթակից Պատրիկ Քինգսլիին, բրիտանացի լրագրող, գրող և հեռուստավար Ստեֆանի Հեգարթիին, նիգերիացի լրագրող, գրող և կինոարտադրող Էրոմո Էգբեջուլեին, ովքեր ձեռնարկում գետնեղված գործնական օրինակների և տեսանյութերի միջոցով կիսվեցին միգրացիան լուսաբանելու սեփական փորձով.
- Գուլար Աբբասովային, Լանա Կոկայային, Թոռնիկե Կոպլաթաձեին, Ալեքսանդր Մակուհին, Արեն Մելիքյանին, Տատյանա Պասովային և Նաթա Սկուրտուլին, ովքեր պատմեցին ՄՈՍԵՆՏԱ 1-ի ընթացքում իրենց հեղինակած հոդվածների մասին, որոնք ձեռնարկում օգտագործվեցին որպես գործնական օրինակներ և տեսանյութեր.
- ՄՈՍԵՆՏԱ 1-ի և 2-ի բոլոր 30 լրագրողներին, ովքեր կարծիքներ են ներկայացրել այս ձեռնարկի հիմքում ընկած վերապատրաստման նյութերի մասին:
- ՄԶՄՄԿ-ից Եկատերինա Բելուկովային (ծրագրի ղեկավար) և Աիդա Հասանովային (ծրագրի ղեկավարի օգնական)՝ ՄՈՍԵՆՏԱ 2 ծրագրի և այս ձեռնարկի հենքային տեղեկատվության մշակմանն աջակցելու համար:
- ՄԶՄՄԿ-ից Անդրեյ Ափոյանին (ծրագրի ղեկավար), Զեթի Գորգոշիձեին (ծրագրի ղեկավար), Սալթանատ Մամմադովային (ծրագրի ղեկավար), Յուլիա Սուբբոտսկային (ծրագրի օգնական), ովքեր ներդրում են ունեցել աղգային աղբյուրներին նվիրված գլխում.
- Այս ձեռնարկն օգտագործում է 2017 թվականին ՄԶՄՄԿ-ի հրատարակած [Մեղիս և մարդկանց թրաֆիքինգ. ուղեցույցներ](#)-ը:³

Սույն ձեռնարկը պատրաստվել է որպես Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի իրականացրած և Գերմանիայի Դաշնային արտաքին գործերի նախարարության ֆինանսավորած Միգրացիայի հարցերով մեղիայի ուսումնական ակադեմիայի (ՄՈՍԵՆՏԱ 2) ծրագրի մաս: Ծրագիրն իրականացվել է 2020 թվականի ապրիլի 1-ից դեկտեմբերի 31-ը՝ համագործակցելով Արևելյան գործընկերության երկրների ժուռնալիստների միությունների հետ: Ծրագրի ընդհանուր նպատակն էր ԱԳ երկրներում՝ դեպի ԵՄ օրինական միգրացիայի հարցերի հավասարակշռված և ապացույցների վրա հիմնված լուսաբանման միջոցով նպաստել միգրացիայի վերաբերյալ հիմնավոր որոշումների կայացմանը: Ծրագրի հիմնական արդյունքներից են՝ լրագրողների մասնագիտական ցանցի ստեղծումը, սույն ուսումնական ձեռնարկի մշակումը և ձեռնարկի փորձնական կիրառումը՝ որպես լրագրողների վերապատրաստման ծրագիր:

³ https://www.icmpd.org/fileadmin/user_upload/Media_and_THB_Guidelines_EN_WEB.pdf

ԳԼՈՒԽ 1. ԷԹԻԿԱԿԱՆ ՅԻՄՔԵՐ

Օգտագործեք այս գրուիք՝

- *Միգրացիայի լուսաբանմանն առնչվող հիմնական էթիկական սկզբունքները հասկանալու համար:*
- *Խարտիսաներից, կանոնագրքերից և ուղեցույցներից օգտվել սովորելու համար:*
- *Ձեռնարկի՝ ձեզ համար առավել կարևոր մասը որոշելու համար:*

Սկսելու համար երկու հարց՝

- Արդյոք ճիշտ հասկանալը պե՞տք է խանգարի պատմության լավ շարադրմանը:
- Արդյոք պատմության լավ շարադրումը պե՞տք է խանգարի ճիշտ հասկանալուն:

Երկու հարցերի պատասխանն էլ բացասական է: Ճիշտ մոտեցման դեպքում «ճիշտ հասկանալը» և «պատմությունը լավ շարադրելը» կարող են լինել նույն մանրադրամի երկու կողմերը: Ձեռնարկի նպատակն է՝ ներկայացնել՝ ինչպես:

Էթիկան և չափանիշները, որոնք պահանջվում են լրագրությունից, կարող են դիտվել որպես սահմանափակող գործոններ՝ հատկապես գործն ավարտելու համար առկա սեղմ ժամկետների, խառնաշփոթի ու հաճախ այլ հանպատրաստի իրավիճակներում: Բայց դրանք նաև փոխգիշումներ գտնելու և արագ որոշումներ կայացնելու մեր կողմնացույցն են:

Այս ձեռնարկի համար հարցազրույց տված լրագրողները համաձայն էին, որ լրագրողական էթիկան նույնն է միգրացիայի կամ ցանկացած այլ պատմություն լուսաբանման դեպքում: Հարցն այն է՝ ինչպե՞ս է այն կիրառվում տարբեր սցենարների դեպքում, որոնք կարող են առաջանալ միգրացիայի լուսաբանման ընթացքում:

Այս ձեռնարկը հազվադեպ է առաջարկում հստակ լուծումներ կամ նշում՝ ինչպես ընտրել ճիշտ տարբերակը, քանի որ դա հաճախ պայմանավորված է համատեքստով: Սակայն, լինել լավ լրագրող՝ նշանակում է ճիշտ պահին ճիշտ հարցեր տալ ինքդ քեզ, և մենք լիահույս ենք, որ այս ձեռնարկը կօգնի ձեզ դա անել: Հույս ունենք նաև, որ այն կօգնի ձեզ տեսնել՝ ինչպես կարող է լրագրողական էթիկան ոչ թե խոչընդոտել, այլ օժանդակել ձեր աշխատանքին, ավելի լավ հարաբերություններ կառուցել ձեր աղբյուրների հետ, վերցնել ավելի անկեղծ հարցազրույցներ և ստանալ գրավիչ պատմություններ, վերաիմաստավորել պատմությունների շարադրման նկատմամբ ձեր մոտեցումները, քննադատել և կասկածի տակ դնել դումինանտ պատմությունները և, անգամ հուսով ենք՝ ներշնչել ձեզ՝ բարեփախումներ նախաձեռնել ձեր նյութում:

Նյուզբուլմի ոճ/խմբագրական ուղեցույցներ՝

Որոշ նյուզբուլմեր հստակ և ճշգրիտ ուղեցույցներ ունեն այն մասին, թե ինչպես լուսաբանման ընթացքում մոտենալ որոշակի էթիկական հարցերին կամ ինչ բառամթերք օգտագործել:

Օրինակ, «Ասոշիեյթդ Պրեսս» (ԱՊ) նորությունների գործակալությունը 2013 թվականին հայտարարեց, որ իրենց կանոնագրքով այլևս թույլ չի տրվում օգտագործել «[«ապօրինի ներգաղթող» եզրույթը կամ «ապօրինի» ածականն՝ անձին նկարագրելու համար](#)»:⁴ ԱՊ-ի բոլոր աշխատակիցներն այժմ պարտավոր են ենթարկվել այս որոշմանը, որի անհրաժեշտության մասին երկար ժամանակ խոսում էին բազմաթիվ լրագրողներ և միգրացիայի մասնագետներ:

Որոշման հիմնավորման մեջ, [որն արժի կարդալ](#)⁵, ԱՊ-ն ընդունում է, որ լեզուն ժամանակի ընթացքում փոփոխության է ենթարկվում, բայց նորությունների բազմաթիվ գործակալություններ չունեն այս միտումներին հետևելու և նման մանրամասն ցուցումներ ասպահովելու ռեսուրսներ կամ կարողություն: Որպես լրագրող՝ կարող եք լինել առաջամարտիկ և ձեր կազմակերպությունից արագ կիրառել նորացված գործելակերպը:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- *Բառերի օգտագործման վերաբերյալ խորհուրդները տե՛ս՝ [Տերմինաբանություն](#) գլխում, իսկ միգրացիայի տարբեր տեսակները լուսաբանելու մոտեցումների վերաբերյալ ցուցումները տե՛ս՝ [Միգրացիոն պատմություններ](#) գլխում:*
- *Լավագույն օրինակների համար [Գործիքներ և ռեսուրսներ](#) գլխում տե՛ս՝ նաև [Միգրացիայի լուսաբանման խարտիաներ, կանոնագրքեր և ուղեցույցներ](#):*

Խարտիաներ, կանոնագրքեր և ուղեցույցներ

Միգրացիայի հարցերի լուսաբանման մեջ էթիկական խարտիաները, կանոնագրքերը և ուղեցույցներն ունեն երկու դեր՝

1. Խրախուսել նյուզբուլմերին և կարգավորող մարմիններին՝ հասկանալ լեզվի էվոլյուցիան, դրա բարդությունները և հնարավոր հետևանքները.
2. Ուղղորդել անհատ լրագրողներին:

Լրատվական ծառայությունների թեմատիկ խարտիաների մեծ մասը չունի պարտադիր բնույթ: Սակայն դրանք կարող են հիմք ստեղծել լրագրողների և հատուկ շահեր ունեցող խմբերի համար, որոնք կարող են ջատագովել բարեփոխումները հրատարակիչների և կարգավորողների (օրինակ՝ մամուլի հարցերով խորհուրդների) առջև: Որոշ դեպքերում, միգրացիայի մասին խարտիաները և կանոնագրքերը ստեղծվում են՝ որպես բոլոր շահակիրների կոլեկտիվ ջանքերի մաս և, հետևաբար, դրանց իրականացումն ավելի հավանական է:

⁴ <https://blog.ap.org/announcements/illegal-immigrant-no-more>

⁵ <https://blog.ap.org/announcements/illegal-immigrant-no-more>


Միգրացիայի լուսաբանման նոր խարտիաներ կամ կանոնագրքեր հաճախ ստեղծվում են ի պատասխան լրատվամիջոցներում միգրացիայի հարցերի հակասական լուսաբանման կամ խոշոր միգրացիոն իրադարձությունների: Հետևաբար, դրանք կարող են բավականին յուրահատուկ լինել որոշակի երկրի կամ տարածաշրջանի, տվյալ վայրում կամ ժամանակահատվածում միգրացիայի առավել տարածված ձևերի, մեդիա լուսաբանման միտումների համար:

Համեմատե՛ք հետևյալ երկու օրինակները՝

- [Միգրացիայի լուսաբանման հինգ կետից ուղեցույց](#), որը հեղինակել է Էթիկական լրագրության ցանցը (ԷԼՑ)
- [Արաբական երկրներում աշխատանքային միգրացիայի էթիկական լուսաբանումը](#), որը մշակել է Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ)



<https://ethicaljournalismnetwork.org/resources/infographics/5-point-test-for-hate-speech-english>



https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---arabstates/---ro-beirut/documents/genericdocument/wcms_563848.pdf

Կարող եք նկատել, որ ԱՀԿ առաջարկությունները հստակ արձագանքում են արաբական լրատվամիջոցներում միգրացիայի լուսաբանման կոնկրետ միտումներին, իսկ ԷԼՑ ուղեցույցը, որը մշակվել է 2016 թվականին, ավելի լավ է ընկալվում 2015-16 թվականների՝

այսպես կոչված «միզրանտների ճգնաժամի» համատեքստում, երբ մեծ թվով միզրանտներ, որոնց մեծ մասն ապաստան հայցողներ էին, Աֆրիկայից և Միջին Արևելքից ժամանեցին Եվրոպա:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- Միզրացիայի տարբեր տեսակները լուսաբանելու մոտեցումների վերաբերյալ տե՛ս՝ Գլուխ 5. [Միզրացիոն պատմություններ](#):
- Լրացուցիչ օրինակների համար տե՛ս՝ Գլուխ 11. [Գործիքներ և ռեսուրսներ](#), [Միզրացիայի լուսաբանման խարտիաներ](#), [կանոնագրեր և ուղեցույցներ](#) բաժին:

Միզրացիայի լուսաբանման այս ուղեցույցները 2016 թվականին մշակել է Էթիոպիական լրագրության ցանցը (ԷԼՑ): Դրանք ձևակերպել է Դորոթի Բիռնը, ով այդ ժամանակ ՄԹ վերգետնյա հեռուստատեսային հիմնական ալիքներից մեկի՝ 4-րդ ալիքի Լուրերի ծառայության տնօրենն էր:

Հղում տեսանյութին՝ <https://www.youtube.com/watch?v=aongivQ-QCE&t=1s>

«Միգրացիայի մեդիա լուսաբանման էթիկական խարտիա»

Ինչպե՞ս օգտվել այս բաժնից՝

1. **Ընթերցեք և խորհրդածեք՝ որքանով է այն կարևոր ձեր աշխատանքի համար:** Հարցրեք ձեզ, արդյոք, ձեր կարծիքով, ինչ-որ բան բաց է թողնվել՞ կամ դուք նկատի չեք առնել՞:
2. **Օգտագործեք նյութն ավելի խորքային տեղեկատվություն և խորհուրդներ գտնելու համար:** Խարտիայի յուրաքանչյուր մասից հետո կտեսնեք ուղղորդիչ պատուհան, որը հուշում է ձեռնարկի այն հատվածը, որին պետք է անցնել հաջորդիվ:

Միգրացիայի մասին լրագրողների՝ առավել համընդհանուր էթիկական խարտիաներից մեկն ընդունվել է Աֆրիկայի, Ամերիկայի, Ասիայի և Եվրոպայի լրագրողների կողմից 2019 թվականի դեկտեմբերի 11-ին Թունիսի Կարթագեն քաղաքում Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կազմակերպած հանդիպմանը:

Խարտիայի սկզբում նշվում է, որ միգրացիայի էթիկական լուսաբանման հանձնառությունը հիմնվում է լրագրության չորս հիմնական սկզբունքների վրա՝ արժանահավատություն, անկախություն, մարդասիրություն և պատասխանատվություն: Խարտիան բացատրում է՝ ինչպես են այդ սկզբունքները նոր կարևորություն ստանում միգրացիոն համատեքստում՝ ցուցումներ տալով որոշակի հարցերի, օրինակ՝ տերմինաբանության վերաբերյալ, ճանաչելով և ներկայացնելով լուսաբանվող խնդիրների բարդությունը և հասնելով գիտակցված համաձայնության:

«Միգրացիայի մեդիա լուսաբանման էթիկական խարտիայի» ստորև ներկայացված ամփոփումը խմբագրվել և ադապտացվել է պարզ լինելու համար: *Խարտիայի բնօրինակը և ամբողջական տեքստը հասանելի է երեք լեզուներով (արաբերեն, ֆրանսերեն և անգլերեն) հետևյալ [հղումով](#):*⁶

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

Լրագրության հիմնարար սկզբունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝

- [Լրագրողների էթիկայի մասին գլոբալ խարտիա \(Լրագրողների միջազգային ֆեդերացիա\)](#)⁷
- [Էթիկական լրագրության 5 սկզբունքներ \(Էթիկական լրագրության ցանց\)](#)⁸

1. Բառերը կարևոր են

- Միգրացիայի հարցերը լուսաբանող ցանկացած լրագրող պետք է հարցականի տակ դնի եզրույթների ծագումը և ազդեցությունը:

⁶ <https://www.facebook.com/Migrations-Charte-mondiale-d%C3%A9thique-109300947301204/>

⁷ <https://www.ifj.org/who/rules-and-policy/global-charter-of-ethics-for-journalists.html>

⁸ <https://ethicaljournalismnetwork.org/who-we-are/5-principles-of-journalism>

- Լրագրողները պետք է օգտագործեն տերմինաբանություն և հասկացություններ, որոնք հարգում են մարդու արժանապատվությունը և գիտակցում, որ «փախստական» և «ապաստան հայցող» եզրույթների հիմքերը միջազգային իրավունքի մեջ են:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- Գլուխ 4. [Տերմինաբանություն](#)

2. Ատելություն, ռասիզմ, խտրականություն

- Լրագրողները պետք է ոչ թե պարզապես հաղորդեն ատելության, ռասիզմի, այլատյացության և խտրականության մասին, այլ փոխարենը վերլուծեն և բացատրեն այդ երևույթները:
- Լրագրողները պետք է կազմաբանդեն լեզուն, որը քրեականացնում է միգրանտներին կամ ներկայացնում նրանց որպես սպառնալիք:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- Գլուխ 4. [Տերմինաբանություն](#), մասնավորապես [Տերմինաբանության սխալ օգտագործման, չարաշահման և ստորիչ գործածության տարածված օրինակներ բաժինը](#)
- Գլուխ 6. [Պատմության \(նիշտ\) շարադրում](#), մասնավորապես [Բազմազանություն և Միայն տեղեկատվություն և ատելության խոսք բաժինները](#)

3. Փաստերը բարդ են

- Լրագրությունը պետք է լուսաբանի միգրացիայի մասին պատմությունները գլոբալ, պատմական, սոցիալ-տնտեսական, մշակութային և աշխարհաքաղաքական համատեքստում:
- Լրագրողները պետք է նույնացնեն և հարցականի տակ դնեն կլիշեները և կարծրատիպերը՝ օգտագործելով փաստերը և տեղադրելով դրանք իրենց համատեքստում:
- Հաշվի առնելով միգրացիոն խնդիրների բարդությունը՝ լրագրողները պետք է դիվերսիֆիկացնեն տեղեկատվության աղբյուրները, լուսաբանման ձևերը, թեմաները և տեսանկյունները:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- Գլուխ 2. [Միգրացիան լուսաբանող ի՞նչ լրագրող էր դուք](#)
- Գլուխ 5. [Միգրացիոն պատմությունները](#)
- Գլուխ 10. [Միգրացիայի լուսաբանման բարելավում՝ լուծումների լրագրություն](#)

4. Գիտակցված համաձայնություն

- Միգրանտների ձայները, անկախ նրանց կանոնավոր կամ անկանոն կարգավիճակ ունենալուց, հաճախ անտեսվում են կամ մնում աննկատ, և լուսաբանման մեջ նրանց

կարգավիճակը հաճախ իջեցվում է «գոհի» մակարդակի: Լրագրողները պետք է խուսափեն մարդկանց՝ միայն որպես իրենց իրավիճակի գոհ ներկայացնելուց:

- Միգրանտները սեփական պատմությանը տիրապետող անհատներ են: Լրագրողը նրանց ձայն է տալիս, հնարավորություն է տալիս մանրամասնել այն և հրավիրում մասնակցել բանավեճին:
- Այս ձայնը ստացվում է գիտակցված համաձայնության հիման վրա: Իմանալով, որ բոլորն ունեն հսկողության, մեղիա գրագիտության կամ սեփական խոցելիության մասին իրավական գիտելիքի նույն մակարդակը՝ լրագրողը պարտավոր է բացատրել հարցազրույց տվողին լրագրողական աշխատանքի բնույթը և նրա վկայության և (կամ) լուսանկարի հրապարակման հետ կապված հնարավոր ռիսկերը: Գիտակցված համաձայնություն ստանալը նշանակում է վնաս չհասցնել խոցելի անձանց:

ՈՒՂՂՈՐԴԻԶ ՊԱՏՈՒՀԱՆ:

Ի հավելումն վերոգրյալի, տե՛ս՝

- [Միգրացիոն պատմություններ](#) 5-րդ գլխում [Մարդկանց թրաֆիքինգ և մարսանենգություն բաժինը](#)
- Գլուխ 6. [Պատմության \(նիշտ\) շարադրում](#), մասնավորապես՝ [Վերջուրների պաշտպանություն բաժինը](#)
- Գլուխ 7. [Հարցազրույցներ](#)

5. Ունենալ ապրումակցում և շրջահայացություն

- Լրագրողը չի փնտրում սենսացիա: Որպես վկա՝ լրագրողները պետք է ցուցադրեն ապրումակցում, սակայն պատկերեն իրական վիճակը՝ շրջահայաց մնալով պատմությունների ճշմարիտ լինելու հարցում: Երբեք մի՛ վճարեք վկայություն ստանալու համար: (տե՛ս՝ [Հարցազրույցներ](#))
- Հարգե՛ք ձեզ հարցազրույց տվող անձանց մշակույթը, կրոնը և ավանդույթները: (տե՛ս՝ [Բազմազանություն և Հարցազրույցներ](#))
- Հաշվի առեք, որ դուք ունեք սեփական կողմնորոշիչները և դրանք կրում են ձեր կրթության, արժեքների և մշակութային գիտելիքի հետքը: Ուշադիր եղեք կարծրատիպերին և կլիշեներին, որոնք բոլոր հասարակություններում միտված են խարանել «ուրիշին», օտարին: (տե՛ս՝ [Բազմազանություն](#))
- Հատուկ ուշադրություն դարձրեք կանանց, անչափահասների, էթնիկ և սեռական փոքրամասնությունների, չկարգավորված կարգավիճակով անձանց հնարավոր խոցելիության նկատմամբ: (տե՛ս՝ [Վերջուրների ձևավորում և պաշտպանություն](#))
- Հաշվի առեք ձեր հանդիպած անձանց էմոցիոնալ վիճակը և նրանց կրած հնարավոր տրավման: (տե՛ս՝ [Վերջուրների ձևավորում և պաշտպանություն](#) և [Հարցազրույցներ](#))

ՈՒՂՂՈՐԴԻԶ ՊԱՏՈՒՀԱՆ:

- *Ի հավելումն վերոգրյալի, տե՛ս՝*
- [Միգրացիոն պատմություններին](#) նվիրված 5-րդ գլխում [Մարդկանց թրաֆիքինգ և մարսանենգություն բաժինը](#)
- Գլուխ 6. [Պատմության \(նիշտ\) շարադրում](#), մասնավորապես՝ [Բազմազանություն](#), [Վերջուրների պաշտպանություն](#), [Հարցազրույցի մեթոդներ](#) և [Տրավմայի գոհերի հետ հարցազրույցի վարում բաժինները](#)

6. Պատկերների ուժը

- Որևէ մեկի լուսանկարը տարածելուց առաջ ապահովեք նրա գիտակցված համաձայնությունը: Երբեք մի՛ վճարեք լուսանկարի կամ տեսագրության համար:
- Անչափահասը լուսանկարվում կամ տեսագրվում է բացառապես ծնողի կամ խնամակալի համաձայնությամբ, որը հաստատում է երեխան:
- Լուսանկարները նյութումներին են տրամադրվում հստակ և ճշգրիտ մակագրերով՝ թյուրըմբռնումը, սխալ կամ չարամիտ օգտագործումը կանխելու համար:
- Առանձնակի տպավորիչ, երբեմն շոկային գրաֆիկ պատկերները, որոնք ներկայացնում են ծայրահեղ իրավիճակներ հրապարակվում կամ տարածվում են միայն և միայն այն դեպքում, երբ դրանք պատրաստված են բացատրելու, համոզելու կամ դատապարտելու նպատակով: Երբեք մի՛ օգտագործեք պատկերը՝ գուտ սենսացիոն լինելու համար:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- [Պատկերների օգտագործման վերաբերյալ լրացուցիչ տե՛ս՝ Ֆոտոյրագրողներ և Լուրերի խմբագիրներ, թողարկող խմբագիրներ և ստեղծագործական խմբեր բաժինները 2-րդ գլխում՝ Միգրացիան լուսաբանող ի՞նչ լրագրող էր դուք](#)
- [Տե՛ս՝ նաև Գլուխ 6. Պատմության \(ճիշտ\) շարադրում, մասնավորապես՝ Աղբյուրների ձևավորում և պաշտպանություն բաժինը](#)

ԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այս սկզբունքներին հետևելը միայն անհատ լրագրողների պարտականությունը չէ: Մեզ անհրաժեշտ է նաև մամուլի հարցերով խորհուրդների և կարգավորող մարմինների, ժուռնալիզմին աջակցող խմբերի և միությունների, նյութումների, քաղաքականություն մշակողների, հետազոտողների և ժուռնալիստիկա դասավանդող հաստատությունների կողեկտիվ և համակարգված աշխատանքը: Այս արդյունքին հասնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ Գլուխ 10. [Միգրացիայի լուսաբանման քարտեզավում](#):

Լավ լուսաբանման սրտում, սակայն, դրված է լրագրողների հոգատար լինելու և հետևողականություն, դատողություն և առողջ միտք դրսևորելու պատրաստականությունը: Հարկ է հաշվի առնել բազմաթիվ կետեր՝ թեմաները, որոնց վրա աշխատում եք, դրանց հիմքում ընկած պատմությունը, ձեր օգտագործած լեզուն, մարդկանց, ում հետ զրուցում եք, ձեր լեզվի միջոցով փոխանցածի հստակությունը (օրինակ, եթե ինչ-որ բան նկարագրում եք որպես «ազդեցություն», դա հաճախ ենթադրում է, որ հետևանքը գործողության ուղղակի արդյունք է): «Հետևանք» եզրույթի օգտագործումն ավելի քիչ շեշտակի է, սակայն՝ ավելի ճշգրիտ:

Հաճախ ընտրությունը կատարվում է արագ և առանց ինքնաքննադատական վերլուծության համար բավարար ժամանակ ունենալու, սակայն մի փոքր ուշադրությունը չափից ավելի սև ու սպիտակ լինելուց խուսափելու համար կարող է կարևոր դեր խաղալ՝ օգնելով մարդկանց հասկանալ միգրացիայի բարդությունը:

Հուսով ենք, որ միգրացիայի լուսաբանման ժամանակ առաջացող էթնկական որոշ մարտահրավերների այս հակիրճ ներածությունն օգտակար էր և կօգնի ձեզ՝ գտնել ավելի մանրամասն տեղեկություններ և խորհուրդներ՝ ձեզ համար առավել հետաքրքիր թեմաների մասին:

ԳԼՈՒԽ 2. ՄԻԳՐԱՑԻԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ԻՆՉ ԼՐԱԳՐՈՂ ԵՔ ԴՈՒՔ

Ենթավերնագիր. ստանձնել միգրացիայի որակյալ լուսարանման պատասխանատվություն

Օգտագործեք այս գլուխը, որպեսզի՝

- Հասկանաք՝ ինչպես կարող է լրագրողական ձեր ուղղվածությունն ազդել միգրացիոն հեղինակային պատմությունների, աղբյուրների ընտրության և, հետևաբար, ձեր հրատարակումների շրջանակների վրա:
- Մտածեք՝ ինչը կարող էք այլ կերպ անել միգրացիան առավել ճշգրիտ և բովանդակային լուսարանելու ձեր գործում:
- Ձեր դերի շրջանակում գտնեք գաղափարներ, լուսարանման հնարավորություններ:
- Բացահայտեք՝ որոնք են առավել տարածված ծուղակները լրագրողական առանձին դերերի համար:
- Ձեռնարկի մնացած հատվածներում գտնեք ավելի մանրամասն տեղեկություններ:

Տարբեր մասնագիտացումներ ունեցող լրագրողները կարող են դառնալ միգրացիա լուսարանողներ, եթե իրենց աշխատանքի ընթացքում առնչվեն միգրացիայի թեմաների հետ: Անկախ այն հանգամանքից, թե միգրացիա լուսարանող ինչ մասնագիտացմամբ լրագրող եք, ձեռնարկի այս բաժինը մշակված է հետևյալ երկու միջոցներով միգրացիոն թեմաներով պատմության լավ շարադրմանն աջակցելու համար՝ առանց կորցնելու նրբերանգներն ու ճշգրտությունը՝

1. Նախ՝ այն դիտարկում է լրագրողական մասնագիտացման ոլորտները, որտեղ սովորաբար առաջանում է միգրացիայի հարցը, ապա այդ ոլորտներում աշխատող լրագրողներին է ներկայացնում ցուցիչներ և առաջարկություններ: Առաջարկվում են լուսարանման խորությունը և նրբությունը բարելավելուն ուղղված գաղափարներ, ապացույցների և վերլուծության աղբյուրների մասին գաղափարներ, առավել տարածված ծուղակներից խուսափելու ուղիներ՝ ճշգրիտ և ազդեցիկ լուսարանում ապահովելու համար:
2. Երկրորդ՝ միգրացիայի մասին պատմություններ հեղինակող ոչ մասնագետ մասնակիցների համար ցուցումներ է տալիս այն մասին, թե ինչպես ապահովել, որ միգրացիայի թեմաներ և միգրանտներ ընդգրկող պատմություններում ճիշտ և ազդեցիկ կերպով ներկայացվեն խնդիրները: Այս ուղեցույցը պետք է օգտակար լինի լրագրողական գործընթացում ներգրավված զանազան աշխատակիցների համար՝ ընդհանուր նորությունների և հողվածագիր լրագրողներից մինչև խմբագրական և թողարկող թիմերի անդամներ՝ հրատարակչական խմբագիրներ, նորությունների և հողվածների խմբագիրներ, թողարկող խմբագիրներ, ֆոտոխմբագիրներ և խմբագիրների տեղակալներ:

Կրկին՝ ձեզ համար առավել կարևոր թեմաների և խնդիրների մեջ խորանալու համար օգտվեք յուրաքանչյուր բաժնի ուղղորդիչ պատուհաններից:

Մասնագիտացված ոլորտներ, որոնք, սովորաբար, լուսաբանում են միգրացիոն հարցեր՝

Ստորև ներկայացված լրագրության ոլորտները նկարագրում են սովորաբար մասնագետ լրագրողների կողմից իրականացվող աշխատանքի բնագավառները, որոնք առնչվում են միգրացիային: Մասնագիտացման այս ոլորտները կարող են տարբեր երկրներում ունենալ տարբեր անվանումներ կամ տարբեր եղանակներով խմբավորված լինել: Օրինակ, ՄԹ մեդիայում ընդհանուր գործառույթը վերապահված է «Ներքին գործերը» լուսաբանող լրագրողին, ում լուսաբանման ոլորտների շարքում են ոստիկանության և դատարանների գործունեությունը, միգրացիան, ժողովրդագրական և սոցիալական հարցերը, իսկ այս ամենը մեծ իմաստով առնչվում է ՄԹ կառավարության որոշակի գործակալության՝ Ներքին գործերի նախարարության պարտականությանը:

Քաղաքական լրագրողներ

Քաղաքական հարցերով թղթակիցները սովորաբար զբաղվում են հետևյալ հարցերով՝ միգրացիոն քաղաքականության մշակում և իրականացում (այդ թվում՝ սահմանների կառավարում), ազգային տնտեսական և սոցիալական խնդիրների (այդ թվում՝ աշխատաշուկաներ և զբաղվածություն, հանրային ֆինանսներ և սոցիալական համախմբում) վրա միգրացիոն և (կամ) ինտեգրացիոն քաղաքականությունների ազդեցություն, հասարակության վերաբերմունքը միգրացիային, միգրանտներին և փոքրամասնությունների համայնքներին, հանրային ծառայությունների մատուցում, միգրացիոն օրակարգի օգտագործում ընդդիմադիր քաղաքական խմբերի կողմից:

Միգրացիոն հարցերի քաղաքական լուսաբանման լավագույն գործելակերպի ցուցիչներ

Լրագրողները հաճախ իրենց համարում են քաղաքականության մշակման գործընթացի անկողմնակալ դիտորդներ, սակայն իրականությունն այն է, որ լրագրությունը հաճախ ակտիվ դեր է խաղում քաղաքականության արդյունքները ձևավորելու հարցում: Որևէ պատմություն լուսաբանելու (կամ չլուսաբանելու) ձևը կարող է ձևավորել հասարակության վերաբերմունք, ազդել ընտրությունների վրա կամ քաղաքականության հաջողության կամ ձախողման համար պատասխանատվության կանչել անհատների կամ նախարարությունների: Միգրացիայի հարցերի լավ լուսաբանումը քաղաքական համատեքստում պետք է ճշգրիտ հռետորաբանությունն ու դատարկախոսությունը:

Տեքստային ներդիր

Հռետորաբանության ճեղքում

Միգրացիայի վերաբերյալ քաղաքական հռետորաբանությունը դրսևորվում է բազմաթիվ ձևերով, իսկ դրա ներկայացումը, զուտ որպես «դրական կամ բացասական», կարող է

լինել պարզունակ և անօգուտ: Դուք պետք է դիտարկեք, արդյոք պնդումն օբյեկտիվորեն ճշմարիտ է և այն հնարավոր է ապացուցել, թե պարզապես սաված է ազդեցություն և տպավորություն ստեղծելու համար՝ պարունակելով ճշմարտության հատիկներ կամ ընդհանուր հայտարարություններ, որոնք չստիպանցվում են քաղաքական նպատակով:

Օրինակի ուսումնասիրություն. Թրամփը և Մեքսիկան

Հավանաբար, վերջին տարիներին մեդիայում միգրացիայի հռետորաբանական օգտագործման առավել ակնհայտ միջազգային օրինակներ են պոպուլիստ քաղաքական գործիչներ Դոնալդ Թրամփի և Վիկտոր Օրբանի գրառումները սոցիալական ցանցերի իրենց էջերում կամ դրանց լուսաբանումն այլ լրատվամիջոցներում: [Թայմ Մեգրգինի](https://www.nytimes.com/2018/05/28/world/europe/paris-migrant-hero-spiderman.html)⁹ այս կարճ ակնարկը ներկայացնում է այն բազմաթիվ դեպքերը, երբ 2016 թվականի ընտրական քարոզարշավի ընթացքում և պաշտոնավարման վաղ օրերին Թրամփը խիստ սադրիչ հռետորական արտահայտություններ է անում մեքսիկացի միգրանտների (և ընդհանրապես Մեքսիկայի) մասին, ներառյալ մեքսիկացիների մերժումը՝ որպես «հանցագործներ» և «բռնարարներ»:

Օրինակի ուսումնասիրություն. դրական կարծիքներ

Սակայն հռետորաբանությունն ուղղված է ոչ միայն ներգաղթողների դեմ: Այս հոդվածում, որը հաջորդեց Փարիզում 2016 թվականին անկանոն միգրանտի կողմից մանկահասակ երեխա փրկելուն, [Նյու Յորք Թայմզ](https://www.nytimes.com/2018/05/28/world/europe/paris-migrant-hero-spiderman.html)¹⁰ մեջբերեց հետևյալ հռետորական պնդումն ի նպաստ ներգաղթի. «Ես հիանում եմ Մամուդու Գասսամայի քաջությամբ,» - գրել էր ձախակողմյան ուղղվածության գրական-քննադատական ամսագրի գլխավոր խմբագիր Ռաֆայել Գյուկամանն իր ֆեյսբուքյան էջում: «Ես երազում եմ մի երկրի մասին, որտեղ կարիք չի լինի երեխայի կյանքը փրկելու համար մազլցել շենքը՝ վտանգելով սեփական կյանքը, որպեսզի քեզ վերաբերվեն որպես մարդ արարածի, երբ դու միգրանտ ես»: <https://www.nytimes.com/2018/05/28/world/europe/paris-migrant-hero-spiderman.html>

Եզրակացություն: Ձեր խնդիրն է՝ կատարել սավածի քննադատական վերլուծություն. արդյոք այն դիտավորությամբ մոլորեցնո՞ւմ է: Արդյոք ինչ-որ մեկը պարզապես խոսո՞ւմ է սրտից՝ ուշադրություն չդարձնելով բառերին: Արդյոք ինչ-որ մեկը փորձո՞ւմ է նման բառերով ստանալ լսարանի աջակցությունը կամ համաձայնությունը: Ի՞նչ նպատակով և ինչո՞ւ: (տե՛ս: Գլուխ 6. [Պատմության \(նիշտ\) շարադրում, Ատելության խոսք և սխալ տեղեկատվությունը բաժինը](#))

Արդյոք անկախ վերլուծությունը հիմնավորո՞ւմ է քաղաքական պնդումները:

Եթե ներկայացվում է քաղաքականություն առանց հստակ և համոզիչ ապացույցների, որ այն կաշիսատի կամ պետք է աշիսատի, ապա ցանկացած լավ քաղաքական լրագրող պետք է բարձրացնի դրան առնչվող լրջագույն հարցեր (տե՛ս՝ Գլուխ 9. [Տվյալներ և](#)

⁹ <https://time.com/4473972/donald-trump-mexico-meeting-insult/>

¹⁰ <https://www.nytimes.com/2018/05/28/world/europe/paris-migrant-hero-spiderman.html>

վերլուծություն): Սակայն ոչ բոլոր ապացույցներն ունեն հավասար կշիռ, քանի որ հետազոտական կենտրոնները, ՀԿ-ները և քաղաքականապես մոտիվացված հետազոտողները կարող են ունենալ քաղաքական մոտեցմանն աջակցելու գաղափարական պատճառ: Վստահելի աղբյուրներից անկախ հետազոտություն գտնելը կարող է տարբերություն դնել հողվածի միջև, որը հեղինակել է ակամայից քաղաքական օրակարգն առաջ տանելու կամ դրան աջակցելու գործին լծված լրագրող, և լավ լրագրության միջև, որը հաշիվ է պահանջում իշխանություններից:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- [Քաղաքական գործիչներին և Պետական մարմինները և ազգային վիճակագրական կազմակերպությունները որպես աղբյուր օգտագործելու մասին լրացուցիչ տե՛ս՝ Գլուխ 8. Ինչպես գտնել և օգտագործել փորձագետներին](#)
- [Կանխակալության և ներկայացուցչության խնդրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ Բազմազանություն բաժինը 6-րդ գլխում՝ Պատմության \(ճիշտ\) շարադրում](#)
- [Տվյալների հետ աշխատելու վերաբերյալ լրացուցիչ խորհուրդների համար տե՛ս՝ Գլուխ 9. Տվյալներ և վերլուծություն:](#)
- [Ձեր աշխատանքում ճիշտ բառերի օգտագործման մասին լրացուցիչ տե՛ս՝ Գլուխ 4. Տերմինաբանություն:](#)

Տնտեսություն և բիզնես

Տնտեսության կամ բիզնեսի ոլորտի թղթակիցները, սովորաբար, անդրադառնում են այն հարցին, թե ինչպես են միգրացիան և միգրացիոն քաղաքականությունն ազդում բիզնեսների աշխատանքի և հանրային ֆինանսների, աշխատաշուկաների և զբաղվածության վրա:

Միգրացիոն հարցերի տնտեսական լուսաբանման լավագույն գործելակերպի ցուցիչներ

Տնտեսական վերլուծությունը հաճախ ապահովում է համեմատաբար ճշգրիտ և կոնկրետ տեղեկատվություն, իսկ դիտարկելով միգրացիայի խնդիրը տնտեսական ազդեցության ակնոցներով կարող է ստեղծել խնդրի ավելի անկախ և օբյեկտիվ վերլուծության տպավորություն, քան քաղաքական, անվտանգային կամ սոցիալական հարցերի շուրջ կենտրոնանալու դեպքում, ինչը կարող է ավելի սուբյեկտիվ լինել: Սակայն շատ կարևոր է հստակ իմանալ նման վերլուծության սահմանափակումները և հասկանալ ամբողջական պատկերը, այլ ոչ թե ենթադրել, որ մի նեղ մեկնաբանություն ներկայացնում է ամբողջ պատմությունը:

Միգրացիայի հարցերը լուսաբանելու ընթացքում լավ տնտեսական կամ բիզնես թղթակիցը պետք է մի շարք կարևոր հարցեր տա ինքն իրեն՝

Կա՞ն արդյոք կոմպրոմիսներ:

Գործողություններն առաջացնում են հետևանքներ, որոնք, երբեմն, հստակ են, լավ հասկանալի և լիովին սպասելի, սակայն երբեմն էլ դրանք կարող են լինել անսպասելի կամ թաքնված: Օրինակ՝

- Բազմաթիվ հետհամայնավար երկրներում արտագաղթն առաջացրել է փոխանցումների էական ներհույս (տես Գլուխ 4. [Տերմինաբանություն](#)): Միգրանտների ուղարկած փոխանցումները կարող են առաջացնել թե՛ դրական, թե՛ բացասական հետևանքներ:
- Հաճախ դրամական միջոցների և այլ ապրանքների այս հոսքերը փրկօղակ են դրանք ստացող ընտանիքների և համայնքների համար, սակայն փոխանցումների ազդեցությունները տեղական տնտեսության վրա կարող են առաջացնել դժվարություններ:
- Նման բարդ (և հաճախ անսպասելի) հետևանքների շարքում կարող են լինել փոխանցումներ ստացողների մոտ աշխատելու ցանկության նվազումը և փոխարժեքների վրա այնպիսի ներգործությունը, որը բացասաբար է ազդում առևտրային ոլորտի վրա (տե՛ս՝ [Աշխատանքային միգրացիա](#) և [Փոխանցումներ](#) բաժինները 5-րդ գլխում՝ [Միգրացիոն պատմություններ](#)):

Լիարժեք հաշվի՝ եք առել այլընտրանքային տեսակետերը:

- Որքան էլ համոզիչ թվա տնտեսական կամ բիզնես փաստարկը, կարևոր է այն մանրակրկիտ քննել և հասկանալ այդ փաստարկի ետևում եղող շահակրին կամ տեսակետը:
- Հաճախ քաղաքականությունները կարող են առաջ բերել տնտեսական հաղթողներ և պարտվողներ, հետևաբար՝ մինչև ընդհանուր «հաղթանակ» կամ «պարտություն» ենթադրող բովանդակություն (կոնտենտ) կերտելը կարևոր է վերլուծել ով է շահում և ով է կորցնում:

Ծուղակներ և տարածված սխալներ

Գերպարզեցում: Տնտեսությունը, բիզնեսները և քաղաքականությունը, ինչպես նաև նորմերը, որոնցով դրանք կարգավորվում են, բարդ են և ունեն բազմաթիվ փոփոխականներ: Ներկայացնելով տնտեսական վերլուծության որոշ տարրեր, դուրս թողնելով մյուսները՝ հնարավոր է ստանալ ավելի կարճ, պարզ պատմություններ, սակայն այդ մոտեցումը կարող է հիմնովին փոխել այն վերլուծության իմաստը, որը դուք լուսաբանում եք, և հանգեցնել միգրացիայի և դրա հնարավոր հետևանքների ոչ ճիշտ ընկալման:

Տարածված գերպարզեցման մի օրինակ է այսպես կոչված «**աշխատանքի ծավալի անփոփոխության մասին մոլորությունը**», որի դեպքում միգրանտ աշխատողները ներկայացվում են որպես «տեղաբնակներից աշխատանք խլող», սակայն այս մոտեցումը ենթադրում է, որ տնտեսության մեջ կան ֆիքսված թվով աշխատատեղեր և բնիկներն ու միգրանտներն ունեն աշխատանքային նույն հմտություններ/ունակությունները, ինչը հաճախ այդպես չէ: Նոր մարդկանց ժամանումը կարող է մեծացնել ապրանքների և ծառայությունների պահանջարկը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր և տնտեսության ճյուղեր:

Արդյոք ձեր աղբյուրն անկախ է:

- Ընկերությունները, քաղաքական կուսակցությունները և առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ տվյալ հարցի վերաբերյալ սեփական դիրքորոշման համար հանրային աջակցություն ձևավորելու լուրջ խթան: Լուրերի բովանդակությունը, որը մղում է քաղաքականություն մշակողին աջակցել որևէ ձեռնարկի կամ նախագծի, կամ ընդդիմանալ մյուսին, կարող է ունենալ լուրջ ֆինանսական հետևանքներ:
- Արդյոք ձեր աղբյուրը ֆինանսական օգուտ է քաղում ձեր պատմությունից: Արդյոք մեկ այլ կողմ ֆինանսական վնասներ է կրում: Արդյոք ձեր վերլուծությունը հիմնավորում է որոշակի քաղաքական կուսակցության կոնկրետ քաղաքական կամ տնտեսական տեսակետ կամ շահեր: Եթե այդպես է, ուրեմն քննական դատողությամբ վերլուծեք՝ արդյոք աղբյուրն արժանահավատ է, և ձեզ տրամադրված տեղեկությունների հավաստիությունը հնարավոր է ստուգել առնվազն մեկ այլ աղբյուրի հետ կամ գտնել դրանք առնվազն մեկ այլ աղբյուրում:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- *Տնտեսության, բիզնեսի և միգրացիայի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ [Աշխատանքային միգրացիա, Ամենօրյա նկատառումներ, Փոխանցումներ բաժինները 6-րդ գլխում՝ Պատմության \(նիշտ\) շարադրում](#)*
- *Տե՛ս՝ նաև Գլուխ 8. [Բնչպես գտնել և օգտագործել փորձագետներին](#)*

Անվտանգություն, հասարակական կարգի պահպանում և օրենք

Անվտանգային, ոստիկանական գործունեության և իրավական հարցեր լուսաբանող լրագրողները հաճախ լուսաբանում են նաև ապաստան հայցողներին և փախստականներին, սահմանային հսկողությանը, անկանոն և գաղտնի միգրացիային, անդրսահմանային հանցագործություններին՝ թրաֆիքինգին կամ մաքսանենգությանը, ներգաղթի օրենքների իրավակիրառմանը, ձերբակալմանն ու արտաքսմանը, անկանոն աշխատանքին (աշխատանք, որը կատարում են աշխատանքի թույլտվություն կամ վարչական այլ թույլտվություն չունեցող անձինք) և օտարերկրյա իրավախախտներին առնչվող միգրացիոն հարցեր:

Անվտանգային և ոստիկանական գործունեության խնդիրների լուսաբանումը կարող է հիմնվել ոստիկանության, ներքին գործերի նախարարության կամ պետական այլ աղբյուրներից ստացվող տեղեկատվության և վերլուծության վրա և կենտրոնանալ արարքների շուրջ, որոնք ինչ-որ կերպ խախտում են ներպետական կամ միջազգային օրենքները: Սա միգրացիայի լուսաբանման ամենավիճելի և ամենահակասական թեմաներից մեկն է:

Անվտանգության, հասարակական կարգի պահպանության և օրենքի համատեքստում միգրացիոն հարցերի լուսաբանման լավագույն գործելակերպի ցուցիչներ

Իմանալ օրենքը, բայց անել դատողություններ

Իհարկե, չափազանց կարևոր է իմանալ՝ ինչ է ասում օրենքը անձի՝ երկիր մուտք գործելու, երկրում աշխատելու կամ բնակվելու իրավունքի մասին, սակայն նաև էական են սեփական դատողություններն այն մասին, թե արդյոք իրավական համակարգը կամ իրավիճակը, որում հայտնվել էք, արդարացի՞ են:

Հասկանալ՝ ինչպես և ինչու է հավաքվել ձեր ստացած տեղեկատվությունը

Ո՞վ է հավաքել ձեզ ներկայացվող տվյալները և ինչպե՞ս են նրանք ստացել դրանք: Բնականաբար, սա կարևոր է ցանկացած տեսակի լրագրության դեպքում, սակայն երբ խոսքը գնում է ոստիկանական գործունեության կամ անվտանգության կարգի խնդիրների մասին՝ այն դառնում է հիմնարար: Տվյալների տեսանկյունից՝ կարևոր է իմանալ, թե ինչպես են հավաքվել դրանք, քանի որ դա ազդում է ձեր ստացած տեղեկատվության ճշգրտության վրա. արդյոք դրանք ստացվել են հարցման արդյունքում, կամ սահմանը հատող բոլոր անձանց հաշվառելու միջոցով, կամ վերահսկողության հիման վրա կատարված մոտավոր գնահատական են (տե՛ս՝ Գլուխ 9. [Տվյալներ և վերլուծություն](#)):

Ավելին, եթե ձեզ քանակականի փոխարեն ներկայացվել է որակական տեղեկատվություն, օրինակ՝ պնդում, որ միգրանտ աշխատողների մի խումբ ապօրինի է գտնվել երկրում, ապա որտեղի՞ց է գալիս այս պնդումը և ինչպե՞ս են ստացվել այս տեղեկությունները: Կարո՞ղ եք ստուգել նրանց իրավական կարգավիճակը և կա՞ որանց հետ կապված որևէ անորոշություն: Արդյոք հստակ է, որ նրանք գոհեր չեն, և վկայություններ ստանալու համար նրանց նկատմամբ հարկադրանք չի կիրառվել:

Ծուղակներ և տարածված սխալներ

Մարդիկ, ոչ թե տվյալների կետեր

Միգրացիան մարդկային գործընթաց է, և հարկ է հարգել այդ գործընթացում ներգրավված յուրաքանչյուր անհատի մարդեղությունը և արժանապատվությունը՝ անկախ նրա ծագումից կամ իրավիճակից: Երբ լուսաբանում եք միգրացիայի ծավալներին, սահմանի ապօրինի հատումներին կամ անկանոն միգրանտների խմբերին առնչվող պատմություններ, համոզվեք, որ չեք պատկերում ձեր հերոսներին վերացական հասկացություններով կամ որպես ինչ-որ միատարր զանգված:

Փոխաբերությունները կարող են ապամարդկայնացնող լինել

Բոլորս էլ սիրում ենք գրել մի փոքր ոճային, և մեր շարադրանքին որոշ գույն ավելացնելը կարող է լսարանը գրավելու և մեր պատմությունների հանդեպ դրա հետաքրքրությունը պահելու լավ ձև լինել: Սակայն, միգրանտներին կամ միգրացիոն շարժումները նկարագրելու համար փոխաբերությունների գործածությունը կարող է հաճախ ծառայել լսարանը նրանց՝ որպես մարդու մասին մտածելուց շեղելուն և, փոխաբերը, նպաստել նրանց՝ որպես օբյեկտներ, տվյալներ կամ վերացական հասկացություններ (օրինակ՝

«հոսքեր») ընկալելուն: Լրագրողների համար սովորական է միգրանտների հոսքերը կամ խմբերը նկարագրելու համար օգտագործել «աղետի» փոխաբերություններ, օրինակ՝ «հեղեղ», «հորդում», կամ եզրույթներ, որոնք օգտագործվում են կենդանիներ նկարագրելու համար, օրինակ՝ «երամ»: Նման փոխաբերություններից պետք է խուսափել:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- *Անվտանգությանը, հասարակական կարգի պահպանմանը կամ օրենքին առնչվող լրացուցիչ խնդիրների համար տե՛ս՝ [Փախստականներ և ապաստան](#), [Անվտանգություն](#), [հասարակական կարգի պահպանում և օրենք](#), [Արտարսում և հարկադիր փոստում](#), [Անկանոն միգրացիա բաժինները 5-րդ գլխում՝ Միգրացիոն պատմություններ](#):*
- *Տե՛ս՝ նաև Գլուխ 4. [Տերմինաբանություն](#), [Բազմազանություն և Միայ տեղեկատվություն](#) և [առելության խոսք բաժինները 6-րդ գլխում՝ Պատմության \(ճիշտ\) շարադրում](#)*

Ներքին կյանքի, սոցիալական և կրոնական հարցեր

Ներքին կյանքի և սոցիալական հարցերի թեմաներով աշխատող լրագրողները սովորաբար գործ ունեն այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են ժողովրդագրությունը և բնակչության փոփոխությունը, միգրանտների [ինտեգրումը](#) և սոցիալական համախմբումը, էթնիկ/ռասայական փոխհարաբերությունները:

Կրոնական հարցեր լուսաբանողները, բնականորեն, կենտրոնանալու են միգրացիայի կրոնական բաղադրիչի շուրջ կամ ներգաղթողների՝ բնակչության նոր վայրերում իրենց կրոնն ազատ դավանելու հնարավորությունների, կամ ընդունող պետության համար նոր ներգաղթող կամ կայացած ներգաղթյալ համայնքի կրոնական սովորույթների առաջացրած հետևանքների տեսանկյունից:

Կրոնական հարցերի լուսաբանման համատեքստում միգրացիոն հարցերի լուսաբանման լավագույն գործելակերպի ցուցիչներ

Ընդունել տարբերությունը՝

Միգրացիային առնչվող սոցիալական և կրոնական հարցերը լուսաբանելու ամենահիմնական սկզբունքն է՝ ընդունել, որ ոչ մի սոցիալական խումբ, կրոն կամ հավատամք չպետք է ներկայացվի որպես ինքնաբերաբար «լավ» կամ «վատ», «ճիշտ» կամ «սխալ»: Տարբեր հավատամքներ դավանելու և ծեսերը կատարելու իրավունքն ամրագրված է մարդու իրավունքների միջազգային իրավունքում:¹¹

Ծուղակներ և տարածված սխալներ

Կարծրատիպեր, նախապաշարուններ և ենթադրություններ՝

¹¹ Տե՛ս՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով զբաղվող հանձնակատարի գրասենյակի բացատրությունը՝ <https://www.ohchr.org/en/issues/freedomreligion/pages/standards.aspx>

Խնդրահարույց և վտանագավոր է ենթադրություններ անել անձի մոտեցումների, տեսակետերի կամ վարքագծի մասին՝ ելնելով նրա էթնիկ կամ սոցիալական պատկանելիությունից կամ կրոնից, քանի որ դա կարող է ավելի ամրապնդել հանրային կարծիքը, որը հիմնված չէ հղկված և ճիշտ ընկալման վրա: Հիշե՛ք, որ անձի ծագումից կամ նրա սոցիալական, էթնիկ կամ ազգային պատկանելիության ձեր ընկալումից ելնելով նրա ինքնության կամ կապերի մասին ձեր թելադրական ենթադրությունները միայն մտացածին կարծիք են: Սա խարխուլում է ճշգրիտ և անկախ լուսաբանումը:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- [Ինտեգրում, ուժացում և ժողովրդագրական փոփոխություն](#)

Արվեստ և մշակույթ

Մեծ է հավանականությունը, որ արվեստ և մշակույթ լուսաբանող լրագրողներն կառնչվեն ներգաղթի խնդիրների հետ իրենց լուսաբանած անհատների, խմբերի կամ կազմակերպությունների արմատների, ժառանգության կամ աշխատանքի, նրանց ավանդույթների, սովորությունների կամ նույնիսկ խոհանոցի, գրքերում, կինոնկարներում կամ հեռուստատեսադրոյումներում հիմնական պլուժետային գծերի կամ այլ բնագավառների տեսանկյունից, որտեղ կարևոր են համարվում լուսաբանվող թեմայի աշխարհագրական կամ մշակութային ակունքները:

Արվեստի և մշակույթի լուսաբանման համատեքստում միգրացիոն հարցերի լուսաբանման լավագույն գործելակերպի ցուցիչներ

Գեղարվեստական գրականությունը և արվեստը նույնպես պետք է հիմնված լինեն խորը վերլուծության և հիմնավոր փաստերի վրա

- Արվեստը հաճախ քաղաքական է, իսկ մեծ արվեստը գրեթե միշտ արտահայտում է ինչ-որ սոցիալական կարծիք: Երբ լուսաբանում եք արվեստ, գրականություն կամ մշակութային այլ երևույթներ, որոնք կրում են միգրացիայի ազդեցությունը կամ անդրադառնում միգրացիայի խնդրին՝ հնարավորության դեպքում հարց տվեք ձեզ և հեղինակներին՝ ո՞րն է հիմնական իմաստը: Դա հնարավորություն կտա ձեզ՝ ավելի խորն անդրադառնալ նրանց բարձրացրած խնդիրներին:
- Արվեստը կարող է ազդեցիկ լինել: Արվեստի ազդեցությունը հասարակության վրա նշանակում է, որ պետք է մանրակրկիտ վերլուծել և նկատի ունենալ միգրացիայի և ինտեգրման խնդիրներին առնչվող հիմնական թեմաներն ու ուղերձները: Երգերն, օրինակ, կարող են հասարակությանը միաբանող ուժ լինել՝ մարդկանց ընձեռելով միասին պարելու և զվարճանալու հնարավորություն, կամ լինել քարոզչական գործիքներ, որոնք նախատեսված են մի խումբը մյուսի դեմ միավորելու համար:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- Արվեստի և մշակույթի դերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ [Ինտեգրում, ուժացում և ժողովրդագրական փոփոխություն](#) բաժինը 5-րդ գլխում՝ [Միգրացիոն պատմություններ](#):

Արտասահմանյան, դիվանագիտական և միջազգային թղթակիցներ

Արտասահմանյան թղթակիցները կարող են տարբեր եղանակներով անդրադառնալ միգրացիայի խնդրին՝ իրենց գտնվելու երկիր ներգաղթած հայրենակիցներին կամ այդ երկրում գտնվող պատմական սփյուռքի խմբերին առնչվող խնդիրների լուսաբանումից մինչև միգրացիայի խնդրի ներկայացումը՝ որպես տվյալ երկրում առանցքային քաղաքական հարց (օրինակ՝ Դոնալդ Թրամփի հակաիմիգրացիոն հռետորաբանության, Եվրոպայում 2015 թվականին ապաստանի հետ կապված ճգնաժամին Անգելա Մերկելի «[Wir schaffen das](#)» («Մենք կարող ենք անել դա»)¹² մոտեցման կամ հակամարտության ընթացքում Արևելյան Ուկրաինայից մարդկանց տեղահանման լուսաբանումը), կամ բիզնեսի մտահոգությունների, հանրային կարծիքի, փախստականների և ապաստան հայցողների խնդիրների, կամ տվյալ երկրի և այլ պետությունների միջև հարաբերությունների վրա ազդեցություն ունեցող այլ խնդիրների համատեքստում:

Արտաքին գործերի լուսաբանման համատեքստում միգրացիոն հարցերի լուսաբանման լավագույն գործելակերպի ցուցիչներ

Քանի որ արտասահմանյան և միջազգային թղթակիցները լուսաբանում են զանազան թեմաներ, նրանք կարող են կիրառել նույն գաղափարները և նկատառումները, որոնք սահմանվել են նախորդող ու հաջորդող բաժիններում և առնչվում են՝

- [Քաղաքական նկատառումներին](#).
- [Տնտեսական և բիզնես նկատառումներին](#).
- [Անվտանգային և իրավական նկատառումներին](#).
- [Մշակութային, սոցիալական և կրոնական նկատառումներին](#):

Միջազգային հարաբերություններ լուսաբանող թղթակիցներ

Ի հավելումն վերոնշյալի՝ հարկ է նշել, որ ֆինանսական և մուտքի արտոնագրի սահմանափակումները նշանակում են, որ բազմաթիվ լրագրողներ **միջազգային հարաբերությունները** լուսաբանում են՝ երբևէ հնարավորություն չունենալով ճամփորդել իրենց լուսաբանած պետություններ: Այդ պատճառով, արտասահման ճամփորդելու կամ այնտեղ ապրելու և աշխատելու հնարավորություն չունեցող լրագրողները պետք է ուսումնասիրեն [աղբյուրների ձևավորում և պաշտպանություն](#) (Գլուխ 6. [Պատմության \(նիշտ\) շարադրում](#)):

¹² <https://www.politico.eu/article/angela-merkel-wir-schaffen-das-5-years-on/>

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- Միջազգային հարաբերությունների լուսաբանմանն առնչվող լրացուցիչ խնդիրների համար տե՛ս՝ Գլուխ 5. [Միգրացիոն պատմություններ, մասնավորապես Փախառականներ և սպաստան, Անվտանգություն, հատարակական կարգի պահպանում և օրենք, Արտաքսում և հարկադիր փոստում, Անկանոն միգրացիա](#)
- Նաև Գլուխ 4. [Տերմինաբանություն և Աղբյուրների և տեսակետերի բազմազանություն և Միայ տեղեկատվություն և ստեղծության խոսք բաժինները 6-րդ գլխում՝ Պատմության \(նիշտ\) շարադրում](#)

Զմասնագիտացած լրագրողներ

Ոչ բոլոր լրագրողներն են լուսաբանում կոնկրետ ոլորտ: Բազմաթիվ լրագրողների կարիերային առաջխաղացման հիմնարար մաս են կազմում ընդհանուր լուրերը և տեղեկատվությունը, իսկ շատ լրատվամիջոցներ իրենց բովանդակության մեծ մասը ստեղծելու հարցում կախված են այս «այն պրոֆիլի մասնագետներից»:

Լավագույն գործելակերպի ցուցիչներ ընդհանուր լուրերի լրագրողների համար

Արտասահմանյան թղթակիցների օրինակով՝ ընդհանուր լրագրողները ստիպված են մի, հաճախ բարդ, խնդրից անցնել մեկ ուրիշի, և կարող են մի շարք իրավիճակներում առնչվել միգրացիայի խնդիրների հետ: Հնարավոր լուսաբանման ոլորտների լայն շրջանակը նշանակում է, որ իրատեսական չէ հստակ ուղեցույցներ մշակել զմասնագիտացող լրագրողների համար, սակայն ստորև ներկայացվում են մի շարք օգտակար նախնական նկատառումներ:

- 1) Համոզվեք, որ ձեր մեկնարկային կետը միշտ ձեր լուսաբանման օբյեկտների մարդեղությունն է (տե՛ս՝ [Գլուխ 4. Էթիկական հիմքեր](#)):
- 2) Համոզվեք, որ հասկանում եք այն մարդկանց իրավական կարգավիճակը, ում հետ գործ ունեք:
- 3) Միգրանտների համայնքների կամ խմբերի մասին ենթադրություններ կամ ընդհանրացումներ մի արեք:
- 4) Խուսափեք նվաստացուցիչ, սադրիչ կամ խտրական ձևակերպումներից (տե՛ս՝ [Գլուխ 4. Տերմինաբանություն և Ատելության խոսք և միգրացիա](#))

Ի հավելումն այս հիմնական կանոնների՝ վերը ներկայացված ուղեցույցները, որոնք առնչվում են քաղաքական, սոցիալական, կրոնական, տնտեսական և իրավական նկատառումներին, կարող են օգնել ընդհանուր թեմաներ լուսաբանող լրագրողներին՝ հեղինակել պատմություններ, որոնք անդրադառնում են առաջ եկող բազմաթիվ կոնկրետ խնդիրների:

Ծուղակներ և տարածված սխալներ

1) *Հետևել ընդհանուր հոսքին:* Ընդհանուր թեմաներ լուսաբանող լրագրողները մյուսներից ավելի են հիմնվում այլ լրատվամիջոցների և ընթացիկ ազգային բանավեճի վրա՝ սեփական մեկնաբանությունը հիմնավորելու և պատմությունները շարադրելու համար:

Լրագրությունը հիմնվում է ինքն իր վրա: Լրագրողների վրա ազդում է գործընկերների աշխատանքը, և նրանք հաճախ հետևում և զարգացնում են պատմություններ, որոնք սկսել են ուրիշները: Դա կարող է լինել ավելի խորը պեղելու և նոր անկյուններ բացահայտելու լավ միջոց, սակայն առաջացնում է նաև ազգային պատմություններն արմատավորելու վտանգ, քանի որ այդ պահից դրանք դիտվում են որպես «իրերի իրական վիճակը» պատկերող, այլ ոչ թե ճշմարտությունն ընկալելու ձևերից մեկը:

Արագ աշխատելու, ժամկետների մեջ տեղավորվելու և խմբագիրների պահանջները բավարարելու անհրաժեշտությունը կարող է նշանակել, որ ընտրություն եք կատարում՝ «իրերի իրական վիճակի» ենթադրյալ ընկալումից ելնելով: Սակայն ձեր աշխատանքը միշտ կշահի, եթե կարողանաք ձեր թեման ընկալելու զանազան տարբերակներ դիտարկելու համար բավականաչափ երկար «շունչ քաշելու» դադար առնել, և ցանկանաք քաղաքավարի հարցականի տակ դնել խմբագրական այն տարբերակները, որոնք ձեր կարծիքով սխալ են կամ շտապողական:

Փոստլրագրողներ

Պատմությունը շարադրելու ընթացքում ազդեցիկ պատկերների գործածությունը լրացուցիչ ուժ է հաղորդում լրագրությանը, սակայն կենսական է, որ մեդիան զգուշությամբ խուսափի կարծրատիպերն արմատավորող մակերեսային տպավորություններ ստեղծելուց:

- Խուսափեք լուսանկարների օգտագործումից կամ տեսանյութեր պատրաստելուց, որոնք խրախուսում են անառողջ սենսացիաները, մասնավոր կյանքի մեջ ներխուժումը կամ այլոց կյանքի հանդեպ անառողջ հետաքրքրությունը:
- Անհատներին լուսանկարելուց կամ տեսագրելուց առաջ միշտ խնդրեք նրանց թույլտվությունը, սակայն սա պարտադիր չէ հանրային միջավայրում: Հնարավորության դեպքում նախապես ստացեք գրավոր թույլտվություն:
- Խուսափեք լուսանկարներից, որոնք արտացոլում են կլիշեներ, քանի որ դրանք նպաստում են կարծրատիպերին, որոնք կարող են մոլորեցնել կամ վնաս հասցնել: Նմանապես խուսափեք պարզունակ պատկերներից, որոնք ներկայացնում են իրենց վրա պատկերվածներին չափից ավելի պարզեցված բնութագրիչներով:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

Տոտոյրագրության և պատկերների մասին լրացուցիչ ցուցումների և խորհուրդների համար տե՛ս՝

- [Մարդկանց թրաֆիքինգ և մարսանենգություն բաժինը](#) 5-րդ գլխում՝ [Միգրացիոն պատմություններ](#)
- [Աղբյուրների ձևավորում և պաշտպանություն](#) և [Լուսանկարում և պատկերներ բաժինները](#) 6-րդ գլխում՝ [Պատմության \(ճիշտ\) շարադրում](#)
- [Հարցագրույց տրավմայի գոհերի հետ](#) բաժինը 7-րդ գլխում՝ [Հարցագրույցներ](#)

Լուրերի խմբագիրներ, թողարկող խմբագիրներ և ստեղծագործական խմբեր

(Այդ թվում՝ իրավասուներ, պատասխանատու խմբագիրներ, խմբագիրներ, թողարկող խմբագիրներ, խմբագիրների օգնականներ, թեմատիկ խմբագիրներ և թղթակիցներ):

Մեդիան կարող է թե՛ ձևավորել քաղաքական օրակարգեր, թե՛ արձագանքել դրանց: Ձեր լրատվամիջոցում հրապարակվող կամ չհրապարակվող բովանդակությունն ընտրելու հնարավորությունը խմբագիրներին տալիս է հանրային բանավեճերը ձևավորելու կամ դրանցում ներդրում ունենալու հսկայական իշխանություն: Այս ոլորտներում խմբագիրների կատարած դատողությունները կարող են լինել որոշիչ գործոն, որը պայմանավորում է հրապարակման հաջողությունը կամ խնդրի ազդեցությունը և կարևորությունը:

Լավագույն գործելակերպի ցուցիչներ միգրացիայի հարցերով զբաղվող խմբագիրների և ստեղծագործական խմբերի համար

Թափանցիկություն

Խմբագրական չափանիշները և գործելակերպը դարձրեք բաց և հասանելի՝

Նշանակում է, որ ձեր լրագրողները կարող են նախքան հարցագրույցը տեղեկացնել ձեր կազմակերպության քաղաքականությունների և գործելակերպի մասին՝ վստահություն ստեղծելու և ավելի լավ պատմություններ ստանալու նպատակով՝ միաժամանակ պաշտպանելով հարցագրույց տվողների լավագույն շահերը (Գլուխ 8. [Հարցագրույցներ](#)):

Պատմությունների ընտրություն և հրապարակում

Ընտրության չափանիշների կենտրոնում դրեք մարդասիրությունը՝

Պատմությունների համոզիչ շարադրությունը հաճախ կենտրոնանում է անհայտի վերաբերյալ դրամայի կամ կոնֆլիկտի, ծայրահեղ իրավիճակների և մտահոգությունների շուրջ: Միգրացիայի համատեքստում հեշտ է կենտրոնանալ այն պատմությունների վրա, որոնք խթանում կամ խորացնում են գայրույթը կամ վախը: Բնական են իրավիճակները, երբ խմբագրի դերը կայանում է մտահոգություններ բարձրացնելու և հիմնախնդիրներ

կարևորելու մեջ, սակայն այս պատմությունները կարող են իրական հետևանքներ առաջացնել մարդկանց համար՝ լինեն դրանք տեղական համայնքներ, որոնք գործ ունեն փոփոխությունների հետ, ներգաղթողներ, արտագաղթողներ, փախստականներ կամ ապաստան հայցողներ: Նկատի առնելով իրական հետևանքները, որոնք կարող են առաջացնել նման պատմությունները այդ ազդեցությունները վերլուծելու և, հնարավորության դեպքում, դրանք հասցեագրելու կամ մեղմելու համար, ժամանակ հատկացնելը որակի և մասնագիտական էթիկային հավատարիմ լինելու նշան է:

Թողարկող լրագրողներ՝ խմբագիրների տեղակալներ, վիդեո և հնչյունային խմբագիրներ

Ձեր դերը հաջողված նյութեր պատրաստելու հարցում ազդեցիկ կոնտենտի ընտրությունն է, ինչն արվում է բովանդակությունը կազմակերպելու և խմբագրելու, ինչպես նաև ձեր լսարանին այն հարմարեցնելու միջոցով: Ինչպես գիտեք, սա հաճախ անտեսանելի հմտություն է, որը պահանջում է տաղանդ և էներգիա:

Թողարկող լրագրողները պետք է աշխատեն արագ և հավասարակշռեն մի շարք իրար հետ մրցող առաջնահերթություններ. ճիշտ տևողությամբ նյութ պատրաստելը, որը ճշմարիտ է և համոզիչ, ունի պատշաճ ընթացք և պատասխանում է բոլոր առանցքային հարցերին, ճիշտ է ընկալվում և լսվում, տեղավորվում է հանձնելու ժամկետների մեջ:

Ուշադրություն պատմությանը, ոչ թե արտադրանքին

Ձեր դերակատարումը ենթադրում է բազմաթիվ նկատառումներ, որոնք առաջացնում են վտանգ, որ ձեր ուշադրության կենտրոնում կլինի լավ փաթեթավորված պրոդուկտի արտադրությունը, որի վերջնական տարբերակը կարող է այլևս չարտացոլի օրիգինալ բովանդակությունը:

Մի կորցրեք նրբերանգր մոնտաժի սենյակում

Էական ռիսկերի շարքն ընդգրկում է հատվածների կրճատումը, որոնք նրբերանգներ ու բարդություն են հաղորդում միգրանտի պատմությանը կամ ցուցադրում են համայնքների միջև համագործակցություն՝ հակամարտության փոխարեն: Մոնտաժվող մասերը քննարկեք լրագրողի և խմբագիրների հետ՝ համոզվելու համար, որ վերջնական տարբերակը պահպանում է նախատեսված ընդհանուր իմաստը, ինչպես նաև կիրառեք մասնագիտական դատողություն, որը, հնարավորության դեպքում, կապահովի պատմության դրական ազդեցությունը:

Խուսափեք փնթի կամ արհամարհական եզրույթներից (տե՛ս՝ Գլուխ 4. [Տերմինաբանություն](#))

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- *Միգրացիային առնչվող բառամթերքի և դրա ճիշտ օգտագործման մասին լրացուցիչ մտքերի համար տե՛ս՝ Գլուխ 4. [Տերմինաբանություն](#)*

- Միգրացիայի ոլորտի գործընթացներն ու խնդիրները խորությամբ բացահայտելու համար տե՛ս՝ Գլուխ 5. [Միգրացիոն պատմություններ](#)
- Միգրացիայի լուսաբանման վրա աշխատանքի ընդունելու, առաջխաղացման և խմբագրության մշակույթի ազդեցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ [Աղբյուրների և տեսակետների բազմազանություն](#) և [Գենդերային հարցեր և միգրացիա](#) բաժինները 6-րդ գլխում՝ [Պատմության \(ճիշտ\) շարադրում](#)
- Միգրացիայի լուսաբանմանն աջակցելու հարցում խմբագրության առաջնորդների, մեդիա սեփականատերերի և մյուսների անելիքների վերաբերյալ լրացուցիչ գաղափարների համար տե՛ս՝ Գլուխ 10. [Միգրացիայի լուսաբանման քարտեզավում](#)

ԵՉՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այս գլխի հիմնական միտքն այն է, որ միգրացիան կարող է խնդիր լինել գրեթե բոլոր տեսակի լրագրողների համար, իսկ լրագրության տարբեր ձևերն իրենց հետ բերում են մոտեցումներ և նորմեր, որոնք կարող են տարբեր եղանակներով ձևավորել պատմությունը:

Ժամանակ հատկացրեք և ինքներդ ձեզ հարց տվեք՝ ինչպե՞ս նույն թեման կլուսաբանեն տարբեր տեսակի լրագրողները, կամ արդյոք դուք ընկնո՞ւմ եք մի վիճակի մեջ, երբ պատմությունը ճիշտ շարադրելու փոխարեն ուշադրության կենտրոնում արտադրանքն է: Հանձնարարված խնդրի շրջանակից դուրս գալը և պատմության կերտման ընթացքում դիտարկած բոլոր տարբերակների մասին խորհրդածելը կարող են հանգեցնել ավելի որակյալ լրագրության, որն ավելի լավ է ծառայում հանրային շահին:

Պատմությունը լուսաբանելու որոշման պահից մինչև այն լուսաբանող լրագրող ընտրելը, հարցազրույց տվողների ընտրությունը, պատկերների օգտագործումը, թեմային տրվող կարևորությունը և դրանում ներկայացված կետերը՝ լրագրողն ունի ընտրություն, իսկ մեր ընտրությունները կարող են ձևավորել հանրային և քաղաքական արձագանքներ, որոնք էական հետևանքներ ունեն միգրանտների կյանքի և այն համայնքների համար, որոնց մաս են նրանք դառնում:

ԳԼՈՒԽ 3. ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Օգտագործեք այս գլուխը, որ՝

- *Ավելի լավ հասկանաք՝ ինչ գործոններ են պայմանավորում միգրացիայի լուսաբանման միջազգային միտումները:*
- *Պատկերացում կազմեք մեդիա պատմույթների և շրջանակի մասին, որոնց կարող եք անտեղյակ լինել:*

Այս գլուխն անդրադառնում է միգրացիայի լուսաբանման միջազգային միտումներին, որոնք հաճախ արտացոլում են որոշակի պատմույթներ և շրջանակներ: Թեև նախկին խորհրդային և արևելաեվրոպական այլ երկրներում կատարվել է միգրացիայի լուսաբանման սահմանափակ քանակական վերլուծություն՝ հետազոտությունները հուշում են, որ աշխարհի շուրջ կան միգրացիայի լուսաբանման որոշ ընդհանուր թեմաներ՝

1) Այն ավելի բացասական է, քան դրական

Թեև անհնար է իմանալ միգրացիայի լուսաբանման ամբողջ պատկերը, գոյություն ունեցող ապացույցները հուշում են, որ ամբողջ աշխարհում որոշ լրատվամիջոցներ վատ լուրերը և հիմնախնդիրները հաճախ կապում են միգրանտների և միգրացիայի հետ: 2013–2014 թվականներին կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ բարձր եկամուտով երկրներում միգրացիայի բացասական լուսաբանումը գրեթե երկու անգամ ավելի տեսանելի էր, քան դրականը¹³: Այս միտումն ավելի նկատելի էր որոշ երկրներում (Ավստրալիայում և Միացյալ Թագավորությունում), քան մյուսներում (Կանադա և Շվեյցարիա): Նմանօրինակ վիճակ էր նաև ցածր եկամուտով երկրներում (Աֆղանստան, Բանգլադեշ, Մալայզիա, Պակիստան, Շրի Լանկա, Թաիլանդ և Վիետնամ), որտեղ բացասական լուսաբանումը շատ ավելի ծավալուն էր, քան դրականը: Թե՛ բարձր, թե՛ ցածր եկամուտով երկրներում ամենաբացասական կոնտենտը կենտրոնանում էր անկանոն միգրացիայի շուրջ:

2) Այն, կարծես, դառնում է մի փոքր ավելի քիչ բացասական

Բնականաբար, նեգատիվիզմը բնորոշ է ոչ միայն միգրացիայի լուսաբանմանը, և լրագրողներն ավելի հաճախ առաջնահերթություն են տալիս լուծում պահանջող հիմնախնդիրներին կամ հակասական հարցերին, քան դրական թեմաների գովաբանմանը, որոնք ուշադրության կարիք չունեն: Վերջին տարիներին մի շարք երկրներում որոշակի անցում է նկատվում դեպի միգրացիայի հարցերի ավելի դրական կամ չեզոք լուսաբանումը, ինչպես նաև մեծանում գիտակցումը, որ կարևոր է լսելի դարձնել միգրանտների ձայները: Սոցիալական ցանցերը հնարավորություններ տվեցին միգրանտներին ստեղծել և տարածել

¹³ McCauliffe, Weeks and Koser (2015) <https://library.oapen.org/bitstream/handle/20.500.12657/30709/643773.pdf?sequence=1#page=311>

սեփական կոնտենտ, ինչպես նաև ավելի նպաստեցին միգրացիայի դրական ներկայացմանը¹⁴:

3) Այն հաճախ ունի առանցքային թեմաների շրջանակ

Միգրացիայի լուսաբանումն անդրադառնում է բազմաթիվ և բազմաբնույթ թեմաների և խնդիրների, սակայն միտում ունի ավելի խոսել ներգաղթի և ներգաղթողների, քան արտագաղթի և արտագաղթողների մասին, թեև դա, բնական է, պայմանավորված է ազգային համատեքստով: Ընդհանուր թեմաներն են՝¹⁵

- Օրինականություն և իրավակարգ/անվտանգություն
- Սոցիալ-մշակութային սպառնալիք
- Տնտեսական սպառնալիք
- Մարդասիրություն/գոհ
- Մարդկային հետաքրքրություն
- Միգրանտը՝ որպես ձեռնարկատեր/հաջողության պատմություններ
- Ժողովրդագրական դեֆիցիտ/տնտեսական անհրաժեշտություն

4) Լրատվամիջոցներում միգրացիայի լուսաբանման նշանակալիության և տրամադրվածության վրա զգալի ազդեցություն ունեն իրադարձությունները

Միգրացիայի լուսաբանումն անփոփոխ չէ: Պատերազմը կամ աղետները, որոնք ստիպում են փախստականներին, ապաստան հայցողներին կամ ներքին տեղահանված անձանց՝ լքել իրենց մշտական բնակության վայրը, ընտրությունները և պոպուլիստ դեկավարների վերելքն կամ անկումը և առնչվող հռետորաբանությունը, աշխարհաքաղաքական իրադարձությունները (ԵՄ ընդլայնում, Բրեքսիթ կամ մուտքի արտոնագրերի ազատականացումը) կարող են փոխել թե՛ միգրացիայի կարևորությունը լրատվամիջոցներում և քաղաքական բանավեճերում, թե՛ լուսաբանման տրամադրվածությունը: Հետևաբար, երբ խոսում ենք այն մասին, թե ինչպիսինը պետք է լինի միգրացիայի լուսաբանումը, մենք, իրականում, նկատի ունենք «ինչպիսի՞նն է այն այս պահին»: Այդուհանդերձ, վերը նշված ընդհանրական կետերը՝ ավելի բացասական, քան դրական քննարկումը, դանդաղ տեղաշարժը դեպի մի փոքր ավելի դրական պատմություններ, առանցքային թեմաների կանոնավոր վերանայվող շրջանակը, կարծես, համեմատաբար անփոփոխ են գոնե վերջին հինգից տասը տարվա ընթացքում:

Միգրացիա. ինչպե՞ս է քաղաքականությունն ադավադում մեղիա լուսաբանումը

Ներգաղթի վերաբերյալ բացասական ձայները հաճախ կարող են ավելի գրավել լրատվամիջոցների ուշադրությունը, քան կարևոր թեմաների՝ մարդկային անվտանգությանը (օրինակ՝ մարդկանց թրաֆիքինգ) առնչվող հարցերի լուսաբանումը, երբ դրանք ավելի արդիական են կամ կարևոր ձեր ազգային կամ տեղական

¹⁴ Ibid

¹⁵ St'u Allen, Blinder and McNeil (2018) https://publications.iom.int/system/files/pdf/wmr_2018_en_chapter8.pdf and . Eberl et al (2019) <https://www.understandfreemovement.eu/wp-content/uploads/2020/01/D8.3.pdf>

ենթատեքստում: Էթիկական լրագրության ցանցի և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի 2015 և 2016 թվականներին պատրաստած ազգային զեկույցները պարունակում են հստակ ապացույցներ, որ լրատվամիջոցների վրա անհարկի քաղաքական ազդեցությունը, որը հաճախ հիմնվում է կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվության վրա, շեղել է ուշադրությունն ավելի խորը խնդիրներից, օրինակ՝ հարկադրված աշխատանքից, երեխաների շահագործումից և թրաֆիքինգից:

Հետևանքներ պրակտիկայի համար

Միգրացիայի լուսաբանման միջազգային միտումներին ծանոթ լինելն ինքնին չի հուշում ձեզ, թե ինչպես դուք պետք է լուսաբանեք խնդիրը, սակայն բարձրացնում է մի շարք հարցեր, որոնք պետք է դիտարկել՝

- 1) Արդյոք ձեր լուսաբանումը լռելյայն ընդունո՞ւմ է սահմանված թեմաները (օրինակ՝ անվտանգային կամ տնտեսական սպառնալիքներ) և արդյոք այն ներկայացնո՞ւմ է ամբողջ պատմությունը:
- 2) Ձեր պատմության փոխանցած իմաստը հիմնականում բացասակա՞ն է, դրական կամ չեզոք: Արդյոք ներկայացվո՞ւմ է խնդրի բարդությունը և կարո՞ղ եք ինչ-որ բան ավելացնել դրան:
- 3) Դուրս եկե՞լ եք «ներգաղթի» հարցի շրջանակից դուրս և դիտարկել ներգրավված մարդկանց հիմնական պատմությունները:

ԵԾՐԱԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Միգրացիայի լուսաբանման համաշխարհային պատկերի ընկալումը պետք է օգնի ձեզ հասկանալ, որ պատմություններից շատերը, որոնց հետ հնարավոր է առնչվեք, անցնում են լավ հարթված ինչ-որ ճանապարհով, որոնք իրենց հետ բերում են որոշակի կլիշեներ և փոխաբերություններ, ինչպես նաև լավ լուսաբանման հնարավորություններ:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- *Ավելի խորը հասկանալու համա՞ր ինչպես կարող եք լինել միգրացիան լուսաբանող լավագույն լրագրողը, տե՛ս՝ Գլուխ 2. [Միգրացիան լուսաբանող ի՞նչ լրագրող եք դուք](#)*
- *Միգրացիայի տերմինաբանության քննարկման և դրա ճիշտ օգտագործման մասին տե՛ս՝ Գլուխ 4. [Տերմինաբանություն](#)*
- *Միգրացիայի ողորտի գործընթացներն ու խնդիրները բացահայտելու համար տե՛ս՝ Գլուխ 5. [Միգրացիոն պատմություններ](#)*

ԳԼՈՒԽ 4.

ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Օգտագործեք այս գրույր, որպեսզի՝

- *Ավելի խորացված, մանրամասն և ճշգրիտ հասկանալի միգրացիոն հիմնական եզրույթները:*
- *Իմանալ՝ ինչո՞ւ են որոշ եզրույթներ խնդրահարույց, ինչպես և ինչու դրանք կարող են չարաշահել կամ սխալ օգտագործել:*
- *Կողմնորոշվեք բարդ բառակերպում և ձեր որոշումների կայացման գործընթացի համար ապահովեք համատեքստ:*
- *Հիմնավորեք այն եզրույթների օգտագործումը, որոնք առավել ճշգրիտ են և նվազ վնասակար:*
- *Խրախուսեք տերմինաբանական բառարանների օգտագործումն ու ընդունումը:*

Տարբեր երկրներում միգրացիայի պատմությունները շարադրելու ընթացքում ձևավորվում են ընդհանուր եզրույթների զանազան բառարաններ: Այս ընդհանուր եզրույթներն օգնում են լսարանին՝ արագ և հեշտությամբ ընկալել առանցքային կետերը կամ վերհիշել վերաբերելի այլ զարգացումները, սակայն դրանք կարող են նաև ձևավորել խնդիրներ սխալ կամ խնդրահարույց կերպով ընկալելու տարբերակ՝ ինչպես քննարկված է այս ձեռնարկում:

Միգրացիոն իրադարձություններն աղետի փոխաբերություններով՝ «հեղեղ», «հորդում» կամ «երամ» եզրույթներով նկարագրությունը, որը ստեղծում է մեծ, անկառավարելի թվերի տպավորություն, մի օրինակ է, թե ինչպես ասոցիատիվ լեզուն կարող է նպաստել միգրացիայի ապակողմնորոշիչ ներկայացմանը: Այլ իրավիճակներում կոնկրետ համայնքի կողմից որոշ տեսակի աշխատանքների կատարումը, այդ համայնքի հագուկապն ու արտաքին տեսքը, որոշակի կրոնի ենթադրական պատկանելիությունը նկարագրելու համար կարող են օգտագործվել անփույթ, գերպարզեցված, նսեմացնող եզրույթներ կամ ժարգոնային արտահայտություններ: Նման եզրույթները կարող են ոչ միայն սխալ ներկայացնել խմբի կամ քննարկվող առարկայի էությունը կամ իրական վիճակը, այլև հաղորդել լրացուցիչ իմաստներ, օրինակ՝ գնչուական համայնքի բոլոր անդամները մասնակցում են ապօրինի գործունեությանը, ինչը կարող է օգտագործվել նրանց հետագա վտարման կամ նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման նպատակով:

Ներածություն

Ցանկացած թեմայի լուսաբանում պահանջում է լրագրողից օգտագործել ճիշտ տերմինաբանություն կամ կանգնել ոչ ճիշտ, ապակողմնորոշող կամ այլ կերպ խնդրահարույց աշխատանք կատարելու վտանգի առջև: Հետևաբար, միգրացիայի հարցեր լուսաբանող լրագրողները պետք է հասկանան առանցքային եզրույթները և միջազգային ու ներքին միգրացիայի զանազան տեսակների միջև տարբերությունները:

Այս բաժնում ներածական ներկայացվում է միգրացիայի թեմաների լուսաբանման ընթացքում օգտագործվող առանցքային տերմինաբանությունը, ընդգծվում են տարածված սխալները, ինչպես նաև բացատրվում են այն իրավական և էթիկական խնդիրները, որոնք, մյուսների համեմատ, ավելի ճիշտ կամ պատշաճ են դարձնում որոշակի եզրույթների գործածությունը:

Այս բաժինը համապարփակ չէ, սակայն նպատակ ունի ներկայացնել առավել տարածված եզրույթները, որոնց հետ լրագրողն առնչվում կամ որոնք օգտագործում է ամեն օր: Գոյություն ունեն միգրացիոն տերմինաբանության բազմաթիվ մանրամասն տերմինաբանական բառարաններ, օրինակ՝ ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) պատրաստածը՝ https://publications.iom.int/system/files/pdf/iml_34_glossary.pdf

Եվրոպական միգրացիոն ցանցի (ԵՄՑ) տերմինաբանական բառարանը պարունակում է սահմանումներ և եզրույթներ միգրացիայի և ապաստանի մասին՝ https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/networks/european_migration_network/glossary_en.

Լրագրողների համար մշակված մեկ այլ ռեսուրս (թեև ուշադրության կենտրոնում Միջին Արևելքն է) Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տերմինաբանական բառարանն է՝ https://www.ilo.org/beirut/projects/fairway/WCMS_552778/lang--en/index.htm

Երկրից երկիր կարող են էապես տարբերվել թե՛ պաշտոնական տերմինաբանությունը, թե՛ խոսակցական լեզուն: Այս բաժինը պատրաստված է միջազգային մեդիայում օգտագործվող եզրույթները դիտարկելու և կոնկրետ ազգային համատեքստերում օգտագործվող եզրույթները վերլուծելու համար:

Ինչպե՞ս օգտվել տերմինաբանական բառարաններից

[Էթիկական լրագրության ցանցի](#)¹⁶ համաձայն՝

<p><u>Լրագրողները ՉՊԵՏԶ Է դիտեն տերմինաբանական բառարանները որպես՝</u></p> <ul style="list-style-type: none">Արգելված բառերի կամ բառակապակցությունների ցանկ.	<p><u>Լրագրողները պետք է օգտվեն տերմինաբանական բառարաններից՝</u></p> <ul style="list-style-type: none">Որպես տեղեկատու՝ այն բառերի այլընտրանքները գտնելու համար, որոնք, որոշակի համատեքստերում, կարող են
---	--

¹⁶ <https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/words-matter-glossary-journalism-cyprus>

<ul style="list-style-type: none"> • Լրագրողների կամ լրատվամիջոցների ազատ լուսաբանման կարողությունը կամ իրավունքը սահմանափակելու կամ այլ կերպ խոչընդոտելու համար նախատեսված. • Քաղաքական կոռեկտուրայի մասին հայտարարություն, որը մեղիալից պահանջում է համապատասխանություն գաղտնի քաղաքական օրակարգ սպասարկելու հարցում: 	<p>հրահրել խտրականություն կամ, նույնիսկ, բռնություն.</p> <ul style="list-style-type: none"> • Լավ և վատ գործելակերպի օրինակներ գտնելու համար, երբ խոսքը գնում է աստվության խոսքի, այդ թվում՝ քաղաքական, կրոնական և ահաբեկչական քարոզչության լուսաբանման մասին. • Որպես կոչ մեղիա սեփականատերերին, խմբագիրներին և գործող լրագրողներին՝ քննարկել, թե ինչպես են կազմում իրենց պատմությունները և պատմությունները և ինչ լեզու են օգտագործում դա անելու համար. • Դիտարկելու համար արդյո՞ք իրենց նյութումներում անհրաժեշտ են լրացուցիչ խմբագրական ուղեցույցներ կամ գործիքներ:
---	---

Գունային կողավորումն այս տերմինաբանական բառարանում

Այս տերմինաբանական բառարանում յուրաքանչյուր բառ և դրա սահմանումը ունեն գունային կողավորում: Գույները ներկայացնում են այն լայն թեմատիկ ոլորտները, որտեղ այս տերմինները սովորաբար օգտագործվում են: Այս բաժնի վերջում կան ուղեցույցներ, որոնք օգտագործում են գունային նույն կողերը, ինչը հնարավորություն է տալիս ձեզ գտնել այս թեմատիկ ոլորտներին առնչվող տերմինաբանությունը՝ լավ գործելակերպին առնչվող որոշակի խորհուրդների հետ:

Տերմինաբանական բառարանից հետո գալիս է եզրափակիչ հատվածը (գույներով կողավորված չէ), որը ներկայացնում է բառերը, որոնցից պետք է խուսափել, ինչպես նաև տերմինաբանության տարածված սխալ գործածությունը:

1) Կապույտով բառեր՝ Հատել սահմանները

2) Կանաչով բառեր՝ Ապրել սեփական ծագման երկրից դուրս

3) Նարնջագույնով բառեր՝ Միգրացիոն տվյալներ և եզրույթներ

4) Կարմիրով բառեր՝ Կանոնավոր միգրանտների հիմնական դասակարգեր

Առանցքային եզրույթները և դրանց գործածությունը

Հետևյալ եզրույթները (թվարկած *անգլերեն* այբբենական կարգով) վերաբերվում են միգրացիայի երևույթի շրջանակներում առկա կարևոր տարբերություններին:

Ծագում – Որոշ երկրներ ծագումը հաշվի են առնում ընդունման և քաղաքացիության հարցերը կարգավորող քաղաքականություններում: Օրինակ՝ զգալի չափերի արտագաղթի փորձ ունեցած երկրները երբեմն նախատեսում են ընդունման և քաղաքացիություն շնորհելու ավելի հեշտ ընթացակարգեր այն անձանց համար, ում նախորդող սերնդների նախնիներն արտագաղթել են տվյալ երկրից: Սակայն այս պրակտիկան կարող է հակասական լինել՝ մասնավորապես, երբ անհատների իրավունքները որոշելու համար հիմնվում է ռասայի կամ ազգային պատկանելիության (այլ ոչ թե նախնիների քաղաքացիության) վերաբերյալ բարդ հարցեր գեներացնելու վրա:

Ապաստան – Իրենց հայրենիքում քաղաքական կամ կրոնական հայացքների, որոշակի ազգային, էթնիկ կամ սոցիալական խմբի պատկանելիության համար հետապնդումների գոհ դառնալու հիմնավոր վախ ունեցող այլ երկրի քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց՝ պետության կողմից առաջարկվող պաշտպանություն (փախստականի կարգավիճակ): Բազմաթիվ երկրներում ապաստանի տարբեր ձևեր կարող են շնորհվել ընդհանուր բռնության կամ աղետի պատճառով սեփական երկրից փախուստի դիմելու կամ այլ նմանօրինակ հիմքերով (ապաստանի այս ձևը սովորաբար կոչվում է օժանդակ կամ լրացուցիչ պաշտպանություն): Ապաստանի իրավունքը պաշտպանված է միջազգային իրավունքով, մասնավորապես՝ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային այլ գործիքներով:

(տե՛ս՝ նաև **Ապաստան հայցող** և **Փախստական**)

(Անցնել՝ Միգրացիայի ձևեր. փախստականներ և ապաստան)

Ապաստան հայցող – Պետության կողմից՝ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի իմաստով գոհ դառնալու հիմնավոր վախ ունեցող կամ միջազգային այլ պաշտպանության կարիք ունեցող այլ երկրի քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց առաջարկվող պաշտպանությունը հայցող անձ: Այլ երկրում ապաստան հայցելն օրինական է և կոնվենցիայի 31-րդ հոդվածը պահանջում է, որ այն դեպքերում, երբ ապաստան հայցողը մուտք է գործել անվտանգ երկրի տարածք՝ խախտելով ներգաղթի օրենքները, այդ խախտումները պատժի ենթակա չեն:

(տե՛ս՝ նաև **Փախստական** և **Ապաստան**)

(Անցնել՝ Միգրացիայի ձևեր. փախստականներ և ապաստան)

Քաղաքացի – Պետության՝ օրենքով ճանաչված սուբյեկտ կամ քաղաքացի՝ ծնունդով կամ հպատակագրումով:

Քաղաքացիություն – Իրավական կարգավիճակ, որով անհատը ճանաչվում է տվյալ պետության քաղաքացի, սահմանվում է անհատի և պետության միջև

իրավահարաբերությունը, շնորհվում են որոշակի իրավունքներ, որոնք, սովորաբար, ընդգրկում են տվյալ ինքնիշխան պետության տարածքում առանց վտարվելու վախի և որպես այդ պետության հասարակության անդամ բնակվելու իրավունքը: Սովորաբար իրավատիրոջը շնորհվում են լիարժեք քաղաքական, քաղաքացիական և սոցիալական իրավունքներ, ինչպես նաև պաշտպանության իրավունքներ:

(տե՛ս՝ նաև **Հպատակություն**)

Գաղտնի միգրացիա - Սահմանների հատումը պետական սահմանների հսկողությունը շրջանցելու եղանակով:

Ծննդյան երկիր – Այս սահմանումը համապատասխանում է միջազգային միգրացիայի ընդհանուր ընկալմանը՝ որպես մարդկանց տեղաշարժ մեկ երկրից մյուսը: Սակայն օտար երկրում ծնված բազմաթիվ անձինք նաև իրենց բնակության երկրի քաղաքացիներ են և, հետևաբար, չեն համարվում միգրանտներ, եթե սահմանման հիմքը քաղաքացիությունն է, ոչ էլ ենթակա են ներգաղթի վերահսկողության: Հավասարապես, երկրների քաղաքական սահմանները ժամանակի ընթացքում փոփոխություններ են կրում, որի ակնառու օրինակն է Խորհրդային Միությունը: Սա նշանակում է, որ անձը կարող է ունենալ ծննդավայր, որը դառնում է մեկ այլ երկրի մաս կամ ինքնուրույն պետություն: Որպես այդպիսին՝ ծննդյան երկրի հասկացությունը ժամանակի ընթացքում չի ամրագրվում:

Ծագման երկիր – Արտասահման տեղափոխված անձի կամ անձնանց խմբի պատկանելիության երկիր կամ նախկին մշտական բնակության վայր:

(տե՛ս՝ նաև **Պատկանելիություն**)

Բնակության երկիր - Երկիր, որտեղ սովորաբար բնակվում է անձը՝ միգրանտը կամ բնիկը:

Սփյուռք - Բարդ և վիճելի հասկացություն, որը սկզբում օգտագործվել է հայրենիք չունեցող էթնիկ/մշակութային խմբերի (մասնավորապես հրեաների դեպքում մինչև Իսրայելի պետության ձևավորումը) առնչությամբ, իսկ այժմ ընդունված լեզվում ընդգրկում է որոշակի մշակութային, էթնիկ կամ ազգային ժառանգություն ունեցող համայնքները, որոնք բնակվում են իրենց ենթադրվող «ծագման երկրից» դուրս՝ այլ երկրներում:

Արտագաղթող - «Ներգաղթողի» հակառակը՝ անձ, ով լքել է մի երկիրը՝ մեկ այլ երկրում տևական ժամանակ ապրելու նպատակով: Մի երկրում գտնվող ներգաղթողը, սովորաբար, մեկ այլ երկրից արտագաղթող է:

(տե՛ս՝ նաև **Ներգաղթող** և **Արտագաղթ**)

Արտագաղթ - Սովորական բնակության երկրից անձի մեկնումը մեկ այլ երկիր՝ այնտեղ տևական ժամանակ բնակվելու նպատակով:

(տե՛ս՝ նաև **Ներգաղթ** և **Միջազգային միգրացիա**)

Ընտանեկան միգրանտ – Իր սովորական բնակության երկրից դուրս ապրող անձ, ում միգրացիայի հիմնական պատճառ է հանդիսացել ընտանիքի անդամների հետ մեկնելը կամ նրանց հետ վերամիավորվելը: Կարող են օգտագործվել նաև նմանատիպ եզրույթներ,

օրինակ՝ «ամուսնական միգրանտ»: Հարկ է խուսափել այնպիսի եզրույթներից, որոնք ենթադրում են, որ ընտանիքի վերամիավորումը և/կամ ամուսնությունը տեղի են ունենում գուտ ներգաղթի նպատակներով, եթե չի ներկայացվում հստակ իրավական ապացույց:

(անցնել՝ Միգրացիայի ձևեր՝ ընտանեկան միգրացիա)

Հարկադիր միգրացիա – տե՛ս՝ Պարտադրված կամ հարկադիր միգրացիա:

Օտար երկրում ծնված – Իր բնակության երկրից դուրս ծնված անձ՝ անկախ նրա քաղաքացիության երկրից:

Օտարեկրյա հպատակ - Իր գտնվելու երկրի հպատակ կամ քաղաքացի չհանդիսացող անձ:

Տեղաշարժի ազատություն – Տեղաշարժի աշատությունը կարող է ունենալ տարբեր նշանակություններ՝

- ԱՀԿ-ը նկարագրում է տեղաշարժի ազատությունը որպես «մարդու հիմնարար իրավունք, որն ընդգրկում է ցանկացած երկիր լքելու իրավունքը, ձեր հայրենիք մուտք գործելու և այնտեղ կեցության իրավունքը, բնակության կամ զբաղվածության երկրի տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքը»:
- Եվրոպական բանավեճերում եզրույթը, սովորաբար, ակնարկում է սեփական պետության տարածքում կամ քաղաքացիության պետությունից այլ պետություն կամ պետություններ առանց արգելքների տեղաշարժվելու անհատների իրավունքը: Եվրոպական Միության համատեքստում ազատ տեղաշարժի իրավունքը փոխկապակցված է ԵՄ անդամ պետությունների միջև համաձայնագրերին, որոնք թույլ են տալիս անդամ այլ պետությունների քաղաքացիներին՝ ազատ մուտք գործել և բնակվել ԵՄ մեկ այլ անդամ պետությունում՝ առանց քաղաքացիների այլ խմբերի (այսպես կոչված «երրորդ երկրների քաղաքացիների») համար սահմանված ներգաղթի քաղաքականության պահանջները բավարարելու անհրաժեշտության:
- Ազատ տեղաշարժի իրավունքները կարող են նաև ընդգրկել աշխատանքի, ուսանելու և երկարաժամկետ բնակության իրավունքները, թեև այդ իրավունքները կարող են տարբերվել՝ ելնելով երկրների միջև պայմանավորվածություններից:
- Ազատ տեղաշարժման գոտիների օրինակ կարող են ծառայել Եվրոպական Միությունը, Անդրթասմանյան ճամփորդության համաձայնագրի տարածքը (Ավստրալիա և Նոր Զելանդիա), ՄԹ, Իռլանդիայի Հանրապետության և Նորմանդյան կղզիների միջև Ընդհանուր ճամփորդության տարածքը, Ռուսաստանի և Բելառուսի միութենական պետությունը:

Ատելության հիմքով հանցագործություն – Հանցագործություն, որը, սովորաբար, ընդգրկում է ռասայական, կրոնական, սեռական կողմնորոշման կամ ինքնության հետ կապված այլ հիմքերով պայմանավորված նախապաշարման հողի վրա բռնություն: Այս հիմքերը կարող են իրականում վերագրվել գոհին կամ լինել սուբյեկտիվ:

(Անցնել՝ Միայ տեղեկատվություն և ատելության խոսք բաժնին 6-րդ գլխում՝
Պատմության (ճիշտ) շարադրում)

Ներգաղթող - Մի երկրում բնակվող կամ այդ երկիր տեղափոխվող անձ, ով տևական ժամանակով այդտեղ է տեղափոխվել մեկ այլ երկրում մշտական բնակության վայրից: Այս եզրույթից պետք է խուսափել, երբ խոսքը գնում է ներգաղթողների՝ բնակության նոր երկրում ծնված երեխաների մասին, քանի որ այս երեխաները չեն ներգաղթել:

(տե՛ս՝ նաև **Ներգաղթ** և **Արտագաղթող**)

Ներգաղթ – Գործընթաց, որի շնորհիվ անձը՝ իր մշտական բնակության երկրից տևական ժամանակով տեղափոխվում է մեկ այլ երկիր՝ դարձնելով այն իր նոր մշտական բնակության երկիր:

(տե՛ս՝ նաև **Ներգաղթող**, **Արտագաղթ** և **Միջազգային միգրացիա**)

Ներհոսք/Ներգնա միգրացիա – Նկարագրում է երկիր տեղափախված անձանց թիվը:

Ինտեգրում – Գործընթաց, որի միջոցով մշակութային, քաղաքական կամ սոցիալական սովորույթների ընդունումը կամ դրանց փոփոխությունը միմյանց ավելի է մոտեցնում բնակչության տարբեր խմբերի: Ինտեգրումը տարբերվում է «ուծացումից», քանի որ այն միմյանց հարմարվելու երկկողմանի գործընթաց է: Ինտեգրումը կարող է նաև ավելի կոնկրետ նշանակություններ ունենալ կոնկրետ արդյունքները նկարագրելու (օրինակ՝ լեզուներ սովորելու կամ աշխատաշուկայում մասնակցելու) իմաստով, որոնք, սովորաբար, ցույց են տալիս միգրանտների խմբերի կամ անհատների առաջընթացը դեպի այն արդյունքները, որոնք ավելի մոտ են բնիկ բնակչության ցուցանիշներին:

(տե՛ս՝ **Սոցիալական համախմբում**)

(Անցնել [Ինտեգրում, ուծացում և ժողովրդագրական փոփոխություն](#))

Ներքին միգրացիա – Մարդկանց տեղաշարժը պետության տարածքում: Եզրույթը երբեմն սխալ է կիրառվում ազատ տեղաշարժի գոտիներում, օրինակ՝ ԵՄ-ում տեղաշարժը նկարագրելու համար, որը տեխնիկական իմաստով միջազգային միգրացիա է, քանի որ անձը հատում է պետական սահման:

Ներքին տեղահանված անձ (ՆՏԱ) – Անձ, որը շարունակում է գտնվել այն պետության տարածքում, որի քաղաքացի է կամ որն իր մշտական բնակության երկիրն է, բայց ով բռնության սպառնալիքի, հետապնդման, մարդածին կամ բնական աղետի, բնապահպանական նկատառումներով կամ նմանատիպ այլ հիմքերով հարկադրված է եղել լքել իր սովորական բնակության վայրը կամ տարածաշրջանը:

(տե՛ս՝ նաև **Հարկադիր միգրացիա**)

(Անցնել [Միգրացիայի իրանհիշներ՝ ճգնաժամ և միգրացիա](#))

Միջազգային միգրացիա - Ընդգրկում է թե՛ «կարճաժամկետ» (ըստ ՄԱԿ-ի սահմանման՝ անձինք, ովքեր առնվազն երեք հաջորդական ամսով, բայց մեկ տարուց պակաս ժամկետով են փոխել իրենց մշտական բնակության վայրը), թե՛ «երկարաժամկետ» միգրանտներին (ըստ ՄԱԿ-ի սահմանման՝ անձինք, որոնք մեկ տարի անընդմեջ բնակվել են մեկ այլ տարածքում):

Պարտադրված կամ հարկադիր միգրացիա - Երբ անձին հարկադրում են լքել իր սովորական բնակության վայրը կամ տեղահանում են իր կամքին հակառակ: Պատճառների շարքում կարող են լինել հակամարտությունը, կեղեքումը կամ հետապնդումը, կամ մարդասիրական և բնապահպանական ճգնաժամերը:

(տե՛ս՝ նաև **Թրաֆիքինգ/Թրաֆիքինգի զոհ** և **Ապաստան**)

Անկանոն – «Անկանոն միգրանտներ» կամ «անկանոն միգրացիա» արտահայտություններն ակնարկում են առանց պատշաճ փաստաթղթերի երկիր մուտք գործող կամ այնտեղ բնակվող միգրանտներին: Այս եզրույթը, ընդհանուր առմամբ, ավելի նախընտրելի է, քան «ապօրինի ներգաղթող» կամ «ապօրինի ներգաղթ», քանի որ օրենքը կարող է լինել բարդ և (անկանոն) եզրույթը չի ենթադրում հանցավորության կանխավարկած: Նշում՝ ապաստան հայցողներին չի կարելի համարել անկանոն ներկայացող, քանի որ նրանք ունեն միջազգային պաշտպանության դիմելու իրավունք:

(*Անցնե՛լ՝ Միգրացիայի ձևեր՝ անկանոն միգրացիա*)

Աշխատանքային միգրանտ/աշխատող միգրանտ/միգրանտ աշխատող – Սովորաբար օգտագործվում է հիմնականում աշխատելու նպատակով մշտական բնակության երկրից դուրս բնակության տեղափոխված անձի նկարագրելու համար: Եզրույթն օգտագործվում է նաև աշխատանքի համար ներքին միգրանտներին նկարագրելու համար:

(*Անցնե՛լ՝ Միգրացիայի ձևեր՝ աշխատանքային միգրացիա*)

Աշխատանքային միգրացիա – Զբաղվածության նպատակով միջազգային միգրացիա: Երբեմն օգտագործվում է նաև ներքին միգրացիայի համատեքստում, սակայն դա պետք է հստակ նշվի շփոթմունքից խուսափելու համար:

(*Անցնե՛լ՝ Միգրացիայի ձևեր՝ աշխատանքային միգրացիա*)

Գտնվելու տևողություն – ՄԱԿ-ի՝ «Երկարաժամկետ միգրանտի» (տե՛ս՝ Երկարաժամկետ միջազգային միգրանտ) սահմանման համաձայն՝ միգրացիայի տևողության գնահատումն առաջացնում է մի շարք խնդիրներ:

1. Բնակության նոր երկիր ժամանող որևէ անհատի դեպքում անհնար է իմանալ՝ որքան ժամանակ է նա գտնվելու այդ երկրում: Սահմանին տրվող հարցերին պատասխանելու ընթացքում անձի նշած նպատակները (անկեղծ կամ ոչ) միշտ չէ, որ համընկնում են նրա փաստացի գործողությունների հետ:
2. Շատերի կարծիքով՝ միգրանտները նոր երկիր են տեղափոխվում մշտապես, հետևաբար այն դեպքերում, երբ մարդիկ նպատակ չունեն մշտապես մնալ նոր երկրում (օրինակ՝ օտարերկրյա ուսանողները կամ գործարարները), նրանց՝ որպես միգրանտ ներկայացնելը կարող է շփոթմունք առաջացնել:

Երկարաժամկետ միջազգային միգրանտ - «Անձ, ով իր մշտական բնակության երկրից առնվազն մեկ տարի ժամկետով [...] տեղափախվում է այլ երկիր, որի հետևանքով

նպատակակետ երկիրը, ըստ էության, դառնում է նրա մշտական բնակության նոր երկիրը»:¹⁷

Միգրանտ – Ընդհանուր եզրույթ, որն ընդգրկում է տեղական ժամանակով մեկ վայրից մյուսը տեղափոխվող անձանց: Այն ոչ ճշգրիտ է և, ընդհանրապես, կիրառական իմաստ հաղորդելու համար պահանջում է լրացուցիչ համատեքստ:

Միգրանտ տնային աշխատող – Միգրանտ աշխատող, ում զբաղվածության վայրը մեկ այլ անհատի սեփական տունն է, որտեղ նրանից ակնկալվում է կատարել տան աշխատանքներ, օրինակ՝ խոհարարություն, մաքրություն և/կամ խնամքի ապահովում: Որոշ երկրներում միգրանտ տնային աշխատողի իմիգրացիոն կարգավիճակը կարող է փոխկապակցվել կոնկրետ գործատուին:

(տե՛ս՝ նաև **Աշխատանքային միգրանտ**)

Միգրացիա – Անձի կամ մի խումբ անձանց տեղաշարժ միջազգային սահմանով կամ պետության ներսում: Բնակչության տեղաշարժ է, որն ընդգրկում է մարդկանց ցանկացած տեղաշարժ՝ անկախ հեռավորությունից, կազմից և պատճառներից: Միգրացիան ընդգրկում է մարդկանց տեղաշարժը զանազան պատճառներով, այդ թվում՝ աշխատանք, ընտանիքի վերամիավորում, պաշտպանության կարիք ունեցող անձինք և այլն:

Խառը միգրացիա – Ընդունում է, որ միգրանտները կարող են ունենալ խառը շարժառիթներ և հոսքեր: Օրինակ՝ աշխատանքային միգրանտը կարող է նաև ունենալ իր բնակության նոր երկրում ուսում ստանալու հույս, անձը, ով առաջին հերթին տեղափոխվում է ընտանիքի անդամների հետ վերամիավորվելու նպատակով, կարող է նաև ունենալ իր բնակության նոր վայրում աշխատանք գտնելու հույս, ապաստան հայցելու նպատակով ճամփորդող անձանց խումբը, կարող է նաև ընդգրկել անձանց, ովքեր ճամփորդում են այլ նպատակներով (օրինակ՝ աշխատանք գտնելու համար):¹⁸

(Անցնե՛լ՝ [Միգրացիայի ձևեր՝ խառը միգրացիա](#))

Հպատակություն – Հպատակությունը կարևոր է իրավական տեսանկյունից, քանի որ ազդում է անձի ունեցած իրավունքների և պարտականությունների վրա: Սակայն հպատակությունը կարող է ժամանակի ընթացքում փոխվել, եթե անձը դառնում է հյուրընկալող երկրի քաղաքացի: Որոշ երկրներում հպատակությունը չի շնորհում անձին քաղաքացու հետ հավասար իրավունքներ կամ արտոնություններ, մասնավորապես՝ քաղաքական մասնակցության (օր.՝ քվեարկության) հարցում: Ժամանակակից երկրների մեծ մասում բոլոր հպատակները քաղաքացի են և, հետևաբար, ունեն նույն իրավունքները: Ավելին, հպատակության վերաբերյալ վիճակագրական տվյալները երբեմն հայտնում են իրենք՝ հպատակները, իսկ անհատները կարող են մեկնաբանել «հպատակությունը» ոչ թե որպես իրավական կարգավիճակ, այլ որպես ինքնության կամ ազգակցության (որը հիմնված է ընտանեկան կապերի, մշակույթի, լեզվի կամ սոցիալական և մշակութային այլ գործոնների վրա) զգացում: Առօրյա գործածության մեջ «հպատակությունը» կարող է

¹⁷ [Recommendations on Statistics of International Migration \(UN\) https://unstats.un.org/unsd/publication/SeriesM/SeriesM_58rev1e.pdf](https://unstats.un.org/unsd/publication/SeriesM/SeriesM_58rev1e.pdf)

¹⁸ <https://migrationobservatory.ox.ac.uk/resources/primers/mixed-migration-policy-challenges/>

օգտագործվել որպես «ազգության» հոմանիշ, ինչը շեշտում է ճիշտ օգտագործման համար եզրույթը ճիշտ համատեքստում տեղադրելու անհրաժեշտությունը:

Բնիկ – Եզրույթ, որը նկարագրում է անձի, ով միգրանտ չէ: Այն հուշում է, որ անհատը ծնվել է իր բնակության երկրում, այդ երկրի քաղաքացի/հպատակ է և, սովորաբար, ապրում է այդ երկրում: Եզրույթն ինչ-որ չափով անորոշ է և ունի խնդրահարույց հետևանքներ, քանի որ այն օգտագործվում է գաղութատիրական և ռասայականացված լեզվում:

Չուտ հոսքեր/զուտ միգրացիա – Ներգաղթի և արտագաղթի ընդհանուր թվային ազդեցությունը երկրի ներսում կամ երկրից բնակչության ընդհանուր շարժերի վրա (ընդամենը ներհոսքից հանած ընդամենն արտահոսքը):

Չվերադարձնելու սկզբունք– Մարդու իրավունքների, փախստականների, մարդասիրական և սովորության միջազգային իրավունքի շրջանակներում պաշտպանության հիմնարար սկզբունք: Այս սկզբունքով երկրներին արգելվում է վերադարձնել անձին այն տարածք, ուր, առկա ծանրակշիռ հիմքերից ելնելով, վերադարձից հետո նրան սպառնում է անդառնալի կորուստ, այդ թվում՝ հետապնդում, խոշտանգում, վատ վերաբերմունք կամ մարդու իրավունքների այլ լուրջ խախտումներ: Այս սկզբունքն ամրագրված է մարդու իրավունքների միջազգային իրավունքի բազմաթիվ գործիքներում, որոնց թվում են՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան (CAT), Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: Ներպետական օրենսդրության համաձայն՝ ապաստան հայցողները, ովքեր չեն ստացել փախստականի կարգավիճակ, բայց այս սկզբունքից ելնելով չեն կարող վերադարձվել, ստանում են օժանդակ կամ լրացուցիչ պաշտպանություն:

(տե՛ս՝ նաև **Ապաստան** և **Օժանդակ/Լրացուցիչ պաշտպանություն**)

Արտահոսք/արտագնա միգրացիա– Նկարագրում է երկրից դուրս տեղաշարժվող անձանց թիվը:

Ժամկետից երկար գտնվել/ Ժամկետից երկար գտնվող – Երկրում մնալը (կամ մնացող անձը)՝ երկրում օրինական գտնվելու տևողությունը սահմանող մուտքի արտոնագրի կամ բնակության թույլտվության ժամկետն ավարտվելուց հետո: Անկանոն կամ չփաստաթղթավորված կարգավիճակի հասնելու տարածված ձևերից է երկրում՝ տրված մուտքի արտոնագրի կամ բնակության թույլտվության ժամկետից երկար գտնվելը:

(տե՛ս՝ նաև **Անկանոն** և **Չփաստաթղթավորված**)

(Անցնե՛լ՝ Հետևանքներ՝ արտաքսում կամ հարկադիր վտարում)

Մշտական բնակիչ– Մշտական բնակիչ կարգավիճակ ստացած անձ: Անձը կարող է երկիր եկած լինի որպես ներգաղթող կամ ապաստան հայցող: Քաղաքացի դարձած մշտական բնակիչներն այլևս իրավական առումով չեն համարվում մշտական բնակիչներ:

Պաշտպանված անձ– Անձ, ում կառավարությունը ճանաչել է (ա) կոնվենցիայի իմաստով փախստական, (բ) կամ պաշտպանության կարիք ունեցող անձ, այլ խոսքով՝ անձ, ով չի բավարարում կոնվենցիայում տրված փախստականի սահմանման պահանջները, բայց

գտնվում է փախստականի նման իրավիճակում, քանի որ, օրինակ, գտնվում է խոշտանգվելու վտանգի տակ:

(տե՛ս՝ նաև **Ապաստան, Ապաստան հայցող և Փախստական**)

Ձգող-վանող գործոններ– Միգրացիան հաճախ վերլուծում են «ձգող-վանող մոդելի» տեսանկյունից, որը դիտարկում է վանող գործոնները, որոնք մղում են մարդկանց՝ լքել սեփական երկիրը (օրինակ՝ տնտեսական, սոցիալական, անվտանգային կամ քաղաքական վիճակը), և ձգող գործոնները, որոնք նրանց համար գրավիչ են դարձնում կոնկրետ նպատակակետային երկիրը:¹⁹

(Անցնե՛լ՝ Միգրացիայի խթանիչները, Գլուխ 5. Միգրացիոն պատմություններ)

Փախստական – Իրավական տեսանկյունից՝ անձ, ով հաջողությամբ հայցել է ապաստան և փախստականի կարգավիճակ ստացել մեկ այլ երկրից: Եզրույթը հաճախ օգտագործվում է հակամարտությունից կամ սպառնալիքից փախչող անձանց նկարագրելու համար, բայց, քանի որ այս անձանց փաստացի իրավական կարգավիճակը, ընդհանուր առմամբ, հստակ չէ, միգրացիոն այս համատեքստում ավելի լավ է օգտագործել ընդհանրական եզրույթներ, օրինակ՝ «ապաստան փնտրող անձինք» կամ, ապաստան գտնելու նպատակով սահմանը հատողների դեպքում՝ «ապաստան հայցողներ»:

(տե՛ս՝ նաև **Ապաստան և Ապաստան հայցող**)

(Անցնե՛լ՝ Միգրացիայի ձևեր՝ փախստականներ և ապաստան)

Փախստականի հայտատու/դիմումատու – Անձ, ով ներկայացրել է փախստականի պաշտպանություն ստանալու հայտ/դիմում: Եզրույթը քիչ, թե շատ համարժեք է ապաստան հայցողին և որոշ երկրներում ստանդարտ է: Ապաստան հայցողը եզրույթ է, որն ավելի հաճախ օգտագործվում է միջազգային մակարդակում:

(տե՛ս՝ նաև **Ապաստան և Ապաստան հայցող**)

(Անցնե՛լ՝ Միգրացիայի ձևեր՝ փախստականներ և ապաստան)

Փոխանցումներ/փոխանցման կատարում – Դրամական միջոցների կամ ապրանքների փոխանցում մեկ երկրի բնակիչներից մեկ այլ երկրի բնակիչների, ինչը հաճախ փոխկապակցվում է ընտանիքներին կամ համայնքների գումար ուղարկող միգրանտների հետ: «Սոցիալական փոխանցումներ» եզրույթը կիրառվում է նաև ժամանող կամ մեկնող միգրատների գաղափարների միջոցով մեկ հասարակությունից մյուսը գաղափարների և նորմերի փոխանցման դեպքում:

(Անցնե՛լ՝ Փոխանցումներ)

Վերաբնակեցում – Փախստականների փոխանցում նրանց ապաստան տրամադրած երկրից մեկ այլ երկիր, որը համաձայնել է ընդունել նրանց և շնորհել մշտական բնակություն:

¹⁹ Միգրացիայի ձգող-վանող մոդելը 1966 թվականին նկարագրել է Everett Lee և այն մնում է միգրացիայի խթանիչները մեկնաբանելու առանցքային ձևերից մեկը:

Վերաբնակեցված փախստական – Փախստական, ում առաջարկվել է բնակություն՝ ապաստան տրամադրած երկրից տարբեր երկրում:

(տե՛ս՝ նաև **Փախստական**)

Երկրորդ (երրորդ) սերունդ/միգրացիոն նախապատմությամբ անձինք – Բնակության երկրում ծնված երեխաներ, ում ծնողները (կամ տատիկները և պապիկները) կամ առնվազն նրանցից մեկը ծնվել է արտերկրում, նույնիսկ եթե երեխաները հյուրընկալող երկրի քաղաքացիներ/հպատակներ են: Համեմատության համար՝ բնակության երկրի սահմաններից դուրս ծնված անձինք կարող են համարվել «առաջին սերնդի» միգրանտներ:

Ապաստանի հայցում – Երբ անձը, իր քաղաքացիության երկրից դուրս դիմում է մեկ այլ երկրում փախստականի կարգավիճակ/ապաստան ստանալու համար:

(տե՛ս՝ նաև **Ապաստան հայցող և Փախստական**)

Առանձնացված երեխաներ (անչափահասներ) – Մինչև 18 տարեկան անձինք, ովքեր առանձնացվել են ծնողից/օրինական խնամակալից/հիմնական խնամատուից, բայց ոչ անհրաժեշտորեն այլ չափահաս ազգականներից:

Մաքսանենգ ճանապարհով միգրանտի փոխադրում/Մաքսանենգ ճանապարհով փոխադրված միգրանտ/Մաքսանենգ ճանապարհով միգրանտ փոխադրող – Սահմանի անցման կազմակերպում, որը շրջանցում է սահմանային հսկողությունը (մաքսանենգություն): Պետք չէ շփոթել մաքսանենգությունը մարդկանց թրաֆիքինգի հետ: Երկուսն էլ իրավախախտումներ են (սովորաբար՝ քրեական), սակայն մաքսանենգության հիմնական նպատակը սահմանի ապօրինի հատումից ֆինանսական կամ այլ նյութական օգուտ ստանալն է, իսկ թրաֆիքինգի հիմնական նպատակն է մարդկանց շահագործումը (կան նաև այլ տարբերություններ): Անձ, ով երկիր մուտք է գործել մաքսանենգ ճանապարհով (մաքսանենգ ճանապարհով փոխադրված միգրանտ): Անձ, ով, սովորաբար, ֆինանսական կամ այլ նյութական օգուտ ստանալու նպատակով կազմակերպում և/կամ իրականացնում է մաքսանենգությունը (մաքսանենգ ճանապարհով միգրանտ փոխադրող):

Սոցիալական համախմբում – «Սոցիալական համախմբման» գաղափարը տարածված է քաղաքական քննարկումներում, հատկապես, երբ դրանց թեման փոքրամասնությունները, ներգաղթյալ համայնքները և փոքրամասնությունների ինտեգրումն են: Թեև գաղափարը բավականին հստակ է գիտության մեջ, սակայն այն հաճախ անորոշ է քաղաքականության մեջ կիրառման առումով, իսկ «համերաշխ հասարակություն» ստեղծելու լավագույն մոտեցումները վիճարկված են:

(տե՛ս՝ նաև **Ինտեգրում**)

(Անցնել՝ [Ինտեգրում, ուժացում և ժողովրդագրական փոփոխություն](#) բաժինը [Միգրացիոն պատմություններ](#) գլխում)

Քաղաքացիություն չունեցող անձ – Ոչ մի երկրի քաղաքացի չհանդիսացող անձ: Քաղաքացիություն չունեցող անձը չի կարող օգտվել որևէ պետության

պաշտպանությունից և, հետևաբար, խոցելի վիճակում է, երբ խոսքն իր՝ մարդու հիմնարար իրավունքներն իրագործելու մասին է:

(Միգրանտների) քանակ – Տվյալ պահին միգրանտների թիվը տվյալ տարածքում կամ երկրում: Պետք չէ շփոթել միգրանտների հոսքեր եզրույթի հետ, որն ակնարկում է տվյալ ժամանակահատվածում տվյալ երկիր մուտք գործող կամ այն լքող միգրանտների հոսքերին:

Ուսանող/սովորող միգրանտ - Մշտական բնակության երկրից դուրս ապրող անձ, ում միգրացիայի հիմնական նպատակն է սովորելը կամ կրթություն ստանալը, որը կարող է ընդգրկել ուսումնառությունը տարբեր մակարդակներում (օր.՝ տարրական, միջնակարգ, բարձրագույն):

(Անգնե՛՛՛ Միգրացիայի ձևեր՝ ուսում արտերկրում)

Օժանդակ/լրացուցիչ պաշտպանության կարգավիճակ– Միջազգային պաշտպանության ձև, որը շնորհվում է անձի, ում կառավարությունը չի ճանաչում կոնվենցիայի իմաստով փախստական, սակայն ով, միջազգային և ներպետական օրենքների պահանջների համաձայն, պաշտպանության կարիք ունի, օրինակ՝ իր ծագման երկրում անվտանգային վիճակից, խոշտանգման ենթարկվելու վտանգից կամ նմանօրինակ այլ պատճառներից ելնելով:

(տե՛ս՝ նաև **Ապաստան, Ապաստան հայցող և Փախստական**)

Ժամանակավոր բնակիչ – Անձ, ով իր մշտական բնակության երկրից դուրս ստացել է մեկ այլ երկրում ժամանակավոր հիմունքներով գտնվելու թույլտվություն:

Թրաֆիքինգ/Թրաֆիքինգի զոհ – Շահագործման կամ ուժի գործադրման միջոցով մարդկանց հավաքագրելը, փոխադրելը և թաքցնելը: ՄԱԿ-ը թրաֆիքինգի գործընթացը սահմանում է որպես «շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը՝ ուժի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգմամբ, խարդախությամբ, խաբեությամբ, խոցելի վիճակի հետ կապված գերակա դիրքի չարաշահմամբ, կամ մեկ այլ անձի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի համաձայնությունը ստանալու նպատակով վճարումներ կամ օգուտներ տալու կամ ստանալու միջոցով»: ²⁰ Թրաֆիքինգն, ըստ էության, ի հայտ է գալիս, երբ տեղաշարժն ուղեկցվում է հարկադրանքով կամ պարտադրանքով:

(տե՛ս՝ նաև **Մաքսանենգ ճանապարհով միգրանտի փոխադրում/Մաքսանենգ ճանապարհով փոխադրված միգրանտ**)

(Անգնե՛՛՛ Մարդկանց թրաֆիքինգ և մաքսանենգություն)

Տարանցիկ երկիր – Երկիր, որի տարածքով միգրանտներն ճամփորդում են իրենց ծագման/մեկնումի երկրից դեպի վերջնական նշանակետ:

²⁰ https://www.unodc.org/documents/data-and-analysis/glotip/Annex_II_-_Definition_and_mandate.pdf

Առանց ուղեկցության երեխա – Մինչև 18 տարեկան անձ, ում չի ուղեկցում չափահաս, ով, օրենքի կամ սովորույթի համաձայն, պատասխանատու է նրա խնամքի համար (օրինակ՝ ծնող, խնամակալ կամ հիմնական խնամատու):

Չթույլատրված – Ակնարկում է առանց օրինական թույլտվության միգրանտներին կամ միգրացիային: Ինչպես և «անկանոնի» դեպքում, այս եզրույթը կարող է հաճախ օգտագործվել «ապօրինի» եզրույթի փոխարեն՝ երկրում գտնվելու հստակ իրավունքներ չունեցող ներգաղթողին նկարագրելու համար (ինչը նախընտրելի է):

Չփաստաթղթավորված – Ակնարկում է միգրանտներին, ովքեր չեն կարող ներկայացնել փաստաթղթեր, որոնք ապացուցում են երկիր մուտք գործելու կամ այնտեղ բնակվելու իրավունքը, կամ իրենց ինքնությունը հաստատող փաստաթղթեր: Կարևոր է նկատել, որ փաստաթղթերի բացակայությունը հավասարազոր չէ օրինական իրավունքների բացակայությանը, քանի որ այն իրավիճակները, երբ, օրինակ, վավերական փաստաթղթերը կորել են կամ ոչնչացվել, ընդհանուր առմամբ, չպետք է փոխեն անհատի օրինական իրավունքները: Փաստաթղթերի բացակայության հետևանքով անձն ինքնաբերաբար չի հայտնվում անկանոն վիճակում:

Մուտքի արտոնագիր – Մուտքի արտոնագիրը անձնագրում դրված հավաստիացում է, որ անձնագրի տերն օգտվում է երկիր մուտք գործելու, երկրից դուրս գալու կամ նշված ժամանակով երկրում գտնվելու իրավունքներից: Բացի կեցության տևողությունից, մուտքի արտոնագրերը, սովորաբար, հստակ նշում են արտոնագրի տիրոջ՝ աշխատելու, ուսանելու կամ որոշակի հանրային ծառայություններից օգտվելու իրավունքները: Միգրանտից կարող են պահանջվել մուտքի արտոնագրերի տարբեր ձևեր՝ թույլտվության յուրաքանչյուր տեսակի համար:

Առանց մուտքի արտոնագրի ռեժիմ – Կառավարությունները կարող են համաձայնության գալ և որոշակի պետությունների անձնագրերի տերերի համար վերացնել մուտքի արտոնագրի պահանջը: Մուտքի արտոնագրի պահանջները վերացնելը, սակայն, նույնը չէ, ինչ երկարաժամկետ բնակվելու կամ աշխատելու, սովորելու կամ հանրային բոլոր ծառայություններից օգտվելու իրավունքներ տրամադրելը:

Աշխատող միգրանտ - (տե՛ս՝ Աշխատանքային միգրանտ)

Աշխատանքի թույլտվություն – Աշխատանքի թույլտվությունը տալիս է այն ստացող անձին աշխատելու իրավունք, երբեմն՝ որոշակի սահմանափակումներով:

Տերմինաբանության սխալ օգտագործման, չարաչափման և սադրիչ գործածության տարածված օրինակներ

«Տնտեսական միգրանտ» -

<p><i>Ճիշտ գործածություն:</i> Տնտեսական միգրանտ է ցանկացած անձ, ով սեփական տնտեսական վիճակը բարելավելու համար տեղափոխվում է արտասահմանյան երկրներ (կամ, միգրացե, երկրի ներսում): Սա ընդգրկում է բոլորին՝ սկսած միլիարդատերից, ով փոխում է բնակության վայրը հարկային վիճակը բարելավելու համար, միջազգային բանկիրներից կամ գործարարներից, որոնք տեղաշարժվում են հարուստ պետությունների միջև, մինչև միգրանտ աշխատող, ով թողնում է չքավոր կյանքն՝ ավելի լավը գտնելու հույսով:</p>	<p><i>Միայլ գործածություն:</i> Եզրույթը հաճախ վերագրվում է ապաստան հայցողներին և փախստականներին՝ որպես փաստարկ, որ տեղափոխվելու նրանց նպատակն ապօրինի է, և նրանք փախուստի չեն դիմել հետապնդման վախի կամ պաշտպանության այլ հիմնավոր պատճառներով: Եզրույթը կարող է նաև սխալ օգտագործվել ընտանիքի վերամիավորման նպատակ ունեցող միգրանտների նկատմամբ՝ որպես փաստարկ, որ միգրանտների հետ ամուսնությունները «ֆիկտիվ ամուսնություններ» են, որոնց միջոցով աշխատաշուկան հասանելի է դառնում ցածր որակավորում ունեցող աշխատողներին:</p>
---	--

Ապաստան հայցողին կամ փախստականին կիրառվում է «ապօրինի/կեղծ/ֆեյք» -

Ապաստանի հայցումը իրավունք է, որը պաշտպանված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով և միջազգային այլ իրավական գործիքներով (տե՛ս՝ [Փախստականներ և ապաստան](#) բաժինը 5-րդ գլխում՝ [Միգրացիոն պատմություններ](#)): Երբ անձը հայցում է ապաստան, պետությունը, որին ներկայացվում է նման դիմում, պարտավոր է գնահատել այն և բավարարել կամ մերժել դիմումը: Քանի դեռ անձը սպասում է ապաստանի դիմումի պատասխանին, նրա ներկայությունը երկրում օրինական է, և նույնիսկ հայցը մերժելու պարագայում նրան, ընդհանուր առմամբ, չի կարելի ներկայացնել որպես «ապօրինի», «կեղծ» կամ «ֆեյք» քայլ կատարած անձ:

Փախստականները/միջազգային պաշտպանության ինչ-որ մի ձևից օգտվող անձինք՝ անհատներ են, ում ապաստան հայցելու իրավունքը ճանաչել և ընդունել է այն պետությունը, ուր նրանք փախել են: Փախստականի կարգավիճակ ունեցող/միջազգային պաշտպանության այլ ձևից օգտվող անձը, ըստ սահմանման, օրինական բնակիչ է:

Երբ նկարագրում եք հետապնդումից, հակամարտությունից, աղետից կամ տրավմայից փախչող մարդկանց, պատասխանատու մոտեցումը պահանջում է ընդունել նման քայլի դիմելու նրանց իրավունքը և նրանց հղում կատարել՝ որպես փախստականի կամ ապաստան հայցողի: Հակաէթիկական են նրանց շարժառիթների կամ ապաստան/փախստականի կարգավիճակ հայցելու իրավունքների մասին մտացածին ենթադրությունները, որոնք չունեն հստակ ապացույցներ: Կարևոր է նաև գիտակցել, որ սեփական ծագման երկրում անպաշտպան վիճակից փախչող անձինք ունեն ոչ միայն

պաշտպանության, այլև այլ կարիքներ, օրինակ՝ պահպանել ընտանեկան միությունը և բարեկեցությունը, աշխատել և կյանքի համար վաստակել ֆինանսական միջոցներ, ուսում ստանալ և այլն:

Էքս-պատ/հայրենալքյալ

Էքս-պատ կամ հայրենալքյալ եզրույթը տեսականորեն չեզոք է և ակնարկում է անձի, ով արտագաղթել է մեկ այլ պետություն և այլևս չի հանդիսանում իր հայրենիքի բնակիչ: Եզրույթի սխալ գործածությունը կապված է դրա այնպիսի ենթատեքստի հետ, երբ այն, սովորաբար, վերագրվում է բարձր եկամուտով երկրներից եկող ավելի հարուստ, հաճախ սպիտակամորթ միգրանտներին: Այն ինչ-որ աստիճանի լեգիտիմություն է հաղորդում նրանց միգրացիային, որը հաճախ չունեն ավելի ցածր եկամուտով երկրներից եկող միգրանտները, ում դեպքում այս եզրույթը հազվադեպ է կիրառվում:

(Անցնել՝ [Միայն տեղեկատվություն և ատելության խոսք](#))

Եզրույթներ, որոնցից պետք է խուսափել

Օտարերկրացի – Որոշ երկրներում ոչ քաղաքացիներին մատնանշելու համար օգտագործվող ապամարդկայնացնող եզրույթ:

Ապօրինի ներգաղթ - «Ապօրինի ներգաղթ» եզրույթը սովորաբար օգտագործվում է զանազան գործընթացներ, օրինակ՝ գաղտնի միգրացիան, կեղծ փաստաթղթերով երկիր մուտք գործելը կամ մուտքի արտոնագրում նշված ժամկետից երկար մնալը նկարագրելու համար: Եզրույթը իրավական առումով հաճախ անորոշ է և, սովորաբար, օգտագործվում է հռետորական տպավորության, ոչ թե հստակության համար: Այն երբեմն սխալ է օգտագործվում բարդ իրավիճակներում, ինչպիսիք են՝ փախստականների, ապաստան հայցողների և միգրանտների խառը խմբերի տեղաշարժը: Հնարավորության դեպքում հարկ է խուսափել այս եզրույթից և փոխարենն օգտագործել ավելի նրբանկատ կամ ճշգրիտ եզրույթներ:

Ապօրինի ներգաղթող– Թեև ամբողջ աշխարհում այս եզրույթը դեռևս լայնորեն օգտագործվում է մեղիայում և միգրացիայի վերաբերյալ քաղաքան բանավեճերում, այն համարվում է ոչ ճիշտ, սադրիչ և հակասական: Միջազգային մարմինների մեծ մասը, այդ թվում՝ ՄԱԿ-ի գործակալությունները, ինչպես նաև «Ասոչիեյթո Փրեսը»²¹ և բազմաթիվ առաջատար լրատվական կազմակերպություններ դեմ են արտահայտվում «ապօրինի ներգաղթող» եզրույթի գործածությանը: Ընդհանուր առմամբ, ավելի նախընտրելի է օգտագործել այլ եզրույթներ, օրինակ՝ անկանոն, չփաստաթղթավորված կամ չթույլատրված (տե՛ս՝ բաժին 1), թեև դրանք կարող են ունենալ հատուկ ենթատեքստային գործածություն:

²¹ <https://blog.ap.org/announcements/illegal-immigrant-no-more>

1) ՍԱՐՄԱՆՆԵՐԻ ՀԱՏՈՒՄ

Սահմանների հատումը շատ հանգամանքներում սովորական առօրյա գործընթաց է, սակայն միգրացիայի լուսաբանման մեջ այն կարող է վերածվել բացառիկ կարևորություն ունեցող արարքի: Մեզանից շատերն ամեն օր հատում են վարչական սահմաններ՝ տեղաշարժվելով մեկ շրջանից կամ համայնքից մյուսը, մարզից մարզ կամ նահանգից նահանգ, իսկ երբեմն՝ երկրից երկիր: Մեծ միգրացիա է տեղի ունենում նույն պետության սահմաններում: Աշխարհագրական և վարչական սահմաններով տեղաշարժը սովորական երևույթ է բազմաթիվ կոնտեքստներում, սակայն քաղաքական և վարչական կոշտ սահմանների տարածմանը զուգահեռ, որոնք փոխկապակցված են այդ սահմաններից ներս բնակչությանը տրված որոշակի իրավունքներին և պարտականություններին, միգրացիան աստիճանաբար ստանում է ավելի մեծ քաղաքական կարևորություն:

Ինչո՞վ է կարևոր ճիշտ ընկալումը

Միգրացիան հիմնականում տեղի է ունենում առանց ավելորդ պաթոսի կամ հանրային ուշադրության, քանի որ առօրյա կյանքի մաս է կազմում: Պատկերացրեք ամեն օր վարչական տարածքների միջև աշխատանքի ճամփորդող մարդկանց: Սակայն միգրացիայի լուսաբանումը կարող է ստիպել մարդկանց զանազան ձևերով մեկնաբանել այս երևույթը, ինչը կարող է կարևոր հետևանքներ ունենալ քաղաքականության համար: Գլոբալ միգրացիայի գերակշիռ մասը²² տեղի է ունենում լիովին օրինական ճանապարհով, սակայն միգրացիան լուսաբանելու տարածված թեմաներից մեկը միգրանտների իրավական կարգավիճակն է: ՄԹ օրաթերթերում միգրացիայի մասին բովանդակության վերլուծությունը, որն իրականացրել է Օքսֆորդի համալսարանը, վկայում է, որ «ներգաղթող» բառը որակելու համար «ապօրինի» եզրույթն օգտագործվել է տասն անգամ ավելի հաճախ, քան որևէ այլ ածական:²³

Միգրացիայի ներկայացումը՝ որպես մի երևույթ, ուր գերիշխում է «ապօրինությունը», կարող է օգտագործվել հասարակության վախեր և քաղաքական կամ հանրային որոշակի արձագանքներ խթանելու համար (օրինակ՝ միգրացիային տրամադրվող աջակցության կրճատում, միգրանտների արտաքսման և ազատագրկման դեպքերի աճ): Նման պատկերը պարզեցնում է միգրացիայի երևույթը՝ վերածելով այն ծաղրանկարի, որը թույլ չի տալիս իմաստալից և խորը հասկանալ դրա բնույթը:

Կարևոր հուշումներ

Պատասխանատու լուսաբանումը պետք է միշտ՝

- Պարզաբանի իրավական վիճակը, մասնավորապես՝ ի՞նչ պետք է իրականացվի միգրացիայի հարցում, որ այն համարվի օրինական և մարդկային կյանքի բնականոն մաս:

²² Գոյություն չունի աշխարհում անկանոն միգրացիայի թվերն արժանահավատ ներկայացնող առանձին վերցված աղբյուր, բայց տես Պյուի բարեգործական հիմնադրամի հետևյալ վերլուծությունը՝ <https://www.pewresearch.org/global/2019/11/13/europes-unauthorized-immigrant-population-peaks-in-2016-then-levels-off/>

²³ Sliu Migration in the News - Migration Observatory at the University of Oxford (2013) <https://migrationobservatory.ox.ac.uk/resources/reports/migration-in-the-news/>

- Համատեքստին բնորոշ ներկայացնի խնդրի մասշտաբը և բնույթը:
- Խուսափի անհատների իրավական կարգավիճակի մասին ենթադրություններից, երբ այն անհայտ է:
- Օգտագործի ճշգրիտ եզրույթներ:

Տեքստային ներդիր 2 – կանաչ տեքստ

2) ԱՊՐԵԼ ՁԵՐ ԾԱԳՄԱՆ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ

Միգրացիան տեղի է ունենում բազմաթիվ պատճառներով՝ ընդգրկելով հետապնդումից կամ աղքատությունից փախուստ տվող անձանցից մինչև գերհարուստներ, ովքեր տեղափոխվում են ավելի շքեղ կյանք ապրելու համար:

Ինչո՞ւ է կարևոր ճիշտ ընկալումը

Մեղիան կարող է էական դերակատարում ունենալ միգրանտների մասին հանրային կարծիք և նրանց նկատմամբ վերաբերմունք ձևավորելու հարցում: Լավագույն դեպքում դա օգնում է ձևավորել համերաշխ և խաղաղ հասարակություններ, իսկ վատագույն դեպքում՝ համայնքների միջև խթանել հակակրանք և նույնիսկ՝ բռնություն:

Կարևոր հուշումներ

- Խուսափել ռասայական և/կամ կրոնական կարծրատիպերից:
- Հիշել, որ ապաստան հայցելն օրինական է:
- Հիշել, որ ինտեգրումը փոփոխության երկկողմանի գործընթաց է, որն ընդգրկում է թե՛ միգրանտին, թե՛ հյուրընկալող հասարակությունը:
- Եթե անձը փաստացի չի տեղափոխվել՝ նա միգրանտ չէ՝ անկախ իր ազգային պատկանելիությունից, կրոնից կամ ընտանեկան ծագումից: Մա կարևոր է, երբ քննարկման առարկա են միգրանտ ծնողների երեխաները:

Տեքստային ներդիր 3 – շագանակագույն տեքստ

3) ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏՎՅԱԼՆԵՐ և ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Միգրացիոն տվյալների և տեխնիկական եզրույթների ճիշտ գործածությունը չափազանց կարևոր է միգրացիայի ճշգրիտ լուսաբանման համար:

Ինչո՞ւ է կարևոր ճիշտ ընկալումը

Տերմինաբանության սխալ օգտագործումը կարող է արմատապես ազդել պատմության իմաստի վրա, իսկ նուրբ տարբերությունների ընկալումը կարող է զգալիորեն ազդել տվյալների ձեր ըմբռնման վրա:

Երկրի՝ օտար երկրում ծնված բնակչության, այլ ոչ թե օտարերկրյա քաղաքացիների վերլուծությունը կարող է տալ ամբողջությամբ տարբերվող տվյալներ: Մարդիկ կարող են փոխել իրենց քաղաքացիության երկիրը, բայց նրանց ծննդյան երկիրը, սովորաբար, մնում է անփոփոխ:

Այսատան հայցողին որպես «ապօրինի ներգաղթող» կամ, նույնիսկ, «չփաստաթղթավորված միգրանտ» կոչելը կարող է ձևավորել անհատի կամ նրա համայնքի մասին ընկալումը և, հնարավոր է, լսարանի և, անգամ, քաղաքականություն մշակողների կողմից նրանց հանդեպ դրական կամ բացասական արձագանքը:

Կարևոր հուշումներ

- Համոզվեք, որ գիտեք ձեր օգտագործած եզրույթների ճիշտ իմաստը, հատկապես՝ եթե դրանք օրենքի կամ քաղաքականության մեջ ամրագրված նեղ սահմանումներ են:
- Հիշեք, որ միգրացիան բարդ խնդիր է, և ընդհանրական եզրույթները կարող են անհասկանալի դարձնել անձի պատմության ավելի կարևոր գործոնները:

Տեքստային ներդիր 4 – կարմիր տեքստ

4) ԿԱՆՈՆԱԿՈՐ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՂԱՍԱԿԱՐԳԵՐԸ

Հաճախակի հանդիպում են անդրադարձներ միգրանտների որոշակի դասակարգերի վերաբերյալ, որոնք, սովորաբար, սահմանվում են՝ ելնելով անձին երկիր մուտք գործելու և մնալու թույլտվություն տալու հիմքերից: Հետևաբար, կանոնավոր միգրանտների դասակարգերը հաճախ արտացոլում են միգրացիոն քաղաքականությունից բխող վարչական դասակարգերը, որոնք կարող են ներհատուկ լինել կոնկրետ երկրին: Որոշ ենթատեքստերում միգրանտները կարող են նաև դասակարգվել մուտքի կամ կեցության իրենց նշած մտադրություններից ելնելով, որոնք, ինչպես նշված է վերևում, կարող են փոխվել ժամանակի ընթացքում:

Ինչպե՞ս կարելի է բարելավել տերմինաբանության գործածությունը

Բազմաթիվ սահմանումների գոյությունը կարող է առանձնակի մարտահրավեր առաջացնել միգրանտների թվաքանակի կամ միգրացիայի ազդեցության վերաբերյալ հանրային բանավեճի հետևողականության առումով, քանի որ հեղինակի նպատակներին ծառայելու համար նույն բանավեճը կարող է միաժամանակ հիմնվել երկու տարբեր սահմանումների վրա (օրինակ՝ օտար երկրում ծնված և օտարերկրյա քաղաքացի):

Օրինակ, 1989-2002 թվականներին Վրաստանի բնակչության նվազման վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ժամանակահատվածում Վրաստանից արտագաղթողների մեծ մասը կազմել են էթնիկ ռուսները և հայերը: Այս երևույթի հետևանքները Վրաստանի համար բավականին տարբերվում են, եթե, մի դեպքում, սա համարվի «վրացական» արտագաղթ,

իսկ մյուս դեպքում՝ հետխորհրդային «վերադարձող միգրացիա» (թեև անհատներից շատերը կարող են նաև ծնված լինել Վրաստանում):

Հանրային բանավեճում, հաճախ, պարզ չէ՝ ով է «միգրանտը»: Օրինակ՝ միգրանտներին կարող են միաձուլել էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների հետ, կամ եզրույթը կարող են օգտագործել օտարերկրյա քաղաքացիներին նկարագրելու համար, նույնիսկ այն դեպքում, երբ նրանք ծնվել են այն քաղաքում, ուր այժմ բնակվում են:

«Միգրանտների» մասին տերմինաբանության առանձնահատկությունները ներկայացնող լավագույն օրինակներից մեկն առնչվում է Լեհաստանի որոշ տարածքներին, որտեղ գիտական վերլուծության արդյունքում պարզվել էր, որ «օտար երկրում ծնված» բնակչության գծով պետական ծախսերը արտասովոր բարձր էին: Սակայն ավելի մանրամասն քննությունը բացահայտեց, որ այս ծախսերը կապված էին այն տարեցներին վճարվող կենսաթոշակների հետ, ովքեր ծնվել էին Գդանսկի նման քաղաքներում՝ նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ դրանք դեռ Գերմանիայի մաս էին կազմում: Այս դեպքում, վիճակագրության մեջ այդ անձինք սահմանվում էին որպես միգրանտ ոչ թե իրենց, այլ սահմանի տեղափոխման պատճառով:²⁴

Մեղիա խոսույթները, սովորաբար, որպես հոմանիշ օգտագործում են տարբեր եզրույթներ, իսկ ներգաղթի նկատմամբ վերաբերմունքի մասին հասարակական կարծիքի հարցումներն արտացոլում են այս շփոթմունքը և կարող են նույնիսկ խորացնել այն: Հարցումները չեն կարող հստակ սահմանել եզրույթները, ինչը հարցման ռեսպոնդենտին է թողնում հարցերի պատասխանները, որոնք հիմնված են սեփական անորոշ սահմանումների վրա: Այլ հարցումներ կարող են տալ միգրանտների հստակ սահմանումներ, որոնք կարող են ուղղորդել ռեսպոնդենտներին որոշակի եզրակացությունների: Երբ տվյալների մասին նյութը հիմնվում է տարբեր աղբյուրների վրա, կարևոր է ըստ համատեքստի հստակեցնել եզրույթները, բացատրել դրանց հիմքում ընկած սահմանումներն ու հավուր պատշաճի քննարկել՝ որքանով են դրանք ճշգրիտ ներկայացնում լուսաբանվող հասկացությունը:

Հարցեր նյութումների և լրագրողների միությունների համար

- Արդյոք գոյություն ունե՞ն վիճելի և նախընտրելի տերմինաբանությունը քննարկելու ֆորումներ:
- Արդյոք գոյություն ունե՞ն լեզվի և տերմինաբանության օգտագործման ուղեցույցներ, որոնց համաձայնություն են տվել լրատվամիջոցները, կարգավորող մարմիններն ու ժուռնալիստների միությունները:
- Արդյոք կա՞ն միջազգային, տարածաշրջանային կամ ազգային տերմինաբանական բառարաններ ձեր մայրենի լեզվով:
- Ի՞նչ կարելի է անել ձեր երկրի կամ տարածաշրջանի ենթատեքստում տերմինների ըմբռնումը բարելավելու և դրանց նույնական օգտագործման վերաբերյալ համաձայնության գալու համամասնագիտական մոտեցում որդեգրելու համար:
- Արդյոք ուղեցույցներն ու քաղաքականությունները հրապարակային են: Հնարավո՞ր է դրանք օգտագործել մեղիա գրագիտությունը բարձրացնելու, միգրացիայի մասին գիտելիքները բարելավելու և (հնարավորության

²⁴ <https://www.understandfreemovement.eu/article/what-makes-poland-unique/>

սահմաններում) թափանցիկության միջոցով լրագրության նկատմամբ վստահությունն ամրապնդելու համար:

Անցնել Գլուխ 10. [Միգրացիայի լուսաբանման բարելավում](#)

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Երբեմն ճիշտ տերմինաբանություն օգտագործելը կարող է անհարմար թվալ և, անգամ, տպավորություն ստեղծվել, որ խոսակցականի փոխարեն տեխնիկական տերմինաբանության օգտագործումը թուլացնում է ձեր պատմության ազդեցությունը: Սակայն ձեր օգտագործած եզրույթների ճիշտ ընկալումը չափազանց կարևոր է: Այն ոչ միայն կարող է գործնական ազդեցություն ունենալ խոցելի անձանց վրա, այլև տարբերություն դնել սխալ կամ մոլորեցնող հոդվածների և պատշաճ լուսաբանման միջև:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- Լրացուցիչ ռեսուրսներ կարելի է գտնել [Միգրացիայի տերմինաբանական բառարաններ](#) բաժնի 11-րդ գլխում՝ [Գործիքներ և ռեսուրսներ](#)
- Բառերի ավելի խորքային գործածությունը բացահայտելու համար տե՛ս՝ Գլուխ 3. [Միգրացիայի լուսաբանման միտումները](#)
- «Ինչպես լինել միգրացիան լուսաբանող լավագույն լրագրող» հարցի ավելի խորը վերլուծության համար տե՛ս՝ Գլուխ 2. [Ի՞նչ լրագրող եք դուք](#)
- Միգրացիայի մաս կազմող գործընթացները և խնդիրները մանրամասն բացահայտելու համար տե՛ս՝ Գլուխ 5. [Միգրացիոն պատմություններ](#)

ԳԼՈՒԽ 5.

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգտագործեք այս գլուխը, որպեսզի՝

- Հասկանաք միգրացիոն պատմությունների հնարավոր լայնությունը, և որքանով են դրանք փոխկապակցված այլ թեմաների հետ:
- Հավաքեք միգրացիան լուսաբանելու նոր տեսակետների և մոտեցումների մասին գաղափարներ:

ՄՄԻՍՀԵ [Միգրացիոն հետազոտությունների կենտրոնի](#)²⁵ պատրաստած միգրացիայի ուսումնասիրությունների տաքսոնոմիայում նույնականացվում են միգրացիայի լուսաբանման 100-ից ավելի հնարավոր ուղղություններ և թեմաներ: Նոր պատմությունների համար ներշնչանք գտնելու համար առանձնակի խորհուրդ ենք տալիս ծանոթանալ այս ռեսուրսին:

Հետևելով ՄՄԻՍՀԵ Միգրացիոն հետազոտությունների կենտրոնին՝ այս բաժինը կազմակերպված է համաձայն՝

1. Միգրացիոն գործընթացների ([խթանիչներ](#), [ձևեր](#) և [ենթակառուցվածքներ](#))
2. Միգրացիայի [հետևանքներ](#)
3. Միգրացիայի կառավարում

Ինչպես և այս ձեռնարկի մնացած հատվածների դեպքում՝ թեմաները, որոնց վրա կանգ ենք առնում, և ծավալը, որը տրված է դրանց, հիմնվում են ՄՈՄԵՆՏԱ 2 ծրագրի շրջանակներում 2020 թվականի օգոստոսին լրագրողների միությունների հետ ունեցած ֆոկլուս խմբերի քննարկումների վրա:

Միգրացիոն գործընթացներ

Միգրացիան ծագման կետից նշանակետ տեղափոխվելու մեկ գործողություն չէ: Այն, ավելի շուտ, բաղկացած է մի շարք պլաններից, նկատառումներից և գործողություններից, որոնք տանում են այս տեղաշարժին, ինչպես նաև գործընթացներից, նշգրտումներից և վերանայումներից, որոնք կարող են տեղի ունենալ բուն տեղաշարժի ընթացքում, երկարաժամկետ հետևանքներից, նորարարություններից, ռազմավարություններից, ընդունման և հարմարվողականության մեխանիզմներից, որոնք ի հայտ են գալիս թե՛ նշանակետ հասածների, թե՛ իրենց երկրում մնացածների համար:

²⁵ <https://migrationresearch.com/taxonomies/>

Միգրացիայի խթանիչներ

Մարդկանց տեղաշարժը պայմանավորված է զանազան պատճառներով և, հաճախ, դրանք մեկից ավելի են: Որքան էլ բարդ լինեն պատճառները, հետազոտողները, հաճախ, օգտակար են համարում դիտարկել «վանող» գործոնները, որոնք խրախուսում են անձին արտագաղթել մի տեղից, և «ձգող» գործոնները, որոնք խրախուսում են նրան ընտրել կոնկրետ նշանակետ: Միգրացիայի այս (այսպես կոչված) «խթանիչները» կարող են փոխվել ժամանակի և միգրացիոն ճամփորդության ընթացքում, ինչը բարդացնում է միգրացիայի շարժառիթների հստակ սահմանումը:

Միգրացիայի խթանիչներ՝ ամենօրյա նկատառումներ

Վանող և ձգող գործոնները հաճախ կապված են աշխատավարձի և զբաղվածության հնարավորությունների հետ, որոնք կարող են ավելի նպաստավոր լինել նշանակետ երկրում, քան տանը, կամ ընտանեկան պատճառների հետ: Մանրամասները ներկայացված են ստորև՝ [աշխատանքային միգրացիային](#) և [ընտանեկան միգրացիային](#) նվիրված բաժիններում:

Կարևոր է գիտակցել, որ «քառակուսիների» կոկիկ շարքը, որտեղ վարչական նպատակներով փորձում ենք տեղավորել միգրանտներին, գրեթե երբեք չի ներկայացնի տեղափոխված իրական մարդկանց ամբողջական պատմությունը: Այս մարդիկ կարող են ունենալ պատճառների համադրություն, որոնք դուրս են «[աշխատանք](#)», «[ուսում](#)», «[ընտանիք](#)» կամ «[ապաստան](#)» հասկացություններից: Կոնկրետ նշանակետի ընտրությունը կարող է պայմանավորվել լեզվի իմացության, սփյուռքի առկայության, միջազգային տրանսպորտային ենթակառուցվածքի և բազմաթիվ այլ նկատառումներով: Մանրամասները ներկայացված են [խառը միգրացիային](#) նվիրված բաժնում:

Մեղիայում և քաղաքական քննարկումներում միգրացիայի ամենահաճախ անտեսվող պատճառներից մեկը մեզ շրջապատող աշխարհի հանդեպ պարզ հետաքրքրությունն է և, որպես անձ, զարգանալու, նոր ու հետաքրքիր փորձառություններ ունենալու ցանկությունը: Մասատրիխտի համալսարանի հետազոտողների վերլուծությունը բացահայտեց, որ ԵՄ-ում, հատկապես երիտասարդների միջավայրում, միգրացիայի կարևոր խթանիչ է պարզ «ճանապարհորդության տենչը»²⁶, ճամփորդելու մեծ ցանկությունը:

Թեև մենք տեղյակ չենք նման հետազոտություններից նախկին Խորհրդային Միության երկրներում, սակայն աշխարհը տեսնելու, բազմազան և հետաքրքիր կյանք ապրելու ցանկությունը բավականին համընդհանուր է:

²⁶ <https://www.reminder-project.eu/blog/why-are-people-moving-within-europe-the-complexity-of-migrant-decision-making-in-the-european-union/>

Օրինակի վերլուծություն՝ ներքին միգրացիա

Կարևոր է նաև չանտեսել մարդկանց տեղաշարժը երկրի ներսում: Ինչպես նշում է ԲիԲիՍի-ի բնակչության հարցերով թղթակից Ստեֆանի Հեգարթին՝ ներքին միգրացիան կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ հասարակության վրա, քան ներգաղթը և արտագաղթը:

https://www.youtube.com/watch?v=VyVn2ov1ss8&list=PLXxzWkiXihue7dRH3_QceqpkBGJL-gQdI&index=1

Միգրացիայի խթանիչներ՝ ճգնաժամ և միգրացիա

Միգրացիան, հաճախ, ճգնաժամի ընթացքում մարդկանց համար վերջին միջոց է: Ճգնաժամների տեսակները, որոնց միջով անցնում են մարդիկ կարող են զանազան լինել՝ խիստ անձնականից, երբ որոշակի անհատի կյանքը վտանգվում է թշնամության կամ հանցավոր խմբի պատճառով, մինչև անհատների հալածանքը որոշակի համայնքի, քաղաքական խմբի, ազգության, կրոնի պատկանելու կամ սեռական կողմնորոշում ունենալու համար: Ճգնաժամների շարքում կարող են լինել նաև աղետներ, օրինակ՝ պատերազմ կամ բնական աղետ, որոնք ազդում են բնակարանային պայմանների և համայնքների վրա, և որոնց ազդակիրն են հասարակության բազմաթիվ խմբեր: Որոշ հանգամանքներում, ճգնաժամերը կարող են լինել այնքան ծանր կամ ավերիչ, որ մարդիկ չեն կարող մնալ իրենց բնականոն բնակության վայրում: Երբ դա տեղի է ունենում, մենք կարող ենք նկարագրել արդյունքում ի հայտ եկող միգրանտներին՝ որպես «**հարկադիր տեղահանվածներ**», ինչը նշանակում է, որ նրանց միգրացիայի խթանիչները եղել են այնքան ծայրահեղ, որ հանգամանքները ստիպել կամ պարտադրել են նրանց տեղափոխվել:

ՄԱՓԳՀ-ի 2019 թվականի վերջում տված գնահատականով՝ աշխարհում կային մոտ 79.5 միլիոն հարկադիր տեղահանված անձինք (ՄԱՓԳՀ 2019)²⁷: Այս մարդկանց մեծ մասը՝ մոտ 45.7 միլիոնը «ներքին տեղահանված անձինք» էին (ՆՏԱ), իսկ մնացած 33.8 միլիոնը փախստականներ (կամ փախստականի նման իրավիճակներում անձինք) և ապաստան հայցողներ էին՝

- 26 միլիոն փախստական
- 40.0 միլիոն ներքին տեղահանված անձինք
- 20.4 միլիոն ՄԱՓԳՀ-ի մանդատի ներքո
- 5.6 միլիոն պաղեստինցի փախստական ՄԱՕԱԳ-ի մանդատի ներքո
- 4.2 միլիոն ապաստան հայցող

(տե՛ս՝ [Օրինակի վերլուծություն՝ ներքին տեղահանված անձանց մասին լուսարանում](#))

²⁷ <https://www.unhcr.org/uk/figures-at-a-glance.html>

Ե՛րբ միջամտել

Կան պահեր, երբ լրագրողը միակ անձն է տեղում, ով կարող է օգնել տուժած անձին կամ նրան, ում կյանքը վտանգված է: Նման դեպքերում, ընդհանուր համաձայնություն կա, որ այդ անձին օգնության հասնելու բարոյական պարտականությունը վեր է լրագրողի լուսաբանելու մասնագիտական պարտականությունից, իսկ որոշ երկրներում դա նաև օրենքով նախատեսված պարտավորություն է:

Մասնակցության կանոններ՝ ե՛րբ է լրագրողը պարտավոր միջամտել (ԼՄՑ)

<https://ijnet.org/en/story/rules-engagement-when-should-journalists-intervene>

Ե՛րբ է լրագրողը պարտավոր ներգրավվել իր լուսաբանած պատմություններում (ԿԺԱ)

<https://www.cjr.org/analysis/journalists-hurricane-harvey.php>

Տրավմատիկ իրադարձություններ լուսաբանելու հոգեբանական հետևանքները

Ձեր ֆիզիկական առողջությունը չպետք է լինի ձեր միակ մտահոգությունը: Լրագրողները, երբեմն, ունենում են զանազան զգացմունքներ, այդ թվում՝ կարեկցանք, միջամտելու մղում, միջամտելու անկարողության հետևանքով հիասթափություն, իրավիճակների նկատմամբ բազմիցս նկատված անտարբերություն, հարցազրույց տվող կամ լուսաբանման հերոս հանդիսացող անձանց կողմից մերժում կամ նրանց նկատմամբ մերժողականություն: Ձեր ֆիզիկական առողջությունը չպետք է լինի ձեր միակ մտահոգությունը:

Բարոյական վնասվածք

Ժուռնալիզմի ուսումնասիրության Ռոյթերս ինստիտուտի կողմից 2017 թվականին հրատարակված «[The Emotional Toll on Journalists Covering the Refugee Crisis](#)» զեկույցում ուսումնասիրվում է մարդասիրական ճգնաժամը լուսաբանող լրագրողների հոգեբանական արձագանքը: Ուսումնասիրությունը բացահայտեց, որ փախստականների ճգնաժամը լուսաբանող լրագրողների համար մեծագույն հոգեբանական մարտահրավերը բարոյական վնասվածքն էր, այլ ոչ թե ՀՏՄԻ-ը կամ դեպրեսիան:

Ուսումնասիրությունը եզրակացրեց՝

«Նկատի առնելով, որ բարոյական վնասվածքը սերտորեն ասոցացվում է լրագրողների հետ, ովքեր ակտիվորեն ներգրավվում են փախստականներին օգնելու գործում, ոլորտը կարիք ունի ձևավորել կոնսենսուս նման իրավիճակներում պատշաճ ակնկալիքների սահմանման հարցում: Լավ լրագրողների վրա, բնականաբար, ազդում է միգրացիոն ճգնաժամը, սակայն նրանք չեն կարող և չպետք է փորձեն կարգավորել այն: Մեղքի զգացումը, որը հաճախ անտեղի է, կարող է լինել վարքի կեղծ շարժառիթ: Նույնը կարող է լինել բարոյական վնասվածքը: Լրագրողները պետք է հասկանան, որտեղից են բխում իրենց զգացմունքները, և որ տառապանքի զգացումը բնականոն է այն ենթատեքստում, որի ականատեսն են իրենք: Սակայն, երբ սահմաններն աղոտ են, և լրագրողներն սկսում են կանոնավոր օգնել միգրանտներին՝ զգացմունքները կարող են հորդել:»

Նման իրավիճակից խուսափելու համար լավագույն տարբերակ է, երբ բարոյական վնասվածքի և այս աշխատանքից բխող հնարավոր այլ զգացմունքային մարտահրավերների մասին ուսուցումը սկսվում է մինչև առաջադրանքի սկիզբը, և վերադարձից հետո լինում է անհատական

դերրիֆինգների մասը: Ավագ լրագրողները և մենեջերները պետք է առաջնորդեն սեփական օրինակով և գրուցեն իրենց աշխատակիցների հետ սեփական փորձի և ակնկալիքների մասին: Պետք է խրախուսել նման վիճակներում դիմել օգնության և չհայտնվել կարիերայի սպազա հեռանկարները փոսնագելու իրավիճակում»:

Հետորավմատիկ սթրեսային խանգարում (ՀՏՄԽ)

Բարոյական վնասվածքը կարող է լինել հետորավմատիկ սթրեսի կանխագուշակը, որը կարող է ակնհայտ դառնալ ամիսներ, նույնիսկ տարիներ անց, երբ լրագրողը վաղուց լքել է ապարեզը:

Շոկային կամ ծանր փարձառություններ ունեցած փախստականների և միգրանտների հետ հանդիպող լրագրողների մոտ կարող է, երբեմն, զարգանալ փոխանորդական տրավմատիկացիա կամ երկրորդային տրավմա, և նրանք սկսեն արձագանքել իրենց հարցազրույցի հերոսների օրինակով:

Արդյունքում, նրանք կարող են մեկուսանալ մյուսներից կամ խուսափել իրավիճակներից կամ գրույցներից, որոնք հիշեցնում են տրավման: Առաջին հերթին պետք է հասկանալ այն ազդեցությունները, որոնք ձեզ վրա կարող են ունենալ սթրեսային իրավիճակները, որոնց ականատեսն եք եղել կամ որոնք վերապրել եք:

Ժուռնալիզմի և տրավմայի Դարթի կենտրոնը կարևոր աշխատանք է կատարել՝ նպաստել հետազոտությանը և կազմել արժեքավոր տվյալների շտեմարան լրագրողների, լրագրություն դասավանդողների և առողջապահության մասնագետների համար, որը նվիրված է տրավմայի, կոնֆլիկտի և ողբերգության՝ մեդիայի միջոցով լուսաբանման բարելավմանը: <https://dartcenter.org>.

Կենտրոնը հրապարակել է նաև հատուկ միգրացիայի լուսաբանման հետ փոխկապակցված խնդիրների մասին զեկույց՝ Ռեսուրսների տեսություն. Միգրացիայի և փախստականների լուսաբանում (2018 թվականի օգոստոսի 2):

<https://dartcenter.org/blog/2018/08/resource-roundup-covering-migration-refugees>

Միգրացիայի ձևեր

Միգրացիայի ձևեր՝ աշխատանքային միգրացիա

Արդյո՞ք գիտեք: 2015 թվականին միգրանտների ներդրումը համաշխարհային ՀՆԱ-ում կազմել է մոտ 6.7 տրիլիոն ԱՄՆ դոլար, ինչը կազմում է այդ տարվա համաշխարհային ՀՆԱ-ի 9.4%-ը: ([McKinsey](#))

Աշխատանքային միգրացիա

Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալներով աշխարհի միգրանտ բնակչության 59%-ը կազմում են աշխատանքային միգրանտները:²⁸ Իհարկե սա չի նշանակում, որ նրանց միգրացիայի միակ պատճառը եղել է աշխատանքը, սակայն նշանակում է, որ բնակչության նոր երկրում նրանք ունեն ինչ-որ տեսակի վճարվող զբաղվածություն: Այս թիվը շեշտում է միգրացիայի կարևոր տնտեսական ազդեցությունները և միգրացիայի ու աշխատանքի միջև կարևոր կապերը: Աշխատանքային միգրացիան ունի երկու կողմ՝

- *Աշխատանքային արտագաղթ* – մարդիկ, ովքեր աշխատելու նպատակով մեկնել կամ մեկնում են այլ վայր.
- *Աշխատանքային ներգաղթ* - մարդիկ, ովքեր աշխատելու նպատակով ժամանել կամ ժամանում են այլ վայրից:

Սակայն, հարկ է հիշել, որ միգրացիան հաճախ ժամանակավոր է, սեզոնային կամ շրջանակային: Հատուկ աշխատանքային նպատակներով միգրացիայի մեծ մասը կարճաժամկետ է և կապված է հստակ սեզոնային պահանջարկ ունեցող ոլորտների, օրինակ՝ գյուղատնտեսական բերքահավաքի, զբոսաշրջության կամ շինարարության հետ:

Աշխատանքային միգրացիայի լուսաբանման մեջ տարածված սխալներից մեկն այսպես կոչված «աշխատանքի ծավալի անփոփոխությունն» է (տե՛ս՝ նաև *միգրացիայի տնտեսական/բիզնես լուսաբանման ծուղակները և տարածված սխալները, Գլուխ 2. Միգրացիան լուսաբանող հ՛ն, լրագրող եք դուք, Տնտեսություն և բիզնես բաժին*): Այս մոտեցումը ենթադրում է, որ երկիր որոշակի թվով միգրանտներ ժամանելու դեպքում նույն քանակությամբ տեղաբնակ աշխատողներ կմնան անգործ: Այս դեպքում, սակայն, ենթադրվում է նաև, որ տնտեսության մեջ կա ֆիքսված թվով աշխատատեղ, և միգրանտներն ու տեղաբնակներն ունեն նույնանման հմտություններ/որակավորումներ, ինչը, հաճախ, այդպես չէ: Նոր մարդկանց ժամանումը նշանակում է ապրանքների և ծառայությունների լրացուցիչ պահանջարկ՝ բնակարանից ու սնունդից մինչև առաջին անհրաժեշտության, սպառողական ապրանքներ և զվարճություն՝ ստեղծելով նոր աշխատատեղեր և ոլորտներ:

Աշխատանքային արտագաղթի լուսաբանում

Որոշ առումներով՝ աշխատանքային արտագաղթի լուսաբանումը կարող է ավելի խորթին լինել, քան ներգաղթի լուսաբանումը, քանի որ ավելի դժվար է պատմել ինչ-որ բանի մասին, որ բացակայում է (կամ բացակայելու է), քան այն բաների մասին, որոնք այժմ այքիդ առջև են: Այս մարտահրավերն արտացոլված է տվյալներում՝ բազմաթիվ երկրներ վիճակագրություն չեն հավաքում մեկնող անձանց մասին և, իրականում, արտագաղթի վերաբերյալ ավելի հուսալի տվյալներ հաճախ հավաքագրվում են բնակչության երկրներում՝ *ներգաղթի* տվյալների միջոցով:

²⁸ <https://migrationdataportal.org/themes/labour-migration>

***Ուղեղների արտահոսք, թե՛ ուղեղների ներհոսք*²⁹**

Աշխատանքային արտագաղթի որոշ բացասական հետևանքներ. աշխատանքի նպատակով արտագաղթը կարող է լուրջ հետևանքներ ունենալ հասարակությունների համար: Այն կարող է նպաստել բնակչության քանազանի, ինչը նվազեցնում է ապրանքների և ծառայությունների պահանջարկը և վնաս հասցնում տեղական տնտեսություններին և բիզնեսներին, հասարակությունից տանել առավել արտադրողական անդամներին, ինչը կրճատում է հարկային եկամուտները և հանրային ծառայություններում ու ենթակառուցվածքներում ներդրում կատարելու հնարավորությունները, կարող է նաև հանգեցնել ընտանիքների բաժանմանը՝ հնարավոր բացասական զգացական և սոցիալական հետևանքներով: Միգրանտները գուցե չունեն ճանապարհորդելու այնքան էլ դրական փորձ, արտաքսվել կամ վտարվել են նշանակետային երկրից, երբ, օրինակ, կորցրել են աշխատանքը, անօրինական են աշխատել կամ եղել են անկանոն միգրանտ: Վերադարձից հետո նրանք կարող են հայտնվել տնտեսական և/կամ սոցիալական դժվարին վիճակում:

Աշխատանքային արտագաղթի որոշ դրական հետևանքներ. արտագաղթը կարող է ստեղծել աշխատանքի համար արժեքավոր հնարավորություններ և եկամուտ գոյացնել թե՛ միգրանտի, թե՛ փոխանցումների տեսքով՝ ուղարկող համայնքի համար: Այն կարող է խթանել մասնագիտական աճը, նոր հմտությունների և գիտելիքի ձեռքբերումը: Փոխանցումների միջոցով կարելի է վճարել կրթության, բուժապասարկման և սպառողական ապրանքների համար, որոնք նախկինում անմատչելի էին: Տնային տնտեսության անդամի աշխատելն այլ երկրում և հնարավոր ավելի բարձր աշխատավարձով կարող է օգնել տնային տնտեսությանը՝ ցրել ռիսկերը և մեծացնել շուկայից հետո հարմարվելու շանսերը: Այն կարող է նաև օգնել տնային տնտեսություններին՝ ստեղծել կամ ընդլայնել բիզնեսները վարկային կամ փոխառության շուկաների բացակայության պայմաններում: Ծրջանակային և սեզոնային միգրացիան կարող են տալ արտասահմանում աշխատելու օգուտները և միաժամանակ կանխել սոցիալական ամենամեծ թերությունները: Միգրանտները կատարում են նաև «սոցիալական փոխանցումներ»՝ նոր արժեքների, գաղափարների և գործելակերպի տեսքով, ինչը կարող է բարելավել հասարակությունը կամ բիզնեսները:

ՀՂՈՒՄ ԳՈՒԼԱՐԻ ԵՎ ԱԼԵԶՍԻ, ՆԱՏԱՅԻ ԵՎ ԼԱՆԱՅԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
ՕՐԻՆԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆԸ

Օրինակների վերլուծություն

- <https://oc-media.org/stuck-between-a-rock-and-a-hard-place-the-miners-of-tkibuli/>
- <https://medium.com/@natascurtul/from-moldova-to-poland-with-what-87a0f4a3643c>

²⁹ St' u Gibson և McKenzie <http://ftp.iza.org/dp5730.pdf> հոդվածը:

Աշխատանքային ներգաղթի լուսաբանում

Ամբողջ աշխարհում աշխատանքային ներգաղթը լուսաբանման մշտական թեմա է: Ներգաղթող միգրանտ աշխատողների շուրջ դիսկուրսի ընդհանուր թեմաների շարքում են՝ նոր ժամանողների ազդեցությունները տեղաբնակների աշխատատեղերի, ներգաղթի ազդեցություններն աշխատավարձերի և աշխատանքային իրավունքների վրա, և ներգաղթի սոցիալական և տնտեսական հետևանքների մասին ավելի լայն քննարկումները: Ցածր աշխատավարձով (կամ որակավորում չունեցող) աշխատողների մասին բանավեճերն էապես տարբերվում են բարձր եկամուտով (կամ բարձր որակավորում ունեցող) միգրանտ աշխատողների շուրջ բանավեճերից:

Աշխատանքային միգրանտներին առնչվող առանցքային հարց է՝ արդյոք խնդրո առարկա հանդիսացող կոնկրետ խմբերը մրցակցո՞ւմ են գոյություն ունեցող աշխատուժի հետ, թե՞ փոխլրացնում են այն: Մրցակցություն ի հայտ է գալիս այն դեպքում, երբ միգրանտ աշխատողն ունի նույն աշխատանքը՝ ինչ աշխատուժի տեղական անդամը, և թափուր աշխատատեղերն ավելի քիչ են, քան դիմող աշխատողները: Փոխլրացում տեղի է ունենում այն դեպքում, երբ միգրանտներն ապահովում են հմտություն, որը համարժեք մակարդակով չկա տեղական աշխատաշուկայում և բիզնեսներին հնարավորություն են տալիս աշխատել ավելի արդյունավետ: Այս խնդիրները ավելի մանրամասն քննարկվում են ստորև:

Աշխատանքային ներգաղթի որոշ բացասական հետևանքներ. Երբ միգրանտներն ուղղակի մրցակցում են տեղական աշխատողների հետ՝ գործատուները հնարավորություն ունեն առաջարկել ավելի ցածր աշխատավարձեր՝ նվազեցնելով բնիկ աշխատողների եկամուտները կամ փոխարինելով նրանց ավելի ցածր վճարվող միգրանտ աշխատողներով: Սակայն, հետազոտական ապացույցները ցույց են տվել, որ այս ազդեցությունները, սովորաբար, կենտրոնացվում են եկամտի բաշխման ստորին հատվածում (ամենացածր եկամուտ ունեցող խմբում), իսկ ազդեցությունները բնիկ աշխատողների վրա, հաճախ, ժամանակավոր են: Ներգաղթողները կարող են նաև աշխատել սովերում կամ վատ կարգավորվող ոլորտներում, որտեղ կարող են ենթարկվել մշտական շահագործման կամ ավելի մեծ վտանգների, որոնք կարող են քայքայել նրանց հոգեկան և ֆիզիկական առողջությունը, ինչը վերադարձից հետո կարող է լրացուցիչ դժվարացնել միգրանտ աշխատողների վերաինտեգրումը:

Աշխատանքային ներգաղթի որոշ դրական հետևանքներ. Երբ միգրանտները փոխլրացնում են աշխատաշուկան՝ նրանք կարող են նպաստել բիզնեսների աճին և մեծացնել շահույթը, զբաղվածությունը և հարկային եկամուտները: Օրինակ, աշխատուժի պակասի պայմաններում բիզնեսները հնարավոր է չբավարարեն իրենց ապրանքների կամ ծառայությունների հանդեպ պահանջարկը, ինչը կարող է հանգեցնել հաճախորդներ կորցնելուն և բնիկ աշխատողների աշխատատեղերի հնարավոր փակվելուն: Միգրանտ աշխատողները կարող են ապահովել ճկուն և էժան աշխատուժ՝ տալով բիզնեսներին աճելու հնարավորություն, ստեղծելով լրացուցիչ աշխատատեղեր և ապահովելով լրացուցիչ հարկային եկամուտներ, աշխատավարձեր և սպառողական ծախսեր: Միգրանտները կարող են նաև կատարել աշխատանք, որը կօգնի բնիկներին՝ անցնել այլ տնտեսական դերակատարումների: Օրինակ, միգրանտ աշխատողների կողմից

երեխաների և տարեցների՝ ֆինանսապես մատչելի խնամքի ծառայությունների ավելի մեծ հասանելիությունը կարող է հնարավորություն տալ տեղաբնակ կանանց, ովքեր նախկինում կատարում էին այդ աշխատանքը, վերադառնալ աշխատաշուկա կամ անցնել ավելի ժամանակատար աշխատանքի:

Ապացույցները վկայում³⁰ են նաև, որ այն դեպքերում, երբ վճարային սանդղակի ստորին հատվածում գտնվող տեղաբնակներին փոխարինում են ավելի ցածր վճարվող միգրանտ աշխատողներով, նրանցից շատերն անցնում են ավելի բարձր վճարվող և/կամ ավելի անվտանգ աշխատանքների, որոնք հաճախ պահանջում են լեզվական հմտությունների ավելի լավ իմացություն կամ մասնագիտական կամ մշակութային ավելի մեծ գիտելիքներ:

Աշխատանքային միգրացիայի, այդ թվում՝ բարձր որակավորում ունեցող աշխատողների միգրացիայի, սեզոնային աշխատանքների, ընկերությունների միջև փոխադրումների, ուղարկող և ընդունող պետությունների վրա ազդեցությունների, հարկադիր աշխատանքի, արդար հավաքագրման և աշխատանքային միգրացիայի իրավական շրջանակների վերաբերյալ լրացուցիչ ուղղորդման համար տե՛ս՝ [*Հարկադիր աշխատանքի և արդար հավաքագրման լուսաբանում. ԱՄԿ գործիքակազմ լրագրողների համար*](#).³¹

Օրինակների վերլուծություն

Աշխատանքային միգրացիա Ադրբեջանից Լեհաստան

<https://oc-media.org/features/this-is-no-life-the-disillusionment-of-azerbaijani-migrants-in-poland/>

Երկու քարի արանքում մնալ — Տկիբուլիի հանքափորները

<https://oc-media.org/features/stujk-between-a-rojk-and-a-hard-plaje-the-miners-of-tkibuli/>

ՄՈՒԴՈՎԱՅԻՑ ԼԵՀԱՍՏԱՆ: ցավից մինչև հույս

<https://medium.com/@natascurtul/from-moldova-to-poland-with-what-87a0f4a3643c>

«Արդյո՞ք աշխատանքային միգրացիան խարխլում է Ուկրաինայի տնտեսությունը»

<https://politikrytyka.org/2019/08/27/chy-pidryvaye-trudova-migratsiya-ukrayinsku-ekonomiku/>

Միգրացիայի ձևեր՝ ուսում արտերկրում

Ուսումը միջազգային միգրացիայի հիմնական խթանիչներից է: ՅՈՒՆԵՍԿՈ-յի համաձայն՝ 2017 թվականին 5.3 միլիոնից ավելի ուսանողներ տեղափոխվել են համալսարան կամ այլ ԲՈՒՀ, ինչը երկու անգամից ավելի գերազանցում է 2000 թվականի 2 միլիոնը (ՅՈՒՆԵՍԿՈ, 2019թ.)³²: Օտարերկրյա ուսանողների ամենամեծ քանակն ընդունում են վեց պետություններ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Միացյալ Թագավորությունը, Ավստրալիան, Ֆրանսիան, Գերմանիան և Ռուսաստանի Դաշնությունը:

³⁰ <https://www.reminder-project.eu/publications/work-packages/wp5-labour-market-public-service-impacts/>

³¹ <https://readymag.com/ITC/IO/1292461/>

³² <https://migrationdataportal.org/themes/international-students>

Լայն իմաստով, ուսումն արտերկրում ընդգրկում է ճամփորդություն բարձրագույն կրթություն (բակալավր կամ բարձր) ստանալու նպատակով և, ընդհանուր առմամբ, ժամանակավոր է՝ մուտքի արտոնագիրը և բնակության թույլտվությունն ունեն վավերականության ժամկետներ: Սակայն, որոշ երկրներում բարձր որակավորում ունեցող շրջանավարտներին առաջարկվում են խթաններ՝ ավելի երկար մնալու և աշխատուժին միանալու համար:

«Ուսումնական ներգաղթը» հազվադեպ է հակասական: Օտարերկրյա ուսանողները վճարում են դասընթացների մասնակցելու համար և, այն փաստից ելնելով, որ նրանք, ակնկալվածի համաձայն, ստանում են բարձրագույն կրթություն, ընկալվում են որպես բարձր որակավորում ունեցող և օգտաբեր տեղական տնտեսության համար: Օրինակ, 2016/17 թվականներին Վրաստանում ուսանել են մոտ 7000³³ օտարերկրյա ուսանողներ, որոնք գումարներ են ծախսել կրթության, կեցության, սննդի, շոփինգի և կատարել այլ կենսական ծախսեր, որոնցից շահել է տեղական տնտեսությունը: Համեմատության համար՝ հաշվարկների համաձայն 2015/16 թվականներին միջազգային կրթությունը 20 միլիարդ բրիտանական ֆունտ է (ավելի քան 25 միլիարդ ԱՄՆ դոլար) գոյացրել ՄԹ տնտեսության համար: Ուսանողները կարող են նաև մնալու կապեր ստեղծել իրենց հյուրընկալող երկրի հետ, որոնք երկարատև տեսանկյունից կարող են ձևավորել «փափուկ ուժ»՝ նպաստելով երկկողմ առևտրային և այլ արժեքավոր միջազգային հարաբերություններին:

Ուսումնասիրել արտագաղթը՝ հմտությունների ձեռքբերում, թե՞ ամենափայլունների և լավագույնների կորուստ

Օտարերկրյա ուսանողների կամ արտերկրում ուսման լուսաբանումը կարող է ավելի բացասական լինել ուսանողների արտասահմանյան բուհերում դասընթացների մասնակցելու հետևանքով ուսանողների արտագաղթի և տեղական կամ ազգային կրթական հաստատություններում եկամտի և պահանջարկի անկման թեմաներով:

Մարդկային կապիտալի զարգացումը (օրինակ՝ հմտությունների կատարելագործում) արտերկրում ուսման միջոցով կարող է հավասարակշռել այս կորուստները, եթե ուսանողները վերադառնան կամ ուղարկեն փոխանցումներ, որոնք կարող են փոխհատուցել պետության ծախսերը: Սակայն, եթե նրանք մշտական մնան արտասահմանում կամ չկատարեն փոխանցումներ, կորուստները կարող են համադրվել երկարատև կտրվածքով մարդկային կապիտալի կորստի և կյանքի ընթացքում պետության չհավաքագրած հարկային եկամուտների հետ: Այս քննարկման կարևոր տարր է այն փաստը, որ պետությունը կարող է չստանալ ուղղակի կամ անմիջական օգուտներ արտասահմանում աշխատող անհատ ուսանողի քաղած օգուտներից (օրինակ՝ աշխատանքային ավելի լավ հնարավորությունների, աշխատավարձի կամ սոցիալական պաշտպանության հասանելիության իմաստով)³⁴: Անձնական զարգացման օգուտները, հետևաբար, միշտ չէ, որ ենթադրում են օգուտներ պետության համար: Ի տարբերություն այս հնարավոր բացասական հետևանքների, որոնք առաջանում են ուսանողների

³³ https://think-asia.org/bitstream/handle/11540/6942/Georgia_Higher_Education.pdf?sequence=1

³⁴ St' u Gibson and McKenzie (2011) <http://ftp.iza.org/dp5730.pdf>

միգրացիայից և բարձր որակավորում ունեցող աճանց երկարատև միգրացիայից՝ պետությունները, ի պատասխան միգրացիայի, կարող են փաստացի ունենալ ուղեղների *նեքհոսք*՝ մարդկային կապիտալի ավելացում երկրի ներսում: Գոյություն ունեն որոշակի ապացույցներ, որ կյանքի ավելի ուշ փուլում գաղթելու ակնկալիք ունեցող երիտասարդները կարող են բարձրագույն կրթություն կամ հավաստագրեր ստանալ, որոնք կարող են նպաստել իրենց հաջողությանը կոնկրետ նշանակետ երկրում: Գաղթելու ձգտում ունեցող ոչ բոլոր անձինք են արտագաղթում, ինչը կարող է ավելացնել երկրում որակավորված կամ կրթություն ստացած անձանց թիվը:

Այլ բացասական խնդիրներ կարող են առնչվել ինտեգրման և համերաշխության հարցերին, կամ ուսանողների ծագման երկրների հետ կապված քննարկումներին, կամ կրոնական կամ էթնիկ փոքրամասնությունների նրանց անդամակցությանը: Այլ երկրում կրթություն ստացող ուսանողները կարող են հարել մշակույթի կամ ավանդույթների, որոնք հակասում են իրենց բնակության երկրների նորմերին: Մյուս կողմից, նրանք կարող են նաև առանց դիտավորության կլանել բնակության երկրի արժեքները և նորմերը, որոնք հակասում են իրենց ծագման երկրի արժեքներին և նորմերին, ինչը առաջացնում է մտահոգություններ, որ ուսանողները կարող են օտարվել իրենց բնիկ մշակույթից:

Մեկ այլ բնագավառ, որտեղ ուսման միգրացիան կարող է հակասական լինել, առնչվում է այն իրավիճակներին, երբ միգրանտները կարող են նաև աշխատել: Այստեղ բարձրացվող հնարավոր խնդիրների լրացուցիչ վերլուծության համար տե՛ս՝ **աշխատանքային միգրացիա** բաժինը:

Ուսանողների ինտեգրում. արդյոք օտարերկրյա ուսանողներն ազգային համայնքի մա՛ս են

Գոյություն ունեն օրինաչափ հարցեր այն մասին, թե որքանով է սպասելի ինտեգրումն այն իրավիճակներում, երբ միգրացիան ժամանակավոր է: Մակայն, ինչպես նշված է **տերմինաբանության** բաժնում, ինտեգրումը երկկողմ գործընթաց է միգրանտների և ընդունող երկրների միջև, հետևաբար կարևոր է հիշել, որ պարտավորությունը դրված չէ միայն միգրանտի վրա: Եթե լուսաբանումը կենտրոնանում է ուսանողի ծագման, ազգության կամ կրոնի վրա, ապա կարևոր է պարզել դրդապատճառը և նախապաշարումները, որոնք ընկած են պատմության հիմքում, և արդյոք օրինաչափ է՝ հետամուտ լինել այդ թեմային:

2019 թվականին ՄՈՄԵՆՏԱ ծրագրի շրջանակներում ստեղծված ՄԶՄՄԿ Միգրացիայի ուսումնական ակադեմիայից վերցված Արտերկրում ուսման նպատակով միգրացիայի լուսաբանման օրինակներ՝

Ադրբեջանցի ուսանողներն՝ արտերկրում. կորա՞ծ, թե դեռևս չբացահայտված ակտիվներ (2019թ.) – Իսմայիլ Փաթալիև

<http://mediaman.az/azerbaijani-students-abroad-lost-or-still-unreviled-assets/>

Վրացի ուսանողները՝ ԵՄ-ում (2019թ.) – Նանուկա Մագլաքելիձե

<https://medium.com/@nanukamaglakelidze/georgian-students-in-the-eu-8ca1a8c0c482>

Կրթական միգրացիան Ուկրաինայից. ո՞ւմ համար են աշխատելու ուկրաինական ԲՈՒՀ-երը (2019թ.) – Մարինա Մեմենկովա
[\(SHOULD WE ADD THE ENGLISH VERSION OF THIS ARTICLE?\)](#)

Միգրացիայի ձևեր՝ ընտանեկան միգրացիա

Գիտե՞ք, որ ընտանիքի վերամիավորումը ԵՄ ոչ անդամ պետություններից դեպի ԵՄ ընդհանուր միգրացիայի ամենախոշոր դասակարգերից մեկն է և, ընդհանուր առմամբ, միջազգային շարժունակության գլխավոր պատճառներից մեկն է³⁵: Ճատ հավանական է նաև, որ այն ԵՄ ներսում միգրացիայի հիմնական պատճառներից է, բայց, քանի որ ԵՄ քաղաքացիներից ԵՄ տարածքում տեղափոխվելու համար չի պահանջվում ընտանեկան մուտքի արտոնագիր, նրանց միգրացիայի պատճառները նկարագրող պաշտոնական տվյալները քիչ են:

Ընտանեկան միգրացիա

Ընտանեկան կյանքի իրավունքը մարդու իրավունքների միջազգային իրավունքի անբաժանելի մաս է³⁶, սակայն այդ իրավունքի իրագործումը միգրանտների դեպքում էապես տարբերվում է երկրից երկիր: Ընտանիք և ընտանեկան միգրացիայի հասկացությունների ընկալման բարդությունը նշանակում է, որ չկա այն գնահատելու միասնական, հստակ ձև, իսկ օրենսդրությունը հաճախ հատվածական է: Երկրների մեծ մասը, թեև սահմանափակումներով, ընդունում են ընտանիքի որոշ անդամներին երկիր բերելու իրավունքը: Օրինակ, թեև բազմաթիվ երկրներ թույլատրում են 18 տարեկանը չըրացած երեխային միանալ ծնողին նշանակետ երկրում, չափահաս միգրանտի ծնողներին կամ քույրերին/եղբայրներին հաճախ չեն թույլատրում տեղափոխվել ընտանեկան կապերի միջոցով: Ընտանեկան միգրացիայի կանոններն ամբողջ աշխարհում տարբերվում են, ընտանեկան միգրացիան դեպի որոշ երկրներ ավելի դյուրին է, քան մյուսները՝ անգամ անմիջական ընտանիքի անդամների, օրինակ՝ երկրի քաղաքացու օտարերկրյա կնոջ/ամուսնու համար: Ընտանեկան միգրացիան երբեմն հակասական է, մասնավորապես՝ դեպի այն երկրներ, որոնք փորձում են նվազեցնել ընդունվող միգրացիայի մակարդակը: Որոշ երկրներում քիչ է ցանկությունը օտարերկրյա քաղաքացիների ընտանիքի անդամներին (անգամ սեփական քաղաքացիների օտարերկրյա կողակիցներին) բնակության իրավունքներ կամ աշխատաշուկա մուտք գործելու հնարավորություն շնորհելու հարցում:

Այդուհանդերձ, ընտանիքի վերամիավորումը ԵՄ ոչ անդամ պետություններից դեպի ԵՄ ընդհանուր միգրացիայի ամենախոշոր դասակարգերից մեկն է: Հիմնականում դա պայմանավորված է ԵՄ տարածքից դուրս գտնվող աշխատանքային միգրանտների համար հնարավորությունների սահմանափակումների խստացումով:

³⁵ Տե՛ս՝ https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/legal-migration/family-reunification_en#:~:text=For%20the%20past%2020%20years,joined%20by%20their%20family%20members

³⁶ Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը https://www.echr.coe.int/documents/guide_art_8_eng.pdf և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/ccpr.aspx>

Որոշ միգրանտներ իրավունք ունեն բնակվել տվյալ պետության տարածքում, քանի որ այդ երկրի քաղաքացու կամ մշտական բնակության օրինական իրավունք ունեցող միգրանտի ընտանիքի անդամ են: Նրանք կարող են սահմանվել որպես «ընտանիքի միավորման» (կամ «ընտանիքի ձևավորման և վերամիավորման») միգրանտներ:

Ընտանեկան որոշ միգրանտներ ներկայացվում են որպես «խնամառուներ»: Սովորաբար նրանց երկիր մուտք գործելու իրավունք է տրվում՝ որպես այն անձանց ընտանիքի անդամ, ովքեր իրենց հերթին միգրանտ են և ունեն տվյալ երկրում մնալու սահմանափակ (ժամանակավոր) թույլտվություն, թեև եզրույթը երբեմն օգտագործվում է նաև ընտանիքի վերամիավորման համար տեղափոխվող միգրանտներին նկարագրելու համար: Շատ երկրներում ընտանիքի վերամիավորման կամ ընտանիք կազմելու հիմքով մուտք գործող միգրանտները կապված են «դիմումատուին»՝ ընտանիքի այն անդամին, ում միանում են, և իրավական առումով լիովին կախյալ են այդ անձից: Այսպես կոչված «ամուսնական միգրանտների» դեպքում, որոնք գաղթում են կողակցին կամ զուգընկեր ճանաչված անձին միանալու նպատակով, ենթադրվում է, որ հարաբերություններն ավարտվելու պարագայում դադարում է նաև երկրում մնալու միգրանտի իրավունքը՝ առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ միգրանտն իրավասու չէ անկախ կացություն ունենալ: Որոշ դեպքերում այս իրավական կախվածությունը կարող է ստիպել միգրանտներին, ովքեր ենթարկվում են ամուսնու կամ զուգընկերոջ կողմից բռնության, մնալ բռնարարի հետ, քանի որ հարաբերությունները դադարեցնելու դեպքում նրանք վտանգում են երկրում մնալու իրենց իրավունքը:

Ընտանիքի բջջի իրավական պաշտպանություն

Ընտանեկան կյանքի և միության անհատի իրավունքը պաշտպանված է մի շարք միջազգային իրավական գործիքներով, ներառյալ՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիան, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, ինչպես նաև մեծ թվով ներպետական օրենքներով: Սակայն սա չի նշանակում, որ միգրանտին ինքնաբերաբար կշնորհվի ամուսնու կամ ընտանիքի այլ անդամների հետ տվյալ երկրում բնակվելու իրավունք:

Ընտանեկան միգրացիան ունի մշտական լինելու ավելի մեծ միտում, քան ուսման կամ աշխատանքային միգրացիան, և հանդիսանում է սկյուռքում համայնքներ ձևավորելու գործընթացի կարևոր բաղադրիչ:

Միգրացիայի ձևեր՝ անկանոն միգրացիա

Երկրների մեծ մասում միգրացիայի կարգավիճակն ունի քննարկման երկու միտում՝ «օրինական» կամ «ապօրինի» (տե՛ս՝ [Տերմինաբանություն](#)), սակայն գործնականում անկանոն միգրացիան կարող է ներառել ներգաղթի և այլ օրենքների խախտումների լայն շրջանակ:

Ներգաղթի կարգերի զանազան խախտումները կարող են հանգեցնել անկանոն միգրացիոն կարգավիճակի: «Ապօրինի մուտքը» կարող է ներառել սահմանի գաղտնի հատումը (ներգաղթի հսկողության շրջանցումը), ինչպես նաև բացահայտ մուտքը «խաբեությամբ»: Վերջինն ավելի բարդ խնդիր է և ընդգրկում է զանազան պրակտիկ ձևերի լայն շրջանակ՝ կեղծ փաստաթղթերից մինչև երկրում «գտնվելու նպատակի» մասին կեղծ տեղեկությունների ներկայացում: Խաբեությունն ակնարկում է այն գործողություններին, որոնք ուղղակի առնչվում են միգրանտներին, սակայն կարող է նաև ընդգրկել երրորդ կողմ հանդիսացողների (օրինակ՝ մաքսանենգների), որոնք օգնում կամ կազմակերպում են իշխանություններին «խաբելու» գործընթացը:

Անկանոն միգրանտի կարգավիճակը կարող է նաև առաջանալ օրինական մուտքի, սակայն մուտքի արտոնագրում նշված ժամկետից երկար՝ չթույլատրված մնալու դեպքում: Նման դեպքեր կարող են լինել կարճաժամկետ տուրիստական մուտքի արտոնագրի, երկարաժամկետ կացության (օրինակ՝ ուսանողական կամ աշխատանքային) մուտքի արտոնագրի (դարձյալ ժամանակային սահմանափակումով) ժամկետից երկար կամ, անգամ, առանց մուտքի արտոնագրի թույլատրվող ժամանակավոր կացության ժամկետից երկար երկրում գտնվելը:

Անկանոնության տանող երրորդ ճանապարհը, որը հաճախ հստակ սահմանվում է իրավական իմաստով և շատ ավելի հակասական է գործնականում, կապված է օրինական բնակության թույլտվությանը կցված սահմանափակումները խախտելու հետ: Չբաղվածության սահմանափակումները կարող են ընդգրկել շաբաթական թույլատրելի վճարովի աշխատաժամերի սահմանափակումներ: Որոշ դեպքերում միգրանտներին օրենքով արգելվում է առանց թույլտվության փոխել գործատուին: Օրենքով մուտքի արտոնագրին կցված պայմանների և սկզբում նշված «կեցության նպատակի» ցանկացած խախտում կարող է հանգեցնել անկանոն միգրացիայի կարգավիճակի և, հետևաբար, հնարավոր արտաքսման:

«Կիսով չափ օրինական» կամ «կիսով չափ համապատասխանություն» կարգի եզրույթները կարող են նկարագրել այս անորոշությունը:

Հաշվելով անհաշվելին՝ հուսալի տվյալներ և վիճակագրություն ստանալու մարտահրավերները

Երկրում անկանոն միգրանտների քանակը միգրացիայի լուսաբանման մեջ ընդհանուր թեմա է ամբողջ աշխարհում, սակայն նման հաշվարկները գրեթե միշտ շատ խնդրահարույց են: Հիմնական պատճառն այն է, որ դժվար է հաշվել այն անձանց, որոնք չեն ցանկանում, որ իրենց գտնեն, կամ որոնք չեն պատկանում հստակ վարչական դասակարգի, ինչը որոշ հետազոտողներ սահմանում են որպես «հաշվել անհաշվելին»:

Ապօրինի, անկանոն, չփաստաթղթավորված՝ տերմինաբանությունը և դրա ազդեցությունները – Այս ձեռնարկի [տերմինաբանության](#) բաժինը մանրամասն անդրադառնում է օրինական միգրացիոն կարգավիճակ չունեցող անձանց նկարագրելու համար օգտագործվող լեզվին: Անկախ անձի իրավական կարգավիճակից կարևոր է ցանկացած իրավիճակում խուսափել սպասարդկայնացնող լեզվից:

Առանձնակի կարևոր է խուսափել սխալ պիտակներ կիրառելուց, անկանոնությունը փախստականներին և ապաստան հայցողներին վերագրելուց:

Ռեսուրսներ

- https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/borders-and-visas_en
- <https://frontex.europa.eu/>

Միգրացիայի ձևեր՝ խառը միգրացիա

Մենք հակված ենք տեղավորել միգրացիան պարզ տուփերում՝ «աշխատանքային միգրացիա», «ուսման նպատակով միգրացիա», «ընտանեկան միգրացիա» և «փախստականներ և ապաստան հայցողներ», սակայն իրողությունն այն է, որ մարդիկ հազվադեպ են տեղավորվում միայն մեկ նպատակով: Նույն տրամաբանությամբ՝ նշանակետի ընտրության վրա, եթե ընտրության կա, ազդում են բազմաթիվ գործոններ: Մեր օգտագործած պիտակները կամ տուփերը հաճախ արտացոլում են իրավական կամ վարչական դասակարգերը, այլ ոչ թե դրանց մեջ տեղավորած մարդկանց «ամենօրյա կյանքի իրողությունները»:

Հավասարապես, աշխարհի շուրջ տեղաշարժվող մարդկային խմբերը հազվադեպ են կազմված մարդկանցից, որոնք բոլորն էլ տեղավորվում են ճիշտ նույն պատճառով: Ոմանք կարող են փախստական լինել, մյուսները՝ աշխատանք փնտրող, իսկ այլոք՝ ճամփորդում են սիրելիների հետ միանալու համար, բայց նրանք բոլորն էլ կարող են ավելի մեծ խմբի, օրինակ՝ Հյուսիսային Աֆրիկայից Միջերկրական ծովով դեպի Եվրոպա տեղափախվող անձանց խմբի մաս կազմել: «Խառը տեղաշարժը» կարող է նկարագրել խումբ, որը շարժվում է նույն ուղղությամբ և նույն աշխարհագրական երթուղով, բայց կազմված է տարբեր շարժառիթներ ունեցող և մուտքի ու, հավանաբար, կացության համար տարբեր օրինական հնարավորություններ ունեցող մարդկանցից:

Մարդիկ, որոնք ճամփորդում են որպես խառը շարժումների մաս, ունեն իրարից տարբեր կարիքներ և կարող են ընդգրկել ապաստան հայցողների, քաղաքացիություն չունեցող անձանց, մարդկանց թրաֆիքինգի զոհերի, առանց ուղեկցության կամ առանձնացված երեխաների, անկանոն վիճակում գտնվող միգրանտների: Խառը շարժումները հաճախ բարդ են և կարող են մարտահրավերներ առաջացնել ներգրավված բոլոր կողմերի համար: Հաճախ, երբ նշանակետ երկիր են ժամանում միգրանտների խոշոր խմբեր, շատերը հայտնվում են ապաստանի համակարգում՝ դիմումների մշակման համար:

Խառը միգրացիան կարող է լարվածության տակ դնել ապաստանի համակարգերի կարողությունները և հանգեցնել սահմանափակող քաղաքականությունների ընդունման, որոնք անկարող են հասցեագրել միջազգային պաշտպանության կարիք ունեցող անհատների իրավունքները և կարիքները:

Որո՞նք են լուսաբանման ծուղակները

«Խառը միգրացիայի» գաղափարն արտացոլում է միգրացիոն գործընթացների և շարժառիթների գերապարզեցման միտումը: Մարդիկ և միգրացիոն գործընթացները բարդ են և ունեն բազմակի պատճառներ, որոնցից ելնելով միգրանտները կատարում են իրենց ընտրությունը: Ընդունել այն փաստը, որ միգրացիայի լուսաբանման նպատակը հեշտ նկարագրելու համար մարդկանց հարմար տուփերով տեղավորելը չէ, կարևոր քայլ առաջ է դեպի գերազանցություն:

2016 թվականին Ուոլ Սթրիթ Ջորնլում լույս տեսած հետևյալ հոդվածը հրաշալի ընդգծում է Էրիթրեայից միգրացիայի բարդ խնդիրը: Այն ներկայացնում է թե՛ երկիրը լքողների խառը շարժառիթները (պարտադիր և անժամկետ զինապարտությունից խուսափելը, ինչպես նաև Եվրոպայում հաջողված կարիերա ունենալու նկրտումները), թե՛ այն փաստը, որ, թեև այդ ժամանակ ուշադրությունը կենտրոնանում էր Սիրիայից ապաստան հայցողների տեղաշարժի շուրջ, Միջերկրականը հատող միգրանտների հոսքերը կազմված էին տարբեր վայրերից եկող տարատեսակ մարդկանցից, որոնք ունեին տեղափոխվելու բազմաթիվ պատճառներ: <https://www.wsj.com/articles/eritreans-flee-conscription-and-poverty-adding-to-the-migrant-crisis-in-europe-1445391364>

Օրինակի վերլուծություն

- ՀԻՄԵԳ-ի գործիքակազմ լրագրողների համար, որը, որպես օրինակի վերլուծություն, օգտագործում է Ֆայնենշլ Թայմզի «[Միգրացիա՝ մարդկանց խառը տեղաշարժերի լուսաբանում](#)» հոդվածը:
- Դենիել Թրիլինգ, Լոնդոնի գրական հանդես՝ <https://www.lrb.co.uk/the-paper/v37/n19/daniel-trilling/what-to-do-with-the-people-who-do-make-it-across>

Գրականություն

- Միգրացիա և մարդու իրավունքներ <https://www.ohchr.org/EN/Issues/Migration/Pages/MigrationAndHumanRightsIndex.aspx>
- Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիա <https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CMW.aspx>
- Խառը միգրացիա <http://www.unhcr.org/publications/manuals/5846cd424/10-point-plan-action-2016-update-chapter-1-cooperation-among-key-partners.html?query=mixed%20migration>
- Սահմանների պաշտպանություն <https://frontex.europa.eu/>
- Մշտադիտարկում և վերլուծություն <https://frontex.europa.eu/intelligence/monitoring-risk-analysis/>
- Լրացուցիչ տեղեկությունների համար տես ՄԱՓԳՀ-ի էջն ապաստանի և միգրացիայի վերաբերյալ՝ <https://www.unhcr.org/asylum-and-migration.html>

Միգրացիայի ձևեր՝ փախստականներ և ապաստան

«Կարծում եմ կարևոր է ծանոթ լինել սեփական երկրի, ձեր աշխատած երկրների և, ամենակարևորը, այն երկրների ներգաղթի մասին օրենքին, որտեղ հրապարակվելու է ձեր հոդվածը: Անվտանգ հարցազրույցը կամ լուսանկարը կարող են հանգեցնել ինչ-որ մեկի ապաստանի դիմումի մերժմանը կամ, ավելի վատ, նա կարող է ենթարկվել բռնության կամ նույնիսկ սպանվել: Միշտ համոզվեք, որ հարցազրույց տվողը գիտի՝ որտեղ է այն հեռարձակվելու, և ինչպիսի հետևանքներ կարող են առաջանալ» Ջեյսըն Փարկինսըն, ազատ տեսալրագրող, ով զբաղվում է փախստականների, մարդու և քաղաքացիական իրավունքների, ՉԼՄ-ների ազատությանը, ներգաղթի, ռասիզմի, ֆաշիզմի և ահաբեկչության հարցերով:³⁷

Միջազգային պաշտպանությունը, հակամարտության հետևանքով տեղահանումը և ապաստան հայցելու իրավունքը հարցեր են, որոնք միջազգային միգրացիայի շուրջ ընթացող բանավեճերի կենտրոնում են: Մարդասիրական ճգնաժամերի կամ հակամարտությունների հետևանքով միգրացիան անկանխատեսելի է իր բնույթով և կարող է լուրջ մարտահրավերներ առաջացնել թե՛ փախուստի դիմողների, թե՛ այն կառավարությունների համար, ում պաշտպանությանը նրանք դիմում են: Ինչպես ընդգծված է վերոնշյալ մեջբերման մեջ՝ փախստականների և ապաստան հայցողների շարժումների մասին լուսաբանումը կարող է առաջացնել էթիկական և իրավական դժվարություններ, որոնք պահանջում են նրբանկատ մոտեցումներ:

2019 թվականի վերջին ՄԱՓԳՀ-ի հաշվարկներով աշխարհում կար մոտ 79.5 միլիոն հարկադիր տեղահանված անձ (ՄԱՓԳՀ, 2019թ.):³⁸ Այս անձանց մեծ մասը՝ 45.7 միլիոնը՝ ներքին տեղահանված անձինք են (ՆՏԱ), իսկ մնացած 33.8 միլիոնը՝ փախստական և ապաստան հայցող: ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի համաձայն՝ փախստական է համարվում այն անձը, ով «քաղաքական կամ կրոնական հայացքների, որոշակի ազգային, էթնիկ կամ սոցիալական խմբի պատկանելիության համար հետապնդումների գոհ դառնալու հիմնավոր վախ ունենալու պատճառով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս, և չի կարող կամ, նման վախի պատճառով, չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից»:

Ապաստան հայցող է այն անձը, որ միջազգային պաշտպանության դիմելու նպատակով ճամփորդում է այլ երկիր և դեռևս ապստում է իր հայցի վերաբերյալ որոշման (տե՛ս՝ Գլուխ 4. [Տերմինաբանություն](#)):

³⁷ Reporting on Refugees: Tips on Covering the Crisis, տե՛ս <https://dartcenter.org/resources/reporting-refugees-tips-covering-crisis>

³⁸ <https://www.unhcr.org/uk/figures-at-a-glance.html>

Ապաստանին առնչվող քաղաքականության մարտահրավերներ

Ապաստանը պաշտպանության կարգավիճակ է, որը նման պաշտպանության կարիք ունեցող անձին առաջարկում է օտար պետությունը: Միջազգային պաշտպանության կարգավիճակը փոխարինում է ներգաղթի սովորական պահանջները և, մինչև հայցով որոշում կայացնելը, ապաստան հայցողներին շնորհում է պաշտպանություն արտաքսումից: Ակնհայտ է նաև, որ ապաստան հայցողները հաճախ չեն կարող ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք ապացուցում են նրանց ինքնությունը, քաղաքացիությունը կամ իրավական կարգավիճակը: Ապաստանի հայցը բավարարելու դեպքում փախստականին (կամ պաշտպանության այլ ձև ստացած անձին), սովորաբար, տրվում է ինչ-որ տևողությամբ բնակության թույլտվություն:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐԴԻՐ

Արդյոք պաշտպանված բոլոր անձինք փախստակա՞ն են

Այլ երկրում պաշտպանություն ստացած ոչ բոլոր անձանց է շնորհվում փախստականի կարգավիճակ: Գոյություն ունեն պաշտպանության զանազան ձևեր, օրինակ՝ «օժանդակ պաշտպանությունը»³⁹, որը կարող է առաջարկվել ԵՄ անդամ պետություններում կամ Արևելյան գործընկերության երկրներում: Այն կարող է տրամադրվել անձանց, ովքեր չունեն անհատական հետապնդման հիմնավոր վախ, բայց ծագման երկիր վերադառնալու դեպքում կկանգնեն բռնության ավելի ընդհանրական սպառնալիքի առջև: Փախստականի կարգավիճակը, սովորաբար, առնչվում է մշտական բնակության կարգավիճակին (թեև միջազգային իրավունքով նախատեսվում են դեպքեր, երբ այս կարգավիճակը կարող է չեղարկվել), իսկ օժանդակ կամ լրացուցիչ պաշտպանության կարգավիճակը կապվում է սահմանափակ ժամկետով բնակությանը, որը, սակայն, կարող է երկարացվել, եթե վտանգավոր վիճակը շարունակվում է:

Փախստականների կարգավիճակի մասին 1967 թվականի արձանագրություն

ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին 1951 կոնվենցիան հնարավորություն տվեց կառավարություններին ընտրել՝ ում են ցանկանում ընդունել որպես փախստական՝ ելնելով նրանց փաստացի տեղահանման ամսաթվից (մինչև 1951 թվականի հունվարի 1-ը) տեղահանմանը հանգեցրած իրադարձությունների վայրից (Եվրոպայում տեղի ունեցած իրադարձություններ): Երկու սահմանափակումներն էլ դյուրին է բացատրել, եթե հաշվի առնել, որ կոնվենցիան առաջին հերթին մշակվել է Երկրորդ Աշխարհամարտի

³⁹ https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/networks/european_migration_network/glossary_search/subsidiary-protection_en

հետևանքները կարգավորելու նպատակով: 1967 թվականի արձանագրությունը վերացրեց այդ ժամանակային և աշխարհագրական սահմանափակումները, որի հետևանքով կոնվենցիան ստացավ համընդհանուր կիրառում: Արձանագրությունը պահանջում է այն վավերացրած երկրներից կատարել նաև 1951 թվականի կոնվենցիայի պահանջները: Միացյալ Նահանգները, օրինակ, չի վավերացրել Փախստականների կոնվենցիան, սակայն վավերացրել է 1967 թվականի արձանագրությունը և պարտավոր է կիրառել կոնվենցիայի դրույթները, հետևաբար հանձնառու է վերաբերվել փախստականներին միջազգայնորեն ընդունված իրավական և մարդասիրական չափանիշների համաձայն:

Թուրքիան, որը հյուրընկալում է աշխարհում արտաքին տեղահանված անձանց ամենախոշոր խմբերից մեկը, դեռևս պահպանում է 1951 թվականի կոնվենցիայի աշխարհագրական սահմանափակումը, թեև միացել է 1967 թվականի արձանագրությանը: Այսինքն, փախստականի կարգիվաճակ կշնորհվի միայն նրանց, ովքեր Թուրքիա են փախչում «Եվրոպայում տեղի ունեցող իրադարձությունների» հետևանքով, իսկ մյուսները կստանան պաշտպանության այլ ձևեր: Երկու այլ պետություններ՝ Մադագասկարը և Մենթ Քիթսը, չեն վավերացրել արձանագրությունը:

Բոլոր պետությունների առջև դրված է քաղաքականության առանցքային հարց՝ ինչպե՞ս ապահովել ապաստանի իրավունքը և միաժամանակ պահպանել ներգաղթի ընդհանուր հսկողության մեխանիզմների ամբողջականությունը: Երբ մուտքի այլ ճանապարհներ չկան՝ ապաստանի դիմելը միգրանտների համար դառնում է ներգաղթի հսկողության մեխանիզմները շրջանցելու միջոց: Արդյունքում, ապաստանի դիմումները կարող են ավելանալ այնքան, որ ծանրաբեռնեն հյուրընկալող պետության ֆինանսական միջոցները, պաշտպանության իրավունքը որոշելու համակարգերը, փախստականներին ընդունելու կառավարությունների և հանրության քաղաքական պատրաստակամությունը (տե՛ս՝ այս գլխի [Լատր միգրացիա](#) բաժինը և Գլուխ 4. [Տերմինաբանություն](#)):

Ապաստանի դիմումի գնահատում

Թեև կա ընդհանուր փոխհամաձայնություն, որ պաշտպանության կարիք ունեցող անձանց պետք է շնորհվի ապաստան, այդ կարգավիճակը որոշելու ընթացակարգերը մեկ այլ վիճելի հարց են: Տարբեր երկրներ կիրառում են տարբեր կանոններ, որոնց միջոցով սահմանում են խոռվության, հակամարտության կամ հետապնդման տեսակները, որոնցից փախչելու դեպքում անհատն իրավասու է ստանալ պաշտպանություն:

Ռեսուրսներ

<https://dartcenter.org/resources/reporting-refugees-tips-covering-crisis>

<https://e-learning.fra.europa.eu/course/view.php?id=3>

Օրինակի վերլուծություն՝ պատմության շարադրում և ապրումակցման ձևավորում

Դժվար իրավիճակներում անհատների նկատմամբ ապրումակցման ձևավորումը լրագրողների մեծագույն մարտահրավերներից մեկն է, երբ լսարանը հոգնել է լուրերից: BuzzFeed News-ից վերցված այս օրինակը ցույց է տալիս ձեր պատմությունների հերոսներին մարդայնացնելու ձևերից մեկը:

Կարդացե՛ք այս հոդվածը՝ [A Syrian Refugee Shared His Struggle To Reach Europe In Real-Time On WhatsApp: BuzzFeed News followed the struggle of a young man in Turkey via a conversation on the mobile messaging service.](#)⁴⁰

Կտեսներ, որ լրագրողի և իր աղբյուրի՝ սիրիացի ապաստան հայցողի միջև հաղորդակցման մեթոդը դառնում է պատմությունը շարադրելու կենտրոնը: Մեթոդը հետաքրքիր է բազմաթիվ առումներով՝

- Այն թափանցիկություն է հաղորդում լրագրողական աշխատանքին.
- Այն ապրումակցում է առաջացնում, քանի որ բազմաթիվ մարդիկ օգտվում են հաղորդագրությունների ծառայություններից հարազատների հետ հաղորդակցվելու համար.
- Այն ավելացնում է պատմությանը դրամայի զգացում և առկախություն:

Դիտարկման համար հարցեր՝

- Ինչպե՞ս կարող եք ձեր աշխատանքում ինտեգրել նորություններ հավաքելու գործընթացները:
- Եթե կան ռեսուրսներ և ցանկություն, կարո՞ղ եք աշխատել ձեր թողարկող թիմի հետ և փորձարկել պատմությունները ներկայացնելու նոր ձևեր:
- Հողվածը լույս տեսավ միայն ճամփորդությունն ավարտվելուց հետո, և հերոսն այլևս անմիջական վտանգի տակ չէ:

Ռեսուրսներ

Այս թեմայով լրացուցիչ տե՛ս՝

- [Մարդկային պատմություններ, էթիկական սկզբունքներ և մարդու իրավունքներ \(ՀԻԵՄԳ Էլ. մեդիայի գործիքակազմից\)](#)

Միգրացիայի ձևեր՝ ԼԳԲՏՔԻ և ապաստան

Փախստականների կարգաիճակի մասին 1951 թվականի կոնվենցիան հիշատակում է «որոշակի սոցիալական խմբի պատկանելիության» համար հետապնդումների գոհ դառնալու հիմնավոր վախը և այդ հիմքով միջազգային պաշտպանության դիմելն ու փախստականի կարգավիճակ ստանալը:

Իրավագետները պնդում են, որ հիմքերի սահմանումները դիտավորյալ են թողնվել անորոշ՝ դրանք ընդլայնելու բավարար տեղ ապահովելու և այն անձանց ապահովության ցանց

⁴⁰ <https://www.buzzfeed.com/rossalynwarren/a-syrian-refugee-used-whatsapp-to-share-his-journey-through>

տրամադրելու համար, ում հեշտ չէ տեղավորել կոնկրետ դասակարգերում, որոնք ճանաչված էին այդ ժամանակ որպես հնարավոր ռիսկային:

Նպատակն էր՝ պաշտպանել անհատներին այն անարդարություններից, որոնք անհայտ էին 1951 թվականին: «Որոշակի սոցիալական խումբ» դասակարգը նախատեսված էր որպես համընդգրկուն, որը կարող էր ներառել հետապնդման հիմքերն ու տեսակները, որոնք կարող են ի հայտ գալ կամ ճանաչում ստանալ ավելի ուշ, ինչպես օրինակ՝ անձի սեռական կողմնորոշման կամ կյանքին վերաբերվող կարևոր որոշումների հիմքով հետապնդումը:

«Որոշակի սոցիալական խումբ» դասակարգի շրջանակում փախստականի կարգավիճակ հայցող անձը պետք է ցուցադրի, որ այդ խմբի անդամներն ունեն ընդհանուր ներքին հատկանիշ կամ ընդհանուր պատմություն, որը հնարավոր չէ փոխել: Այս հատկանիշը պետք է այնքան կենսական լինի ինքնության համար, որ անձը չպետք է հարկադրվի հրաժարվել դրանից: Ավելին, ծագման երկրում այդ խումբն ընկալվում է որպես շրջապատող հասարակությունից տարբերվող: Վերջապես, դիմումատուն պետք է ցուցադրի, որ ինքն այդ խմբի անդամ կամ ենթադրյալ անդամ է, ինչպես նաև այդ անդամության հետևանքով ունի հետապնդման հիմնավոր վախ:

2007 թվականին մարդու իրավունքների 29 փորձագետ ձևակերպեցին «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հարցերին մարդու իրավունքների միջազգային իրավունքի կիրառման Յոգյակարտայի սկզբունքները» <https://yogyakartaprinciples.org/>: Սկզբունքները փորձում են կիրառել գոյություն ունեցող մարդու իրավունքների միջազգային իրավունքը և պաշտպանել մարդկանց այն խումբը, որը հաճախ ստիպված է ապրել գաղտնի կյանքով, ենթարկվել խտրականության և, երբեմն, բռնության: Թեև սկզբունքներն իրավապարտադիր չեն և չունեն իրավական ճանաչում՝ արևմտյան բազմաթիվ երկրներում ապաստանի գործերով զբաղվող փաստաբանները և շահերի պաշտպանության խմբերն օգտագործում են դրանք որպես ԼԳԲՏԹ համայնքի անդամների՝ ապաստանի դիմումներին աջակցելու գործիք:⁴¹

Ռեսուրսներ

Այս գլխի բովանդակությունն ադապտացվել է լրագրողների համար Հիմնարար իրավունքների Եվրոպական Միության գործակալության մշակված գործիքակազմից: Օգտագործվել է թույլտվությամբ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ <https://e-learning.fra.europa.eu/> և «Ապաստանի վակուում՝ հասկանալ օրենքը» բաժինը, որտեղ օգտագործվում է «Գարդիան» թերթից վերցված օրինակի վերլուծությունը:

Լրացուցիչ տեղեկություններ՝

- ՄԱՓԳՀ Փախուստ՝ հանուն սիրո. <http://unhcr.org/4b18e2f19.pdf>
- ՄԱՓԳՀ՝ ղեկավարը տեղահանված ԼԳԲՏԹ անձանց հետ համերաշխության կոչ է անում <http://www.unhcr.org/news/latest/2018/5/5afd59834/unhcr-chief-calls-solidarity-lgbti-displaced.html>

⁴¹ St' u, օրինակ, <https://www.freemovement.org.uk/guest-post-preparing-asylum-claims-based-on-sexual-identity/>

Օրինակի վերլուծություն՝ տալ ձայնի հնարավորություն և պաշտպանել աղբյուրները

EVN Report-ի համար հողվածում հայ լրագրող Արեն Մելիքյանը՝ Հայաստանը քած մարդկանց օրագրերի միջոցով պատմում է նրանց պատմությունները: Նրանցից ոմանք արտագաղթել են սեռական ինքնության հողի վրա խտրականության պատճառով:

Դիտե՛ք այս տեսագրությունը, որտեղ Արենը բացատրում է, թե ինչո՞ւ էր կարևոր լսելի դարձնել նրանց ձայները, և ինչո՞ւ է ինքը նախաձեռնում լրացուցիչ նախազգուշական միջոցներ նրանց ինքնությունները պաշտպանելու համար:

https://www.youtube.com/watch?v=juXQyg_6SH8&list=PLXxzWkiXihue7dRH3_QceqpkBGJL-gQdI&index=2

Այս օրինակի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել 6-րդ գլխի՝ [Պատմության \(նիշտ\) շարադրում Բազմազանություն բաժնում](#):

Միգրացիայի ձևեր՝ ներքին տեղահանում

ՄԱԿ-ի՝ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը սահմանում է ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ-ինք) որպես «... մարդիկ, ովքեր սպաստարան գտնելու նպատակով չեն հատել միջազգային սահման, այլ մնացել են իրենց հայրենիքի տարածքում: Նույնիսկ, եթե փախուստի պատճառը նույնն է, ինչ փախստականների դեպքում (գինված հակամարտություն, ընդհանուր բռնություն, մարդու իրավունքների խախտումներ), ՆՏ անձինք իրավական առումով մնում են սեփական կառավարության պաշտպանության ներքո...: Որպես քաղաքացի՝ նրանք պահպանում են բոլոր իրավունքները և պաշտպանվածությունը թե՛ մարդու իրավունքների, թե՛ միջազգային մարդասիրական իրավունքի ներքո»:⁴²

Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած տարածքային վեճերի բնույթը հուշում է, որ աշխարհում ներքին տեղահանված անձանց խոշորագույն խմբերի մի մասը գտնվում է այս մեծ տարածքում: Ներքին տեղահանման մշտադիտարկման կենտրոնի 2019 թվականի տվյալներով ՆՏԱ բացարձակ թվերով Ուկրաինան, Ադրբեջանը և Վրաստանը գտնվում են առաջին 30 պետությունների շարքում:⁴³

Թեև ՆՏ անձինք կարող են չդիմակայել տեղափոխված տարածքից վտարվելու այն նույն վտանգը, ինչ սպաստան հայցողները, սակայն նրանք հաճախ հայտնվում են հարկադրված աղքատության մեջ, որի պատճառը փախուստի հետևանքով ունեզրկումն է, ինչպես նաև կարող են առերեսվել նախապաշարման և մերժման հետ: Ինչպես փախստականների և սպաստան հայցողների խնդիրները լուսաբանելու դեպքում, այնպես էլ ՆՏ անձանց և ՆՏԱ

⁴² <https://www.unhcr.org/ceu/80-enwho-we-helpinternally-displaced-people-html.html>

⁴³ <https://www.internal-displacement.org/database/displacement-data>

հարցերի լուսաբանումը պահանջում է պատշաճություն, նրբանկատություն և ձեր հերոսների մարդկության հանդեպ հարգանք: Այն պահանջում է նաև տեղահանման հանգեցնող տեղական իրադարձությունների և իրավիճակների, ինչպես նաև ՆՏԱ առնչվող ներպետական օրենքների և քաղաքականությունների խոր ընկալում:

Օրինակի վերլուծություն` ներքին տեղահանված անձանց առնչվող լուսաբանում

Դիտե՛ք ուկրաինացի լրագրող Տատյանա Պասավոյի խոսքը ներքին տեղահանված անձանց հարցերի լուսաբանման մասին

https://www.youtube.com/watch?v=hEfAGKoJ7aw&list=PLXxzWkiXihue7dRH3_QceqpkBGJL-gQdI&index=7

Տատյանայի հոդվածներն ուկրաիներեն ընթերցեք հետևյալ հղումներով`

- http://www.golos.com.ua/article/324335?fbclid=IwAR3EieSenmGRkdYj42_XQuv59QH44RGhM1Ean6s-qmP_g8lAacJ7yvN1W9c
- <http://www.golos.com.ua/article/324400?fbclid=IwAR2M4EgyWd3o42xzm-gWVX2Ty8VPLP352B536zcreJMVTXlyzn5ugJRilW8>

Միգրացիայի ձևեր` մարդկանց թրաֆիքինգ և մաքսանենգություն

Մարդկանց թրաֆիքինգը և մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխումը խոշոր բիզնես է: ՄՄԿ-ի հաշվարկներով` 2016 թվականին առնվազն 2.5 միլիոն մարդ տեղափոխվել են մաքսանենգ ճանապարհով, որից ստացված տնտեսական օգուտը կազմել է 5.5-ից 7 միլիարդ ԱՄՆ դոլար:

Մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխում տեղի է ունենում, երբ ինչ-որ անձի վճարում են տվյալ երկրի օրենքները խախտելով մարդկանց միջպետական սահմանով տեղափոխելու ծառայության դիմաց:

Մարդկանց թրաֆիքինգը տնտեսական օգուտ ստանալու նպատակով մարդկանց շահագործվողի վիճակի մեջ դնելու կամ այդ վիճակում պահելու գործընթաց է: Թրաֆիքինգ կարող է տեղի ունենալ երկրի ներսում կամ երկրի սահմաններից դուրս: Կանայք, տղամարդիկ և երեխաները կարող են թրաֆիքինգի ենթարկվել զանազան պատճառներով, ներառյալ հարկադիր աշխատանքը կամ շահագործումը գործարաններում, ֆերմաներում կամ մասնավոր տնային տնտեսություններում, սեռական շահագործումը և հարկադիր ամուսնությունը (ՄԻԳՀԳ⁴⁴):

Մաքսանենգությունը և թրաֆիքինգը միմյանցից տարանջատելն այդքան էլ դյուրին չէ: Որոշ դեպքերում մաքսանենգությունը կարող է վերածվել թրաֆիքինգի: Օրինակ, սկզբում միգրանտը կարող է դիմել մաքսանենգի օգնությանը` պետական սահմանը հատելու համար, սակայն ընթացքում մաքսանենգը կարող է պահանջել միգրանտից` աշխատել տարանցիկ երկրում` ճանապարհի մնացած հատվածի դիմաց վճարելու համար, թեև

⁴⁴ https://www.ohchr.org/Documents/Publications/FS36_en.pdf

ճանաչողության սկզբում համաձայնությունն ավելի ցածր գնով էր եղել: Սահմանների հատումով տեղի ունեցող թրաֆիքինգը կարող է նաև ընդգրկել մաքսանենգության տարր:

Մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխման և թրաֆիքինգի միջև տարբերությունը կարող է շատ նուրբ լինել: Հաջորդ աղյուսակն ընդգծում է ընդհանրական տարբերությունները:

Մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխում	Մարդկանց թրաֆիքինգ
Սովորաբար միանգամյա, առևտրային փոխհարաբերություն է:	Երկարաժամկետ, շահագործող փոխհարաբերության մաս է:
Ընդգրկում է ներգրավված անձի համաձայնությունը:	Ներգրավված անձի համաձայնությունը չպահանջող կամ առանց նրա վավերական համաձայնության:
Ներառում է անկանոն միգրացիա կազմակերպելու համար վճար:	Ներառում է շահույթ շահագործումից:
Սահմանի հատումը միշտ մաս է կազմում:	Կարող է լինել երկրի սահմաններից ներս կամ դուրս:
Հանցագործություն է պետության դեմ:	Հանցագործություն է անձի դեմ:

Աղբյուր. Ամփոփումը վերցված է Հիմնարար իրավունքների ԵՄ գործակալության պատրաստած Լրագրողների համար մեղիա գործիքակազմից, որտեղ ուսումնական նպատակով ներկայացված է ութ օրինակների վերլուծություն, որոնք ցուցադրում են միգրացիայի լուսաբանման գերազանցություն: Անվճար դասընթացը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://e-learning.fra.europa.eu/>:

Ժամանակակից ստրկություն

«Գարդիան»-ի [Գլոբալ զարգացում](#)⁴⁵ բաժնի բացատրական բլոկի համաձայն՝

⁴⁵ <https://www.theguardian.com/global-development/2013/apr/03/modern-day-slavery-explainer>

Ժամանակակից ստրկության սահմանումները հիմնականում վերցված են Ստրկության, ստրկավաճառության, ստրկությանը համանման ինստիտուտների և սովորույթների վերացման մասին [1956 թվականի ՄԱԿ-ի լրացուցիչ կոնվենցիայից](#), որտեղ ասվում է. «պարտավորագիրը, ճորտատիրությունը, հարկադիր ամուսնությունը և երեխայի շահագործման նպատակով ծննդաբերությունը ստրկությանը համանման սովորույթներ են և պետք է քրեականացվեն և վերացվեն»: [Հարկադիր աշխատանքի մասին 1930 թվականի կոնվենցիան](#) սահմանում է հարկադիր աշխատանքը՝ որպես «որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը»:

Ստրկության ժամանակակից համակարգերի զարգացման հետ մշակվեցին նոր սահմանումներ, որոնց շարքում են թրաֆիքինգը և երեխայի ստրկությունը երեխայի աշխատանքից տարբերակելը:

Ստրկության ձևերի շարքում են՝

Ճորտատիրական աշխատանք՝ մարդիկ դառնում են ճորտ աշխատողներ պարտքի տակ հայտնվելուց հետո, երբ հարկադրված են անվճար աշխատելով մարել պարտքը: Ծատերը երբեք չեն մարում իրենց պարտքը, և այն փոխանցվում է նրանց հաջորդ սերունդներին:

Հարկադիր աշխատանք, երբ բռնության կամ ահաբեկման միջոցով մարդուն ստիպում են աշխատել՝ հաճախ անվճար: Ծատերը հայտնվում են ծուղակում՝ գտնվելով, հաճախ, օտար երկրում, չունենալով փաստաթղթեր և այդ երկրից մեկնելու հնարավորություն:

Ծագումով պայմանավորված ստրկություն, երբ մարդիկ ծնվում են ստրուկ, քանի որ նրանց ընտանիքները տվյալ հասարակությունում պատկանում են «ստրուկների» դասին: «Ստրուկի» կարգավիճակը փոխանցվում է մորից մանկանը:

Թրաֆիքինգ՝ մի տարածքից մյուս մարդկանց ստրակական պայմաններով փոխադրում կամ վաճառք:

Մանկական ստրկություն՝ երեխաները ստրկության մեջ են՝ որպես տնային աշխատողներ, հարկադիր աշխատանք են կատարում, օրինակ՝ կակաոյի, բամբակի արտադրության կամ ձկնարդյունաբերության ոլորտներում, ենթարկվում են թրաֆիքինգի՝ աշխատանքային և սեռական շահագործման նպատակով, օգտագործվում են որպես անչափահաս զինվորներ:

Վաղ և հարկադիր ամուսնություն՝ կանանց շարունակում են ամուսնացնել առանց նրանց համաձայնության, հաճախ՝ երբ նրանք դեռ աղջիկ են, և հարկադրում սեռական և կենցաղային ստրկության:

Մարդկանց թրաֆիքինգով և մաքսանենգությամբ զբաղվողների շարժառիթները, միգրանտների հանդեպ նրանց վերաբերմունքը կարող են էապես տարբերվել: Հավասարակշռված լուսսաբանում ապահովելու համար կարևոր է հասկանալ առանձին դեպքերը, լինել պատկերավոր և խուսափել եզրույթների փոխսեփոխ օգտագործումից:

Հարցեր, որոնք կօգնեն ձեզ բացահայտել թրաֆիքինգը

1. Արդյոք նրանք բռնության և ահաբեկման զոհ են: Արդյոք անձին, որի հետ գործ ունեք, բռնությամբ, հոգեբանական ճնշմամբ կամ հսկողության այլ ձևերով, հարկադրվել է այս իրավիճակը:
2. Նրանց ստիպել են գումար վճարել:
3. Արդյոք նրանց նկատմամբ գերիշխող դիրք կամ նրանց վրա իշխանություն ունեցող ինչ-որ մեկի կողմից ենթարկվել են պարտադրանքի:

Եթե վերոնշյալ հարցերից որևէ մեկի պատասխանն «այո» է, ապա ցուցաբերեք զգուշություն, օգտվեք այս ուղեցույցներից և խորհուրդ հարցրեք:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- *Տե՛ս՝ Գլուխ 6. [Պատմության \(ճիշտ\) շարադրում, Աղբյուրների պաշտպանություն, Հարցազրույցի մեթոդներ, Տրամադրյալի գոհերի հետ հարցազրույց և Նպատկերներ և լուսանկարներ բաժինները:](#)*

Թրաֆիքինգը լուսաբանելու ընթացքում պարտավոր ենք՝

1. Հակադրվել սխալ ընկալումներին և վաույերիզմին:

- Հասարակության համար դյուրին է մտածել թրաֆիքինգի կամ հարկադիր աշխատանքի գոհերի մասին՝ որպես անգոր անհատների, որոնք մշտական տուժող են: Միշտ չէ, որ այդպես է:
- Սեռական շահագործումը կարող է անհամաչափորեն գերիշխել մեղիա լուսաբանման մեջ: Լրատվամիջոցների կենտրոնացումը սեքսի և սենսացիաների վրա առաջացնում է ընդհանուր թյուրըմբռնում, որ մարդկանց թրաֆիքինգը հիմնականում առնչվում է սեռական շահագործմանը, և դրա գոհերն, առաջին հերթին, կանայք և աղջիկներ են:⁴⁶ Իրականում, թրաֆիքինգն ավելի շատ առնչվում է հարկադիր աշխատանքին, քան սեռական շահագործմանը:
- Սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգը (նաև տղամարդկանց և տղաների) հսկայական խնդիր է, սակայն դրա ներկայացումը չպետք է կատարվի նաև աշխատանքային թրաֆիքինգի շուրջ կենտրոնանալու հաշվին: Երբ լուսաբանում եք սեռական շահագործումը, համոզվեք, որ նկարագրում եք նրանց վերապրած բռնությունը, իսկ օգտագործած պատկերները վաույերիստական չեն:

⁴⁶ <https://www.jrf.org.uk/sites/default/files/jrf/migrated/files/forced-labour-media-coverage-full.pdf>

2. Հետևե՞ք փաստերին, թերահավատորեն վերաբերվե՞ք վիճակագրությանը:

- Թրաֆիքինգի, ժամանակակից ստրկության և հարկադիր աշխատանքի գաղտնի և թաքնված բնույթից ելնելով՝ հնարավոր չէ ունենալ ճշգրիտ թվաքանակներ: Գոյություն ունի կեղծված տվյալների մշտական վտանգ:

Որո՞նք են լուսաբանման հնարավորությունները:

- **Հետևե՞ք դրամական միջոցներին:** Թրաֆիքինգի բիզնեսը և ժամանակակից ստրկությունն ապահովում են հարկադիր աշխատանք, որի արդյունքում բոլորն ստանում են էժան ապրանքներ: Լինելով գլոբալ ինդուստրիա՝ այն պահանջում է քննության անցկացում տանը և արտասահմանում:
- **Հույս ներշնչե՞ք:** Լրագրությունը, որն ընդգծում է մարդու դիմադրողականությունը և ներկայացնում է պատմություններ այն մասին, ինչպես են մարդիկ կարողանում վերականգնել իրենց կյանքը ժամանակակից ստրկության և հարկադիր աշխատանքի ողբերգությունից հետո, լիովին այլ պատմություն է շարադրում:
- **Գործընկերային աշխատանք:** Մաքսանենգության և թրաֆիքինգի գաղտնի և ապօրինի բնույթից ելնելով՝ շատ լրագրողներ պատմությունը ստանալու համար աշխատում են իրավապաշտպան խմբերի և այլոց հետ: Այս հանգամանքներում ուշադիր եղեք որպես լրագրող ձեր անկախությունը պահպանելու հարցում և ծանոթացեք նաև [Հասարակական կազմակերպությունների \(ՀԿ-ների\)](#) հետ աշխատելու ուղեցույցին, որը ներկայացված է [Ինչպես գտնել և օգտագործել փորձագետներին](#) նվիրված 8-րդ գլխում:
- **Ունկնդրե՞ք և ճիշտ փոխանցե՞ք պատմությունը:** Վերապրողները համոզիչ պատմություններ են պատմում:

Պատկերների օգտագործումը

Թրաֆիքինգի գոհ դարձած մարդկանց դրաման և ողբերգությունը կարող է ազդեցիկ պատկերների աղբյուր լինել, սակայն դրանցից շատերը հակասական են: Թեև կարող է ցանկություն առաջանալ պատմությունը շարադրելու համար ընդգրկել այժմ ստրկացման կամ հարկադիր աշխատանքի ինչ-որ վիճակում գտնվող անձանց հետ հարցազրույցներ, լուսանկարներ և տեսագրություններ, սակայն պետք է հավասարակշռեք այս ցանկությունը լրագրողական «մի՛ վնասիր» հրամայականի հետ:

Մի՛ օգտագործեք սեքսուալացված պատկերներ և խուսափեք նկարներից, որոնք արտացոլում են կլիշե, օրինակ՝ շղթաներով աղջիկ կամ վրան բարկոդով մարդ, ճաղերի ետևում կամ խղճուկ հասարակաց տանը գտնվող երեխա: Թրաֆիքինգի գոհերից շատերը մարդիկ են, որոնք վերապրել են նման վիճակներ և այժմ վերականգնման փուլում են: Շատերին շահագործումը չի հարկադրվել բիրտ ուժով, այլ էմոցիոնալ մանիպուլյացիայի և նուրբ պարտադրանքի միջոցով, երբեմն՝ իրենց համար վստահելի մարդկանց կողմից:

Խուսափե՞ք բռնության բացահայտ պատկերներից: Հազվադեպ է, երբ, հասարակության շահերից ելնելով, անհրաժեշտ է ցուցադրել ծայրահեղ բռնության տեսարաններ: Ընդհանուր առմամբ, խմբագիրները և ֆիլմի հեղինակները պետք է նկատի

առնեն մարմնական վնասվածքների պատկերների օգտագործման ընդունելիության սահմանները: Որտե՞ղ ենք գծում սահմանագիծը: Արդյոք պատմությունը ներկայացնելու համար արդարացված է ստրկության և թրաֆիքինգի գոհերի սպիների, կապտուկների, կոտրված վերջույթների ցուցադրությունը:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- Տե՛ս՝ [Աղբյուրների ձևափորում և պաշտպանություն](#) և [Լուսանկարներ և պատկերներ բաժինները 6-րդ գլխում՝ Պատմության \(նիշտ\) շարադրում](#)
- Տե՛ս՝ նաև [Հարցազրույց տրավմայի գոհերի հետ](#) բաժինը 7-րդ գլխում՝ [Հարցազրույցներ](#)

Ռեսուրսներ և աղբյուրներ

Այս բաժինը [ՄՔՄՄԿ](#) (2017թ.) [Սեդիա և մարդկանց թրաֆիքինգ. Ուղեցույցներ-ի](#) խմբագրված և ադապտացված ամփոփում է: [Ուղեցույցները](#) հասանելի են [այբաներեն](#), [արաբերեն](#), [ադրբեջաներեն](#), [բոսներեն](#), [անգլերեն](#), [ռումիներեն](#), [ռուսերեն](#) և [թուրքերեն](#):

Համաշխարհային հետաքննական լրագրության ցանց: [Մարդկանց թրաֆիքինգի, հարկադիր աշխատանքի և ստրկության](#) հարցերով ՀՀԼՑ տեղեկատվական համակարգը ներկայացնում է տասնյակից ավելի առաջատար լրագրողների հետ հարցազրույցներ [Լուսաբանման լավագույն սովորույթները](#) և մարդկանց թրաֆիքինգի հետաքննությունը և հարկադիր աշխատանքը թեմաներով, ինչպես նաև [Տվյալների և փորձագիտական գիտելիքների](#) հավաքագրման աղյուսակ, որտեղ տրված են տվյալներ և փորձագիտական գիտելիքներ գտնելու 60-ից ավելի հղումներ:

Մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգության լավ լուսաբանման օրինակներ

Համաշխարհային հետաքննական լրագրության ցանցը (ՀՀԼՑ) հավաքել է [մոտ 60 հետաքննական պատմությունների արխիվ](#) մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգության մասին:

Առանցքային կազմակերպություններ՝

Միջազգային քաղաքականության միջոցառումների մասին տեղեկատվության համար՝

- [ԹՊՀՄԽ](#) Թրաֆիքինգի դեմ պայքարը համակարգող միջգերատեսչական խումբ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից լիազորված քաղաքականության ֆորում, որի նպատակն է՝ բարելավել համակարգումը ՄԱԿ-ի գործակալությունների և համապատասխան միջազգային կազմակերպությունների միջև՝ մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերին ամբողջական և համապարփակ մոտեցմանն աջակցելու, այդ թվում՝ թրաֆիքինգի գոհերի պաշտպանելու և աջակցելու համար <http://icat.network/> :

Լրացուցիչ խորհրդատվության համար՝

- «Free the Slaves»՝ մեկն է բազմաթիվ միջազգային ՀԿ-ներից, որը գերազանց աշխատանք է կատարում լրագրողներին խորհրդատվություն տրամադրելու ոլորտում: Մասնավորապես, տե՛ս՝ նրանց տերմինաբանական բառարանը և հաճախ տրվող հարցերի բաժինը <https://www.freetheslaves.net/about-slavery/faqs-glossary/>
- «La Strada International»՝ եվրոպական առաջատար ՀԿ-ների ցանց, որը զբաղվում է մարդկանց թրաֆիքինգի հարցերով, որի կազմում են՝ տեղական մակարդակում աշխատող ութ անկախ անդամ կազմակերպություններ <https://lastradainternational.org/>
- ՄԱԿ-ի գործակալություններ, ծրագրեր, ՀԿ-ներ և հիմնադրամներ, որոնք պայքարում են ստրկատիրության ժամանակակից ձևերի դեմ <https://www.ohchr.org/EN/Issues/Slavery/UNVTFCS/Pages/SlaveryList.aspx> (ցանկ)

Միգրացիայի հետևանքները

Հետևանքներ սպասելի են ցանկացած գործողությունից, իսկ միգրացիան բացառություն չէ: Այս հետևանքներն այնքան բազմազան են, որ, ըստ էության, անհնար է նկարագրել դրանք միասնական կերպով: Դրանք ընդգրկում են ազդեցություններ՝ ուղարկող պետության վրա՝ ժողովրդագրական հետևանքներից մինչև փոխանցումների ներհույս, ինչպես նաև ընդունող պետությունների վրա՝ ինտեգրման մարտահրավերներից մինչև ներգաղթի իրավակարգավորումների կիրառման հետ կապված բարդություններ: Միգրացիայի հետևանքներն ընդգրկում են ազդեցություն անհատական մակարդակի վրա՝ բուն միգրանտների, միասին ճամփորդող կամ տանը մնացած ընտանիքի անդամների, ընկերների այլ ներգրավված անձանց վրա:

«Հետևանքներից» շատերն այլ եղանակներով քննարկվել են այս գլխի [Միգրացիոն գործընթացներ](#) բաժնում, որտեղ դիտարկված է դրանց կապն այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են՝ աշխատանքային միգրացիան, ուսման նպատակով միգրացիան կամ անկանոն միգրացիան: Սա անխուսափելի է, քանի որ միգրացիայի հետևանքները հաճախ անբաժանելիորեն փոխկապակցված են միգրացիոն գործընթացների:

Այս բաժնում անդրադարձ է կատարվում միգրացիայի որոշ հետևանքներին, օրինակ՝ անվտանգության խնդիրներին և հասարակական կարգի պահպանմանը, որոնք, սովորաբար, դառնում են լուսաբանման (կամ սխալ լուսաբանման) առարկա, և ընդգծվում են միգրացիայի որոշ հետևանքներ, որոնք հաճախ անուշադրության են մատնվում կամ սխալ ընկալվում, օրինակ՝ ինտեգրումը:

Հետևանքներ՝ ինտեգրում, ուժացում և ժողովրդագրական փոփոխություն

- *(Տե՛ս՝ նաև [Աղբյուրների և տեսակետների բազմազանությունը](#) բաժինը 6-րդ գլխում՝ [Պատմության \(նիշտ\) շարադրում](#)).*

Հետազոտողները տարբեր եղանակներով են վերլուծել ինտեգրման գործընթացները: Պատմականորեն, ինտեգրումը հաճախ բացատրվել է որպես մնացած բնակչությանը նման

դառնալու միակողմանի ճանապարհ, որը կոչվում է «ուժացում»: Այս եզրույթը ենթադրում է, որ ադապտացումը կատարում են միգրանտները:

Սակայն «հյուրընկալող հասարակության» մարդիկ և ինստիտուտները նույնպես կարող են ադապտացվել միգրացիային: Վերջին տարիներին «ինտեգրում» եզրույթը հաճախ սահմանվել է որպես փոխանակելու և հարմարվելու «երկկողմանի» գործընթաց:

Որո՞նք են լուսաբանման ծուղակները: Ի՞նչ են հաճախ բաց թողնում լրատվականները:

Ինտեգրումը կարող է ունենալ բազմաթիվ տարբեր հարթություններ և, հետևաբար, միասնական գործընթաց չէ: Ինտեգրման տարբեր հարթությունները կարող են ընդգրկել մասնակցությունն աշխատաշուկայում և հասարակական ինստիտուտներում (օրինակ՝ կրթությունը), սոցիալական շփումները, մշակութային սովորույթները և քաղաքացիական մասնակցությունը: Ժամանակի ընթացքում կարող են նաև փոխվել միգրանտների և նրանց հետ շփումներ ունեցող անձանց ինքնության և պատկանելիության զգացումը: Ինտեգրումը կարող է լինել թե՛ գործընթաց, թե՛ արդյունք, իսկ որոշ երկրներում միգրանտները պարտավոր են «ինտեգրվել»՝ հանձնելով ինտեգրման քննություններ կամ թեստեր, որոնք նրանց կացության և բնակության նախապայմաններն են:

Տնտեսական և սոցիալական մասնակցության արգելքների շարքում կարող են լինել լեզվի ուսուցման դասարանների արժեքը կամ անմատչելիությունը, ժամանման պահին գործնական տեղեկատվության բացակայությունը, միգրանտների առանձին կարիքները բավարարելու համար անպատրաստ ծառայություններ, աշխատանքի հնարավորությունների բացակայություն կամ խտրականություն և մեկուսացում:

Որո՞նք են լուսաբանման հնարավորությունները:

Շատ երկրներում չկա հստակություն ինտեգրման համար պատասխանատուների հարցում: Այստեղ մտնում են միգրանտի վրա դրված պատասխանատվության սահմանները, կենտրոնական և տեղական իշխանությունների միջև պետական քաղաքականության համար պատասխանատվության հավասարակշռումը, ինտեգրման համար քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և առանձին անհատների կրած պատասխանատվության սահմանները:

Ընդգծելով միգրանտների ինտեգրման համար պաշտոնական աջակցության բացակայությունը կամ տեղական համայնքում այլ ապրելակերպ ունեցողներին ընդունելու անսասան դժկամությունը՝ կարող է հնարավորություններ տալ բացահայտել ինտեգրման արդյունքների (երբեմն անիրատեսական) տեսանկյունից այն կեղծ ակնկալիքները, որոնք կան միգրանտներից:

Այն կարող է նաև բացահայտել հասարակության մեջ առկա կառուցվածքային նախապաշարումները: Նույն օրինակով, ձեր երկրում ներգաղթյալներից կարող են լինել ինտեգրման ավելի մեծ սպասելիքներ, քան ձեր սպասածի համաձայն այլ պետությունները պետք է ունենան արտասահմանում բնակվող ձեր քաղաքացիներից: Արդյո՞ք արդարացի է:

Ձեր հասարակության առջև հայելի պահելը, որտեղ երևում է վերաբերմունքն այլոց հանդեպ, կարող է երբեմն ստիպել մարդկանց՝ անդրադառնալ դառը ճշմարտությունների:

Լավագույն գործելակերպի ցուցիչներ

Ինտեգրում, թե ուժացում

Ճանաչել երկկողմ գործընթացները

Վերը նշվեց, որ ինտեգրումը երկկողմանի գործընթաց է, որը պահանջում է մշակույթներից և խմբերից՝ հարմարվել միմյանց, սովորել իրարից և զարգանալ միասին:

Ուժացման էությունն այն է, որ մեկ մշակույթի կրող մարդիկ պետք է հիմնովին փոխեն իրենց վարքագիծը՝ այն հասարակության նորմերին հետևելու համար, որին նրանք միացել են: Ուժացումը ենթադրում է, որ մի խմբի մշակույթը պետք է (առնվազն որոշակի սահմաններում) ճնշվի, մինչդեռ ինտեգրումն ընդունում է կեցության տարբեր ձևերի գոյության իրավունքը, և հնարավորություն տալիս՝ մշակել միասնական նորմեր:

Թեև որոշ երկրների դոմինանտ խմբերը կարող են համոզված լինել, որ տարբեր մշակույթներից ներգաղթող միգրանտները պետք է հարկադրված լինեն փոխել իրենց վարքագիծն ու նորմերը՝ դոմինանտ մշակույթում ուժացվելու համար, բայց նույն այդ դոմինանտ խմբերը հազվադեպ են համաձայնվում, որ իրենց սփյուռքին պարտադրեն հրաժարվել սեփական ավանդույթներից և ժառանգությունից՝ իրենց հյուրընկալող երկրների նորմերին համապատասխանելու համար: Երկու գաղափարներն էլ ծառայում են «սոցիալական համախմբման» աջակցելու ավելի լայն նպատակին, երբ համայնքները գործում են միասին՝ փոխադարձ օգտավետ, բարեկամական և դրական ճանապարհով և ունենալով պատկանելիության և միասնության զգացում:

Չգո՛ւյշ եղեք վիճելի գաղափարները գնահատելու ժամանակ

Ինտեգրման և սոցիալական համախմբման գաղափարները վիճելի են և աղոտ: Ինտեգրումը և սոցիալական համախմբումը խրախուսելու ջանքերին կարող են խոչընդոտել նման ոչ հստակ մի բան գնահատելու մարտահրավերները: Հասարակության «ինտեգրվածության» կամ «համախմբման» աստիճանը գնահատելու ելակետ սահմանելու համար պահանջվում է ունենալ ինտեգրման մետրիկա և լավ ինտեգրված անձի համեմատության չափանիշ:

Ինտեգրումը գնահատելու ձևերից մեկը կոնկրետ արդյունքների դիտարկումն է, որոնք կապված են լեզվի իմացությանը, աշխատաշուկայում մասնակցությանը, կրթական արդյունքներին կամ այլ գործոններին: Սակայն պարզ չէ՝ արդյոք նման «կոշտ» ասպացույցներն իրոք ավելի լավ են արտացոլում ինտեգրումը, քան «փափուկ» գործոնները, օրինակ՝ քանի ընկեր ունի անձը տեղական համայնքում, նրա մասնակցությունը տեղական քաղաքացիական կամ համայնքային գործունեությանը կամ այդ տարածքում «տանը լինելու» ընդհանուր զգացումը:

Ինտեգրման քաղաքականությունները գնահատելու օրինակներից մեկը Միգրանտների ինտեգրման քաղաքականության համաթիվն է (ՄԻՔՀ)՝ բացառիկ գործիք, որը գնահատում է հինգ մայրցամաքների պետություններում միգրանտների ինտեգրման քաղաքականությունները, այդ թվում՝ ԵՄ բոլոր անդամ պետություններում (ներառյալ ՄԹ-ը), եվրոպական այլ երկրներում (Ալբանիա, Իսլանդիա, Հյուսիսային Մակեդոնիա, Մոլդովա, Նորվեգիա, Սերբիա, Շվեյցարիա, Ռուսաստան, Թուրքիա և Ուկրաինա), Ասիայի երկրներում (Չինաստան, Հնդկաստան, Ինդոնեզիա, Իսրայել, Ճապոնիա և Հարավային Կորեա), Հյուսիսային Ամերիկայի երկրներում (Կանադա, Մեքսիկա և ԱՄՆ), Հարավային Ամերիկայի երկրներում (Արգենտինա, Բրազիլիա, Չիլի) և Օվկիանիայում՝ Ավստրալիայում և Նոր Զելանդիայում: Ծրագիրը նույնականացնում և գնահատում է ինտեգրման քաղաքականությունները և կապերը ինտեգրման քաղաքականությունների, արդյունքների և հասարակական կարծիքի միջև՝ հիմնվելով միջազգային գիտական հետազոտությունների վրա:⁴⁷

Արտագույն գույնը՝ չօգտագործելով կարծրատիպեր

Միգրանտ, արտագաղթյալ և ներգաղթյալ համայնքների մասին պատմություններ պատմելը պահանջում է արագ և գունավոր հաղորդկցման ձևեր, որ փոխանցեն ովքեր են ներգրավված մարդիկ և, երբեմն, ստեղծել նրանց հետ ապրումակցման զգացմունք և նրանցով ոգևորություն: Սակայն, հնարավոր է նաև հեշտությամբ պատկերել այդ համայնքների միաչափ պատկերներ և, պարզապես շեշտադրելով վարքագծի որոշակի դրսևորումներ, ավելի խորացնել կարծրատիպերը:

Որևէ համայնք կարող է լինել հյուրընկալ և կենսուրախ կամ ունենալ մի փոքր զգուշավոր և պահպանողական լինելու համբավ, սակայն ամբողջ մի համայնք, որպես հարբեցողներ և պարողներ, կամ մեկ այլ համայնք՝ որպես լուռ և կասկածելի պատկերելը կարող է նպաստել պատմություններին, որոնք հսկայական և երկարատև ազդեցություն են թողնում այդ մարդկանց վրա:

Նույնիսկ երբ ձեր լրագրությունը պատկերում է համայնքները դրական կամ համակրելի լույսի ներքո՝ համոզվեք, որ ջանք եք գործադրել նաև ամբողջական և համապարփակ պատկերներ ստանալու համար:

Ծուղակներ և տարածված սխալներ

Արմատական պատճառների անտեսում

Ժողովրդագրական հարցեր լուսաբանելու ընթացքում որոշակի պատմություններ կայացնող տվյալներից կամ միջադեպերից կարող են ի հայտ գալ ինտեգրման, սոցիալական համախմբման և ռասայական հարաբերությունների մասին պատմություններ, սակայն ավելի խորքային վերլուծությունը կարող է ընդգծել արմատական պատճառները, որոնք առաջին հերթին հանգեցրել են միջադեպի:

Նյութը, որը լուսաբանում է ինչ-որ բացասական խնդիր, օրինակ՝ որոշակի համայնքում կրթական ցածր մակարդակը կամ հանցավորությունը, պետք է դիտարկի խմբի սոցիալ-

⁴⁷ <https://www.mipex.eu/>

տնտեսական հանգամանքները և արդյո՞ք խտրականության կամ կառուցվածքային անհավասարությունների հետևանքով ավելի սահմանափակ հնարավորությունները, աղքատության ավելի բարձր մակարդակը և նման արդյունքների ավելի մեծ հավանականությունը:

Հեղինակել միգրանտների մասին պատմություն, երբ իրականում այն անհատների մասին է

Խնդիրներ լինում են բոլոր համայնքներում: Կարևոր է հարցնել՝ գոյություն ունե՞ն արդյոք ձեր հետաքրքրության առարկա համայնքում ավելի մեծ թվով խնդիրների իրական ապացույցներ, թե դրանց գոյությունը պարզապես ենթադրվում է: Միգրանտների համայնքներում առկա խնդիրներին անդրադարձող պատմությունը կարող է ավելի շուտ ենթադրել, որ որոշակի տեսակի վարքագիծը համատարած է այդ համայնքներում, քան պարզապես անհատական դրսևորում է:

Այս խնդիրները (կամ նույնիսկ հաջողությունները) ընդգծող լրագրությունը հայտվում է կարծրատիպերը խորացնելու, հասարակության նախապաշարումներն ու համակարգային շեղումները վերահաստատելու վտանգի առջև, որոնցից կարող են առաջանալ բուն խնդիրները: Մա պատճառ չէ հետամուտ չլինելու հետաքրքիր պատմությանը, սակայն չափազանց կարևոր է մանրակրկիտ ուսումնասիրել ապացույցները և նկատի առնել ազդեցությունները:

Օրինակի վերլուծություն՝ նոր ժամանողներ

Ամսաթիվ՝ 2017-2018թթ.

Հրատարակողներ՝ [The Guardian](#), [El Pais](#), [Le Monde](#), [Spiegel Online](#)

Հղում՝ <https://thenewarrivals.eu/>

Ծրագրի տևողությունը 500 օրից ավելի էր, և չորս օրաթերթերում լուսաբանվում էր 25 միգրանտների կյանքը: Բիլլ և Մելինդա Գեյթսերի հիմնադրամի դրամաշնորհով այն ֆինանսավորել է Եվրոպական լրագրության կենտրոնը: Հրաշալի օրինակ է՝ ինչպես լրատվամիջոցները կարող են համագործակցել ինտեգրման, ուժացման և ժողովրդագրական փոփոխության մասին ավելի լավ պատմություններ ներկայացնելու համար, քանի որ՝

- Նման թեման պահանջում է ավելի երկարաժամկետ ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս հետևել ժամանակի ընթացքում ընտանիքների և անհատների փոփոխություններին և փորձառություններին.
- Պատրաստված կոնտենտը հիմնականում «մշտադալար» է և չի ձերանում այնքան արագ, որքան լրագրության այլ ձևերը.
- Աշխատանքն այլ երկրների լրատվամիջոցների հետ հնարավորություն տվեց [համեմատել տարբեր երկրների ապաստանի համակարգերը](#) (տե՛ս՝ Գլուխ 10. [Միգրացիայի լուսաբանման բարելավում](#), [Լուծումների լրագրություն](#) օրինակի վերլուծությունը)

Դիտարկման համար հարցեր՝

- Կա՞ն այլ երկրներում լրատվամիջոցներ, որոնց հետ կցանկանայիք համագործակցել նմանատիպ ծրագրով:

- Ձեր կազմակերպությունը դիտարկե՞լ է բարեգործական կամ այլ կազմակերպություններից նմանատիպ ծրագրի համար ֆինանսավորում հայթայթելու հարցը:

Հետևանքներ՝ անվտանգություն, հասարակական կարգի պահպանում և օրենք

Պետության կողմից *միգրացիայի կառավարումն* ընդգրկում է պետական սահմանին միգրացիայի հսկողությունը և երկրի ներսում միգրանտ բնակչության վերահսկողությունը, որի մաս է կազմում մուտքի արտոնագրով կամ բնակության թույլտվությամբ հարկադրված սահմանափակումների կատարման ապահովումը: Սա ընդգրկում է *խմիգրացիոն օրենսդրության իրավակիրառման* որոշակի աստիճան՝ գործողություններ, որոնք ուղղված են ներգաղթի օրենքների իրավակիրառմանը, այդ թվում՝ առանց մուտքի իրավունքի անձանց մուտքի կանխարգելումը երկրի տարածք, իրավական կարգավիճակ չունեցող ռեզիդենտների վտարում և տուգանքների կիրառում մուտքի և կացության պայմանները խախտող անձանց նկատմամբ (տե՛ս՝ [Արտաքսում և հարկադիր վտարում](#) հաջորդ բաժնում):

Պետության կողմից միգրացիոն քաղաքականությունների իրավակիրառման աստիճանը և խստությունը մեծապես կախված է իշխող կառավարությունից: Միգրացիոն քաղաքականությունների իրավակիրառման լուսաբանումն այն ոլորտներից է, որտեղ բազմաթիվ են էթնիկական և իրավական խնդիրները, որը պահանջում է ներպետական և միջազգային օրենքների լավ իմացություն և իրավակիրառման միջոցների խելամիտ, մարդասիրական և արդար լինելու մանրակրկիտ վերլուծություն:

Իմիգրացիոն օրենսդրության իրավակիրառման խնդիրներին հաճախ միանում են անվտանգության և հասարակական կարգի պահպանման հարցերը: Թեև անհատ միգրանտը կարող է հանցագործություն կատարել կամ ազգային անվտանգության համար ռիսկեր առաջացնել, սակայն դրանք, սովորաբար, ուղղակիորեն չեն առնչվում նրա իմիգրացիոն կարգավիճակին, բացառությամբ այն դեպքի, երբ կարող են չեղարկել երկրում գտնվելու անձի իրավունքը: Երբ հանցագործը կամ ազգային անվտանգությանը սպառնացող անձը նաև անկանոն միգրանտ է, տեղին է հարց բարձրացնել, թե ինչպես է տվյալ անձը կարողացել շրջանցել միգրացիոն հսկողության մեխանիզմները: Սակայն նրանց միգրացիոն կարգավիճակը և կատարած հանցագործությունները պետք է դիտվեն որպես առանձին խնդիրներ և ինքնաբերաբար չփոխկապակցվեն:

Կարևոր է նաև գիտակցել, որ «հանցավոր» գործունեության որոշ ձևեր (օրինակ՝ սահմանի չթույլատրված հատումը), եթե կատարվել են որոշակի հանգամանքներում, կարող են ներպետական օրենսդրությամբ չառաջացնել պատիժ: Դրանց շարքում կարող են լինել ապաստանի հայցումը կամ թրաֆիքինգ իրականացնող անձի կողմից տեղափոխումը (տես ստորև): Կարևոր է հստակ տարանջատում դնել բացահայտ քրեական բնույթ ունեցող արարքների և այն գործողությունների միջև, որոնք բարդ «գորշ գոտիների» մաս են կազմում:

Կարևոր է նաև խուսափել անձի ծագման երկրից, կրոնից կամ այլ բնութագրիչներից ելնելով ազգային անվտանգությանը սպառնացող ռիսկերի մասին պարզունակ ենթադրություններ անելուց:

Առանցքային հարցեր, որոնք լրագրողները պետք է ուղղեն ինքներն իրենց, երբ լուսաբանում են միգրացիոն օրենսդրության իրավակիրառման հարցերը՝

Որո՞նք են միջազգային նորմերը:

Որոշ հանգամանքներում ազգային կառավարություններ իրականացնում են միգրացիոն քաղաքականություններ, որոնք հակասում են միջազգային նորմերին: Օրինակ, առանց պատշաճ փաստաթղթերի կամ սահմանային հսկողությունը մոլորեցնելու կամ շրջանցելու նպատակով մշակված ճանապարհով պետական սահման հատելն իրավախախտում է և կարող է հանգեցնել քրեական հետապնդման, ձերբակալման կամ վտարման: Սակայն, ընդհանուր ընկալումն այն է, որ մեկ այլ երկրում ապաստան հայցելու համար մարդիկ կարող են այլընտրանք չունենալու պատճառով ստիպված լինել խախտել իմիգրացիոն օրենքները:

Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիան ամրագրում է, որ. *«Պայմանավորվող պետությունները պատժամիջոցներ չեն կիրառում այն փախստականների սպորիների մուտքի կամ ներկայության կասպակցությամբ, ուլքեր ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգվում էր 1-ին հոդվածի խնաստով, մուտք են գործում իրենց տարածք կամ գտնվում են այնտեղ առանց թույլատրության, պայմանով, որ նրանք անձամբ, առանց ձգձգման, ներկայանան իշխանություններին և մատնանշեն իրենց սպորիների մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառը:»*

Այս դրույթը չի նշանակում, որ ազգային կառավարություններն իրավունք չունեն զբաղվել անկանոն միգրանտներով, այլ այն, որ պարզապես կարևոր է նախ իմանալ անձի ճամփորդության համատեքստը:

Արդյոք կիրառվող օրենքը մարդասիրակա՞ն է և արդար:

Իմիգրացիոն օրենքերի իրավակիրառման մասին պատմություններ լուսաբանող լրագրողը պետք է տա ինքն իրեն ավելի անորոշ հարց՝ արդյոք դրանք խելամի՞տ են և արդար: Այս հարցի պատասխանը պահանջում է մտորում և դատողություն, և հաճախ մնում է առանց հստակ պատասխանի: Այն իրավիճակներում, երբ միգրացիոն օրենքներն օգտագործվում են մարդկանց պատժելու կամ նրանց հանդեպ անարդար վերաբերմունք դրսևորելու համար՝ պարզ տեղեկությունը, որ անձը ձերբակալվել է, պատժվել, ազատագրվել, արտաքսվել կամ բանտարկվել, այդ օրենքների հիման վրա կարող է լինել անարդարության *դե ֆակտո* լեգիտիմացում: Տրամաբանական է հարցեր բարձրացնել այդ օրենքների արդար լինելու մասին, երբ կա նման հնարավորություն: Եթե անարդար օրենքն ակտիվ քննադատելն իրատեսական չէ, ապա փորձեք խուսափել դրա հետագա լեգիտիմացումից այնպիսի լուսաբանման միջոցով, որը կարող է ստիպել մարդկանց՝ աջակցել այդ անարդար օրենքներին:

Արդյոք մարդայնացն՞ւմ եք անհատներին:

Միգրացիայի լուսաբանումը, որն անդրադառնում է իրավական, անվտանգային և հասարակական կարգի պահպանման հարցերին, հաճախ ընդգրկելու է դեպքեր, որոնք վերաբերվում են կոնկրետ համայնքների կամ խմբերի: Նման դեպքերի լուսաբանման ընթացքում կարևոր է գիտակցել և ձեր լսարանին փոխանցել, որ ոչ մի խումբ համասեռ չէ և յուրաքանչյուրը կազմված է տարբեր պատմությունների, կյանք, տեսակետեր և դիրքորոշումներ ունեցող անհատներից: Միգրացիայի լուսաբանումը, որը մարդուն վերածում է թվերի կամ գաղափարների (օրինակ՝ «ապօրինի միգրանտներ», «զնչուններ»), կամ գուտ իրենց միգրացիոն կարգավիճակով, ծագումով, կրոնով կամ ազգությամբ նույնականացվող խմբերի՝ իջեցնում է լսարանի կողմից այդ մարդկանց ընկալումը որպես մարդ արարած և, պոտենցիալ առումով, դարձնում նրանց ավելի անպաշտպան այն քաղաքականությունների կամ մոտեցումների համար, որոնք կարող են հանգեցնել այդ անհատների համար վնասակար արդյունքների:

Արդյոք վերահաստատո՞ւմ եք կարծրատիպերը:

Նույն օրինակով՝ պատմությունների կամ թեմաների լուսաբանումը, որը խրախուսում է ձեր լսարանը տեսնել միգրանտ խմբերը կարծրատիպերի միջոցով, կարող է քայքայիչ և ապամարդկայնացնող լինել նույնիսկ այն դեպքերում, երբ դուք մտադրություն ունեք նրանց դրական ներկայացնել: Պատմությունները, որոնք ենթադրում են, որ մի խումբը բնականից «հրաշալի պարողներ» են, մյուսը՝ «զավ է դրամական միջոցների» հարցում, իսկ երրորդը՝ «անհոգներ» են, կարող են նույնքան ապակողմնորոշող լինել, որքան պատմությունները, որոնք ենթադրում են, որ ինչ-որ խումբ բնականից անխելք է, կոպիտ, ծույլ կամ բռնի: Մասնավորապես, հասարակական կարգի պահպանության և անվտանգության խնդիրները լուսաբանելու ընթացքում չափից ավելի մեծ ուշադրությունն անձի միգրանտ լինելու վրա որպես, օրինակ, հանցավորության կամ ահաբեկչության գործոն կարող է խթանել հանրային ընկալումները, որ ամբողջ խումբը հավանական է դրսևորի նման վարքագիծ, եթե նույնիսկ այն առանձին անձի մասնակցությամբ անոմալիա է:

Ծուղակներ և տարածված սխալներ

Աղետի փոխաբերություններ: Մարդկանց տեղաշարժերի նկարագրության համար հաճախ օգտագործվում են աղետներին առնչվող եզրույթներ՝ «հեղեղ», «հորդում», «երամ» կամ «ներհոսք»: Այս ասոցիատիվ բառերն ի սկզբանե խիստ բացասական կերպով են ձևավորում խնդրի շուրջ բանավեճերը, ապամարդկայնացնում են մարդկանց, հարթակ պատրաստում հիմնահարցի «դեմ պաշտպանվելու» համար՝ քննարկված և մտածված արձագանքի փոխարեն:

Մեղավորության կանխավարկած և ոչ ճշգրիտ տերմինաբանություն

- Ոչ ճշգրիտ եզրույթները կարող են նպաստել թյուրմբռնումների, հանրային սխալ ընկալումների և քաղաքականության վատ տարբերակների ընտրությանը: Ծրջկալումների մասին նյութերը, որոնց ընթացքում ձերբակալվել են միգրանտներ, կարող են նրանց նկարագրելու համար օգտագործել «ապօրինի» (կամ նույնիսկ

ավելի նախընտրելի եզրույթ՝ «անկանոն») եզրույթը, ինչը ենթադրում է, որ անձի դեպքում փաստացի իրականացվել է քրեական հետապնդում և նա մեղավոր է ճանաչվել:

- Նույն տրամաբանությամբ՝ ապաստան հայցողների կամ փախստականների նկարագրելու համար կարող է օգտագործվել «տնտեսական միգրանտ» եզրույթը, որը ենթադրում է, որ նրանց հայցերը չունեն լեգիտիմություն: Ապաստան հայցող եզրույթի հետ «կեղծ», «շինծու» կամ «ենթադրյալ» անվանումներից մեկի գործածությունը կարող է առանձնակի խնդիրներ առաջացնել, քանի որ լրացուցիչ կասկածներ է առաջացնում նրանց հայցերի իսկության հարցում:
- Ապաստան հայցող անձն ունի իր հայցի ուսումնասիրման օրինական իրավունք և, արդյունքից անկախ, մինչև որոշում կայացնելն այդ անձն օրինական «ապաստան հայցող» է:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

Այս բաժնում բարձրացրած հարցերի վերաբերյալ լրացուցիչ տե՛ս՝

- *Փախստականներ և ապաստան, Արտաքսում և հարկադիր վտարում և Անկանոն միգրացիա:*
- *Գլուխ 4. Տերմինաբանություն և Գլուխ 6. Պատմության (նիշտ) շարադրում, Աղբյուրների և տեսանկյունների բազմազանություն և Միտայ տեղեկատվություն և աստեղծության խոսք բաժինները:*

Հետևանքներ՝ արտաքսում և հարկադիր վտարում

«Արտաքսում» եզրույթը, սովորաբար, ակնարկում է բնակության երկրից քաղաքացիության երկիր օտարերկրյա քաղաքացիների հարկադիր վերադարձին: Սակայն տարբեր երկրներում եզրույթը կարող է ունենալ առանձնահատուկ այլ հատուկ իրավական նշանակություններ: ՄԹ-ում, օրինակ, «արտաքսում» եզրույթն ակնարկում է բացառապես այն անձանց վտարմանը, ովքեր համարվում են «Օտարերկրյա քաղաքացի իրավախախտներ» և, հատկապես, ծանր հանցագործություն կատարածներ: Մուտքի արտոնագրի պայմանները խախտելու կամ իմիգրացիոն այլ իրավախախտումներ կատարելու համար իրենց քաղաքացիության երկիր հետ ուղարկվող անձինք ենթակա են «հարկադիր վտարման»:

Կանոնավոր կամ անկանոն միգրանտների արտաքսումը կամ վտարման այլ ձևերը կարող են լուրջ բարդություններ առաջացնել միգրանտի, ինչպես նաև այն երկրի ու համայնքի համար, ուր նա վերադառնում է: Օրինակ, քաղաքացիները, ովքեր համարում են, որ իրենց կյանքն ու կենսագործունեությունը պետք է ընթանան այլ վայրում, կարող են հանդիպել

վերահստեգրման առանձնակի դժվարությունների, հատկապես, երբ նրանք զգալի ժամանակ են բացակայել և չունեն իրենց կյանքը վերականգնելու համար կապեր և տեղական կոնտեքստի իմացություն:

Հարկադիր վերադարձողները կարող են վերադառնալ երկրներ, որոնց աշխատաշուկաներն առաջարկում են սահմանափակ թվով և համեմատաբար ցածր եկամուտով աշխատատեղեր, քան այն երկրներում, որտեղից նրանք վերադարձել են, ինչն անհատների դեպքում առաջացնում է հիասթափություն և տեղական համայնքի կողմից հնարավոր հակակրանք: Այդուհանդերձ, վերադարձողները կարող են նաև իրենց հետ բերել օգտակար լրացուցիչ հմտություններ (օրինակ՝ լեզվի իմացություն և կապեր), որոնք ձևավորվել են դրսում եղած ժամանակ, և կյանքի փորձ, որը կարող է օգնել նրանց դառնալ այն հասարակության շատ արժեքավոր և կարևոր անդամներ, ուր նրանք վերադարձել են: Հետազոտությունները հուշում են, սակայն, որ կայուն վերադարձ (անկախ այն հանգամանքից անձը վերադառնում է երկար ժամանակով կամ վերագաղթում է), սովորաբար, ավելի հեշտ է ապահովել կամավոր վերադարձողների դեպքում՝ ովքեր պլանավորում են այն, քան հարկադիր վերադարձողների դեպքում, որոնց վերադարձը կարող է անսպասելի կամ իրենց վերահսկողությունից դուրս լինել:

Եվրոստատի համաձայն, 2019 թվականին ԵՄ անդամ պետությունները՝ հարկադրաբար ԵՄ ոչ անդամ պետություններ են վտարել 142 000-ից ավելի մարդ, իսկ մոտ 628 000 անձ կարգադրություն է ստացել լքել Միության տարածքը:⁴⁸ Ուկրաինայի, Վրաստանի, Մոլդովայի, Բելառուսի և Հայաստանի քաղաքացիները եղել են ԵՄ անդամ պետություններից վտարվողների առաջին 20-յակում:⁴⁹

Հետևանքներ՝ փոխանցումներ

Գիտե՛ք, որ 2017 թվականին միգրանտները 466 միլիարդ ԱՄՆ դոլարի դրամական փոխանցումներ են կատարել ցածր և միջին եկամուտով երկրներ, ինչը մոտ երեք անգամ գերազանցում է զարգացման համար պաշտոնական օժանդակության չափը ([ՄՉԳԳԳ](#)):

Ի՞նչ է փոխանցումը

Փոխանցումները մի երկրում գտնվող անհատից մեկ այլ երկրում գտնվող անհատին գումարի կամ ապրանքների (դեղեր, էլեկտրոնային ապրանքներ կամ հագուստ) փոխանցումներ են: Ֆինանսական փոխանցումները դրամական միջոցների փոխանցումներն են, իսկ բնամթերքով փոխանցումներն ընդգրկում են ապրանքների փոխանցումները: Փոխանցման գործարքների մեծ մասը կազմում են փոքր գումարներ կամ

⁴⁸ https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Enforcement_of_immigration_legislation_statistics#Non-EU_citizens_ordered_to_leave_the_EU-27

⁴⁹ [https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=File:Top_20_countries_of_citizenship_of_non-EU_citizens_returned_outside_the_EU-27,_2018_and_2019_\(number\)_MI20.png](https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=File:Top_20_countries_of_citizenship_of_non-EU_citizens_returned_outside_the_EU-27,_2018_and_2019_(number)_MI20.png)

փոքր արժեք ունեցող ապրանքներ: Սակայն ստացող երկրների տնային տնտեսությունների համար այս հոսքերը կարող են կարևոր ռեսուրս հանդիսանալ:

Ինչո՞ւ են միգրանտներն ուղարկում փոխանցումներ

Միգրանտներն ունեն գումար կամ ապրանք ուղարկելու բազմաթիվ պատճառներ: Որոշ դեպքերում միգրանտներն ավտոուստակա վերաբերմունք են դրսևորում տանը մնացած ընտանիքի անդամների հանդեպ և միջոցներ ուղարկում նրանց հիմնական կարիքներին աջակցելու համար: Այլ դեպքերում, միգրանտներն ունեն փոխանցում կատարելու էգոիստակա պատճառ՝ պահպանել իրենց տնային տնտեսության կարգավիճակը ժառանգության կամ այլ նպատակներով: Ապացույցներ կան, որ որոշ միգրանտներ փոխանցումներ են կատարում նաև ներդրումային նպատակներով: Վերջապես, որոշ միգրանտներ կարող են մարել վարկեր կամ տնային տնտեսության այլ պարտքեր, որոնք, հնարավոր է, ընդգրկում են արտասահման տեղափոխվելու համար իրենց օգտագործած գումարները:

Փոխանցումների հարցի լուսաբանում՝ դրանք դրակա՞ն, թե՛ բացասակա՞ն երևույթ են

Դժվար է պարզել փոխանցումներ ստացող երկրներում և ստացող տնային տնտեսությունների վրա դրանց ընդհանուր ազդեցությունը: Որոշ ապացույցներ հուշում են, որ փոխանցումներն ունեն դրական ազդեցություններ ստացող պետությունների և տնային տնտեսությունների վրա: Օրինակ, կան ապացույցներ, որ տնային տնտեսության մակարդակում փոխանցումները նպաստում են մարդկային կապիտալի կուտակմանը, քանի որ փոխանցումներ ստանալը կարող է հնարավորություն տալ տնային տնտեսությանը՝ ներդրումներ կատարել ընտանիքի երիտասարդ անդամների կրթության և վերապատրաստման մեջ:

Փոխանցումները կարող են նաև ապահովել փոքր բիզնես սկսելու համար անհրաժեշտ կապիտալ կամ ծածկել տնային տնտեսության ծախսերն այն ժամանակահատվածում, երբ բիզնեսը շահութաբեր չէ: Ստացվող փոխանցումները կարող են թույլ տալ ընտանիքին զբաղվել ավելի շահութաբեր, բայց ավելի ռիսկային բիզնեսներով, քանի որ փոխանցումները կարող են աջակցության աղբյուր լինել տնային տնտեսության համար: Փոխանցումների այս դերը հատկապես կարևոր են այն երկրներում, որտեղ վարկային կամ ապահովագրական շուկաները լավ զարգացած չեն:

Խոսելով բացասական կողմի մասին՝ կան ապացույցներ, որ փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների որոշ անդամներ նվազեցնում են իրենց մասնակցությունն աշխատաշուկայում՝ մարտահրավեր, որը կոչվում է «բարոյական վտանգ»: Մարդիկ կարող են հույսները դնել միգրանտներից ստացվող գումարների վրա և սահմանափակ են սեփական զբաղվածությունը, ինչն, ի վերջո, կարող է կախվածություն առաջացնել այս հոսքերից: Այդուհանդերձ, որոշ դեպքերում մարդու կատարած աշխատանքի ծավալի կրճատումը կարող է հանգեցնել նրան, որ էապես կբարձրանա նրա կյանքի որակը, քանի որ կլինի ավելի շատ ազատ ժամանակ և տնային տնտեսության որոշ անդամներ հնարավորություն կունենան ուսանելու կամ վերապատրաստվելու միջոցով կուտակել լրացուցիչ մարդկային կապիտալ: Հետևաբար, պարտադիր չէ, որ աշխատուժի առաջարկի հնարավոր կրճատումը լինի փոխանցումների բացասական կողմ:

Փաստարկներից մեկը, որը բերում են նրանք, ովքեր պնդում են, որ փոխանցումները կարող են վնաս հասցնել ստացող տնտեսություններին, այն է, որ փոխանցումները կարող են արժեզրկել կամ արժևորել ստացող պետության արժույթը, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ երկրի արտահանման ոլորտի վրա: Այս երևույթը կոչվում է «Հոլանդական հիվանդություն»:⁵⁰

Ուեսուրաներ՝

- Համաշխարհային Բանկի միգրացիայի և փոխանցումների մասին տվյալներ:⁵¹

Հետևանքներ՝ սփյուռք

Սփյուռքի գաղափարն ավելի բարդ է, քան կարող է թվալ առաջին հայացքից: Սկզբում եզրույթն ակնարկում էր որոշակի խմբերի, որոնք, հաճախ բռնի կերպով ցրելու արդյունքում լայն տարածում ունեին պատմական հայրենիքից դուրս (օրինակ, հրեաները՝ մինչև Իսրայել պետության հիմնումը, կամ հայերը):

Սակայն եզրույթի ժամանակակից գործածությունը շատ ավելի լայն է: Բառարաններից մեկը սահմանում է սփյուռքը՝ որպես «իրենց բնօրրան հայրենիքից մարդկանց ցրում կամ տարածում», իսկ պարզ լեզվով եզրույթը սկսել է ընդգրկել որոշակի մշակութային, էթնիկ կամ ազգային ժառանգության համայնքները, որոնք բնակվում են այլ երկրներում, քան իրենց ենթադրյալ «ծագման երկիրն» է: Բազմաթիվ կոնստրուկտներում «սփյուռքի համայնք» և «միգրանտ համայնք» եզրույթները դարձել են գրեթե հոմանիշներ: Մի կարևոր տարբերություն «սփյուռքի» և «միգրանտի» միջև այն է, որ սփյուռքն ընդգրկում է մարդկանց, ովքեր նույնականանում են (պատմական) հայրենիքի կամ իրենց խմբի այլ անդամների հետ, բայց կարող է երբեք ապրած չլինեն (նախնիների) ծագման երկրում կամ հանդիսացած չլինեն այդ երկրի քաղաքացի, իսկ «միգրանտը» սահմանվում է անմիջական տեղափոխման փորձից ելնելով:

Սփյուռքի համայնքները, հաճախ, ավանդույթները, լեզուն, կրոնական սովորույթները և մշակութային գործունեությունն ակտիվ պահելու կարևոր հարթակ են: Սփյուռք եզրույթը, սակայն, միանշանակ չէ, քանի որ որոշ խմբեր ակտիվորեն ողջունում են պիտակը, իսկ մյուսները՝ մերժում:

Սփյուռքի լուսաբանում

Սփյուռքի հարցերի լուսաբանումը պահանջում է լրագրողից՝ ստուգել սեփական նախապաշարումները: Արդյո՞ք ունակ եք «մտնել նրանց կաշվի մեջ» և հասկանալ իրենց ունեցած մարտահրավերները, եթե դուք մեծամասնության համայնքի մաս եք կազմում և լուսաբանում եք փոքրամասնություն կազմող սփյուռքի համայնքի հարցերը: Նույն տրամաբանությամբ, եթե դուք լուսաբանում եք ձեր համայնքի հարցերը, որը, որպես սփյուռք, ապրում է այլ երկրում՝ կարող եք տարանջատել ձեր լուսաբանած մարդկանց ընկալումները, համոզումները և արժեքները ձեր սեփականներից:

⁵⁰ [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2014/433786/EXPO-DEVE_ET\(2014\)433786_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2014/433786/EXPO-DEVE_ET(2014)433786_EN.pdf)

⁵¹ <https://www.worldbank.org/en/topic/migrationremittancesdiasporaissues/brief/migration-remittances-data>

Միգրացիայի կառավարում

Երբ դիտարկում ենք նորմատիվ իրավական բազան, որով ղեկավարվում է միջազգային միգրացիան, ապա, բնականաբար, հակված ենք կենտրոնանալ կառավարությունների դերակատարման վրա, որը կայանում է երկիր մուտք գործելուն կամ այն լքելուն առնչվող քաղաքականություններ մշակելու և այդ գործընթացները կառավարելու մեթոդները որոշելու մեջ, սակայն «միգրացիայի կառավարման» գործընթացները շատ ավելի լայն են:

ՄՄԻԱՀԵ միգրացիոն հետազոտությունների կենտրոնը⁵² տարբերակում է «միգրացիայի կառավարումը» «միգրացիայի քաղաքականություններից», բացատրելով, որ քաղաքականություններն առնչվում են «միգրացիային առնչվող օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին, կառավարության որոշումներին կամ այլ հրահանգներին», իսկ կառավարումն անդրադառնում է նաև որոշումների կայացման գործընթացներին և իրականացմանն առնչվող գործոններին: Ինչ-որ իմաստով, միգրացիոն քաղաքականությունը միգրացիայի կառավարման արդյունք է:

Այս գործընթացները կարող են ընդգրկել՝

- «իրավապարտադիր և ոչ իրավապարտադիր նորմերի, կարգերի, քաղաքականությունների, օրենքների մշակում և ինստիտուտների զարգացում» գլոբալ, ազգային և ենթաազգային մակարդակներում.
- որոշումների կայացման գործընթացների կամ մեթոդների և կառավարման (ներառյալ իրականացման և մշտադիտարկման) գործընթացների մշակում, որոնք կարող են լինել ֆորմալ կամ ոչ ֆորմալ, ի հայտ գալ տարբեր մակարդակներում (տեղական, ազգային, գլոբալ) և տարբեր դերակատարների միջավայրում:

Պարզ լեզվով, միգրացիայի կառավարումը ոչ միայն քաղաքականությունն է, այլև գործընթացները և ինստիտուտները, որոնք հանգեցրել են այդ քաղաքականության մշակմանը կամ սահմանում են, թե որքան արդյունավետ կարող է իրականացվել այդ քաղաքականությունը:⁵³

Կառավարման ոլորտի դերակատարների շարքում են [քաղաքացիական հասարակությունը, գործատուները, արհմիությունները, միջպետական և միջազգային կազմակերպությունները, գիտելիք գեներացնողները և տրամադրողները, ազգային պետական հաստատությունները, մասնավոր ընկերությունները և քիզնես ոլորտը:](#)

Այս մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ <https://migrationresearch.com/taxonomies/topics-migration-governance>

⁵² <https://migrationresearch.com/>

⁵³ <https://migrationresearch.com/taxonomies/topics-migration-governance>

Հասարակական կարծիք

Միգրացիայի լուսաբանման և քաղաքականության մշակման մեջ տարածված թեմա էր հասարակության վերաբերմունքը: Մասնավորապես, հասարակական կարծիքի հարցումները, որոնք մտահոգություններ են արտահայտում ներգաղթի կամ արտագաղթի բարձր մակարդակների, կամ որոշակի միգրանտ համայնքների մասին, կարող են գեներացնել վերնագրեր և նույնիսկ քաղաքականության արձագանքներ, օրինակ՝ միգրացիայի լրացուցիչ սահմանափակումներ կամ միգրանտների տեղավորմանը հակազդելու միջոցառումներ:

Հասարակական կարծիքի հարցումները գնահատելու ընթացքում շատ կարևոր է հասկանալ, ինչպես են դրանք իրականացվել, ինչ տեսակի հարցեր են տրվել, և ովքեր են եղել ռեսպոնդենտները:

- Արդյոք հարցերը ձևակերպվել՞ կամ տրվել՞ են այնպես, որ չկորզեն որոշակի պատասխաններ:
- Արդյոք հարցման համար կազմվել՞ է ռեսպոնդենտների ազգային ներկայացուցչական ընտրանք: Նման մոտեցումը պահանջում է ընդգրկել հավասար համամասնությամբ կանանց և տղամարդկանց, որոնք տարբեր տարիքային խմբերից են, տարբեր էթնիկ կամ կրոնական համայնքներից, գյուղական և քաղաքային համայնքներից, և մարդկանց, որոնք ունեն այլ առանձնահատուկ բնութագրիչներ, որոնք փաստացի ներկայացնում են ամբողջ երկիրը:

Սակայն, նույնիսկ այն դեպքերում, երբ հարցումներն իրականացվել են լրիվ ճիշտ, դժվար է իմանալ՝ արդյոք հասարակական կարծիքի հարցումները փաստացի ներկայացնո՞ւմ են մարդկանց իրական կարծիքները միգրացիայի մասին, թե դրանք արձագանքում են իրական միգրացիայի մասին եղած երևակայական պատկերացումներին: 2011 թվականին Օքսֆորդի համալսարանի գիտնականների իրականացրած հետազոտության⁵⁴ մեջ փորձ է կատարվում մանրամասն ուսումնասիրել այս խնդիրը՝ նախ տալով հասարակական կարծիքի ուսումնասիրման ստանդարտ հարցեր այն մասին, թե արդյոք ՄԹ-ի բնակիչները ցանկանո՞ւմ են տեսնել ներգաղթի ան, նվազում կամ նույն մակարդակի պահպանում: Այս հարցերը են ռեսպոնդենտներին, թե ո՞ւմ էին պատկերացնում, երբ մտածում էին միգրանտների մասին: Արդյունքները ցույց տվեցին, որ ներգաղթին դեմ արտահայտված անձինք, մեծ հավանականությամբ, նշում էին ապաստան հայցողներին՝ որպես իրենց պատկերացրած մարդիկ, մինչդեռ այդ ժամանակ ապաստանը կազմում էր ՄԹ ներգաղթի 5%-ից քիչ:

ԵԾՐԱԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

«Միգրացիան»... ընդգրկում է փոխկապակցված երևույթների լայն շրջանակ, որոնցից ոչ մեկը բուն բառը հստակ չի բացատրում:

⁵⁴ <https://migrationobservatory.ox.ac.uk/resources/reports/thinking-behind-the-numbers-understanding-public-opinion-on-immigration-in-britain/>

...Աշխարհի մի կետից մյուսը տեղափոխվող յուրաքանչյուր անձի, ինչպես նաև այդ տեղաշարժվող անձին՝ նրա ճանապարհորդության սկզբում, ընթացքում և ժամանակն կետում հանդիպող յուրաքանչյուր անձի համար այն ունի ինչ-որ տարբերվող իմաստ»:
(ԿՈՄՊԱՍ մոտեցում⁵⁵)

Վերոնշյալն ինչ-որ չափով փորձում է բացատրել «միգրացիան» լուսաբանելու ամենահիմնարար բարդություններից մեկը՝ այն առանձին երևույթ չէ, այլ դրանց բազմություն է:

Այս գլխում ուրվագծվել են որոշ առանցքային խնդիրներ, որոնք հաճախ անդրադառնում են միգրացիան լուսաբանող լրագրողները, սակայն խոսել ենք «միգրացիա» վերնագրի տակ ընկնող թեմաների, հասկացությունների և գաղափարների միայն շատ փոքր բաժնի մասին: Լրագրողի համար հստակության նման բացակայությունը կարող է ահաբեկող թվալ, սակայն խնդրի բազմակողմանիության հանդեպ հետաքրքրության դեպքում միգրացիան կարող է ապահովել մի ամբողջ կյանքի լուսաբանելու չափազանց գրավիչ նյութ:

Նյութի «նիշտ» շարադրումը, որին անդրադառնում է [հաջորդ գլուխը](#), և ձեզ ներկայացված տվյալների ու ապացույցների ընկալումը (տե՛ս՝ Գլուխ 9. [Տվյալներ և վերլուծություն](#)) կօգնի ձեզ աշխատել այդ թեմաների վրա և կերտել լավ լրագրություն:

⁵⁵ https://www.compas.ox.ac.uk/wp-content/uploads/COMPAS-Framing-Report_brochure.pdf

ԳԼՈՒԽ 6. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (ՃԻՇՏ) ՇԱՐԱԴՐՈՒՄ

Օգտագործեք այս գլուխը, որպեսզի՝

- Այլ լրագրողներից լսեք միգրացիայի հարցերի լուսաբանմանը նրանց մոտեցումների մասին:
- Ներշնչում և խորհուրդներ ստանաք լուսաբանման ընթացքի մասին՝ պատմության նույնականացումից մինչև հրապարակում և ամեն ինչ դրանց միջև:
- Հասկանաք՝ ինչպես կարելի է բարելավել ձեր լուսաբանումը, եթե ամբողջ ընթացքում գործնականում կիրառեք էթիկական սկզբունքները:
- Ուղղորդի ձեզ մեծագույն մարտահրավերների և հնարավորությունների միջով՝
 - [Բազմազանություն](#) – Ինչպե՞ս ենք ներկայացնում փոքրամասնություններին կամ մեզանից տարբերվող մարդկանց:
 - [Գեներ](#) – Ինչպե՞ս լուծել այն խնդիրը, որ միգրացիայի այս կողմը շատ հաճախ մնում է անտեսված:
 - [Աղբյուրների ձևավորում և պաշտպանություն](#) – Որոշ գաղափարներ՝ միգրացիայի լուսաբանման տարբեր մոտեցումների մասին:
 - [Միսալ տեղեկատվություն և ասեղության խոսք](#) – Ինչպե՞ս կարող ենք նույնականացնել և հաղթահարել այս սպառնալիքները:
 - [Միգրացիա և ԶՈՎԻԴ-19](#) – Ի՞նչ նշանակություն ունի համախարակր միգրացիայի լուսաբանման համար:
 - [Լուսանկարում և պատկերներ](#) – Լավագույն գործելակերպի մասին խորհուրդներ լրագրողներին և նյութումներին:

Ներածություն

Ինչպես ներկայացվեց [Էթիկական հիմքերին](#) նվիրված 1-ին գլխում՝ **միգրացիայի լուսաբանումը կատարելագործվում է, երբ օգտագործվում են լրագրության արժեքները, որոնք ներշնչում են ձեզ՝ ամբողջ ընթացքում տալ ճիշտ հարցեր:** Մեր նպատակը միշտ պետք է լինի՝ ստեղծել լրագրություն, որն ավելի լավ է ծառայում մեր լսարանին և հարգում է նրանց մարդկայությունը, ում մասին հաղորդում են:

Այս գլուխը բացահայտում է՝ ինչպես լրագրողները կարող են ապահովել միգրացիայի (ձևեր, գործընթացներ և հետևանքներ) և դրանում ընդգրկված մարդկանց մասին նրբանկատ լուսաբանում: Գլխում անդրադարձ է կատարվում այն հարցին, թե ինչպես են բազմազանության, գենդերային և սիսալ տեղեկատվության խնդիրները գիտակցաբար կամ անգիտակցաբար ձևավորում լրատվամիջոցների բովանդակությունը: Այն նաև ներկայացնում է՝ ինչպես են այլ լրագրողներ մոտենում միգրացիայի լուսաբանմանը, նաև տարածաշրջանային և միջազգային մեդիայից վերցված օրինակների վերլուծության

միջոցով խորհուրդներ է տալիս, թե ինչպես կարելի է հաղթահարել էթիկական մարտահրավերները լուսաբանման ամբողջ ընթացքում:

Այս գլխում բաժնացված հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝

- Գլուխ 7. [Հարցազրույցներ](#) – կոնկրետ խորհուրդներ հարցազրույցի մեթոդների մասին:
- Գլուխ 8. [Ինչպես գտնել և օգտագործել փորձագետներին](#):
- Գլուխ 9. [Տվյալներ և վերլուծություն](#):

[Էթիկական լրագրության գանգի](#)⁵⁶ համաձայն՝ **Էթիկական լուսաբանման հիմնական սկզբունքներն են՝**

- 1. Ճշգրիտ և փաստահեն լուսաբանում:** Խուսափեք չարամիտ ստերից, կեղծ նորություններից և չստուգված տեղեկություններից:
- 2. Անկախություն:** Գործեք սեփական խղճի համաձայն: Մի՛ տարածեք միզրանտների դեմ ուղղված քարոզչություն կամ մի՛ եղեք քաղաքական և այլ խմբային շահերի խոսափող:
- 3. Անկողմնակալություն:** Մի՛ մոռացեք ներկայացնել պատմության բոլոր կողմերը: Մասնավորապես, ձայն տվեք թրաֆիքինգի տրավմայի զոհերին և վերասպրածներին, ինչպես նաև արտացոլեք հյուրընկալող երկրներում բնակվող մարդկանց օրինական մտահոգությունները:
- 4. Մարդասիրություն:** Լրագրությունը չպետք է վնաս հասցնի: Ձեր լուսաբանման մեջ ցույց տվեք կարեկցանք: Մատնանշեք լուծումներ և խուսափեք գոհականացումից:
- 5. Հաշվետվողականություն և թափանցիկություն:** Պատասխանատու եղեք ձեր աշխատանքի համար: Ուղղեք սխալները և միշտ հայտնեք՝ ով էք դուք, ինչպես նաև ձեր մեթոդներում բաց եղեք:

Դիտեք E-IJ-ի հիմնադիր Ադրան Ուայթի խոսքը լրագրության հինգ սկզբունքների մասին՝

<https://ethicaljournalismnetwork.org/who-we-are/5-principles-of-journalism>

⁵⁶ <https://ethicaljournalismnetwork.org/who-we-are/5-principles-of-journalism>

Պատմության (ճիշտ) շարադրում՝ աղբյուրներ և տեսակետերի բազմազանություն

Թեև չկա յուրաքանչյուր մասում յուրաքանչյուր կողմը ներկայացնելու պարտավորություն՝ պատմությունները պետք է լինեն հավասարակշռված և ավերացնեն կոնտեքստ: Օբյեկտիվությունը միշտ չէ, որ հնարավոր է և միշտ չէ, որ ցանկալի է (օրինակ՝ դաժանության և աննարդկային վերաբերմունքի դեպքում), սակայն անկողմնակալ լուսարանումն ամրապնդում է հավատն ու վստահությունը (ԷԼՑ):⁵⁷

Միգրացիայի լուսարանման ուսումնասիրությունների և վերլուծությունների մեծ մասն ի հայտ են բերում մի ընդհանրություն՝ բուն միգրանտների ձայները բացակայում են կամ զգալի կերպով թերի են ներկայացված: Դիտարկենք, օրինակ, Լրագրության եվրոպական օբսերվատորիայի կատարած «[Միգրացիայի լուսարանումը Եվրոպայի լրատվամիջոցներում](#)» (2020թ.)⁵⁸ ուսումնասիրությունը, որտեղ վերլուծվում է 2015-ից 2018 թվականների լուսարանումը 17 երկրներում, այդ թվում՝ Ուկրաինայում: Ուսումնասիրության մեջ դիտարկված 2417 նմուշներից՝

- **51%-ի** դեպքում գլխավոր գործող անձինք քաղաքական գործիչներ են, սովորաբար՝ կառավարության անդամներ, և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ.
- **27%-ում**՝ միգրանտներն ինչ-որ ձևով ներկայացված են: Դրանց երկու երրորդի դեպքում միգրանտները ներկայացված են՝ որպես ձայնագուրկ, անանուն խումբ, որի մասին խոսվում է՝ որպես մարդկանց միատարր զանգված և/կամ ձայնից զրկված խումբ.
- **8%-ը** ներկայացնում են միգրանտներին և փախստականներին՝ որպես անհատներ կամ ընտանիքներ:

Այս հոդվածներում պատկերված միգրանտներից կամ փախստականներից չափազանց քիչ թվով փաստացի մեջբերումներ կան: Լրատվամիջոցները մեջբերում է 411 միգրանտ խոսնակների՝ 4267 ոչ միգրանտ խոսնակի համեմատ: Թեև միտում կա անհատականացնել օգնողներին, սակայն նույնը չի կարելի ասել օգնություն ստացողների մասին:

Ծրջանակներ. Հարցազրույցի կամ նկարագրելու համար հերոսների մեր ընտրությունը հսկայական դեր է խաղում այն հարցում, թե ինչպես ենք լուսարանում միգրացիան: Երևակայեք՝ որքան կտարբերվի ձեր պատմությունը, եթե դուք միայն զրուցեք ոստիկանության ծառայողների, անվտանգության հարցերի վերլուծաբանների կամ սահմանապահների հետ, բայց երբեք չխոսեք սոցիալական աշխատողների, հումանիտար կազմակերպությունների աշխատակիցների կամ մարդու իրավունքների մասնագետների հետ: Միգրացիոն պատմություններում ներկայացվող տարբեր «շահակիրներ» ունեն տարբեր կարծիքներ և, հավանաբար, կպատկերեն միգրացիան յուրահատուկ լույսի ներքո:

⁵⁷ <https://ethicaljournalismnetwork.org/who-we-are/5-principles-of-journalism>

⁵⁸ <https://en.ejo.ch/ethics-quality/how-do-the-european-media-cover-migration>

Երբեմն, մեր տեսակը, որպես լրագրող, կամ մեր մասնագիտացումը (տե՛ս՝ [Գլուխ 2](#)) կարող են բացատրել այս միտումների մի մասը կամ մեր ընտրությունները, սակայն չեն արդարացնում կարծիքների մի մասի հաշվին մյուսների ներկայացման կտրուկ անհավասարակշռությունը: Միգրանտների հետ զրուցելն ավելի բարդ է, պահանջում է ավելի մեծ ջանքեր, քան հանրության հետ կապերի բաժիններ և լրատվամիջոցների հետ անմիջական կապ ունեցող պաշտոնական աղբյուրներից մեջբերումներ կատարելը, սակայն այդ զրույցը կարող է նաև տալ կարևոր ընկալումներ, որոնք պաշտոնական աղբյուրները կարող են անտեսել:

(միգրանտ համայնքներում աղբյուրներ ձևավորելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ [Աղբյուրների ձևավորում և պաշտպանություն](#) բաժնում)

Առանցքային հարցեր և նկատառումներ՝

Ստուգել էք ձեր սեփական նախնական կարծիքները և նախապաշարումները

Սեփական համոզումներից կամ փորձառությունից ելնելով՝ դուք կարող եք լիովին վստահել միգրացիան լուսաբանելու ինչ-որ կոնկրետ մոտեցման, բայց (եթե դա այդպես է) որքանով է ձեր լուսաբանումն անաչառ: Միշտ փորձենք գտնել պատճառներ, որոնք ոչ թե ապացուցում են ձեր իրավացիությունը, այլ վկայում են ձեր սխալ լինելու մասին: Սա նույնքան կարևոր է «դրական», այնքան էլ «բացասական» ենթադրություններ անող մարդկանց դեպքում: Սեփական փորձառություններից կամ արժեքներից ելնելով՝ նախնական հաստատուն տեսակետ ունենալն այն մասին, թե ում հետ պետք է զրուցել միգրացիային առնչվող պատմությունների վերաբերյալ, կարող է հանգեցնել արժեքավոր աղբյուրների և, հետևաբար, ձեր պատմություններից կարևոր տեղեկությունների բացառմանը: Միշտ քննական մոտեցում ցուցաբերեք այն հարցին, թե ինչպես կարող են ձեր նախնական կարծիքները կամ նախապաշարումներն ազդել ձեր աշխատանքում ընդգրկված դերակատարների բազմազանության վրա:

Ծուղակներ և տարածված սխալներ

Հետևել ընդհանուր հոսքին՝

- Լրագրությունը հիմնվում է ինքն իր վրա. լրագրողները կրում են իրենց գործընկերների աշխատանքի ազդեցությունը և հաճախ հետամուտ են լինում ուրիշների սկսած պատմություններին ու զարգացնում դրանք: Սա կարող է լինել ավելի «խորը փորելու» և նոր տեսակետեր բացահայտելու լավ միջոց, բայց նաև ունի ազգային պատմությունները վերահաստատելու ռիսկը, որոնք, այդ դեպքում, սկսում են դիտել՝ ոչ թե որպես դրանք ընկալելու տարբերակներից մեկը, այլ՝ որպես «բացարձակ իրողություն»:
- Արագ աշխատելու, ժամկետներում հասցնելու և ձեր խմբագրի պահանջները կատարելու անհրաժեշտությունը կարող է ստիպել ձեզ՝ ընտրել տարբերակներ՝ այս «բացարձակ իրողության» ենթադրյալ ընկալումից ելնելով:

- Ձեր աշխատանքը միշտ կշահի, եթե կարողանաք բավականաչափ երկար դադար առնել և փորձել ձեր թեման հասկանալ տարբեր կողմերից, ինչպես նաև ցանկություն ունենաք քաղաքավարի հարցականի տակ դնել խմբագրի այն տարբերակները, որոնք, ձեր կարծիքով, սխալ են կամ պարզունակ:

Պատահական ինքնահղում`

- Նյուզբուլմերը, սովորաբար, լիքն են մարդկանցով, ովքեր ուրախ կլինեն տեսնել ձեր աշխատանքը և կարծիք հայտնել դրա մասին, սակայն որքանով են այդ մարդիկ ձեզ նման: Արդյոք նրանք ա՛յլ տարիքի են, սեռի, ազգության, սոցիալական դասակարգի, հարստության կամ սեռական կողմնորոշման: Արդյոք նրանց մեջ կա՞ն միգրանտներ, փախստականներ կամ ՆՏ անձինք:
- Ծավալուն գիտական վերլուծությունները վկայում են այն մասին, որ բազմազանության պակասը նյուզբուլմերում հանգեցնում է միգրացիայի մասին լուսաբանման որոշակի ձևերի: Ձեզ կարող է չհաջողվել վերածել սեփական նյուզբուլմը բազմամշակութային «ձուլման կետի», սակայն դուք միանշանակ կարող եք նայել դրանից դուրս և, մասնավորապես, ապահովել միգրանտների և փոքրամասնությունների ձայնի լսելիությունը ձեր պատրաստած պատմություններում:

Միմվոլիկ ներկայացվածություն`

- Միմվոլիկ ներկայացվածությունը կարող է մարտահրավեր լինել լրատվական կազմակերպություններում, երբ աշխատանքի ընդունման միջոցով նյուզբուլմում ապահովում են փոքրամասնությունների «սիմվոլիկ ներկայացվածություն», սակայն չեն տալիս նրանց մասնագիտական կարողությունները դրսևորելու ողջամիտ հնարավորություններ:
- Մենք պետք է զգույշ լինենք, որ փոքրամասնությունների ներկայացվածությունը չվերածվի ազատական կամ ներառական թեքվածության ցուցադրության` միաժամանակ, ըստ էության, իջեցնելով անձին փոքրամասնական կարգավիճակ ունենալու մակարդակի:

Այս մասին հետաքրքիր խորհուրդ է տրվում Մեդիա բազմազանության ինստիտուտի 2004 թվականի «[Բազմազանության լուսաբանման ձեռնարկում](#)»` հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ պատրաստվել է Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի լրագրողների հետ կազմակերպված աշխատաժողովների շարքից հետո`

«Հինարար կերպով իրենցից տարբերվող մարդկանց մասին գրելը լրագրողների առջև կանգնած ամենակարևոր խնդիրներից մեկն է: Անկախ այն հանգամանքից, թե աղբյուրը մեկ այլ ազգության է, ունի այլ կրոնական հավատք, սեռական կողմնորոշում, սոցիալական դասակարգ կամ տնտեսական կարգավիճակ` լրագրողի դերը հաճախ կայանում է այդ անձի տեսակետը, գաղափարները կամ աշխարհայացքը ճշգրիտ փոխանցելու մեջ` նույնիսկ, երբ տարբերությունները հսկայական են: Հարավային Կովկասի պես տարածաշրջաններում, որտեղ սոցիալական և ազգային բաժանումները քայքայել են բազմաթիվ համայնքների կառուցվածքը, այս նպատակի իրագործումը կարող է առանձնակի բարդություններ առաջացնել: Մակայն դա անհնար չէ: Եթե լրագրողները ցանկանում են աջակցել իրենց հասարակությունների

առողջացմանը և հաշտեցմանը, ապա նրանցից պահանջվում է անել ամեն ինչ վախի և անվատահույության փոխարեն տարբերության փոխընթացումն ու դրա հանդես պահող ժողովրդականությունը խրախուսելու համար».⁵⁹

Ձեռնարկն արժե կարդալ ամբողջությամբ, իսկ ստորև ներկայացված են դրանից մի քանի արժեքավոր խորհուրդներ, որոնք կօգնեն մեզ հասկանալ մեր (կամ մեր համայնքի) նախապաշարումներն ու կանխակալությունը՝

- **Սուբյեկտներ, ոչ թե օբյեկտներ.** երբ պատմություն եք հեղինակում որևէ էթնիկ, սոցիալական, կրոնական կամ այլ փոքրամասնության մասին, հարցազրույց վերցրեք այդ խմբի ներկայացուցիչներից և ընդգրկեք նրանց տեսակետները: Պատմությունը խոսո՞ւմ է նրանց ունեցած աշխատանքների կամ որակավորումների մասին: Նրանց խոսքերն ուղղակի մեջբերվո՞ւմ են: Կարևոր է գիտակցել, որ որևէ խմբի ներկայացուցիչներ բազմակողմանի անհատներ են, որոնք ունեն սեփական կարծիքներ և ընկալումներ, այլ ոչ թե ուսումնասիրման միաչափ առարկաներ:
- **Ուշադրություն դարձրեք ընդհանրացումներին.** արդյոք համայնքի որոշ անդամների գործողությունները կամ վարքային դրսևորումները ներկայացուցչական են: Խուսափեք բարդ սոցիալական հարցերը սև ու սպիտակ ներկայացնելուց: Մի վերաբերվեք միզրանտներին և փոքրամասնություններին որպես միատարր խումբ, հատկապես՝ վարքագծի կամ արժեքների տեսանկյունից: Կյանքը երբեք այդքան պարզունակ չէ:
- **Թերահավատ եղեք.** արդյոք որպես խոսնակ հանդես եկող անձինք իրականում ներկայացուցչական են: Օրինակ, եթե նրանք արական սեռի են, կարելի՞ է վստահ լինել, որ նրանք հասկանում են կանանց և խոսում նաև նրանց անունից, կամ հակառակը: (տե՛ս՝ [Գենդերային հարցեր և միզրացիա](#) թեմային նվիրված հաջորդ բաժինը):
- **Կասկածի տակ դրեք կարծրատիպերը.** կանխակալ կարծիքներն ու ընկալումները հարցականի տակ դնելը մեր աշխատանքի մի մասն է, հատկապես, երբ բազմաթիվ համոզումներ ավելի շուտ հիմնված են կարծրատիպերի, քան փաստերի վրա:
- **Լեզվի գործածությունը.** եթե մենք անփույթ ենք վարվում մեր գործածած բառերի հետ, մեր մտադրություններից անկախ՝ կարող ենք (անդառնալիորեն) ավելի արել էթնիկական և սոցիալական հակասությունները: «Ինչպես բոլորը գիտեն» կամ «ակնհայտ է, որ» կարգի արտահայտությունները կարող են հաճախ լինել լրագրողի սեփական կամ իր սոցիալական խմբի ներկայացուցիչների նախապաշարումները ներկայացնելու միջոց:
- **Գտեք նոր հարթություններ.** մարդկանց իրական կյանքը հասկանալու համար ժամանակ անցկացրեք նրանց հետ: Անհատների կյանքի բազմաթիվ կողմերը հասկանալը կօգնի ձեզ տեսնել լուսաբանման նոր հարթություններ, որոնք կարող են խորություն և նրբություններ հաղորդել ներկայացվող պատմություններին:

Օրինակի վերլուծություն՝ «Հեռացումի օրագրեր»

Օգտագործեք այս օրինակի վերլուծությունը, որ ցուցադրեք՝

- *Ինչպես նյութումների բազմազանությունը կարող է հանգեցնել պատմության ավելի լավ շարադրման:*

⁵⁹ [http://www.media-diversity.org/additional-files/documents/A%20Guides/MDI%20Reporting%20Diversity%20manual/Reporting%20Diversity%20Manual%20-%20Caucasus%20\[EN\].pdf](http://www.media-diversity.org/additional-files/documents/A%20Guides/MDI%20Reporting%20Diversity%20manual/Reporting%20Diversity%20Manual%20-%20Caucasus%20[EN].pdf)

• *Ինչպես օգտագործել անձնական փորձառությունները և մտերմությունը: «Հեռացումի օրագրեր», հեղինակ Արեն Մելիքյան «EVN Report»-ի համար, 2020թ. սայրիկի 6՝*

- *Անգլերեն՝ <https-www-evnreport-com-raw-unfiltered-diaries-of-escape-1>*
- *Հայերեն՝ <https://www.evnreport.com/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6/>*

Վերոնշյալ հոդվածում հեղինակն արտասովոր մոտեցում է ցուցաբերում և օգտագործում Հայաստանից հեռացած մարդկանց օրագրերը բարդ անձնական շարժառիթները և հաճախ հակասական զգացմունքները բացահայտելու համար: Հեղինակը որոշում է ինքն իրեն ընդգրկել պատմության մեջ՝ մեջբերումներ կատարելով սեփական գրածներից և իր մայրիկի օրագրից:

Գիտարկման համար հարցեր՝

- Ի՞նչ հնարավորություններ ունեք լրագրության մեջ ձեր իսկ անձնական փորձառությունները մի անգամ լույս տեսնող աշխատանքում օգտագործելու համար, որը կարող է լինել համարի գլխավոր հոդված կամ փոքրաստ և պատմության ավելի մտերմիկ ներկայացման հնարավորություն տալ:
- Ինչպե՞ս կարող եք ձեր լուսաբանած հերոսներին հաղորդել այն զգացումը, որ իրենք բազմակողմանի, բարդ անհատներ են՝ ինչպես բոլորս:

Գիտեք հայաստանցի լրագրող Արեն Մելիքյանի խոսքն այս պատմությունը պատրաստելու մասին, և ինչպես է այն փաստոր, որ ինքն էլ ունի միգրանտի նախապատմություն, հեշտացրել իր համար նյութի պատրաստումը:

ԵԾՐԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Երաշխավորելով, որ նյութումը մոնոմշակությամբ չէ, լավագույնս ապահովվում է մեդիայի լուսաբանման մեջ ձայների բազմազանությունը և ճիշտ դատողություններն այն մասին, թե ինչպես ներկայացնել այդ ձայները:

Որպես նյութում՝

- Հնարավորության դեպքում փորձեք ձեր խմբում ընդգրկել միգրացիոն խնդրներով զբաղվելու փորձ ունեցող անձանց, կամ միգրանտ կամ միգրացիոն անցյալ ունեցող լրագրողների:
- Գտեք ձեր աշխատանքում միգրանտ և փոքրամասնական համայնքներն ընդգրկելու ձևեր՝ նաև խրախուսելով նրանց օգուվել հետադարձ կապի և հաշվետվողականության այլ մեխանիզմներից:
- Մտածեք՝ ինչպես կարող է ձեր լրագրությունը, որը ծառայում է փոքրամասնությունների շահերին (և ներառում նրանց), ընդլայնել ձեր լսարանը և,

հետևաբար, ավելացնել եկամուտները: Այլ խոսքով, կարո՞ղ են [անցումը թվային տեխնոլոգիաներին և ավելի մեծ բազմազանությունը լինել նույն մանրադրամի երկու կողմերը](#):⁶⁰

Որպես անհատ՝ դուք կարող եք պատասխանատվություն չկրել ձեր կազմակերպության կադրային համալրման որոշումների համար, բայց կարող եք անհատական քայլեր ձեռնարկել ավելի բազմազան ձայներ հնչեցնելու համար: Կարելի է անել հետևյալը՝

- Ոչ ֆորմալ հարցազրույցներ՝ ձեր լուսաբանած միզրանտ համայնքների անդամների հետ:
- Խնդրել նման համայնքի որևէ ներկայացուցչի՝ գննել ձեր պատրաստելիք նյութը կամ ձեզ հետ համատեղ աշխատել դրա վրա:

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ

- *Բազմազանությունը և մեղիս խնդիրներն ավելի խորությամբ բացահայտելու համար տե՛ս՝ 11-րդ գլխի՝ [Գործիքներ և ռեսուրսներ](#) [Բազմազանություն և փորձամասնություններ](#) բաժինը:*
- *Բազմազանության և միգրացիայի լուսաբանման ընդհանուր բարելավման գործում նյութումների դերը բացահայտելու համար տե՛ս՝ Գլուխ 10. [Միգրացիայի լուսաբանման բարելավում](#):*

Պատմության (ճիշտ) շարադրում՝ գենդերային հարցեր և միգրացիա

Ցանկացած պատմություն ունի գենդերային կողմ: Սակայն միգրացիայի, ինչպես բազմաթիվ այլ թեմաների դեպքում, այն շատ հաճախ անտեսված է մնում: Տղամարդ և կին միգրանտների նկատմամբ վերաբերմունքի տարբերությունները կարող են հանգեցնել բժշկական անհավասար սպասարկման, ապաստանի կամ քաղաքացիության տարբերակված հասանելիության կամ ինտեգրման ազգային քաղաքականությունների պահանջների բավարարման հարցում տարբերությունների դրսևորման, որոնք, սակայն, հաճախ մնում են թերի լուսաբանված:⁶¹

Օրինակ, կանանց միգրացիայի մասին լուսաբանումը հաճախ ավելի շատ կենտրոնանում է թրաֆիքինգի գոհերի կամ տնային աշխատողների շուրջ, իսկ տղամարդկանց մասին լուսաբանումը հիմնականում պատկերում է նրանց որպես «կեղծ» ապաստան հայցողներ կամ, հիմնականում, աշխատանքային միգրանտներ:

Չլավող ձայներ

Լրագրության եվրոպական օբսերվատորիայի կատարած [«Միգրացիայի լուսաբանումը Եվրոպայի լրատվամիջոցներում»](#) (2020թ.) և մի շարք այլ ուսումնասիրություններ վկայում են այն մասին, որ ՉԼՄ-ներում միգրացիայի լուսաբանման մեջ չափահաս կանանց հաշվին գերներկայացված են տղամարդ (ինչպես նաև անչափահաս) միգրանտներն ու փախստականները:

⁶⁰ <https://www.media-diversity.org/digital-transformation-and-media-diversity-two-sides-of-the-same-coin/>

⁶¹ <https://www.tandfonline.com/doi/full/10.1080/14680777.2018.1532142>

Նմանատիպ միտումները տեղ չեն թողնում ավելի հավասարակշիռ լուսաբանման համար և կարող են ավելի խորացնել վնասակար և մոլորեցնող կարծրատիպերը: Որպես անհատ լրագրողներ՝ կարող ենք մեր լուսաբանման մեջ պայքարել այս միտման դեմ, սակայն կարևոր է նաև, որ, հնարավորության դեպքում, բարձրացնենք այս մտահոգությունները մեր գործընկերների առջև և այլ հարթակներում:

Փորձագետների ձայներ

Կանայք թերներկայացված են նաև լրագրության մեջ և այն փորձագետների շարքում, ում լրագրողները դիմում են մեկնաբանության համար (տե՛ս՝ Գլուխ 8. [Ինչպես գտնել և օգտագործել փորձագետներին](#)): Օրինակ՝ նորություններում կանանց թերներկայացված լինելու մասին հատուկ գեկույցը – [Կանանց տեսակետների բացակայությունը՝ ԶՈՎԻԴ-19-ին նվիրված նորություններում](#) – նշում է, որ կին փորձագետների ձայները ԶՈՎԻԴ-19-ի պատմություններում «ահագնացող չափերի մարգինալացված» են՝ լինելով 5 փորձագետներից 1-ը: Այս մտահոգիչ միտումները կիրառելի են նաև միգրացիայի լուսաբանման դեպքում:

Գենդերային դերերը նյութումում

Բացահայտ կամ թաքնված գենդերային նախապաշարումները կարող են հանգեցնել մի իրավիճակի, երբ տղամարդ լրագրողները վերցնում են «մաշոյական» խնդիրները՝ ոստիկանության աշխատանքը, անվտանգությունը և ահաբեկչությունը, իսկ կանանց մնում են «խնամքի» խնդիրները՝ սոցիալական հարցերը, ինտեգրումը և ընտանեկան միգրացիան (տե՛ս՝ Գլուխ 2. [Ի՞նչ լրագրող եք դուք](#)): Տեղին է բարձրացնել այն հարցը, թե արդյոք դերերը բաշխվե՞լ են՝ ելնելով հմտություններից և փորձից կամ կանխակալ ենթադրություններից:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Գենդերագայուն միգրացիան չի նշանակում կանանց ավելի լավ լուսաբանում, այլ պահանջում է ընդունել, որ՝

- Տղամարդիկ և կանայք ենթարկվում են տարբեր ազդեցությունների:
- Որոշ ենթատեքստերում կանայք կամ տղամարդիկ կարող են դուրս թողնվել՝ որպես արժանահավատ տեղեկատվության աղբյուրներ կամ փորձագետներ:
- Կանանց և տղամարդկանց վարքային դրսևորումների և շարժառիթների մասին ենթադրությունները կարող են վերարտադրել կարծրատիպեր:

Նման միտումները պետք է հարցականի տակ դնել, քննադատել և, երբ անհրաժեշտ է, հասցեագրել:

- Նյութումում բազմազանությունն ամրապնդելու ցուցումների համար տե՛ս՝ Գլուխ 10. [Միգրացիայի լուսաբանման բարելավում](#):

- Փորձագիտական աղբյուրներից օգտվելու ցուցումների համար տե՛ս՝ [Գլուխ 8. Ինչպես գտնել և օգտագործել փորձագետներին](#)
- Գենդերային հարցերի և լրատվամիջոցների վերաբերյալ լրացուցիչ ռեսուրսներ կարելի է գտնել [Գործիքներ և ռեսուրսներ](#) վերնագրով 11-րդ գլխի [Գենդերային հարցեր և մեդիա](#) բաժնում:

Պատմության (ճիշտ) շարադրում՝ աղբյուրների ձևավորում և պաշտպանություն

Ցանկացած լրագրողի աշխատանքն այնքանով է լավը, որքանով իր տեղեկությունների աղբյուրները: Միգրացիայի մասին որևէ պատմություն պատշաճ պատմելու համար ձեզնից պահանջվում է՝

- Համապատասխան համայնքներում կապեր հաստատել աղբյուրների հետ: Գտնել մարդկանց, որոնք պատրաստ են ձեզ թարմ տեղեկություններ փոխանցել համայնքի մտահոգությունների մասին:
- Լավ կապեր ձևավորել հասարակական կազմակերպությունների հետ, որոնք աշխատում են այդ համայնքներում կամ ներկայացնում դրանք: Այս ՀԿ-ները կարող են նոր տեսակետների և չպատմված պատմությունների համար լինել գաղափարների լավ աղբյուր:
- Երբ լուսաբանում եք սիյուռք կամ խմբեր, որոնք ձեզ ֆիզիկապես հասանելի չեն, փորձեք կապ հաստատելու համար օգտվել գրուցասենյակներից և առցանց այլ ֆորումներից: Ինչպես ցույց է տալիս օրինակի վերլուծությունը ստորև, ձեր և այդ խմբերի միջև բավարար վստահության ձևավորումը պահանջում է ժամանակ: Համբերատար եղեք և համոզվեք, որ բավարար ժամանակ եք տվել ինքներդ ձեզ:
- Հատուկ ուշադրություն դարձրեք և լրացուցիչ միջոցներ ձեռնարկեք առցանց միջավայրում աղբյուրների պաշտպանության համար, նաև հատուկ զգուշություն ցուցաբերեք գաղտնիության հարցերին, երբ օգտագործում եք սոցիալական ցանցերում գեներացված բովանդակություն:
- Ձեզ անհրաժեշտ է աշխատել բոլոր մակարդակների պաշտոնյաների հետ: Հարաբերությունների ձևավորումը, որոնց շրջանակում նրանք պատրաստ կլինեն կիսվել հանրային տիրություն անհասանելի տեղեկատվությամբ, պահանջում է ժամանակ, սակայն կարող է արդյունքում տալ լավագույն պատմությունները:
- Մի՛ փնտրեք «կատարյալ միգրանտի», ով մարմնավորում է ավելի լայն միտում կամ պատմություն, որը ցանկանում եք պատմել: Փոխարենը՝ լսե՛ք: Յուրաքանչյուր անձի, ում հետ զրուցում եք, մոտեցեք բաց մտքով և տեսե՛ք՝ ուր է հասցնում ձեզ իրենց պատմությունը, այլ ոչ թե մտածե՛ք՝ ինչ կարող են նրանք ավելացնել ձեր պատմությանը:

Այս խորհուրդները, մեծ իմաստով, բխում են հետևյալ աղբյուրներից՝

- [Աղբյուրների հետ աշխատանքի հիմնական էթիկական կանոնները](#), ԷԼՑ (2017թ.)⁶²
- [Ինչ պետք է իմանա յուրաքանչյուր լրագրող անանուն աղբյուրների մասին](#), ԼՄՑ (2018թ.)⁶³
- [Ստուգաճշտման ձեռնարկ](#), Լրագրության եվրոպական կենտրոն (2014թ.)⁶⁴

Լրացուցիչ տեղեկությունների համար օգտվեք այս ռեսուրսներից:

Աղբյուրների հետ աշխատանքի թափանցիկություն՝

- Բացատրեք ձեր լրագրության ընթացքը և պատմությունը լուսաբանելու պատճառը: Թափանցիկ ներկայացրեք ձեր մտադրությունները:
- Ձեր աղբյուրի հետ քննարկեք՝ ինչպես եք նույնականացնելու կամ երախտագիտություն հայտնելու նրան:
- Մի՛ տվեք խոստումներ, որոնք չեք կարող կատարել, այդ թվում՝ մի խոստացեք, որ ձեր լրագրությունը կունենա հատուկ ազդեցություն կամ հետևանք:

Պաշտպանություն՝

- Հոգ տարեք ձեր աղբյուրի պաշտպանության մասին: Օրինակ, համոզվեք, որ նրանք գիտակցում են իրենց անձնական իրավիճակի և կյանքի վրա տրամադրած տեղեկատվությունը հրապարակելու հնարավոր ազդեցությունները:
- Աղբյուրը կարող է ասել, որ հուսահատությունից կամ իր անելանելի վիճակից ելնելով՝ ցանկանում է խոսել արձանագրությամբ: Նույնիսկ եթե ստանում եք նման հավաստիացումներ, անհրաժեշտ է կատարել սեփական դատողություններ (անհրաժեշտության դեպքում՝ խորհրդակցել փորձագետների հետ)՝ ելնելով իրենց և մտերիմների համար հնարավոր հետևանքներից:

Անանուն աղբյուրներ՝

Անանունությունն իրավունք է, որից պետք է օգտվեն միայն նրանք, ովքեր ունեն դրա կարիքը, օրինակ՝ ազդարարները,⁶⁵ երեխաները, ինչպես նաև խոցելի խմբերը՝ բռնության և տրավմայի գոհերը: Անձի իրական անունը և պատկերը գործածելը կարող է լինել հզոր միջոց, մինչդեռ կեղծ անուն օգտագործելը կամ անանուն թողնելը կարող է ապամարդկայնացնել մարդուն:

Սակայն այն իրավիճակներում, երբ անձը խոցելի է, նրանց ինքնության բացահայտումը կարող է վնաս հասցնել նրան կամ ուրիշերին: Ապաստանի դեպքերում, օրինակ, հողվածում հրապարակված մանրամասները կարող են ազդել նրանց ապաստանի հայցի վրա: Նույն տրամաբանությամբ՝ աշխատանքային միգրանտը, ով խոսում է աշխատանքային վատ պայմանների մասին, կարող է կորցնել իր աշխատանքը կամ արտաքսվել, եթե հայտնեք նրա ինքնությունը:

⁶² <https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/ethics-in-the-news/handling-sources>

⁶³ <https://ijnet.org/en/resource/what-every-journalist-should-know-about-anonymous-sources>

⁶⁴ <http://verificationhandbook.com/>

⁶⁵ <https://gijn.org/whistleblowing/>

Երբեք վտանգի մի՛ ենթարկեք մարդկանց կյանքերը: Լրագրողի պարտականությունն է՝ «մի՛ վնասիր» և «մարդասիրությունն դրսևորիր» սկզբունքներից ելնելով՝ չհայտնել անձի ինքնությունը, եթե դա հնարավոր վտանգի տակ է դնում այդ անձին: Եթե անձին անանուն պահելու որոշումն ակնհայտ չէ նախքան որոշում կայացնելը, հնարավորության դեպքում, խորհրդակցեք ներգաղթի գործերով փաստաբանի և/կամ ձեր կազմակերպության իրավաբանների, ինչպես նաև ձեր խմբագրի հետ:

Այս թեմայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել [Հիմնարար իրավունքների գործակալության էլ. մեդիայի գործիքակազմի](#) հետևյալ բաժիններում՝

- [«Ապաստանի վակուում՝ հասկանալ օրենքը»](#)
- [«Տեղեկատվության ազատություն և տվյալների պաշտպանություն»](#)
- [«Նորությունների պատմությունների ազդեցությունը»](#)

Գիտակցված համաձայնություն՝

- Վստա՞հ եք, որ աղբյուրները լիարժեք հասկանում են հարցազրույցի պայմանները և ի՞նչ են նշանակում լրագրողական «ժարգոնային» արտահայտությունները, օրինակ՝ «ոչ արձանագրության համար», «ոչ հրապարակային» կամ «առանց աղբյուրը նշելու»:
- Հնարավոր աղբյուրների համար կարող է հաճելի լինել, երբ իրենց դիմում են լրագրողները և, երբեմն, նրանք կարող են հարցազրույցի կամ իրենց անվան և պատկերի օգտագործման համաձայնություն տալ՝ առանց լիարժեք պատկերացնելու իրենց և ուրիշներին սպառնացող վտանգները: Կարևոր է, որ դուք օգնեք հնարավոր աղբյուրներին՝ նույնականացնել վտանգները (այդ թվում՝ վտանգները, որոնք առնչվում են միզբացիոն կարգավիճակին), որոնց առջև նրանք հնարավոր է կանգնեն ձեր նյութի մաս կազմելու հետևանքով:
- Դուք պետք է գնահատեք աղբյուրների խոցելիությունը և նրանց հաղորդած տեղեկությունների արժեքը:

Նախապայմաններ՝

Նախապես մտածեք՝ ինչ նախապայմանների եք պատրաստ համաձայնել հարցազրույց վերցնելու համար և ինչպես կարող եք արձագանքել: Նաև՝ արդյոք երաշխավորվա՞ծ է անանունությունը (տե՛ս՝ վերը) և ի՞նչ հանգամանքներում կառաջարկեիք կամ կհամաձայնեիք, որ աղբյուրը գրախոսի բովանդակությունը:

Բարձրաստիճան և ազդեցիկ գործիչների պահանջները կամ այն միզբանտների խնդրանքները, ում հետ ցանկանում եք զրուցել, կասկածի տակ են դնում ձեր լրագրության անկախությունը: Միզբացիայի լուսաբանման ենթատեստում խոցելի անձանցից, օրինակ՝ տրավմայի զոհերից կամ ապաստան հայցողներից հարցազրույց վերցնելը կարող է լինել այն հիմնական հանգամանքը, որը կարող է ստիպել ձեզ համաձայնել այս տարբերակին (տե՛ս՝ Գլուխ 7. [Հարցազրույցներ](#)): Միզուցե նաև ցանկություն ունենաք՝ որոշ աղբյուրների հնարավորություն ընձեռել կարծիք հայտնել այն մասին, թե ինչպես եք ներկայացրել հետազոտությունը կամ տվյալները (հատկապես, երբ դա ձեր մասնագիտացման ոլորտից դուրս է), սակայն այս դեպքում էլ մի՛ տվեք նրանց որևէ երաշխիք, որ կկատարեք որևէ փոփոխություն (տե՛ս՝ Գլուխ 8. [Ինչպես գտնել և օգտագործել փորձագետների](#)):

Ճառ մի՛ մտերմացեք ձեր աղբյուրների հետ. երբեմն լրագրողները թույլ են տալիս իրենց աղբյուրի հետ չափից ավելի մտերմանալու սխալ, հասկապես, եթե ապրումակցում են այն անձին, որից վերցնում են հարցազրույց: Վստահության փոխհարաբերությունների ձևավորումը կենսական նշանակություն ունի լավագույն պատմությունները ստանալու համար, սակայն չափից ավելի մտերմանալը կարող է կասկածի տակ դնել ձեր անկողմնակալությունը և ձեր աշխատանքի էթիկական հիմքերը: Պաշտոնական աղբյուրները ([կառավարությունները/ՀԿ-ները](#)) նույնպես ունեն սեփական օրակարգը և, մի կողմից, նրանց հետ հարաբերությունների զարգացումը կարող է լինել պատմությունների և գիտելիքի արժեքավոր աղբյուր, իսկ, մյուս կողմից, նրանց ասածներն առանց վերապահումների ընդունելը կհատի էթիկական սահմանագիծը և կասկածի տակ կդնի նյութումի անկախությունը:

Մի՛ շտապեք

Խոսելով Լրագրության և տրավմայի Դարթ կենտրոնում ([Dart Centre for Journalism and Trauma](#))՝ անկախ լրագրող Ջեյսըն Պարկինսոնն⁶⁶ ասել է հետևյալը. «*Ամենաբարդ և ժամանակատար մարտահրավերն այն է, որ մարդիկ սկսեն վստահել ձեզ և խոսել տեսախցիկի առջև: Այս գործը նման չէ մյուսներին, երբ դուք կարող եք պարզապես տեղադրել տեսախցիկը, սեղմել տեսագրության կոճակը և ստանալ ձեր կադրերը և ձայնը: Փախստականի մասին ցանկացած պատմության դեպքում ժամանակիս 80 տոկոսը ծախսվում է մարդկանց հետ խոսելու և իմ մի մասը նրանց հետ կիսելու վրա, որ նրանք հասականան, որ ես նրանց մեջ տեսնում եմ շատ ավելին, քան պարզապես կադրը»:*

Օրինակի վերլուծություն՝ «Սա կյանք չէ»՝ ադրբեջանցի միգրանտների հիասթափությունը Լեհաստանում

Գյուլյար Աբբասովան մուլտիմեդիա լրագրող է Ադրբեջանից, ում ուշադրության կենտրոնում են սոցիալական խնդիրները, այդ թվում՝ միգրացիան, և ով 2019 թվականին մասնակցել է ՄԶՄՄԿ-ի Միգրացիայի հարցերով մեդիայի ուսումնական ակադեմիայի դասընթացներին (ՄՈՍԵՆՏԱ ծրագրի շրջանակներում): 2020 թվականի մայիսի 26-ին Բաց կովկասյան մեդիան հրատարակեց Լեհաստանում ադրբեջանցի աշխատանքային միգրանտների աշխատանքային միջավայրի և իրավունքների մասին Գյուլնարայի եռամսյա հետաքննությունը: Կարող եք ընթերցել այն հետևյալ հղումով՝

<https://oc-media.org/features/this-is-no-life-the-disillusionment-of-azerbaijani-migrants-in-poland/>

Թեև նա հնարավորություն չունեի այցելել Լեհաստան, կարողացել էր գտնել շահագրգիռ ման ենթարկվող ադրբեջանցի աշխատանքային միգրանտների, շահել նրանց վստահությունը և, ի վերջո, հարցազրույց վերցնել նրանցից: Դիտեք նրա գրույցն իր փորձառության մասին հետևյալ տեսանյութում՝

https://www.youtube.com/watch?v=w-EMOFV-wk&list=PLXxzWkiXihue7dRH3_QceqpkBGJL-gQdI&index=4

⁶⁶ <https://dartcenter.org/resources/reporting-refugees-tips-covering-crisis>

Դիտարկման համար հարցեր՝

- Կարո՞ղ եք կիրառել այս կամ նմանատիպ մեթոդները ձեր երկրից մեկնած սփյուռքի մասին լուսաբանելու համար:
- Աղբյուրների մոտ վստահության ձևավորումը կարող է ավելի երկար ժամանակ պահանջել, երբ չունեք նրանց հետ անձնապես հանդիպելու հնարավորություն:
- Մինչև հարցեր տալը՝ համոզվեք, որ հնարավորության սահմաններում գիտեք այն անհատների իրավունքները, ում հետ զրուցում եք, ինչպես նաև կիրառելի ներպետական և միջազգային օրենքները:

Ռեսուրսներ

Ֆաթմ: [Սոցիալական մշտադիտարկման գործիքակազմ](https://fathmtoolkit.netlify.app/). մշակվել է, որպեսզի սովորեցնի լրագրողներին՝ «որպես լուսաբանման գործիքներ՝ ինչպես արդյունավետ, օգտավետ և էթիկապես ընդունելի կերպով օգտվել սոցիալական ցանցերից և առցանց հարթակներից»: Այն ընդգրկում է նաև մշտադիտարկման վահանակներ ստեղծելու ուղեցույց, համայնքներին ներգրավելու լավագույն փորձի օրինակներ, սոցիալական ցանցերից վերցված կոնտենտը ստուգելու խորհուրդներ և գործիքներ, սոցիալական մշտադիտարկման միջոցով ստացված պատմությունների արդյունավետ հրապարակման ռազմավարություններ:

Հասանելի է՝ <https://fathmtoolkit.netlify.app/>

Թոմսոն հիմնադրամ: [Նորությունների հավաքում սոցիալական ցանցերից](https://thomsonfoundation.edcastcloud.com/learn/social-media-news-gathering-self-paced). առցանց դասընթաց, որը ներկայացնում է ընդհանուր պատկերը, դասընթացավարին ու մեդիա փորձագետներին, բացատրում զանազան սոցիալական մեդիա հարթակների օգտագործումը՝ որպես նորություններ հավաքելու աղբյուրներ, ցուցադրում, թե ինչպես որոնման արդի միջոցները Գուգլում կարող են օգտագործվել նորություններ հավաքելու համար:

Հասանելի է՝ <https://thomsonfoundation.edcastcloud.com/learn/social-media-news-gathering-self-paced>

Պատմության (ճիշտ) շարադրում՝ միգրացիան և ՔՈՎԻԴ-19-ը

Քովիդ-19-ն ընդգծեց որակյալ էթիկական լրագրության կարիքը, որը հնարավորություն է տալիս մարդկանց կայացնել որոշումներ և անվտանգ պահել իրենց ու համայնքները:

Համավարակը բազմաթիվ հետևանքներ առաջացրեց միգրացիայի լուսաբանման համար:

Ճամփորդական ուղիներ և տնտեսություն

- Միջազգային ճամփորդության սահմանափակումները և խստացված սահմանային հսկողությունը կրճատում են միգրանտներին հասանելի երթուղիները, որոնց

շարքում են նոր նշանակետ տեղափոխվելու և ժամանակավոր կամ մշտական տունդարձի հնարավորությունները:

- Տնտեսություններին հասցված վնասը երկարատև ազդեցություն կունենա ձգող և վանող գործոնների վրա, որոնք խթանում են միգրացիան:

Խարանում և խտրականություն

Մեդիա բազմազանության ինստիտուտի համաձայն՝ ՔՈՎԻԴ-19 համավարակի ընթացքում.

- Միգրանտների և փոքրամասնությունների ներկայացուցիչներին խարանել են՝ որպես հիվանդության կրողներ և ատելության խոսքում սխալ տեղակատվության, այդ թվում՝ սոցիալական ցանցերում և լրատվական մեդիայում [հակասեմիտական դավադրության տեսությունների](#),⁶⁷ [խլամաֆորիայի](#),⁶⁸ [ասիական համայնքների](#) դեմ խտրականության,⁶⁹ [հակազնչուական ռասիզմի](#)⁷⁰ թիրախ.
- Ճգնաժամի ժամանակ խտրական լեզուն խրախուսվում է և հաճախ թաքնվում համախմբման և միասնականության կոչերի ետևում (տե՛ս՝ հաջորդ բաժինը՝ [Սխալ տեղեկատվություն և ատելության խոսք](#))

Որպես լրագրողներ մենք պետք է քննադատենք միգրանտների և այլ համայնքների թիրախումը, միջամտենք հանրային խոսույթին՝ քավության նոխազ փնտրելու և խտրական հռետորաբանության վտանգները բացահայտելու համար:

⁶⁷ <https://www.forbes.com/sites/rainerzitelmann/2020/03/23/the-corona-crisis-the-rothschilds-bill-gates-the-search-for-a-scapegoat-has-begun/?sh=29b8b1242283#3af194332283>

⁶⁸ <https://fullfact.org/online/coronavirus-mosque-shut-lockdown/>

⁶⁹ <https://www.media-diversity.org/the-aids-epidemic-stigmatized-black-communities-for-years-now-coronavirus-threatens-to-do-the-same-with-asian-communities/>

⁷⁰ <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7348427/>

7 POINTS FOR COVERING A PANDEMIC

In all our work, we should adhere to the core principles of ethical journalism



Ռեսուրսներ՝

- Էթիկական լրագրության ցանց – Յոթ կետեր համավարակի լուսարանումն ուղղորդելու համար՝ <https://ethicaljournalismnetwork.org/resources/infographics/7-points-for-covering-a-pandemic>
- ՄԶԳՖ - ԲՈՎԻԴ-19-ի լուսարանումը – Ռեսուրսներ և գործիքներ՝ <https://gfmf.info/reporting-on-covid-19-resources-and-tools/>
- ՄԲԻ - ԲՈՎԻԴ-19-ի և բազմազանության և միգրացիայի մասին հոդվածների շարք՝ <https://www.media-diversity.org/tag/covid-19/>
- ՄՄԿ-ի Միգրացիոն քաղաքականության պրակտիկայի հատուկ թողարկում – Միգրացիա և ԲՈՎԻԴ-19: <https://gmdac.iom.int/migration-policy-practice-vol-x-number-2-april-june-2020>

Պատմության (ճիշտ) շարադրում՝ սխալ տեղեկատվություն և ստելության խոսք

Սխալ տեղեկատվություն և միգրացիա

Միգրացիայի և միգրանտների մասին սխալ տեղեկատվություն տարածող վիրուսային տեսանյութերը ցավալիորեն մեծ տարածում ունեն: Որպես լրագրողներ մենք պետք է ուշադիր լինենք չճշտված տեղեկությունների ստանալու վտանգին, այդ թվում՝ առցանց աղբյուրներից (օրինակ՝ օգտատերերի գեներացրած կոնտենտից կամ սոցիալական ցանցերից):

Գոյություն ունեն բազմաթիվ գերազանց ռեսուրսներ, որոնք օգնում են առցանց ստուգել տեղեկատվության իսկությունը, որոնց թվում են՝

Եվրոպայի խորհուրդ

Պրոպագանդայի, սխալ տեղեկատվության և կեղծ նորությունների հետ աշխատելու ռեսուրսներ՝

<https://www.coe.int/en/web/campaign-free-to-speak-safe-to-learn/resources-on-dealing-with-propaganda-misinformation-and-fake-news>

Լրագրության եվրոպական կենտրոն

Ստուգանքային ձեռնարկ

Անգլերեն՝ <http://verificationhandbook.com/>

Ուկրաիներեն՝ http://verificationhandbook.com/book_ua/

«First Draft News»

Մշտադիտարկում և նորությունների հավաքում՝ <https://firstdraftnews.org/training/monitoring-news-gathering/>

Ստուգանքային՝ <https://firstdraftnews.org/training/verification/>

Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ

Երբ փաստերը կարևոր չեն. ինչպես ավելի արդյունավետ հաղորդակցվել ներգաղթի ծախսերի և օգուտների մասին՝

<https://www.migrationpolicy.org/research/when-facts-dont-matter-immigration>

Բացի ձախողումից ձեզ գերծ պահելն ու սխալ տեղեկատվության քննությանը նպաստելը՝ այս ռեսուրսները կարող են նաև օգնել ձեզ՝

- Գտնել խորհուրդներ այն մասին, թե ինչպես բացահայտել արագ տարածվող կեղծ նյութերը, և որ նյութերի վրա ուշադրություն չհրավիրել:
- Բարելավել ձեր լսարանի մեդիա գրագիտությունը՝ ցուցադրելով նրանց՝ ինչպես եք ստուգանքային տեղեկատվությունը և/կամ ինչպես եք բացահայտել սխալ տեղեկատվությունը:
- Պատասխանատվության ենթարկել սխալ տեղեկատվության համար պատասխանատու աձանց:

Օրինակի վերլուծություն 1. Միգրացիայի մասին «կեղծ նորությունների» հետաքննություն



«Կեղծ նորությունների» ապագա՞ն: Գերմանիայում «փախստականների հանցագործությունների» ապակողմնորոշող քարտեզը սահուն և հնարամիտ կերպով խեղաթուրում է իրականությունը:

Ամսաթիվ՝ 27 փետրվարի 2017թ.

Հրապարակող՝ Հետաքննական լրագրության բյուրո <https://www.thebureauinvestigates.com/>

Հեղինակներ՝ Աբիգեյլ Ֆիլդինգ-Սմիթ և Զրոֆթերն Բլեք

Հղում՝ <https://www.thebureauinvestigates.com/stories/2017-02-27/the-future-of-fake-news>

Հոդվածն ուրվագծում է, թե ինչպես անանուն ծագում ունեցող քարտեզը, որն իբրև ներկայացնում էր «փախստականների և միգրանտների հանցագործությունների» տարածումը, հայտնվեց սոցիալական ցանցերից հիմնական լրատվամիջոցներում: Թեև այն մասնագիտորեն էր պատրաստված, սակայն դրա մեթոդաբանության վերլուծությունը գտավ, որ այն հետևողականորեն մոլորեցնում է: Հետագծելով քարտեզի էվոլյուցիան սոցիալական ցանցերում՝ հոդվածը ցույց է տալիս քաղաքական կապերն այն անձնական էջերի միջև, որոնք առանցքային դեր են ունեցել քարտեզի առաջխաղացման գործում, և ռասիստական ու այլատյաց մեմեր և այլ կոնտենտ գովազդող օգտահաշիվների միջև:

Այս հետաքննությունը հրաշալի օրինակ է՝ ինչպես բացահայտել միգրացիայի մասին սխալ տեղեկատվությունը, քանի որ այն՝

- ցույց է տալիս՝ ինչպես դիտավորությամբ մոլորեցնող կամ կեղծ տեղեկատվությունը կարող է սոցիալական ցանցերի նեղկուսակցական, ազգայնական կամ ռասիստական օգտահաշիվներից կիսվելու միջոցով հայտնվել հիմնական լրատվամիջոցներում.
- բացահայտում է կոնտենտ արտադրողների շարժառիթները և առցանց միավորումները՝ միաժամանակ բացատրելով տեղեկատվական էկոհամակարգը, ուր այն ծաղկեց, ինչպես նաև իրավական և սոցիալական հետևանքները.
- բացատրում է լսարանին՝ ինչպես է կատարվել հետաքննությունը՝ կոնտենտը ստեղծելու համար օգտագործված տվյալների վերլուծության և եզրահանգումների կատարելու մեթոդաբանությունը, այդ թվում՝ սոցիալական ցանցերի օգտահաշիվների միջև կապ ստեղծելու համար ինչպես են հեղինակներն

օգտագործել հեշթեգերը և առցանց այլ հուշիչներ. (տե՛ս՝ Գլուխ 9. [Տվյալներ և վերլուծություն](#)).

- օգտագործում է փորձագիտական մեկնաբանություն՝ առցանց սխալ տեղեկատվության մասին ավելի մեծ պատկեր ներկայացնելու համար. (տե՛ս՝ Գլուխ 8. [Ինչպես գտնել և օգտագործել փորձագետներ](#)):

Դիտարկման համար հարցեր՝

- Ձեր կարծիքով կարո՞ղ եք նույնականացնել ձեր երկիր ներգաղթածների կամ արտասահմանում բնակվող ձեր երկրից արտագաղթածների մասին վիրուսային կեղծ նյութերը կամ դիտավորությամբ տարածվող սխալ տեղեկատվությունը:
- Ունե՞ք հմտություններ և ռեսուրսներ ձեր երկիր ներգաղթի կամ ձեր երկրի արտագաղթած համայնքի մասին վիրուսային կեղծ նյութերի կամ դիտավորությամբ տարածվող սխալ տեղեկատվության մասին տեղեկացնելու համար: Եթե ոչ, դիտարկեք լրացուցիչ վերապատրաստման և/կամ ֆինանսավորման հնարավորություններ փնտրելու հարցը:
- Ձեր լրագրության հանդեպ վստահությունն ամրապնդելու (և միգրացե նրանց մեղիա գրագիտությունը բարելավելու) նպատակով ինչպե՞ս կարող եք ավելի շատ կիսվել ձեր լսարանի հետ լրագրության գործընթացով՝ ստուգանշտման մեթոդներով և տվյալների հետ աշխատելու մեթոդաբանությամբ:

Օրինակի վերլուծություն 2. Բացահայտել «դավադրության տեսությունները» միգրացիայի և մեդիայի մասին

Հիմնական մեդիան ձեզ չի տեղեկացնի այս մասին

Ամսաթիվ՝ 12 հունիսի 2020թ.

Հրատարակող՝ The Atlantic <https://www.theatlantic.com/world/>

Հեղինակ՝ Հելեն Լյուիս

Հղում՝ <https://www.theatlantic.com/international/archive/2020/06/conspiracy-mainstream-media-trump-farage-journalism/612628/>

Հոդվածը հրաշալի օրինակ է՝ ինչպես լուսաբանել մեդիային և միգրացիայի մասին «կեղծ լուրերին» առնչվող դավադրության տեսությունները, քանի որ այն՝

- բացահայտում է օգտագործվող պրոպագանդայի մեթոդները. *«Ոչինչ այնքան հիմնավոր չէ, չստիճից ավելի չքննարկված կամ լավ պատրաստված, որ հնարավոր չլինի այն ներկայացնել որպես սկանդալ՝ ստեղծելով այն ճնշող լայնածավալ մեդիա դավադրության ուրվական: Պատմության թերությունը դառնում է առավելություն: Այդ պատմությանը հետամուտ լինելու այլ լրատվամիջոցների մերժումը կարող է ներկայացվել որպես սպառնալիք: Հանդիսատեսները գայթակղվում են գաղթյալի գիտելիքներին տիրապետելու խոստումով, ինչը կերաշխավորի, որ միայն իրենք կհամանան՝ ինչ է տեղի ունենում իրականում»:* Նույնիսկ ենթավերնագիրն է հաղորդում այս միտքը. *«Առաջ տար սխալ տեղեկատվությունը: Բղավի՛ր «դավադրություն», երբ ուրիշ ոչ մեկը չի լուսաբանում այն: Կրկնի՛ր»:*
- ցույց է տալիս՝ ինչպես են սխալ տեղեկատվություն տարածողները կապկում լուրերի ավանդական լուսաբանումը՝ պիտակելով Յութուբում տեղադրված կոնտենտը որպես «Հետաքննություններ» և որդեգրելով լուրերի լուսաբանման մոտեցումները:

Դիտարկման համար հարցեր՝

- Կա՞ն քաղաքական գործիչներ կամ այլ անձինք, ովքեր, հիմնական լրատվամիջոցները շրջանցելու համար, օգտվում են սոցիալական ցանցերից՝ միաժամանակ օգտագործելով սխալ տեղեկատվությունը և դավադրության տեսությունները՝ փորձ կատարելով իրենց փաստարկներին արժանահավաստություն հաղորդել: Եթե այո, արդյո՞ք լինում են հաղորդումներ այս մարտավարությունների մասին: Արդյո՞ք դրանք դիմակազերծվում են, իսկ իրենք պատասխանատվության ենթարկվում:
- Որո՞նք են ազդանշանային ցուցիչները, որ սոցիալական ցանցերի կոնտենտը կարող է պարունակել սխալ տեղեկատվություն: Ձեր կոնտեքստում կամ երկրում կա՞ն տարածված արտահայտություններ, բառեր կամ տվյալների աղբյուրներ, որոնք անմիջապես ձեզ մոտ կասկածներ կառաջացնեն:

Ատելության խոսք և միգրացիա

Ատելության խոսքը հաճախ օգտագործվում է միգրացիան ընտրողների տարբեր խմբերի միջև սեպ խրելու, միգրանտների դեմ ուղղված խտրական քաղաքականությունների հաստատում կամ հավանություն ստանալու կամ, վատագույն դեպքերում, միգրանտների դեմ բռնություն իրախուսելու և իրթանելու համար:

Փաստեր

Ատելության խոսքի համընդհանուր համաձայնեցված սահմանում գոյություն չունի: [Ատելության խոսքի դեմ պայքարի ՄԱԿ-ի ռազմավարությունը և պլանը](#) սահմանում է այն որպես «բանավոր, գրավոր կամ վարքային հաղորդակցման ցանկացած ձև, որը հարձակում է գործում կամ օգտագործում է նսեմացնող կամ խտրական ձևակերպումներ անձի կամ խմբի նկատմամբ՝ ելնելով վերջիններիս ինքնությունից, այլ խոսքով՝ նրանց կրոնական, էթնիկ, ազգային, ռասայական պատկանելիությունից, մաշկի գույնից, ծագումից, սեռից կամ ինքնության այլ գործոնից»⁷¹

Հաջորդիվ ներկայացված է լրագրողներին տրվող խորհրդի խմբագրված տարբերակը, որն ուղեկցում է Էթիկական լրագրության ցանցի [Ատելության խոսքի 5 կետանոց թեստին](#):⁷²

Ինչպե՞ս կարող են լրագրողները որոշել որն է ատելության խոսք: Լրագրողների համար դժվար է դատել՝ ինչ տեսակի հոետորաբանությունն է ընդունելի, և որն՝ անհանդուրժելի մի աշխարհում, որը ախտահարված է գրաքննությամբ, մամուլի ազատության խախտումներով և պրոպագանդայով: Այսօր չկա ատելության խոսքի ընդունելի միջազգային սահմանում, իսկ հանդուրժողականության մակարդակներն արմատական կերպով տարբերվում են երկրից երկիր:

⁷¹<https://www.un.org/en/genocideprevention/documents/UN%20Strategy%20and%20Plan%20of%20Action%20on%20Hate%20Speech%2018%20June%20SYNOPSIS.pdf>

⁷² <https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/hate-speech>

ԷԼՑ-ի [Ատելություն խոսքի 5 կետանոց թեստն](#) օգնում է լրագրողներին՝ կողմնորոշվել այս «ականապատված դաշտում» և նկատի առնել ավելի լայն համատեքստը, ուր ինքնաարտահայտվում են մարդիկ: Լրագրողները պետք է կենտրոնանան ոչ միայն ասվածի, այլև մտադրվածի վրա: Խնդիրը միայն օրինական կամ սոցիալապես ընդունելի վարքագիծը չէ: Հարցն այն է՝ արդյոք խոսքը նպատակ ունի՞ վնասել ուրիշներին, մասնավորապես այն պահերին, երբ առկա է բռնության անմիջական վտանգ:

Լրագրողները և խմբագիրները պետք է դադար առնեն և ժամանակ հատկացնեն վիրավորական, սադրիչ կոնտենտի մասին դատողություններ կատարելու համար:

[Ատելություն խոսքի 5 կետանոց թեստը](#) հիմնված է միջազգային չափանիշների վրա և բարձրացնում է նորությունների հավաքման, պատրաստման և տարածման հարցեր, որոնք օգնում են էթիկական ենթատեքստում տեղադրել ասվածը և ասողին:

1. Խոսնակի կարգավիճակը

Ինչպե՞ս կարող է նրանց պաշտոնն ազդել նրանց շարժառիթների վրա:

Արդյո՞ք կարիք կա նրանց ընդհանրապես լսել, թե պետք է պարզապես անտեսել:

2. Խոսքի շրջանակը

Որքա՞ն հեռահար է խոսքը:

Արդյո՞ք կա վարքագծի մոդել: (*Որքա՞ն հաճախ են նրանք չարաշահում վտանգավոր կամ սադրիչ խոսքը:*)

3. Խոսքի նպատակները

Ինչպե՞ս է այն նպատակում խոսնակին կամ նրա նպատակներին:

Արդյոք այն նախատեսվա՞ծ է ուրիշներին դիտավորությամբ վնաս պատճառելու համար:

4. Բովանդակությունը

Արդյոք խոսքը վտանգավո՞ր է:

Այն կարո՞ղ է հրահրել ուրիշների դեմ բռնություն:

5. Շրջակա միջավայր՝ սոցիալական/տնտեսական/քաղաքական

Ո՞վ կարող է ենթարկվել բացասական ազդեցության:

Գոյություն ունի՞ հակամարտության կամ խտրականության պատմություն:

--

Ատելության խոսքի թեստը հասանելի է անգլերեն, ռուսերեն և ուկրաիներեն: Յուրաքանչյուր կետի վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տե՛ս՝

<https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/hate-speech>

HATE SPEECH

TURNING THE PAGE OF HATE:
A MEDIA CAMPAIGN FOR
TOLERANCE IN JOURNALISM

When it comes to hate speech, journalists and editors must pause and take the time to judge the **potential impact** of offensive, inflammatory content.

The following test, developed by the EJN and based on international standards, highlights questions in the **gathering, preparation** and **dissemination** of news and helps place what is said and who is saying it in an **ethical context**.

2 REACH OF THE SPEECH

How far is the speech traveling?
Is there a **pattern** of behaviour?

3 GOALS OF THE SPEECH

How does it benefit the **speaker** and their **interests**?
Is it **deliberately intended** to **cause harm** to others?

A 5 POINT TEST FOR JOURNALISTS

5 SURROUNDING CLIMATE

SOCIAL / ECONOMIC / POLITICAL

Who might be **negatively affected**?

Is there a history of **conflict** or **discrimination**?

4 THE CONTENT ITSELF

Is the speech **dangerous**?
Could it incite **violence** towards others?

1 STATUS OF THE SPEAKER

How might their **position** influence their **motives**?

Should they even be **listened to** or just **ignored**?

DONT **SENSATIONALISE!**

AVOID THE **RUSH** TO PUBLISH

TAKE A **MOMENT OF REFLECTION**

EthicalJournalismNetwork.org



▶ **МОВА ВОРОЖНЕЧІ** ▶

ПЕРЕГОРТАЮЧИ СТОРІНКУ НЕНАВИСТІ:
МЕДІА-КАМПАНІЯ ПО ТОЛЕРАНТНОСТІ В ЖУРНАЛІСТИЦІ

Коли справа доходить до мови **ворожнечі**, Журналісти та редактори повинні взяти паузу, щоб оцінити **потенційний вплив** агресивного, провокаційного контенту.

Наступний тест, розроблений EJN (Мережею етичної журналістики), ґрунтується на міжнародних стандартах, висуває на перший план питання збору, підготовки і поширення новин та допомагає розмістити сказане, а також того, хто це говорить, в етичний контекст.

2 ОХОПЛЕННЯ МОВИ

Як далеко розповсюджується ця мова?

Чи є вона **моделлю** поведінки?

3 ЦІЛІ МОВИ

Яку вигоду вона приносить **спікеру** та його **інтересам**?

Чи мова **навмисно зумовлена** з метою завдати шкоди іншим?

П'ятискладовий тест для журналістів

4 КОНТЕНТ

Чи є ця мова **небезпечною**?

Чи може це спровокувати **насильство** по відношенню до інших?

5 НАВКОЛИШНЄ ОТОЧЕННЯ

СОЦІАЛЬНЕ/ ЕКОНОМІЧНЕ/ ПОЛІТИЧНЕ

На кого це може **вплинути негативно**?

Чи є історія **конфліктів** або **дискримінації**?

1 СТАТУС СПІКЕРА

Як може вплинути їх **позиція** на їхні **мотиви**?

Чи потрібно їх взагалі **слухати** чи просто **ігнорувати**?

НЕ РОБІТЬ **СЕНСАЦІЮ!**

НЕ **ПОСПІШАЙТЕ** ПУБЛІКУВАТИ
ЗРОБІТЬ ПАУЗУ, ЩОБ ОБМІРКУВАТИ

EthicalJournalismNetwork.org



SHARE IT!



Translated in partnership with the Council of Europe

ЯЗЫК ВРАЖДЫ

ПРЕОДОЛЕВАЯ ВРАЖДУ:
МЕДИА-КАМПАНИЯ ТЕРПИМОСТИ
В ЖУРНАЛИСТИКЕ

Когда речь заходит о языке вражды, журналисты и редакторы должны оценить **потенциальное воздействие** оскорбительного и провокационного материала. Основанный на международных стандартах тест EJN (Сообщества этичной журналистики) затрагивает вопросы **сбора, подготовки и распространения** новостей, и помогает проанализировать с точки зрения этики, что было сказано и кем.

2 ОХВАТ СООБЩЕНИЯ

Насколько широко распространяется сообщение?

По каким каналам оно распространяется?

3 ЦЕЛИ СООБЩЕНИЯ

Каким образом распространение сообщения **выгодно спикеру**?

Имеет ли оно **явную цель навредить** другим?

5 ПУНКТОВ для ЖУРНАЛИСТОВ

4 СОДЕРЖАНИЕ СООБЩЕНИЯ

Является ли сообщение **опасным**?
Может ли оно спровоцировать **насилие**?

5

ТЕКУЩАЯ СИТУАЦИЯ

СОЦИАЛЬНАЯ/ЭКОНОМИЧЕСКАЯ/ПОЛИТИЧЕСКАЯ

На кого сообщение может оказать **негативное влияние**?

Существует ли вокруг сообщения предыстория **конфликтов** или **дискриминации**?

СТАТУС СПИКЕРА

Как **положение** спикера определяет его мотивы?

Действительно ли нужно его **выслушать**, или можно **проигнорировать**?

НЕ СОЗДАВАЙТЕ **СЕНСАЦИЮ!**

НЕ **ТОРОПИТЕСЬ** ПУБЛИКОВАТЬ

ПОТРАТЬТЕ ВРЕМЯ НА РАЗМЫШЛЕНИЯ

EthicalJournalismNetwork.org



ПОДЕЛИТЕСЬ!

Создано Сообществом этичной журналистики
(Ethical Journalism Network)

При поддержке Совета Европы

COUNCIL OF EUROPE



EJN



ԷԼՑ-ը խորհուրդ է տալիս լրագրողներին՝ օգտվել նաև [հանդուրժողականության ստուգաթերթիկից](#).⁷³

1. Երբ գործ ունեք քաղաքական աստելության խոսք օգտագործող պատմությունների հետ, չափազանց կարևոր է՝ չընկնել սենսացիաների հետևից: Էթիկայի կանոններին հետևող լրագրողները կհարցնեն՝

- Այն կարող է զայրացնող լինել, բայց արդյոք արժանի՞ է լուսաբանման: Ո՞րն է խոսնակի նպատակը:
- Ինչպիսի՞ ազդեցություն կունենա հրապարակումը:
- Արդյո՞ք կա կրթերը բորբոքելու և բռնություն հրահրելու վտանգ:
- Խոսքը փաստահե՞ն է, պնդումները ստուգվե՞ն:

2. Հակասական նյութ հավաքելու և խմբագրելու ընթացքում լրագրողները պետք է խուսափեն շտապողական հրապարակումից: Օգտակար է նույնիսկ մի քանի րոպեով դադար առնել և մտորել պատմության բովանդակության մասին՝

- Արդյոք խուսափե՞ն ենք կլիշեներից և կարծրատիպերից:
- Արդյոք տվե՞ն ենք բոլոր վերաբերելի և անհրաժեշտ հարցերը:
- Արդյոք զգայո՞ւն ենք եղել մեր լսարանի հանդեպ:
- Արդյոք զո՞ւսպ ենք եղել բառերի օգտագործման հարցում:
- Արդյոք պատկերները պատմո՞ւմ են պատմությունն առանց բռնության կամ վուլգերիզմի:
- Արդյոք օգտվե՞ն ենք բազմազան աղբյուրներից և ընդգրկել ենք համապատասխան փոքրամասնությունների ձայները:
- Արդյոք այն համապատասխանո՞ւմ է խմբագրական և էթիկական կանոնագրքերում սահմանված չափանիշներին:

3. Հրապարակելու կոնակր սեղմելուց առաջ վերջին հայացքը և մտորման պահը միշտ էլ օգտակար են՝

- Արդյոք լա՞վ աշխատանք ենք կատարել:
- Կա՞ որևէ չփարատվող կասկած:
- Ի վերջո, գործընկերոջը հարցնելու կարիք կա՞:

Օրինակի վերլուծություն 1. Միգրանտների դեմ աստելության խոսքի և պրոպագանդայի հետաքննություն

Ատելության արտադրություն՝ փախստականներին քավության նոխազ ներկայացնելը Կենտրոնական Եվրոպայում

Ամսաթիվ՝ 14 դեկտեմբերի 2016թ.

Հրապարակող՝ News Deeply / The New Humanitarian <https://www.thenewhumanitarian.org/>

Հեղինակ՝ Դանիել Հոուդեն

Հղում՝ <https://deeply.thenewhumanitarian.org/refugees/articles/2016/12/14/the-manufacture-of-hatred-scapegoating-refugees-in-central-europe>

⁷³ <https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/hate-speech/a-checklist>

Այս հետաքննությունը «բացահայտում է փախստականների դեմ քարոզչամեթոդներ, որը խրախուսեց այլատյացությունը Հունգարիայում, տապալեց ԵՄ արձագանքը փախստականների ճգնաժամին և տարածվում է Չեխիայի Հանրապետություն և անդին»:
Գերագանց օրինակ է՝ ինչպես բացատրել ատելության խոսքի դինամիկան, քաղաքական շարժառիթները և դրա հետևանքները՝ հասարակական մոտեցումների և կարծիքի համար:

Դիտարկման համար հարցեր՝

- Հասարակական կարծիքի ուսումնասիրությունները (օրինակ՝ [Արժեքների համաշխարհային հետազոտությունը](#)⁷⁴ կամ [Կովկասյան բարոնետր հետազոտությունը](#)⁷⁵) ձեր երկրում ընդգրկո՞ւմ են միգրացիային առնչվող հարցեր: Եթե պատասխանը դրական է, ապա կարելի՞ է դրանք օգտագործել այդ կարծիքները ձևավորելու գործում մեդիայի դերակատարման մասին հողված պատրաստելու համար: Եթե պատասխանը բացասական է, ապա կարո՞ղ եք այս հարցի շուրջ համագործակցել հասարակական կարծիքի հարցման կամ այլ հետազոտական խմբերի հետ:
- Մեդիայի մասին նմանօրինակ քննական լուսաբանումը դիտվում է որպես հասարակության ընկալմանը նպաստող օգտակար ներդրո՞ւմ, թե այլ լրատվամիջոցների գործունեության հետաքննությունը կամ պարզապես դրանց լուսաբանումը համարվում է տարու:
- Ի՞նչ դերակատարում կարող են ունենալ մեդիա մշտադիտարկման խմբերը ձեր պատմությունների համար տեղեկատվություն ապահովելու հարցում:

Ատելության հիմքով հանցագործություն – Սովորաբար, բռնությամբ ուղեկցվող հանցագործություն, որը մոտիվացված է ռասայական, կրոնական, սեռական կողմնորոշման կամ ինքնությանն առնչվող այլ հիմքով նախապաշարումով: Այս հիմքերը կարող են իրականում վերագրվել գոհին կամ լինել սուբյեկտիվ ընկալում:

Օրինակի վերլուծություն 2. Ատելության խոսքի մասին հետազոտության օգտագործում

Գերմանիայում առցանց ատելության խոսքն ունի իրական հետևանքներ

Ամսաթիվ՝ 27 փետրվար 2017թ.

Հրատարակող՝ The Economist <https://www.economist.com/>

Հղում՝ <https://www.economist.com/graphic-detail/2018/01/12/in-germany-online-hate-speech-has-real-world-consequences>

Հողվածն օգտագործում է համալսարանական հետազոտության տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ փախստականների դեմ ուղղված հռետորաբանությունը Ֆեյսբուքում փոխկապակցված է ֆիզիկական հարձակումների հետ: Այն ներկայացնում է երկրի պատմության, գործող օրենքների և խոշոր տեխնոլոգիական հարթակների հետ կապերի ավելի լայն համատեքստը:

⁷⁴ <http://www.worldvaluessurvey.org/wvs.jsp>

⁷⁵ <https://caucasusbarometer.org/en/datasets/>

Լավ օրինակ է՝ ինչպես ներկայացնել աստելության խոսքի մասին կամ այլ տվյալների հետազոտությունը, քանի որ, ընդգծելով հետազոտության սահմանափակումները և ուժեղ կողմերն, այն հստակեցնում է՝ ինչ չափով են արժանահավատ վերջինիս եզրակացությունները: Հոդվածը հասնում է այդ նպատակին հետևյալ միջոցներով՝

- Վերլուծելով մեթոդաբանական մոտեցման հուսալիությունը: Օրինակ՝ ընդունելով, որ փոխկապակցվածությունը պատճառահետևանքային կապի երաշխիք չէ, այն մատնանշում է, թե որտեղ են հետազոտողները կարողացել բացառել մյուս փոփոխականները:
- Նշելով ամենահզոր բացահայտումը և նկարագրելով այն՝ որպես անհերքելի ապացույց:
- Ընդգծելով, որտեղ հետազոտողի գնահատականները, որ կոնկրետ քաղաքական կուսակցության տեղադրած ֆեյսբուքյան նյութերը պատճառ են հանդիսացել փախստականների դեմ հարձակումների 13% աճի, ավելի թույլ են հիմնավորված («անձեռոցիկի վրա հաշվարկ»):

(տե՛ս՝ Գլուխ 9. [Տվյալներ և վերլուծություն](#))

Դիտարկման համար հարցեր՝

- Ո՞վ է իրականացնում առցանց աստելության խոսքի և աստելության հիմքով հանցագործությունների նմանօրինակ հետազոտություն ձեր երկրում կամ ձեր երկրի մասին: Ինչո՞ւ չդիմել նրանց: Նրանք կարող են փորձագիտության աղբյուր լինել հետագա հոդվածների համար կամ նույնիսկ օգնել ձեզ գտնել արդի հետազոտական աշխատություններ, որտեղ կան լուսաբանման համար կարևոր միտումներ և տվյալներ (տե՛ս՝ Գլուխ 8. [Ինչպես գտնել և օգտագործել փորձագետներին](#))
- Կարո՞ղ է ինքնին պատմություն լինել այն, որ նմանատիպ հետազոտություն չի կատարվում կամ տվյալները բաց հասանելի չեն (տե՛ս՝ [Լուծումների լրագրության օրինակի վերլուծությունը 10-րդ գլխում՝ Միգրացիայի լուսաբանման բարելավում](#)):

Եզրակացություն՝ թունավոր խառնուրդ

Հաճախ աստելության խոսքը և սխալ տեղեկատվությունը միահյուսված են, ինչն ավելի է դժվարացնում լրագրողների արձագանքումն այդ խառնուրդին: Մենք կարող ենք հաղթահարել այս խնդիրը՝ զգոն լինելով աստելության խոսքի և սխալ տեղեկատվության փոփոխական բնույթի նկատմամբ, բաց լինելով մեր աշխատանքի ինքնաքննադատությանը և հավատարիմ մնալով լրագրության արժեքներին:

- Այս խնդիրները լրացուցիչ ուսումնասիրելու համար տե՛ս՝ [Բազմազանություն և փորքամասնություններ](#), [Վտելության խոսք](#) և [Միսալ տեղեկատվություն և միգրացիա բաժինները Գործիքներ և ռեսուրսներ](#) 11-րդ գլխում:

Պատմության (ճիշտ) շարադրում՝ լուսանկարներ և պատկերներ

«Նրանց պատմությունները չեն ավարտվում այնտեղ, որտեղ արվել է լուսանկարը: Հետևաբար, ինձ համար կարևոր է փնտրել պատկերներ, որոնք օգնում են բարձրացնել կերպարների արժանապատվությունը նույնիսկ լուսանկարից անդին», - Վոն Ուոլես, Այ Ջազիրայի նախկին ֆոտոխմբագիր:⁷⁶

Պատկերներն ունեն հսկայական ուժ: Այդ պատճառով էլ [Էթիկական հիմքեր](#)-ին նվիրված 1-ին գլխում հիշատակված «Միգրացիայի մեդիա լուսաբանման էթիկական խարտիան» համակողմանիորեն հասցեագրում է այս հարցը՝

- Որևէ մեկի լուսանկարը տարածելուց առաջ ապահովեք նրա գիտակցված համաձայնությունը: Երբեք մի վճարեք լուսանկարի կամ տեսագրության համար:
- Անչափահասը լուսանկարվում կամ տեսագրվում է բացառապես ծնողի կամ խնամակալի համաձայնությամբ, որը հաստատում է երեխան:
- Լուսանկարները նյութումներին են տրամադրվում հստակ և ճշգրիտ մակագրերով՝ թյուրմեթոդներ, սխալ կամ չարամիտ օգտագործումը կանխելու համար:
- Առանձնակի տպավորիչ, երբեմն շոկային գրաֆիկ պատկերները, որոնք ներկայացնում ծայրահեղ իրավիճակներ, հրապարակվում կամ տարածվում են միայն և միայն այն դեպքում, երբ դրանք պատրաստված են բացատրելու, համոզելու կամ դատապարտելու նպատակով: Երբեք մի օգտագործեք պատկերը գուտ սենսացիոն լինելու համար:

Միգրացիայի որոշ ձևեր՝ [թրաֆիքինգը](#), հարկադիր աշխատանքը կամ մարդկանց զանգվածային տեղաշարժերը կարող են լինել հզոր, բայց հաճախ՝ հակասական պատկերների հարուստ աղբյուր: Մակայն, մենք պետք է ապահովենք, որ պատմությունները նկարագրողներ մեր ցանկությունը միշտ համեմատության մեջ դրվի անհատի՝ արժանապատվության իրավունքի և նրա, իր ընտանիքի համար հետևանքների և կարծրատիպերը վերահաստատելու կամ միգրանտներին որոշակի կերպով պատկերելու ավելի լայն նկատառումների հետ (տե՛ս՝ [Աղբյուրների ձևավորում և պաշտպանություն](#)):

Լրագրողները պետք է անեն հնարավոր ամեն ինչ անվտանգ և հանգիստ մթնոլորտ ձևավորելու համար, երբ նրանք տեսագրում են թրաֆիքինգի զոհ դարձած մարդկանց (տե՛ս՝ Գլուխ 5. [Միգրացիոն պատմություններ](#), [Մարդկանց թրաֆիքինգ և մարսանենգություն](#) բաժինը, Գլուխ 7. [Հարցազրույցներ](#), [Հարցազրույց տրավմայի զոհերի հետ](#) բաժինը):

Հիշե՛ք՝

- Պատմությունը շարադրելու ընթացքում հզոր պատկերների օգտագործումն ավելի ազդեցիկ է դարձնում լրագրությունը, սակայն չափազանց կարևոր է, որ լրատվամիջոցներն աչալորջ լինեն և խուսափեն արհեստական տպավորություններ ստեղծելուց, որոնք ամրապնդում են կարծրատիպերը:

⁷⁶ <https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/ethics-in-the-news/refugee-images>

- Պատկերների և ուղերձների միջոցով, որոնք պարզեցնելու փոխարեն լրացուցիչ ուժ են հաղորդում, լավ լրագրությունը կբարձրացնի իրազեկումը միգրացիայի մասին:

Կարևոր հուշումներ՝

- **Խուսափեք լուսանկարների օգտագործումից կամ տեսանյութեր պատրաստելուց**, որոնք խրախուսում են անառողջ սենսացիաները, մասնավոր կյանքի մեջ ներխուժումը կամ վուայերիզմը:
- Անհատներին լուսանկարելուց կամ տեսագրելուց առաջ **միշտ խնդրեք նրանց թույլտվությունը**, սակայն սա պարտադիր չէ հանրային միջավայրում: Հնարավորության դեպքում նախապես ստացեք գրավոր թույլտվություն:
- **Պատկերների և մարդկանց թրաֆիքինգի մասին խորհուրդների համար տե՛ս՝ [Մարդկանց թրաֆիքինգ և մաքսանենգություն բաժինը](#) [Միգրացիոն պատմություններ](#)**-ին նվիրված 5-րդ գլխում:
- **Մի՛ ընտրեք լուսանկարներ՝ ելնելով ձեր լսարանի ակնկալիքներից**, այլ ընտրեք և լուսանկարեք այն, ինչ արտացոլում է իրականությունը և ընդհանուր պատկերը:
- **Երբեք մի՛ փոփոխեք պատկերը լսարանին մոլորեցնող տարրեր հանելու կամ ավելացնելու համար** – օրինակ՝ համապատասխան մասերի խմբագրում կամ համակարգչային ծրագրով տարրերի ավելացում, որոնք չկային սկզբնական պատկերում:

Այս բաժինն ադապտացվել է 2017 թվականին ՄԶՄՄԿ-ի հրատարակած [Մեղիա և մարդկանց թրաֆիքինգ. Ուղեցույցներ](#)-ի «Ուղեցույցներ ֆոտոլրագրության համար» բաժնից:⁷⁷

Օրինակի վերլուծություն՝ պատկերներ և ներկայացում

Թոռնիկե Կոփլաթաձեն վրաց կինեմատոգրաֆիստ է, ով աշխատում է Եվրոնյուզի համար Թբիլիսիում: Դիտեք Թոռնիկե Կոփլաթաձեի խոսքն այն մասին, ինչպես է ինքը մոտենում փոքրամասնությունների և միգրանտների նկարահանմանը:

https://www.youtube.com/watch?v=sgVKg85qpW0&list=PLXxzWkiXihue7dRH3_QceqpkBGJL-gQdI&index=9

Ռեսուրսներ

ԷԼՑ – Փախստականների պատկերները – Էթիկան լուսանկարում, Միսյա Պեկել և Մաուդ վան դե Ռեյթ

<https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/ethics-in-the-news/refugee-images>

ՀԼԳՑ – Հետաքննական լուսանկարչություն. Օժանդակել պատմությանը պատկերներով

<https://gijn.org/2013/07/15/investigative-photography-supporting-a-story-with-pictures/>

⁷⁷ https://www.icmpd.org/fileadmin/user_upload/Media_and_THB_Guidelines_EN_WEB.pdf

ՄԲԻ – Մի նկարը 1000 խոսք արժե. ինչպես է լուսանկարների պահոցը ձևավորում չգիտակցված նախապաշարում

<https://www.media-diversity.org/a-picture-is-worth-1000-words-how-stock-photography-shapes-unconscious-bias/>

Դասընթացներ

Թոմսոն հիմնադրամ/Լուսանկարչության էթիկայի կենտրոն – Լուսանկարչի էթիկական գործիքակազմ

<https://thomsonfoundation.edcastcloud.com/learn/the-photographer-s-ethical-toolkit-self-paced-6636>

ՀԻԵՄԳ – Գործիքակազմ լրագրողների համար

<https://e-learning.fra.europa.eu/course/view.php?id=13>

ԵՉՐԱԿԱՇՈՒԹՅՈՒՆ

Միշտ էլ գոյություն ունի պատմությունը շարադրելու մի քանի տարբերակ: Երբեմն մեզանից պահանջվում է վայր դնել մեր հեռախոսները և ձայնագրող սարքերը և լսել: Երբեմն մեզ անհրաժեշտ է պատմության կարևոր մաս դարձնել մեր կողմից տեխնոլոգիաների օգտագործումը: Ամենակարևորը՝ ներշնչանք ստանալն է այն մարդկանցից, ովքեր այլ կերպ են անում գործը, և միշտ տեսնել պահը, երբ նոր մոտեցում որդեգրելու ջանքերը կարող են տեղին լինել:

Գլուխ 7. ՀԱՐՑԱԳՐՈՒՅՆԵՐ

Օգտագործեք այս գլուխը, որպեսզի՝

- Մովորեք՝ ինչպես վարել ավելի արդյունավետ, խորաթափանց և հետաքրքիր հարցազրույցներ:
- Մանրամասն ծանոթանաք երեք տեսակի հարցազրույցների հետ՝
 - [Հարցազրույցի վարում միզրանտների հետ](#)
 - [Հարցազրույցի վարում տրավմայի գոհերի հետ](#)
 - [Հարցազրույցի վարում հյուրընկալող համայնքների հետ և բարդությունների հանգուցարուծում](#)

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

[Գիտնականներից, հետազոտական կենտրոններից, հասարակական կազմակերպություններից \(ՀԿ-ներից\), քաղաքական գործիչներից, պետական մարմիններից և ազգային վիճակագրական կազմակերպություններից, միջկառավարական կազմակերպություններից և միություններից և գործարար միավորումներից հարցազրույցներ վերցնելու խորհուրդների համար տե՛ս՝ Գլուխ 8. Ինչպես գտնել և օգտագործել փորձագետների:](#)

Ներածություն

Միգրացիայի հարցերը լուսաբանելու ընթացքում կարող եք հարցազրույց վերցնել տարբեր իրավիճակներում գտնվող տարաբնույթ մարդկանցից, ինչը պահանջում է տարբեր տեսակի պատրաստություն, հմտություններ և մոտեցումներ: Դիտարկեք հետևյալ օրինակները՝

- Ուղիղ եթերով հեռարձակվող հարցազրույց քաղաքական գործչի կամ պաշտոնատար անձի հետ, ով պաշտպանում է միգրացիայի առնչվող հակասական քաղաքականություն:
- Էլեկտրոնային փոստով նամակների փոխանակում չփաստաթղթավորված աշխատանքային միզրանտի հետ, ով համաձայնվել է խոսել անանունությունը պահպանելու պայմանով:
- Չրույց ազդարարի հետ հաղորդազրույցությունների փոխանակման հավելվածով, ով պնդում է, որ ապացույցներ ունի, որ տեղական բիզնեսում աշխատողները մարդկանց թրաֆիքինգի գոհ են:
- Անհատական հարցազրույց ապաստան հայցողի հետ, ով մեկ երկրից մյուսը տեղափոխվելու ընթացքի մեջ է:
- Առցանց գրուցային ֆորում հասարակության ներկայացուցիչների հետ, ովքեր կոշտ դիրքորոշումներ ունեն միգրացիայի հարցում:

Այս օրինակները ներկայացնում են զանազան աղբյուրներ և իրավիճակներ, որոնք լրագրողի համար առաջացնում են տարբեր հնարավոր ռիսկեր և հնարավորություններ: Կարևոր է աղապտացնել ձեր մոտեցումները յուրաքանչյուր հարցազրույցին և շփմանը՝ ելնելով այն հանգամանքից ովքեր են ռեսպոնդենտները և ինչ կրիչ եք օգտագործում:

Եթե նույնիսկ ինչ-որ մեկի պատմությունն արժանահավատ է թվում և հիմնավորվում է ապացույցներով (հավանաբար փաստաթղթային), միևնույն է, ձեզանից պահանջվում է կատարել սեփական պատշաճ գնահատումը (տե՛ս՝ Գլուխ 9. [Տվյալներ և վերլուծություն](#) և Գլուխ 6. [Պատմության \(ճիշտ\) շարադրում](#)):

Հարցազրույցների վարում միգրանտների հետ

Լրագրողների հարաբերություններն իրենց աղբյուրների հետ պետք է հնարավորինս թափանցիկ լինեն (տե՛ս՝ [Աղբյուրների ձևավորում և պաշտպանություն](#) բաժինը [Պատմության \(ճիշտ\) շարադրմանը](#) նվիրված 6-րդ գլխում):

Բացի ընդհանուր ուղեցույցներից և չափանիշներից, որոնք օգնում են վարել հարցազրույցներն էթիկական պահանջներին համապատասխան, կարող են նաև պահանջվել ավելի սպեցիֆիկ ուղեցույցեր՝ միգրանտներից հարցազրույց վերցնելու համար, ում փորձառությունները, (իրավական) դիրքորոշումները և իրենց մասին ընկալումները կարող են պահանջել ձեզանից հատուկ ուշադրություն:

Թեև հնարավոր տրավմա ապրած միգրանտների դեպքում պահանջվող հատուկ մոտեցումը կարելի է գտնել [Հարցազրույցի վարում տրավմայի գոհերի հետ](#) բաժնում, սակայն գոյություն ունեն հիմնական կանոններ և չափանիշներ, որոնք կիրառելի են բոլոր միգրանտներին:

Հիմնական կանոններ

Միշտ ստացեք գիտակցված համաձայնություն՝

- Բացատրեք լուսաբանման գործընթացը, և ինչու է կարևոր պատմությունը.
- Հստակեցրեք՝ ինչու եք ցանկանում հարցազրույց վերցնել և որն է ձեր պատմության նպատակը.
 - Հարցրե՛ք, արդյոք լիովին թափանցի՞կ եք եղել ձեր մտադրությունների հարցում:
- Հոգ տարե՛լ եք նրանց պաշտպանելու համար: Օրինակ, եթե զրուցում եք երիտասարդի կամ խոցելի իրավիճակում գտնվող անձի հետ, համոզվեք, որ նրանք գիտակցում են իրենց տրամադրած տեղեկությունների հրապարակման հնարավոր հետևանքները: Ասեք նրանց, թե ովքեր են կազմում ձեր լսարանը, և հնարավոր է արդյոք, որ իրենց պատմությունները տեսնեն հայրենիքում:
 - Հիշե՛ք՝ կիսվելով իրենց պատմություններով և հայտնելով իրենց ինքնությունը, որոշ փախստականներ կարող են վտանգել սեփական ընտանիքների և բարեկամների անվտանգությունը հայրենիքում: Դուք կարող եք նաև ակամայից ազդել ապաստանի հայցով որոշման վրա, եթե հանրության համար բացեք դրա որոշ մանրամասներ, ինչից անհրաժեշտ է խուսափել:
- Եթե միգրանտը չունի ծնող կամ խնամակալ կամ չի կարող կարդալ, ապա ձեզանից կպահանջվի առաջնորդվել սեփական խոճով և էթիկական դատողությամբ: Սա այն պահն է, երբ ամեն բանից կարևոր է դրսևորել համամարդկային էթիկա:
- Արդյոք վստա՞հ եք, որ նրանք լիովին հասկանում են ձեզ հետ հարցազրույցի պայմանները և ինչ նկատի ունեք «ոչ արձանագրության համար», «ոչ

հրապարակային» և «առանց աղբյուրը նշելու» արտահայտություններով կամ այլ պիտակներով:

(տես նաև [Աղբյուրների ձևավորում և պաշտպանություն](#) բաժինը [Պատմության \(ճիշտ\) շարադրմանը](#) նվիրված 6-րդ գլխում)

Ուշադիր եղեք խոցելի միզրանստների նկատմամբ և իմացեք նրանց իրավունքները

- Պարզեք՝ անձն անչափահաս է, այսինքն՝ 18 տարին կամ չափահասության տարիքը չըրացած: Ծանոթացեք այն երկրի ներպետական օրենքներին, որտեղ լուսաբանում եք, որ պարզեք՝ ինչ պայմաններում կարող եք գրուցել երեխայի հետ առանց ծնողի կամ խնամակալի համաձայնության:
- Գնահատեք աղբյուրների (մասնավորապես, երիտասարդների կամ տրավմայի և բռնության զոհերի) խոցելիությունը (տե՛ս՝ [Հարցազրույցի վարում տրավմայի զոհերի հետ](#)).
- Ապահովեք, որ երեխաների հետ հարցազրույցը լինի պատասխանատու չափահասի կամ խնամակալի ներկայությամբ: Սակայն այն հանգամանքներում, երբ կասկածներ ունեք, որ նրանց բարօրության համար պատասխանատու անձը վնաս է հասցնում նրանց, դիմեք երեխաների շահերի պաշտպանության ազգային մարմնի ուղղորդմանը:

Հարգեք անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը

- Յուրաքանչյուր ոք ունի անձնական կյանքի անձեռնմխելիության և հարգալից վերաբերմունքի իրավունք, հատկապես՝ երեխաները:
- Խուսափեք խորամանկության կամ խաբկանքի դիմելուց՝ բացառությամբ ամենաբացառիկ հանգամանքներից:
- Ուշադիր եղեք հարցազրույցի միջավայրին, ստեղծեք պայմաններ, ուր ռեսպոնդենտները հանգիստ են զգում անձնական տեղեկատվությամբ կիսվելու հարցում և, ցանկության դեպքում, կարող են գրուցել ձեզ հետ կոնֆիդենցիալ կերպով:

Դրսևորեք մարդկային վերաբերմունք

- Խուսափե՛լ եք տրավմատիկ փորձառությունները վերապրել տալուց և հարցազրույցի ընթացքում թույլատրե՛լ եք հարցազրույց տվողին՝ ազատ խոսել:
- Կենտրոնացե՛լ եք հարցազրույց տվողի փորձառության դրական կողմերի վրա և պարզե՛լ եք, արդյո՞ք նա կարող է ստուգել ձեր նյութում փաստական սխալների առկայությունը նախքան հրապարակումը:
- Արդյոք տրվե՛լ են և պատասխան գտել բոլոր կարևոր հարցերը: Արդյո՞ք զգույշ և նրբանկատ եք եղել և պաշտպանե՛լ եք հարցազրույց տվողի շահերը:

Ռեսուրսների ցանկում նշված հիմքերի օրինակով՝ դուք պետք է միշտ ստուգեք որոշակի պայմաններ մինչև հարցազրույցը, դրա ընթացքում և դրանից հետո:

Մինչև հարցազրույց

- **Իմացեք օրենքը:** Հասկանալ միգրացիային վերաբերվող այն երկրների օրենքները, որտեղ լուսաբանում եք, հատկապես՝ միգրանտների իրավունքները պաշտպանող օրենքները: Օրենքը հարստացնում է ձեր պատմությունը, պաշտպանում ձեզ հնարավոր հայցերից, որոնք կարող են առաջանալ անվանարկման կամ գրպարտության արդյունքում, և երաշխավորում է, որ դուք չաղավաղեք միգրանտների մասին փաստերը:
- **Խորհրդածեք սեփական դիրքավորվածության մասին:** Փորձեք քննել ինքներդ ձեզ հարցազրույց տվողի աչքերով: Ինչպե՞ս նրանք կարող են ընկալել ձեր (ենթադրյալ) շահը կամ դիրքորոշումը: Հասկացեք ուժային դիրքը, որը կարող եք ունենալ հարցազրույց տվողի համեմատ, և փորձեք լուծել ուժերի անհավասարակշռության հարցը մինչև հարցազրույց սկսելը: Այս գործընթացը կարող է պահանջել հարցազրույցից առաջ տրամադրել քննարկման հնարավոր հարցերը, ինչը հնարավորություն կտա ռեսպոնդենտին որոշել քննարկման վայրը կամ կատարել այլ ճշտումներ:
- **Թույլատրեք հարցազրույց տվող անձին սահմանել կանոնները:** Երբ հնարավոր է, նախապես քննարկեք գործընթացը: Ծրագրո՞ւմ եք տեսագրել/լուսանկարել: Նրանց ինքնությունը բացահայտվե՞լո՞ւ է: Թույլ տալո՞ւ եք հարցազրույց տվողին ստուգել ձեր նյութում փաստական սխալների ամկայությունը նախքան հրատարակումը:
- **Տրամադրեք նախկինում կատարված աշխատանքը,** որպեսզի հարցազրույց տվողը կարողանա գաղափար կազմել այն պատմությունների և խնդիրների մասին, որոնք լուսաբանում է ձեր կազմակերպությունը:
- **Տրամադրեք ձեր կազմակերպության քաղաքականության և գործելակերպի մասին տեղեկատվություն** մինչև հարցազրույցը, որպեսզի հարցազրույց տվողը կարողանա ավելի լավ գաղափար կազմել ձեր կազմակերպության խմբագրական գործընթացի մասին:
- **Համաձայնեցրեք հարցազրույցի վայրը,** որն ավելի հարմարավետ է նրանց համար, հավանաբար նրանց հարազատ միջավայրը: Դա կօգնի նրանց ավելի հանգիստ լինել և կօգնի ձեզ հասկանալ նրանց հեռանկարը:
- **Ժամանակ հատկացրեք,** որ չշտապեք հարցազրույցի ընթացքում:

Հարցազրույցի ընթացքում

- **Մտորեք սեփական նախապաշարումների մասին:** Մի ենթադրեք՝ հարցրե՛ք: Մի խուսափեք դժվար հարցերից:
- **Քաց պահեք միտքը:** Հարցազրույց տվողները, այդ թվում՝ միգրանտները, երբեմն, իրենց իրական զգացմունքները կամ փարձառությունները ներկայացնելու փոխարեն պարտավորված են զգում ասել ձեզ այն, ինչ իրենց կարծիքով դուք ցանկանում եք լսել:
- **Լսեք և սպասեք:** Մի լցրեք անհարմար լռության պահերը (բացառությամբ ուղիղ եթերի դեպքում), հատկապես, երբ մարդու հետ զրուցում եք խիստ անձնական փորձառություններից կամ զգայուն թեմաներից: Լռե՛ք և սպասեք: Համբերատար եղե՛ք՝ թույլ տվե՛ք նրանց պատմել ձեզ իրենց պատմությունն իրենց ձևով:

- **Խուսափեք** ռեսպոնդենտի ասածներին ի պատասխան գարմանք, տհաճություն ձևացնելուց կամ էմոցիոնալ այլ արձագանքներից, քանի որ դա կարող է մեկնաբանվել որպես կարծիք:
- **Հիշեցրեք** հարցազրույց տվողին, որ նա պարտավոր չէ պատասխանել ձեր հարցերին, և դուք կարող եք ընդհատել ձեր հարցազրույցը ցանկացած պահի:
- **Մի մոռացեք** տալ հարցեր, որոնք պատկերացում կստեղծեն նրանց կյանքի կոնտեքստի մասին: Օրինակ, եթե նոր միզրանտ է, հարցրեք ինչպիսի՞ կյանք են ունեցել նախքան տեղափոխվելը: Ի՞նչ են ձգտում անել այժմ՝ ժամանելուց հետո:
- **Տեղին հարցեր տվեք:** Հարգեք հարցազրույց տվողի ժամանակը և գիտակցեք ձեզ հետ զրուցելու համար նրա «վճարելիք գինը»: Երբեմն, հարցազրույց տվողը չի հասկանում ինչ տեսակի և ինչ երկարության մեջբերում կամ մեկնաբանություն եք փնտրում: Եթե այդպիսի իրավիճակ է, մի փոքր բացատրեք լրագրության ընթացքը և տվեք հարցեր, որոնք պարզ կդարձնեն ինչ տեսակի տեղեկություններ եք փնտրում:
- **Վերջում** հարցրեք՝ գիտե՞ն այլ անձանց, ովքեր կցանկանային հարցազրույց տալ: Ժամանակի ընթացքում համայնքների հետ հարաբերությունների ամրապնդումը դրանց լուսաբանելու լավագույն ձևն է:

Հարցազրույցից հետո

- **Դիմեք օգնության:** Երբ կասկածներ ունեք, օրենքները և դրանց հետևանքները հասկանալու համար դիմեք իրավագետների կամ միզրացիայի լուսաբանման ավելի մեծ փորձ ունեցող գործընկերների:
- **Կապ պահպանեք** նրանց հետ, ում հետ զրուցել եք և կիսվեք պատմությանը նրանց հետ: Ասեք նրանց ինչպես կարող են հետևել ձեր լուսաբանմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ ռեսուրսները, որոնք օգտագործվել են այս ստուգաթերթիկը կազմելու համար:

ԷԼՑ – Աղբյուրների հետ աշխատելու հիմնական էթիկական կանոններ
<https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/ethics-in-the-news/handling-sources>

ՀԼԳՑ – Հարցազրույց վարելու մեթոդների հեռանկարները – ընդգրկում է հետաքննական լրագրությունը, էլ. փոստով հարցազրույցները, հեռարձակումը և խոցելի խմբերը:
<https://gijn.org/perspectives-on-interviewing-techniques/>

ՄՔՄՄԿ/ԷԼՑ – Մեդիա և մարդկանց թրաֆիքինգ. Ուղեցույցներ (2017թ.)
<https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/media-trafficking-guidelines>

ՄԲԲ – Լուսաբանման բազմազանության ձեռնարկ (2004թ.)
[http://www.media-diversity.org/additional-files/documents/A%20Guides/MDI%20Reporting%20Diversity%20manual/Reporting%20Diversity%20Manual%20-%20Caucasus%20\[EN\].pdf](http://www.media-diversity.org/additional-files/documents/A%20Guides/MDI%20Reporting%20Diversity%20manual/Reporting%20Diversity%20Manual%20-%20Caucasus%20[EN].pdf)

Լիվերպուլի Ջոն Մուրի համալսարան - «[Ուղեցույց լրագրողների, հետազոտողների, արվեստագետների և տեղեկատվություն որոնող անձանց համար](#)»

<https://www.ljmu.ac.uk/~media/files/ljmu/microsites/online-hub-for-asylum-seekers-and-refugees/updated-pdf-october/new-guide-for-journalists.pdf>

Հարցազրույցի վարում տրավմայի զոհերի հետ

Այս ուղեցույցները պետք է լրացնեն նախորդ բաժնում նշված [միգրանտների հետ հարցազրույց վարելու](#) մասին ուղեցույցը և ավելի լայն համատեքստում՝ [աղբյուրների ձևավորման և պաշտպանության](#) մասին ուղեցույցը:

Ի՞նչ է տրավման

«Ամենայն իմաստով՝ հոգեբանական տրավմատիկ իրադարձության կամ կրիտիկական միջադեպի հնարավոր է տալ հետևյալ նկարագրությունը. անձի հետ կապված ցանկացած իրադարձություն, որն անսպասելի է, անձի մարդկային փորձառությունների սովորական շրջանակից դուրս է և կապված է ինչ-որ տեսակի կորստի, վնասի կամ վնասի սպառնալիքի հետ՝ իրական կամ ենթադրյալ»:

Աղբյուր՝ Ժուռնալիզմի և տրավմայի Դարթի կենտրոնը⁷⁸

Օգտվեք այս բաժնից, երբ պատրաստվում եք տրավմա վերապրած անձի հետ հարցազրույցի: Միգրացիայի դեպքում կարող է լինել մարդային թրաֆիքինգ կամ ստրկություն վերապրած անձ, փախստական կամ ապաստան հայցող, ով հայրենիքից մեկնելուց առաջ, ընթացքում կամ հետո ունեցել է բռնության կամ վախի փորձառություն, կամ ցանկացած միգրանտ, ով ենթարկվել է ճնշման կամ խտրականության:

Ժամանակ հատկացրեք, երբ գրուցում եք խոցելի մարդկանց հետ: Թրաֆիքինգ վերապրած անձանց հետ կապ հաստատելը, օրինակ, կարող է բարդ լինել և պետք է արվի բացառիկ զգուշությամբ: Սակայն չափազանց կարևոր է այս պատմությունները հիմնական լրահոս բերել, լույս սփռել հաճախ թաքնված գործընթացների և մարդու իրավունքների խախտումներ վրա, ինչպես նաև ընդլայնել հասարակության ընկալումը, մարդկային դեմք հաղորդել քաղաքական բանավեճի թեմաներին և քաջալերել քաղաքական ավելի պատշաճ արձագանքները:

Ռեսուրսներ:

Տրավմա վերապրածների հետ հարցազրույցներ վարելու հետևյալ ուղեցույցները, ցուցումները և առաջարկությունները հետևյալ ռեսուրսների խմբագրված ամփոփումն են՝

- [Մարդկային թրաֆիքինգի ռեսուրսներ. Լուսաբանման լավագույն սովորույթները](#), հեղինակներ [Մալիա Ղուլիսցյան](#), [Մարթա Մենդոսա](#), ՀԼԳՑ համար:⁷⁹

⁷⁸ https://dartcenter.org/sites/default/files/DCE_JournoTraumaHandbook.pdf

⁷⁹ <https://gijn.org/human-trafficking-resources-best-practices-in-reporting/>

- [Փախստականների հետ հարցազրույց և կարեկցանքով հարցազրույց վարելու խորհուրդ](#), հեղինակ՝ Շերի Ռիկիարդի, ԼՄՑ-ի համար:⁸⁰
- [Տրավմա և լրագրություն. Ուղեգույց լրագրողների, խմբագիրների և կառավարիչների համար](#), հեղինակ՝ Մարկ Բրայն, Լրագրության և տրավմայի Դարթ կենտրոնի համար:⁸¹
- [Փախստականների մասին լուսաբանում. Ճզնաժամը լուսաբանելու խորհուրդներ](#), Լրագրության և տրավմայի Դարթ կենտրոն (2007թ.):⁸²
- [Տրավմայի լուսաբանում – վերապատրաստման ուղեգույց](#), Radio for Peacebuilding Africa (2011թ.)⁸³
- [Մեղիա և մարդկանց թրաֆիքինգ - Ուղեգույցեր](#), (ՄԶՄՄԿ/ԷԼՑ) (2017թ.)⁸⁴

Հուսով ենք, որ կօգտվեք այս ամփոփումից և վերոնշյալ ռեսուրսներից՝ տրավմայի մասին ձեր անմիջական գիտելիքը և ընկալումն ընդլայնելու համար, ինչը կօգնի բարելավել ձեր աշխատանքը մի քանի ուղղությամբ՝

- Դուք կտաք ավելի լավ և զգայուն հարցեր:
- Ձեր լրագրությունը կդառնա ավելի որակյալ և զգայուն:
- Դուք կհեղինակեք ավելի լավ պատմություններ:

--

Սկսենք ամենակարևոր սկզբունքներից:

Մի՛ վնասիր

- Հարցազրույց տվող յուրաքանչյուր անձի վերաբերվեք այնպես՝ կարծես վնաս հասցնելու հավանականությունը ծայրահեղ աստիճանի է, մինչև չի նեն հակառակ ապացույցներ:
- Մի՛ նախաձեռնեք հարցազրույց, որը կարճատև կամ երկարատև հեռանկարում ավելի կվատացնի նրանց իրավիճակը:
- Երեխաների հետ աշխատելու ընթացքում հրամայական սկզբունք է՝ առաջնահերթ նկատել երեխայի լավագույն շահը, այսինքն՝ երեխային առնչվող ձեր գործողությունները և որոշումները հարգում են երեխայի տեսակետները, բարօրությունը, իրավունքները և զարգացումը:⁸⁵

Հարգե՛ք անանունությունը և գաղտնիությունը

- Անանունությունն իրավունք է, որից պետք օգտվեն դրա կարիքն ունեցողները, բայց երբեք պետք չէ այն սովորական կարգով շնորհել բոլորին: Երբ խոսքը մարդկանց թրաֆիքինգի մասին է, առավել խոցելի մարդկանց պաշտպանությունը պահանջում է լրագրողներից անանունություն ասպահովել բռնության զոհերին և այն անձնանց,

⁸⁰ <https://ijnet.org/en/story/advice-interviewing-refugees-respect-and-compassion>

⁸¹ https://dartcenter.org/sites/default/files/DCE_JournoTraumaHandbook.pdf

⁸² <https://dartcenter.org/resources/reporting-refugees-tips-covering-crisis>

⁸³ http://www.sfcg.org/programmes/rfpa/pdf/2011-Covering_Trauma_Color_EN.pdf

⁸⁴ https://www.w.icmpd.org/fileadmin/user_upload/Media_and_THB_Guidelines_EN_WEB.pdf

⁸⁵ <https://www.unicef.org/eca/media/ethical-guidelines>, <https://www.unicef.org/bih/en/reports/media-best-interests-child>

ում ինքնության բացահայտումը կարող է լրացուցիչ վտանգներ առաջացնել նրանց համար՝ անկախ այն հանգամանքից՝ խնդրել են նրանք այդ մասին կամ ոչ:

- Եթե համաձայնում եք ապահովել հարցազրույց տվողի անանունությունը, ապա ձեռքերի, ուրվագծերի կամ չնույնականացվող այլ պատկերները կարող են բավարար լինել:
- Երբեք մի հրապարակեք թրաֆիքինգի գոհ եղած երեխաների պատկերներ: Եթե գոհը չունի ծնող կամ խնամակալ, անգրագետ է կամ չի կարող կարդալ, նրան ներկայացնող պատասխանատու կազմակերպությունը գուրկ է էթիկայից և վստահելի չէ, ապա լրագրողը պետք է առաջնորդվի սեփական խղճով և էթիկական դատողությամբ:

Պատրաստվեք:

- **Ճիշտ ընտրեք և պատրաստեք թարգմանիչներին և գործընկերներին:** Պատրաստեք լուսանկարիչներին, օպերատորներին և թարգմանիչներին՝ ինչպես մոտենալ հարցազրույց տվողին, և բաց քննարկեք՝ արդյոք գոհի ինքնությունը պիտի՞ բացահայտվի կամ՝ ոչ:
- **Պատրաստ եղեք արտակարգ միջամտության:** Պատրաստ եղեք արձագանքել, երբ գոհը/վերապրողը հայտնում է, որ անմիջական վտանգի տակ է: Պահանջվում է իմանալ՝ ինչ ռեսուրսներ են հասանելի օգնության համար և ապահովել, որ նա նույնպես իմանա դրանց մասին:

Նկատի առնելով՝ ինչպես է տրավման ազդում հիշողության վրա՝ վերապրողները կարող են.

- Ի վիճակի չլինել բացարձակ ճշտությամբ պատմել՝ իրականում ինչ է պատահել իրենց և բացատրել՝ ինչ հերթականությամբ են տեղի ունեցել իրադարձությունները:
- Տարբեր պահերի տարբեր կերպ հիշել դեպքերը:
- Չհասկանալ՝ ինչու են տրավմատիկ շրջանի կամ իրադարձության ընթացքում արձագանքել որոշակի ձևով:
- Բաց թողնել մանրամասներ ամոթից/շփոթմունքից ելնելով:
- Չցանկանալ խոսել իրադարձությունների մասին, որոնք նպաստել են իրենց տրավմային:

Ժամանակ է պահանջվում: Ձեզ կարող է չհաջողվել մեկ հարցազրույցի ընթացքում ստանալ այն բոլոր տեղեկությունները, որոնք հույս ունեիք ստանալ: Հնարավորության դեպքում և հարցազրույց տվողի ու ձեր պատմության շահերից ելնելով՝ փորձեք կազմակերպել մի քանի հանդիպում, ինչպես նաև հնարավորություն տվեք հարցազրույց տվողին՝ հետագայում վերադառնալ հարցազրույցին: Ծատ ավելի մեծ է հավանականությունը, որ դուք կստանաք պատմությունը, եթե տրավմա կրած անձանց ժամանակ տրվի՝ վստահություն ձևավորել ձեր հանդեպ:

Ապրումակցում և հարգանք

- Ակնհայտ է հնչում, բայց, նախ, հարցազրույց տվողի մեջ տեսեք անձ, այլ ոչ թե փախստական կամ թրաֆիքինգի գոհ: Աշխատեք ապրումակցումով և հարգանքով, ոչ թե՛ խղճալով և մեծամտորեն: Տրավմայի վերստին ապրումը ծանր վնաս է

հասցնում: Ասեք զոհերին՝ որքան եք գնահատում իրենց պատմություններով կիսվելու պատրաստակամությունը:

- Բարությունը և մեծահոգության պարզ արարքները կարող են մեծ նշանակություն ունենալ վստահություն ձևավորելու հարցում:

Տրավմայի զոհերի հետ հարցազրույցի ընթացքում

- **Ղեկն իրենց ձեռքում է:** Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ կարող են ցանկացած պահի դադարեցնել հարցազրույցը: Նրանք պարտավոր չեն պատասխանել այն հարցերին, որոնց չեն ցանկանում պատասխանել:
- **Ինքնանույնականացում:** Հարցրեք, որ եզրույթների հետ է նույնացնում իրեն հարցազրույց տվողը և օգտագործեք դրանք ձեր պատմության մեջ, օրինակ՝ երկրի ներսում/աշխատանքային/երեխաների թրաֆիքինգի զոհ/վերապրող:
- **Հետևեք նրանց:** Լսեք հարցազրույց տվողին և հարգեք նրա իրավիճակն ու ռիսկի ընկալումը: Մի ստիպեք նրանք քննարկել հարցեր, որոնց մասին չեն ցանկանում խոսել:
- **Ամբողջ ընթացքում խնդրեք համաձայնությունը:** Եթե հետագայում նրանք հրաժարվում են համաձայնությունից, մի օգտագործեք հարցազրույցը (նույնիսկ եթե սկզբում նրանք տվել են համաձայնություն): Եթե նախապես տվել են տեսագրելու/լուսանկարելու թույլտվություն՝ մինչև դա փաստացի անելը կրկին հարցրեք նրանց:
- **Բացատրեք ձեր անելիքները՝** ինչո՞ւ եք անում այն, ինչ անում եք, և ձեր լուսաբանման հնարավոր հետևանքները: Հարցազրույց տվողի հետ պայմանավորվեք, որ հույս ունեք զրուցել ինչ-որ կոնկրետ հարցի շուրջ: Հետո խնդրեք նրան՝ հնարավորինս ծավալուն պատմել այդ իրադարձության կամ թեմայի մասին:⁸⁶
- **Մի սկսեք դժվար հարցերից:** Մինչև նրանց ամենախոցելի պահի մասին հարցեր տալը՝ տրավմա վերապրածներին հարցեր տվեք իրենց մասին, և որոշակի պատկերացում կազմեք նրանց կյանքի մասին:
- **Խուսափեք գլխավոր իրադարձությունների մասին բաց հարցերից:** Մի տվեք նմանատիպ հարցեր. «Ի՞նչ էիր զգում»/«Պատմիր ինձ քո պատմությունը»/«Գիտեմ՝ ինչ էիր զգում»:
- Եթե հնարավոր է, **խուսափեք զոհի պատմածն ուղղակի կասկածի տակ դնելուց**, բայց խնդրեք պարզաբանել, երբ անհրաժեշտ է և տեղին:
- **Ասեք հետևյալը:** «Այդ ամենը եղավ, երբ դուք ձեր Y երկրում էիք, իսկ այժմ մենք միասին X երկրում ենք»/«Ցավում եմ ձեր կորստի համար»/«Շատ եմ ցավում այն ամենի համար, ինչի միջոցով այժմ անցնում եք»:

Ինչպես պարզել, որ հարցազրույց տվողը կրկին ենթարկվում է տրավմայի

- **Հետևեք** անապահով զգալու (նայում են դռանը կամ շուրջբոլորը սենյակում) կամ բացասական կերպով տրավման վերհիշելու (լացում են, հաճախակի շնչում, առանց պատճառի շոգում) և դեպրեսիայի մեջ ընկնելու կամ անջատվելու (վերացականանում են, դառնում չարձագանքող) նշաններին:

⁸⁶ <https://dartcenter.org/resources/reporting-refugees-tips-covering-crisis>

Վերակողմնորոշում: Եթե նկատում եք վերատրավմատիզացիայի նշաններ՝

- Հետքայլ արեք և հարցրեք՝ ինչ կարող եք անել, որ իրենց ավելի ապահով կամ հանգիստ զգան:
- Շարունակեք խոսել: Հարցեր տվեք ընթացիկ վիճակի մասին. «Կարո՞ղ եք ասել՝ որտեղ եք», «Կարո՞ղ եք նկարագրել՝ ինչ տեսք ունի սենյակը»: Նմանատիպ հարցերն ավելի օգտակար են, քան «Կա՞վ եք» կարգի ընդհանուր հարցերը:

Ինչո՞ւ այս մոտեցումը: «Մարդիկ տրավմաներ են ստանում առանց իրենց թույլտվության: Պատասխանատու լրագրողները լուսաբանման և պատմությունը գրելու բոլոր փուլերում պետք է համոզվի, որ վերապրողներն ազատորեն են տալիս իրենց թույլտվությունը: Ոչ մեկ չպետք է ունենա այն զգացումը, որ իրեն ստիպում են հարցազրույց տալ»:⁸⁷ (Աղբյուր՝ [Տրավմայի լուսաբանում – Վերապատրաստման ուղեցույց](#))

Հարցազրույցից հետո

- Արտաքին աղբյուրների, իսկ որոշ հանգամանքներում՝ նաև հարցազրույց տվողի հետ **ստուգանքներ** գոհի/տուժողի տրամադրած տեղեկատվությունը: Լրագրության մեջ հազվադեպ երևույթ է հարցազրույցից հետո տրվող հաստատումը, երբ հարցազրույց տվողին հնարավորություն է ընձեռվում՝ հրապարակումից առաջ ծանոթանալ և համաձայնություն տալ հարցազրույցի բովանդակությանը, բայց այս սցենարի դեպքում պետք է դիտարկել այս տարբերակը:
- **Ճիշտ օգտագործեք նրանց պատմությունը:** Եթե ինչ-որ մեկը բավական մեծահոգի է գտնվել և կիսվել է ձեզ հետ իր պատմությամբ, ապա ներկայացրեք այն մանրամասն ճշտությամբ, գրավիչ և բովանդակային կերպով: Սա հանրության ուշադրությունը խնդրի վրա հրավիրելու ձևերից մեկն է՝ քայլ դեպի լուծում:

Գրելու և խմբագրելու ընթացքը

- **Խուսափեք ցնցող վերնագրերից**, որոնք որևէ օգտակար բան չեն ասում իրադարձության կամ ներգրավված մարդկանց մասին: Փոխարենը, գտեք պատմություն և վերնագիր, որոնք արտացոլում են անձի դժվարությունները, փորձառությունները և ավելի լայն կոնտեքստը: Ջանքեր գործադրեք և կենտրոնացեք այն հատկանիշների վրա, որոնք դարձնում են անձին բացառիկ, այլ ոչ թե մեկը՝ միլիոն տառապյալներից:
- **Կենտրոնացեք վերականգնման և ապագայի հեռանկարների շուրջ:** Մտածեք՝ ինչպես նրանք կարող են փորձել իմաստավորել այն, ինչ պատահեց իրենց, և ապագայի հետ կապված իրենց հույսերը: Նմանատիպ պատմություններն ավելի արժեքավոր են ձեր լսարանի համար, չեն խրախուսում կարծրատիպերը և ավելի հարգալից են ձեր լուսաբանած անձի կամ անձանց նկատմամբ:
- Կենտրոնանում է հարցազրույց տվողի դրական փորձառության շուրջ:

⁸⁷ http://www.sfcg.org/programmes/rfpa/pdf/2011-Covering_Trauma_Color_EN.pdf

Վերջապես, հոգատար եղեր ձեր և ձեր գործընկերների հանդեպ:

Ճգնաժամեր լուսարանելու ընթացքում լրագրողները նույնպես կարող են ունենալ տրավմատիկ փորձառություն: Ինչպես [վկայում է 2017 թվականի մի հետազոտություն](#)՝ լրագրողները նույնպես կարող են կրել «բարոյական վնաս», որն է՝ «անձնական բարոյական և էթիկական արժեքները կամ վարքականոնները ոտնահարող գործողություններ կատարելու, դրանց ականատեսը լինելու կամ նման գործողությունները չկանխելու միջոցով անձի խղճմտանքին կամ բարոյական սկզբունքներին հասցված վնաս»:⁸⁸

Խոցելի անձանց հետ հարցազրույց վարելու օրինակ

- Գերմանիայում ժամանակակից ստրկության մասին ԱՌԴ-ի պատրաստած հետևյալ վավերագրական ֆիլմում, որն անդրադառնում է հարկադիր աշխատանքին, կենցաղային ստրկությանը և սեռական շահագործմանը, լրագրողները գրուցում են վերապրողների, սոցիալական աշխատողների, ՀԿ-ների և ոստիկանության ծառայողների հետ Գերմանիայում ժամանակակից ստրկությանը վերջ դնելու ուղիներ գտնելու մասին:

<http://programm.ard.de/TV/Themenschwerpunkte/Politik/Aktuelle-Reportagen/Startseite/?sendung=28487337027833>

Հարցազրույցի վարում հյուրընկալող համայնքների հետ և բարդությունների հանգուցալուծում

Շատ հաճախ լրագրողները փնտրում են ցիտատներ, որոնք հարմար են այն պատմությանը, որը նրանց հանձնարարել են գրել, կամ որը սպասվում է նրանցից: Մեզ համար ավելի հեշտ է գրել պարզ, քան բարդ պատմությունների և պատմությունների մասին: Սակայն այս մոտեցումը չի նպաստում լավագույն լրագրությանը և որևէ օգուտ չի տալիս մեր լսարանին կամ այն մարդկանց, որոնցից հարցազրույց ենք վերցնում:

Այս բաժնում առաջարկում ենք որոշ մեթոդներ և հարցազրույցի հարցեր, որոնք կօգնեն ձեզ բացահայտել բարդությունները, երբ գործ ունեք բնակության երկրներում միգրացիայի նկատմամբ մարդկանց հնարավոր վերաբերմունքի հետ:

Այս հարցերը [Լուծումների լրագրության ցանցի](#) հրատարակած «[22 հարցեր, որոնք բարդացնում են պատմությունը](#)» ձեռնարկի մի մասի ադապտացումն են: Խորհուրդ ենք տալիս ընթերցել բոլոր հարցերը հետևյալ [հղումով](#):⁸⁹

Մրեք հակասությունները և լայնացրեք օբյեկտիվը

- «Ինչպե՞ս եք որոշում, որ տեղեկատվությանը վստահել»

⁸⁸ The Emotional Toll on Journalists Covering the Refugee Crisis, INSI (2017)

<https://reutersinstitute.politics.ox.ac.uk/sites/default/files/research/files/Storm%20and%20Feinstein%20-%20Emotional%20Toll.pdf>

⁸⁹ https://s3.amazonaws.com/sjn-static/CTN_Interview_Qs.pdf

- «Ի՞նչն է գերպարզեցված այս խնդրի դեպքում»
- «Գոյություն ունի՞ [մյուս կողմի] դիրքորոշման որևէ մաս, որն իմաստ ունի ձեզ համար»

Հարցեր տվեք, որոնք անդրադառնում են մարդկանց շարժառիթներին

- «Ինչո՞ւ է սա կարևոր ձեզ համար»
- «Ո՞ր փորձառություններն են ձևավորել ձեր տեսակետերը»
- «Ի՞նչ եք ցանկանում, որ մյուս կողմը հասկանա ձեր մասին»
- «Ի՞նչ եք ցանկանում հասկանալ մյուս կողմի մասին»
- «Ինչպե՞ս է սա ազդել ձեր կյանքի վրա»

Լսեք ավելին և ավելի լավ

- «Ինձ ավելին պատմեք այդ մասին»
- «Ի՞նչ եք զգում, երբ պատմում եք այս պատմությունը»
- «Որտեղի՞ց է դա (զգացումը, զգացմունքը, պարանոյան, վստահության բացակայությունը) գալիս»
- «Ո՞ր հարցն է, որ ոչ ոք չի տալիս»

Մարդկանց ներկայացրեք այլ տեսակետեր և հակադարձեք հաստատման կողմնակալությանը

- «Ձեր կարծիքով մյուս խումբն ի՞նչ է կարծիք ունի ձեր մասին»
- «Ձեր կարծիքով ի՞նչ է ցանկանում մյուս խումբը»
- «Ի՞նչ արդեն գիտեք և ի՞նչ եք ցանկանում հասկանալ մյուս կողմի մասին»
- «Օգնեք ինձ հասկանալ սա: Քանի որ շատ այլ մարդիկ ասում են X»
- «Կա՞ ձեր կամ ձեր տեսակետերն ունեցող մարդկանց մեղիա լուսաբանման մեջ ինչ-որ բան, որը թվում է սխալ»

ԵԾՐԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Զեռնարկի մնացած հատվածների համեմատ՝ այս գլուխը բավականին կարգադրողական է: Հուսով ենք, որ մեր առաջարկություններով սահմանափակված զգալու փոխարեն, այն վստահություն կտա ձեզ հարցազրույցներին պատրաստվելու և ավելի լավ պատմություններ հեղինակելու համար: Սա հսկայական ոլորտ է, և մենք առավելագույն ջանքերն ենք գործադրել ամենակարևոր և վերաբերելի խորհուրդները և առաջարկությունները ներառելու համար: Հուսով ենք, որ այս բաժինը ցատկահարթակ կլինի ոչ միայն միգրացիային, այլև ձեր ամբողջ աշխատանքին առնչվող հարցազրույց վարելու մեթոդների մասին լրացուցիչ տեղեկություններ որոնելու համար:

ԳԼՈՒԽ 8. ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ

Օգտագործեք այս գրուիչը, որպեսզի՝

- Մտորեք այն մասին՝ ինչպես ձեր աշխատանքում լավագույնս օգտագործել փորձագիտական աղբյուրները:
- Գիտարկեք կողմ և դեմ փաստարկները և լավագույն մոտեցումների փորձագիտական տարբեր աղբյուրների օգտագործմամբ:
 - [Գիտնականներ](#)
 - [Հետազոտական կենտրոններ](#)
 - [Հիմնադրամներ և ՀԿ-ներ](#)
 - [Քաղաքական գործիչներ](#)
 - [Պետական մարմիններ և ազգային վիճակագրական կազմակերպություններ](#)
 - [Միջկառավարական կազմակերպություններ](#)
 - [Միություններ և գործարար միավորումներ](#)

ՈՒՂՂՈՐԴԻՉ ՊԱՏՈՒՀԱՆ:

- Միգրանտների և «հյուրընկալող համայնքների» հետ հարցազրույցներ վարելու կոնկրետ խորհուրդների համար տե՛ս՝ Գլուխ 7. [Հարցազրույցներ](#):
- Տվյալների և հետազոտության օգտագործման մասին տե՛ս՝ Գլուխ 9. [Տվյալներ և վերլուծություն](#)

Ներածություն

Միգրացիան հսկայական և բարդ թեմա է, որը մեծ հետևանքներ է առաջացնում թե՛ անհատների, թե՛ ամբողջ հասարակության համար: Միգրացիայի յուրաքանչյուր տարրի՝ տվյալների, տնտեսական և քաղաքական հետևանքների, իրավական հարցերի, սոցիալական ազդեցության ընկալումը կարող է ամբողջ կյանքի աշխատանք լինել բազմաթիվ գիտնականների համար: Հետևաբար, մեզ անհրաժեշտ են փորձագետներ, որոնք կօգնեն մեզ՝ կողմնորոշվել այս խրթին դաշտում: Բայց ինչպե՞ս ենք որոշում՝ որ փորձագետներին օգտագործել և որտեղի՞ց գիտենք, թե կարող ենք վստահել նրանց:

Որպես լրագրող՝ դուք կարևորագույն դեր ունեք թե՛ միգրացիայի մասին հասարակական կարծիք ձևավորելու հարցում, թե՛ սահմանելու ձեր լսարանի համար ինչ տեսակի փորձագիտական գիտելիք է հնչում և ինչ տարբեր տեսակետեր են ներկայացվում:

Այս բաժինը ներկայացնում է ձեզ որոշ առանցքային փորձագիտական ձայներ միգրացիայի խնդիրների վերաբերյալ, որոնց հետ, հավանական է, առնչվեք խնդիրը լուսաբանելու

ընթացքում, և շեշտում՝ ինչ կարող են նրանք առաջարկել, ինչպես նաև՝ որոնք են փորձագիտության որոշակի տեսակի վրա հիմնվելու թերությունները:

Կարևոր է գիտակցել, որ [միգրանտների հետ հարցազրույցի վարման](#) ուղեցույցն առանձին գլխում ներկայացնելու հանգամանքը չի ենթադրում, որ նրանք՝ իրենց փորձառությունների հարցում փորձագետ չեն կամ էլ նրանց վկայությունը պակաս վավերական է, քան այն խմբերինը, որոնք ընդգրկված են այս բաժնում:

Ինչպես տարբերել լավ ապացույցը վատից

Չկա ապացույցի մի ձև կամ աղբյուրի տեսակ, որը կարելի է համարել արմատապես ավելի լավ, քան մյուսները: Բոլորն էլ ունեն առավելություններ և թերություններ, իսկ ապացույցների ճշտությունը և արժանահավատությունը պայմանավորված են այն անհատներով, որոնք գրառվում են դրանց հավաքագրմամբ, ներկայացմամբ և տարածմամբ: Աղբյուրների ներկայացրած փաստերը և միգրացիայի մասին կատարված պնդումներն ստուգելու և հաստատելու գործընթացները հաճախ տարբերվում են, ինչը կախված է կոնկրետ տեղեկատվությունից, որի հետ աշխատում եք: Խնդրահարույց ապացույցներից ամենահիմնական պաշտպանությունը պնդումների խաչաձև ստուգումն է, ինչպես նաև համոզվելը, որ դրանք հաստատում են բազմաթիվ, անկախ աղբյուրներ:

Պարզ ստուգաթերթիկ է, որը կարելի է նկատի առնել, երբ գործ ունեք ցանկացած ապացույցի հետ՝

- 1) Այն արժանահավատ է: Բավարարո՞ւմ է այն հիմնական պահանջը, որ ստացված լինի անձից, ով գիտի՝ ինչի մասին է խոսում, և չլինեն բացահայտ գործոններ, որոնք հավանական են դարձնում այդ ապացույցի կեղծ լինելը:
- 2) Այն վավերական է: Արդյոք ապացույցը գնահատո՞ւմ կամ արձանագրո՞ւմ է այն, ինչը ենթադրվում է, և համապատասխանո՞ւմ է իրական արդյունքներին, որոնք հնարավոր է ստուգանքով:
- 3) Այն հուսալի՞ է: Արդյոք հստակ է, որ այդ ապացույցը տված գործընթացը կրկնելու դեպքում կառուցվի նույն պատասխանը:

Ապացույցների հետ աշխատելու այս պարզ ուղեցույցն ադապտացվել է [2020 թվականի վերջին Scientific American-ում հրատարակված](#) հոդվածից, որտեղ քննարկվում է հետևյալ հարցը՝ ինչպես իմանալ՝ կարո՞ղ եք վստահել «փորձագետներին», որոնց հետ աշխատում եք:⁹⁰

Թեև բուն հոդվածը (որն արժե կարդալ ամբողջությամբ) նվիրված է ԲՈՎԻԴ-19 համավարակին, սակայն դրանում տրված խորհուրդը կիրառելի է նաև միգրացիայի (և ցանկացած այլ) ապացույցների վերլուծությանը:

- 1) Ո՞ր ոլորտների գիտելիք է անհրաժեշտ պարզելու համար՝ արդյոք «ապացույցները», որոնց հետ աշխատում եք, ճիշտ են (տնտեսագիտություն, ժողովրդագրություն, քաղաքականություն, սոցիոլոգիա կամ այլ):

⁹⁰ <https://blogs.scientificamerican.com/observations/which-experts-should-you-listen-to-during-the-pandemic/>

- 2) Արդյոք «սպացույցներ» տրամադրող լրաբերն ունի՞ կրթություն և աշխատանքի հաջողված փորձ այն նեղ ոլորտում, որը ներկայացնում է: (Մի՞ տպավորվեք նրա ընդհանուր կարգավիճակով, հարցեր տվեք կոնկրետ այն տեղեկությունների իմացության մասին, որի հետ աշխատում եք):
- 3) Ամենակարևորը՝ գոյություն ունե՞ն բազմակի անկախ աղբյուրներ, որոնք հաստատում են ներկայացված պնդումը: Արդյոք լրաբերը ներկայացնո՞ւմ է տեղեկատվությունը բազմաթիվ փորձագետների կամ մեկ փորձագետի անունից: Խաչաձև ստուգեք պնդումները և մի վստահեք միայն մեկ փորձագետի, վստահեք «փորձագետներին» (հոգնակի):

Գիտնականներ

Շատերի համար գիտնականները փորձագետներ են, որոնք մասնագիտանում են որոշակի թեմաների հետազոտության մեջ և, հետևաբար, ունեն խորը գիտելիք և ընկալում: Նրանց կապը հեղինակավոր գիտահետազոտական ինստիտուտների հետ օգնում է նաև արժանահավատություն ավելացնել ձեր պատմություններին, իսկ գիտական սպացույցների օգտագործումը հանախ վկայում է այն մասին, որ դուք ջանքեր եք գործադրել ձեր լուսաբանած թեման մանրամասն հասկանալու համար:

Գիտնականների հետ աշխատելու առավելությունները

Գիտնականները հրաշալի աղբյուր են լրագրողների համար: Նրանք ապահովում են մանրամասն և հիմնավոր վերլուծություն, ինչպես նաև կարող են բացատրել բարդ տեխնիկական խնդիրներ: Թեմայի վերաբերյալ նրանք կարող են նաև ապահովել զանազան և ավելի հավասարակշռված տեսակետեր, ինչպես նաև մատնանշել այլ տարրեր և կոնտենտ, որը դուք նախկինում չեք դիտարկել:

Գիտնականները կարող են նաև օգտակար լինել՝ տրամադրելով և մեկնաբանելով տվյալներ և բացատրելով՝ ինչն է անհայտ, և ինչն է հայտնի, օգնելով ձեզ հասկանալ, երբ այլ աղբյուրներից եկող պնդումները կարող են գերազանցել փաստացի տվյալները կամ սպացույցները:

Գիտնականների հետ աշխատելու թերությունները

Պարտադիր չէ, որ փորձագիտությունը ենթադրի քաղաքական անկախություն կամ չեզոքություն տվյալ թեմայի վերաբերյալ: Բազմաթիվ գիտնականներ ձևավորել են իրենց փորձագիտությունն՝ ուսումնասիրության առարկայի հարցում խիստ մոտիվացված լինելու շնորհիվ: Հետևաբար, նրանց տեղեկատվությունը, մի կողմից, կարող է լինել ճշգրիտ և չափազանց արժանահավատ, իսկ մյուս կողմից՝ հաջողությամբ օգտագործվել կոնկրետ տեսակետ առաջ մղելու համար:

Այն փաստը, որ գիտնականները ոչ թե ունիվերսալիստ են, այլ՝ նեղ մասնագետ, ունի իր դրական և բացասական կողմերը: Եթե դիմում եք գիտնականի, ում փորձագիտության ոլորտը համընկնում է ձեր լուսաբանման թեմային, ապա դա կարող է շատ պտղաբեր լինել,

սակայն այն փաստը, որ գիտնականը զբաղվում է միգրացիայի հարցերով, դեռ չի նշանակում, որ նա կկարողանա պատասխանել ձեր կոնկրետ հարցերին:

Գիտնականները կարող են առաջնահերթ չհամարել (կամ նույնիսկ չցանկանալ) մեդիայի ուշադրությունը, հետևաբար՝ ձեզանից կարող է պահանջվել լուրջ աշխատանք նրանց ներգրավելու համար, իսկ հաջողելու դեպքում նրանք կարող են տրամադրել ձեզ բարդ կամ խիստ տեխնիկական պատասխաններ, որոնք միգրացիայի փաստացի չտան ձեզ այն, ինչ պետք է ձեր լսարանին:

Գտնել գիտնականների

Ձեր բնակության երկրում գտնվող համալսարանները սովորաբար հետաքրքրված են երկրին ներհատուկ խնդիրներով և պետք է լինեն լավ մեկնարկային կետ: Միգրացիայի խնդիրներով սովորաբար զբաղվում են Մարդաբանության, Ժողովրդագրության և հումանիտար գիտությունների, Չարագման հետազոտությունների, Տնտեսագիտության, Աշխարհագրության, Իրավաբանության, Սոցիոլոգիայի, Աստվածաբանության ֆակուլտետները:

Որտեղ որոնել

- ՄՄԻՍՀԵ-ի Միգրացիայի փորձագետների տվյալների միջազգային շտեմարան <https://migrationresearch.com/experts>
- ԿՈՄՊԱՍ, Օքսֆորդի համալսարան <https://www.compas.ox.ac.uk/>
- ՄԱՈՒ-ՄԵՐԻՏ/Մասսոքիիտի համալսարան <https://www.merit.unu.edu/themes/6-migration-and-development/>
- Փախստականների հարցերի ուսումնասիրությունների կենտրոն <https://www.rsc.ox.ac.uk/research>
- Միգրացիոն քաղաքականության կենտրոն <http://www.migrationpolicycentre.eu/>
- Միգրացիայի օբսերվատորիա (կենտրոնացված ՄԹ-ի շուրջ) <https://migrationobservatory.ox.ac.uk/>

Հետազոտական կենտրոններ

Հետազոտական կենտրոնները հետազոտական մարմիններ են, որոնք հատուկ ստեղծվում են սոցիալական և քաղաքական խնդիրներ վերլուծելու նպատակով: Ի տարբերություն գիտնականների՝ կենտրոնները հաճախ ստեղծվում են շահերի պաշտպանության աշխատանք իրականացնելու նպատակով և կարող են նաև ունենալ քաղաքական օրակարգեր կամ գաղափարախոսություններ առաջ տանելու գաղտնի կամ բացահայտ նպատակ: Հետազոտական կենտրոնների որակը և անկախությունը տարբերվում են երկրից երկիր:

Հետազոտական կենտրոնների հետ աշխատելու առավելությունները

Հաճախ հետազոտական կենտրոնները պատմությունների հրաշալի աղբյուր են: Դրանք ժամանակին տրամադրում են համոզիչ զեկույցներ և պատասխաններ, հաճախ շահագրգռված են համագործակցել մեդիայի հետ: Կենտրոնները հաճախ աշխատանքի են

վերցնում փորձագետների (իրականում, բազմաթիվ գիտնականներ իրենց կարիերայի որոշակի կետում սկսում են աշխատել հետազոտական կենտրոնների համար կամ պատվիրում են պատրաստել զեկույցներ, երբ նրանք դեռ աշխատում են իրենց գիտահետազոտական ինստիտուտներում) և կատարում որակյալ կամ հետաքրքիր հետազոտություն, որը հարմարեցված է տեղական կոնտեքստին:

Հետազոտական կենտրոնների հետ աշխատելու թերությունները

Սակայն, ինչպես նշված է վերը, հետազոտական կենտրոնները կարող են քաղաքական և/կամ գաղափարական իմաստով կողմնակալ լինել և չունենալ անկախություն: Ի տարբերություն գիտնականների՝ նրանց պատրաստած նյութերը չեն անցնում փորձագիտական քննություն և, հետևաբար, պակաս արժանահավատ են, քան գիտական վերլուծությունը: Մեղիայի հետ աշխատելու հետազոտական կենտրոնների ցանկությունը պայմանավորված է քաղաքականության և հասարակության վրա մեղիայի լուսաբանման ազդեցության գիտակցումով, հետևաբար՝ միշտ զգոն եղեք, որ չօգտագործվեք ավելի մեծ քաղաքական խաղում:

Որտեղ որոնել

Հարգանք վայելող որոշ միջազգային հետազոտական կենտրոններ, որոնք զբաղվում են միգրացիայի հարցերով՝

- Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ (ՄԶԻ)՝ <https://www.migrationpolicy.org/>
- Փյու՝ <https://www.pewresearch.org/>
- ՏՀԶԿ՝ <https://data.oecd.org/society.htm#profile-Migration>

Տե՛ս նաև՝

- ՄՄԻՍՀԵ-ի Միգրացիայի փորձագետների տվյալների միջազգային շտեմարան <https://migrationresearch.com/experts>

Հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ)

ՀԿ-ները և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունները հաճախ անմիջականորեն աշխատում են խոցելի կամ անհույս իրավիճակներում գտնվող մարդկանց և մարդու իրավունքների խախտումների կամ այլ վտանգի տակ գտնվող անձանց հետ: Միգրացիայի համատեքստում դրանք կարող են զբաղվել խնդիրների լայն սպեկտրով՝ միգրանտ համայնքներում ինտեգրման հնարավորությունների բացակայությունից կամ վատ կրթությունից և աշխատաշուկայի հետևանքներից մինչև անհատի կյանքին և/կամ ազատությանը սպառնացող լուրջ ռիսկեր:

Նմանատիպ կազմակերպությունները կարող են չափազանց արժեքավոր լինել միգրացիա լուսաբանող լրագրողների համար՝ մատչելի դարձնելով օրինակների վերլուծություններ և

պատմություններ, ընդգծելով քաղաքականությունների կամ հասարակական նորմերի ազդեցությունները միգրանտների և տեղական համայնքների վրա: Դրանք հաճախ ունեն բարոյական, իրավական կամ էթիկական կայուն դիրքորոշում իրենց հետաքրքրող իրավիճակների առնչությամբ, ինչպես նաև հաճախ ունեն ջատագովության հստակ նպատակներ ձեռք հետ տարվող աշխատանքում:

Այդուհանդերձ, շատ արժեքավոր կարող է լինել դրանց անմիջական կապը դժվար հասանելի խմբերի, օրինակ՝ անկանոն միգրանտների հետ, որոնք այլապես կարող է չցանկանան աշխատել լրագրողի հետ:

ՀԿ-ների հետ աշխատելու առավելությունները

ՀԿ-ները հաճախ անմիջականորեն աշխատում են տարբեր տեսակի միգրանտների, այդ թվում՝ ապաստան հայցողների և փախստականների հետ, և ժամանակին տրամադրում հիմնավոր պատասխաններ: Հետազոտական կենտրոնների օրինակով՝ դրանք հաճախ ներգրավում են փորձագետների, այդ թվում՝ նաև գիտնականների, և կարող են իրականացնել լավ կամ հետաքրքիր հետազոտություն: ՀԿ-ները նույնպես շահագրգռված են համագործակցել լրատվամիջոցների հետ՝ իրենց ռազմավարական նպատակներն առաջ տանելու և իրենց հարցին աջակցություն (երբեմն նաև՝ ֆինանսավորում) ստանալու համար: ՀԿ-ները հաճախ մեկնաբանությունների և վերլուծության լավ աղբյուր են, օգտակար են պատմության գաղափարներ և թեմաներ զարգացնելու համար:

ՀԿ-ների հետ աշխատելու թերությունները

Կրկին, ինչպես հետազոտական կենտրոնները, ՀԿ-ները կարող են քաղաքական և/կամ գաղափարական իմաստով կողմնակալ լինել և չունենալ անկախություն, իսկ դրանց պատրաստած նյութերը չեն անցնում փորձագիտական քննություն և, հետևաբար, պակաս արժանահավատ են, քան գիտական վերլուծությունը: Դրանք չունեն օբյեկտիվ լինելու պատասխանատվություն, իսկ որոշ ՀԿ-ներ կարող են չցանկանալ ընդգծել միգրացիայի այն տարրերը, որոնք համահունչ չեն իրենց օրակարգերին: Որոշ ՀԿ-ներ կարող են հարցազրույց տվողների հետ ձեռք կապելու համար պահանջել իրենց աշխատանքի նպաստավոր լուսաբանում կամ, դրանց քննադատելու դեպքում, սահմանափակել ձեր կապը նրանց հետ:

Որտեղ որոնել

Միջազգային

- Կարմիր խաչի/Կարմիր մահիկի միջազգային կոմիտե (ԿԻՄԿ, որը լայն իմաստով ՀԿ չէ) <https://www.icrc.org/>
- Փախստականների դանիական խորհուրդ <https://drc.ngo/>
- Բժիշկներ առանց սահմանի (Médecins Sans Frontières) <https://www.msf.org/>
- Օքսֆամ <https://www.oxfam.org/>
- ՓԱԵԻՍ <https://www.ecre.org/>
- ԱՄԵԻՍ <http://www.ngo-platform-asylum-migration.eu/>

Քաղաքական գործիչներ

Քաղաքական գործիչները ներգաղթի մասին ազգային և միջազգային բանավեճերի կենտրոնում են, սակայն նրանք մշտապես ունեն սեփական օրակարգ: Սա պատճառ է՝ չօգտվելու նրանց ծառայություններից, սակայն դուք դա պետք է անեք զգուշությամբ: Նրանք շատ օգտակար են մեկնաբանության և վերլուծության, պատմության գաղափարներ և թեմաներ զարգացնելու համար, սակայն դուք միշտ պետք է ճշտեք քաղաքական պնդումներն այլ փորձագետների հետ:

Քաղաքական գործիչների հետ աշխատելու առավելությունները

Սովորաբար, նրանց խոսքը հստակ է և համոզիչ, կենտրոնացած է ընթացիկ խնդիրների և գործերի շուրջ, լավ կապակցված, լավ տեղեկացված՝ քաղաքական զարգացումների և լայն հասարակության անցուղարձի մասին: Նրանք կարող են սերտ կապեր ունենալ պետական մարմիններում և տվյալներ մատակարարողների, ինչպես նաև այլ քաղաքական գործիչների, ՀԿ-ների/քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հետազոտական կենտրոնների հետ: Ավելին, քաղաքական գործիչները, հաճախ, շահագրգռված են մեդիայի հետ կապերով:

Քաղաքական գործիչների հետ աշխատելու թերությունները

Նրանք քաղաքական որոշակի կողմնորոշում ունեն և անկախ չեն, հաճախ նաև՝ փորձագետ չեն: Նրանք կարող են հանդես գալ որպես «դժնապաններ» որոշ փորձագետների համար կամ կապել ձեզ միայն այն փորձագետներին, ովքեր կիսում են իրենց կարծիքը, ինչը կաղնատի պատմության ձեր ընկալումը:

Միշտ հարցրեք, արդյոք քաղաքական գործիչը գերպարզեցնո՞ւմ է խնդիրը: Միգրացիան, միգրանտները և փոքրամասնությունները հեշտ թիրախ են, քանի որ տարբերվում են և այդ պատճառով կարող են ընկալվել որպես սպառնալիք: Տարիներ շարունակ քաղաքական գործիչներն ամեն ինչի համար մեղադրել են միգրանտներին և փոքրամասնություններին՝ սկսած հիվանդություններ տարածելուց և գործազրկության պատճառ հանդիսանալուց՝ մինչև ահաբեկչությամբ զբաղվելն ու բարոյական անկման պատճառ լինելը: Իրականում, այս բոլոր խնդիրների արմատական պատճառները մշտապես շատ ավելի բարդ են: Միշտ ավելի «խորը փորեք» և փնտրեք համակարգային գործոններ, որոնք ձևավորում են խնդիրը, և մի՛ ընդունեք միգրացիայի կամ միգրանտների մասին լավ կամ վատ պնդումը՝ որպես ճշմարտություն:

Պետական մարմիններ և ազգային վիճակագրական կազմակերպություններ

Պետական մարմինները և վիճակագրական կազմակերպությունները միգրացիայի մասին ազգային տվյալների պահոցներ են: Այս իմաստով, դրանք, միգուցե, լավագույն վայրն են ձեզ անհրաժեշտ առանցքային տեղեկատվություն, այն հավաքագրելու ուղիների և բովանդակության մասին բացատրություն ստանալու լավագույն վայրն են: Սովորաբար,

այդ կառույցները հստակ պատկերացում ունեն նաև այն քաղաքականությունների մասին, որոնք ընկած են տվյալների հիմքում:

Ազգային վիճակագրական մարմինների և պետական մարմինների հետ աշխատելու առավելությունները

Հաճախ այդ կառույցները միակ վայրն են, որտեղ պահվում է որոշակի տեսակի տեղեկատվություն, հետևաբար միգրանտ և ոչ միգրանտ բնակչության, սահմանի անցման դեպքերի, տրամադրված մուտքի արտոնագրերի, ինչպես նաև բնակչության խոշորածավալ հետազոտությունների (օրինակ՝ աշխատուժի ուսումնասիրությունների կամ մարդահամարների) վերաբերյալ տվյալների կենսական աղբյուր են: Դրանք հաճախ ունեն բարձրակարգ փորձագետներից կազմված աշխատակազմ՝ խնդիրների մասին խորը գիտելիքներով: Որոշ պետական մարմիններ կարող են միայն ապահովել որոշակի առանցքային տեղանքների (օրինակ՝ կոնկրետ սահմանային անցակետերի կամ միգրանտների պահման վայրերի) և ռեսուրսների, այդ թվում՝ միգրացիոն ոստիկանության հասանելիությունը:

Ազգային վիճակագրական մարմինների և պետական մարմինների հետ աշխատելու թեղությունները

Դժբախտաբար, ոչ բոլոր պետական մարմիններն ու ազգային վիճակագրական մարմիններն են հնարավոր չափով բարեխիղճ կամ անկախ: Որոշ իրավիճակներում նրանց պատրաստած կամ հրապարակած տվյալները կարող են շահարկվել քաղաքական նպատակներով կամ այդ տվյալները կարող են չհրապարակվել, եթե դրանց ներկայացրած պատկերը համահունչ չէ կառավարության պատմություններին: Տվյալների սահմանափակ կամ ոչ արժանահավատ լինելը ևս մեկ ընդհանուր խնդիր է: Նման դեպքում կարող եք նկատի առնել տվյալների բացակայության կամ ձեր աշխատանքում ներկայացված ձևով դրանց սխալ/կանխակալ լինելու մասին գրելու տարբերակը:

Որտեղ որոնել

- Հայաստան՝ <https://www.armstat.am/en/>
- Ադրբեջան՝ <https://www.stat.gov.az/?lang=en>
- Բելառուս՝ www.belstat.gov.by
- Վրաստան՝ <https://www.geostat.ge/en>
- Մոլդովա՝ <http://statistica.gov.md/index.php?l=en>
- Ուկրաինա՝ <http://www.ukrstat.gov.ua/>
- Եվրոստատ՝ <https://ec.europa.eu/eurostat/home>

Միջկառավարական կազմակերպություններ

Միգրացիայի անդրսահմանային բնույթից ելնելով՝ միգրացիայի խնդիրներով զբաղվող ամենակարևոր մարմինների մի մասը միջկառավարական կազմակերպություններ են,

օրինակ՝ ՄԶՄՄԿ-ը, ԵՄ-ը և ՄԱԿ-ի զանազան կառույցներ: Այս կազմակերպությունները որոշակի հեռավորություն են պահպանում կոնկրետ երկրի ազգային քաղաքականությունից, ինչը նշանակում է, որ հաճախ ավելի քիչ են հետաքրքրված միգրացիայի հարցերով ազգային բանավեճում քաղաքական գործիչների կամ հակառակ կողմերի միջև ամենօրյա վեճերով:

Թեև սա կարող է օգտակար լինել և օգնել ազգային խնդիրները տեղադրել կոնտեքստի մեջ, սակայն իրավիճակները, ուր այս կազմակերպությունները կարող են ինչ-որ չափով «հետ քաշվել», կարող է նաև նշանակել, որ այն ինչը կարևոր է թվում ձեզ համար, կարող է չլինել իրենց օրակարգերում:

Այդուհանդերձ, այս կազմակերպությունները մատուցում են ծառայություններ՝ հետազոտություններ, աջակցություն խոցելի անձանց, դիվանագիտական օժանդակություն և քաղաքական վերլուծություն: Դրանք հաճախ տվյալների և վերլուծության, փորձագիտական կարծիքների և օրինակների վերլուծությունների, այլ միջոցներով անհասանելի տեղանքների կամ մարդկանց մատչելիությունն ապահովող չափազանց արժեքավոր աղբյուրներ են: Իրենց աշխատանքային ծրագրերում դրանք հաճախ ներգրավում են գիտնականների և միջազգային փորձագետների:

Միջկառավարական կազմակերպությունների հետ աշխատելու առավելությունները

Այս կազմակերպությունները կարող են ապահովել խիստ փորձագիտական, արժանահավատ և հուսալի վերլուծության մատչելիությունը: Կազմակերպությունները, համեմատաբար, ունեն լավ ֆինանսավորում և կարող են հասցեագրել բազմաթիվ թեմատիկ ոլորտներ: Դրանք կարող են նաև օգնել ձեզ՝ կոնտեքստուալացնել որևէ խնդիր միջազգային, տարածաշրջանային, ազգային կամ տեղական մակարդակում: Կազմակերպությունները վարձում են հմուտ պրոֆեսիոնալների, այդ թվում՝ գիտնականների, հաճախ ճշգրիտ լինելն ապահովելու համար իրականացնում են մանրակրկիտ վերանայման գործընթացներ, լայն իմաստով քաղաքականապես և գաղափարապես չեզոք են: Կարևոր կառույցներ են, ուր կարելի է դիմել միջազգային իրավունքի և նորմերի մասին պարզաբանումներ ստանալու համար:

Միջկառավարական կազմակերպությունների հետ աշխատելու թերությունները

Կազմակերպությունների աշխատանքի մասշտաբը ենթադրում է, որ դրանք կարող են զբաղվել միայն «մեծ» խնդիրներով և, կարծես, կտրված են «հասարակ մարդկանցից»: Դրանց ներկայացրած տվյալները կարող են հին լինել, տրամադրվել նույն խնդրահարույց աղբյուրներից, որոնցից դուք արդեն օգտվում եք, կամ ավելացնել շփոթությունը, քանի որ հակասում են այլ աղբյուրներին: Դրանց բազմակողմ տեսակետը կարող է հակասել ձեր լսարանի կամ ավելի լայն ազգային կամ տեղական մոտեցումներին, ինչպես նաև պատրաստել վերլուծություն, որը չափից ավելի տեխնիկական է, երկար և բարդ:

Որտեղ որոնել

- **ՄՄԿ Տվյալների պորտալ և Գլոբալ միգրացիոն տվյալների վերլուծության կենտրոն (ԳՄՏՎԿ)**՝ https://migrationdataportal.org/?t=2017&i=stock_abs and <https://gmdac.iom.int/>
- **ՄԱԿ-ի Բնակչության բաժին**՝ <https://www.un.org/en/development/desa/population/migration/data/index.asp>
- **ՄԲՄՄԿ**՝ <https://www.icmpd.org/home/>
- **ՄԻԲՀ**՝ <http://www.mipex.eu/>
- **ՄԱՓԳՀ**՝ <http://popstats.unhcr.org/en/overview>
- **ԱՄԿ**՝ <https://ilostat.ilo.org/>
- **Համաշխարհային Բանկ**՝ <https://www.worldbank.org/en/topic/labormarkets/brief/migration-and-remittances>
- **Միգրացիայի, պաստանի և մարդու իրավունքների հարցերին առնչվող ԵՄ մասնագիտացված գործակալություններ**
 - ԱԱԵԳ, <https://www.easo.europa.eu/>
 - ՖՐՈՆՏԵԶՍ, <https://frontex.europa.eu/>
 - ՀԻԵՄԳ, <https://fra.europa.eu/en/about-fra>

(Ամբողջական ցանկի համար տե՛ս՝ Գլուխ 11. [Գործիքներ և ռեսուրսներ](#))

Միություններ և բիզնես կազմակերպություններ

Միգրացիայի լուսաբանման ընթացքում օգտակար կարող են լինել բիզնեսով և արդյունաբերությամբ զբաղվող կազմակերպությունները: Արդեն քննարկել ենք, որ համաշխարհային միգրացիայի խոշոր մաս է աշխատանքային միգրացիան, սակայն, հաճախ, աշխատելու կարիք են ունենում նույնիսկ այլ նպատակներով տեղափոխվող միգրանտները՝ ապաստան հայցողները կամ ընտանիքի անդամի հետ վերամիավորվելու նպատակով տեղափոխվողները: Աշխատողներին ներկայացնող միությունները և գործատուներին ներկայացնող բիզնես կազմակերպություններն իրենց ձեռքը պահում են թե՛ տնտեսության ճյուղերի կարիքների (հաճախ՝ որոշակի հմտություններ գտնելու համար, որոնք, միգուցե, չկան երկրում), թե՛ միգրանտ աշխատողների նկատմամբ վերաբերմունքի զարկերակի վրա:

Միությունների և բիզնես կազմակերպությունների հետ աշխատելու առավելությունները

Դրանք սպեցիֆիկ գիտելիքներ են տրամադրում առանձին ոլորտների և ճյուղերի մասին, ապահովում հրաշալի կապեր և աշխատողների կամ բիզնեսների ղեկավարների մատչելիությունը: Հաճախ դրանք տիրապետում են վերաբերելի իրավական հարցերի մասին հստակ և գործնական գիտելիքների և իրազեկ են գործատուների/աշխատողների վրա իրական ճշումների մասին:

Միությունների և բիզնես կազմակերպությունների հետ աշխատելու թերությունները

Անկախության բացակայությունը և ուրույն տեսակետերը կարող են սահմանափակել կարևորություն ունեցող ավելի լայն կոնտեքստների մասին տեղեկացվածությունը:

Ռեսուրսներ

- ՄՄԻՍՀԵ-ի Միգրացիայի փորձագետների միջազգային տվյալների շտեմարան՝ <https://migrationresearch.com/experts>
- Համաշխարհային հետաքննական լրագրության ցանցը (ՀՀԼՑ) պատրաստել է [Տվյալներ և փորձագիտություն](https://docs.google.com/spreadsheets/d/1a3yzhzzzJslzxtVGVZ7uNx7Q_GhpAVDIboQGDbwy0B4/edit?usp=sharing) ծավալաթերթիկը, որում ներառված են 60-ից ավելի աղբյուրներ, որտեղ կարելի է գտնել տվյալներ և փորձագիտություն՝ https://docs.google.com/spreadsheets/d/1a3yzhzzzJslzxtVGVZ7uNx7Q_GhpAVDIboQGDbwy0B4/edit?usp=sharing

Մարդու իրավունքների և ներգաղթի հարցերով փաստաբաններ

Ներպետական և միջազգային իրավական նորմերի և որոշակի գործերի մասով տեղեկատվության և վերլուծության մեկ այլ օգտակար աղբյուր են ներգաղթի և մարդու իրավունքների գործերով զբաղվող փաստաբանները: Օրենքների նրանց մանրամասն իմացությունը կարող է օգնել ձեր ճշգրիտ լուսաբանմանը և պատասխանատվության կանչել քաղաքականություն մշակողներին:

Ներգաղթի հարցերով փաստաբանների հետ աշխատելու առավելությունները

Նրանք ունեն ներպետական և միջազգային օրենքների և առանձին գործերի հատուկ գիտելիքներ: Երբեմն նրանք անմիջական շփումներ ունեն ազատագրկման մեջ գտնվող միգրանտների հետ, ինչը հնարավորություն է տալիս ձեզ լսելի դարձնել մարդկանց ձայնը, որն այլ ուղիներով չէր լսվի:

Ներգաղթի հարցերով փաստաբանների հետ աշխատելու թերությունները

Միշտ չէ, որ փաստաբանները կարող են ներկայացնել իրենց վարած գործերի հստակ մանրամասներ, ինչպես նաև ակտիվորեն ընդդիմանալ մեղիա լուսաբանմանն այն հիմքով, որ դա կարող է նախատրամադրվածություն ստեղծել իրենց վստահորդի հանդեպ կամ անհարմար վիճակի մեջ դնել նրանց:

ԵԶՐԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշված է այս գլխի սկզբում, չկա ապացույցի մի ձև կամ աղբյուրի տեսակ, որը կարելի է համարել արմատապես ավելի լավը, քան մյուսները: Բոլորն էլ ունեն առավելություններ և թերություններ, իսկ ապացույցների ճշտությունը և արժանահավատությունը պայմանավորված են այն անհատներով, որոնք զբաղվում են դրանց հավաքագրումով, ներկայացումով և տարածումով:

Չափազանց կարևոր է, որ լավ լուսաբանումը հիմնվում է ոչ թե մեկ, այլ բազմակի աղբյուրների, խաչաձև հղումներով և մանրակրկիտ ստուգված վերլուծության վրա: Հիշե՛ք, որ բազմակի աղբյուրներ նշանակում է նաև ձայների բազմազանություն: Երբ հնարավոր է, երաշխավորեք, որ հենց միգրանտները հանդես գան որպես սեփական իրավիճակի փորձագետ, և նրանց ձայն տրվի ձեր նյութում (տե՛ս՝ Գլուխ 7. [Հարցազրույցներ](#) և [Աղբյուրների ձևավորում և պաշտպանություն](#) բաժինը [Պատմության \(ճիշտ\) շարադրմանը](#) նվիրված 6-րդ գլխում):

Վերջապես, ուշադիր լսեք և համոզվեք, որ լուսաբանում եք ոչ թե ամենաբարձր, այլ ամենահստակ կամ ամենախմաստուն ձայները: Մասնավորապես, տղամարդիկ կարող են ընդհատել կանանց կամ ինքնավստահորեն իրենց «առաջ գցել» հարցազրույց տալու, երբ կանայք հակված չեն դա անել: Թույլ մի տվեք, որ ձեր նյութի մեջ լուսաբանվեն աղմկոտ և անզետ տղամարդու մտքերը՝ ավելի լուռ, բայց ավելի լավ տեղեկացված կնոջ հաշվին:

ԳԼՈՒԽ 9. ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Օգտագործեք այս գրուիչը, որպեսզի՝

- *Սովորեք՝ ինչպես բարելավել միգրացիայի մասին տվյալների վերլուծությունը և ներկայացումը:*
- *Դիտարկեք՝ ինչպես տվյալների լրացրությունը և տվյալների վիզուալիզացիան կարող են բարելավել ձեր աշխատանքը:*

Տվյալների և վերլուծության օգտագործման վերաբերյալ լրացուցիչ տե՛ս՝ Գլուխ 8. [Ինչպես գտնել և օգտագործել փորձագետներին](#), որտեղ ներկայացված են զանազան աղբյուրներից ստացվող տեղեկությունների հետ աշխատելու առավելություններն ու թերությունները: Տե՛ս՝ նաև Գլուխ 6. [Պատմության \(ճիշտ\) շարադրում](#):

Միգրացիայի մասին տվյալները ներկայացվում են տարբեր ձևաչափերով՝ սկսած սահմանի անցման, բնակչության քանակի, զբաղվածության մակարդակի և ժողովրդագրական մանրամասների (օրինակ՝ սեռատարիքային) մասին թվային «կարծր» տվյալներից՝ մինչև «փափուկ» որակական վերլուծություն, որի հիմքում ընկած են համայնքների, վկայությունների, գրականության կամ արտեֆակտերի խորքային ուսումնասիրությունը:

Տվյալներ և վերլուծություն. ինչպե՞ս վերլուծել աղբյուրները

Հավատարիմ մնացեք փաստերին, թերահավատ եղեք վիճակագրության հարցում: Միգրացիայի լուսաբանման շատ դեպքերում դժվար է տարանջատել «փաստերը» (որոնց իսկությունը հնարավոր է անկախ եղանակով ստուգել) ենթադրություններից, արժեքներից և եզրահանգումներից: Որոշ դեպքերում բավականին դժվար է որոշել՝ ինչն է «փաստական», քանի որ նույնիսկ խիստ գիտական կանոններով կատարված հետազոտությունը, միգուցե, չհանգի եզրակացությունների, որոնք բացարձակ ճշմարիտ են: Թվերը կարող են պատմություններ դառնալ, բայց դրանք կարող են խաբուսիկ լինել: Լրագրողները պետք է ստուգեն և հետաքննեն պնդումները, որտեղ կան թվեր, պետք է ստուգեն վիճակագրական փաստերի իսկությունը և, անհրաժեշտության դեպքում, նախազգուշացնեն հասարակությանը չստուգված տեղեկությունների մասին: Հաշվի առեք նաև, որ միայն թվերը կարող են միաշափ պատկեր ներկայացնել: Հնարավորության դեպքում փորձեք քանակական տվյալները լրացնել որակական տվյալներով (կամ, ավելի պարզ, համեմատեք ձեր ունեցած թվերը դրանց հետ կապված մարդկային ազդեցությունների և փորձառությունների մասին ապացույցների հետ):

Ազգային և միջազգային վիճակագրական կազմակերպությունների և այս ուղեցույցներում նշված այլ միջազգային մարմինների գնահատումները հաճախ հուսալի են, սակայն դրանք, ամեն դեպքում, գնահատումներ են, և դրանք ստանալու եղանակը պետք է լինի լրագրողական քննության առարկա: Նույն օրինակով՝ նույնիսկ ճանաչված հաստատությունների հետազոտությունները (օրինակ՝ միգրացիայի հետազոտական խաստետումների վերաբերյալ) կարող են ունենալ սխալներ, որոնք կարևոր է հասկանալ և արտացոլել դրանք համապատասխան նյութում:

Ինչպես աշխատել տվյալների հետ. մեկնարկային պարզ կետեր

Քանակական և որակական տվյալները լուծում են տարբեր, բայց հավասարապես կարևոր խնդիրներ: Եթե քանակական տվյալները կարող են պատասխանել մեզ հետաքրքրող ինչ-որ բանի մասին «որքա՞ն» կամ «քանի՞ հատ» հարցերին, ապա որակական տվյալներն ավելի շատ հետաքրքրված են «ինչո՞ւ» հարցով: Հետևաբար, միգրացիայի կոնտեքստում, որտեղ քանակական տվյալները կարող են տեղեկացնել մեզ բնակչության կազմում երևույթի տարածվածության կամ բաշխվածության մասին, ապա որակական տվյալներն ավելի լավ հիմնավորում են պնդումները կյանքի փորձառությունների և անհատական ընկալումների մասին:

Բայց նույնիսկ քանակական տվյալները զուտ թվեր չեն, այլ իրական բաներ ներկայացնող թվեր, որոնք միգրացիայի կոնտեքստում իրական մարդիկ են:

Երբ ձեզ են ներկայացվում միգրացիայի վերաբերյալ տվյալներ՝ ամենաառաջին հարցը, որ պետք է տաք ինքներդ ձեզ հետևյալն է. «ինչպե՞ս են մարդիկ (կամ այլ տեղեկությունները) հայտնվել տվյալների այս հավաքակազմում»: Երբ հստակ պատկերացնում եք՝ ինչպես է դա տեղի ունեցել, ապա, առնվազն, սկսում եք ամուրի հիմքերից: Եթե պատասխանը չունեք, ապա պետք է կամ գտնեք այն, կամ չափազանց զգուշությամբ մոտենաք այն տեղեկատվության ներկայացմանը, որով պատրաստվում եք կիսվել:

Միգրացիայի քանակական տվյալների տարբեր աղբյուրներ ունեն տարբեր առավելություններ և թերություններ:

Դրանց վերաբերյալ օգտակար ուղեցույց կարելի է գտնել Միգրացիայի միջազգային կազմակերպության Գլոբալ միգրացիոն տվյալների վերլուծության կենտրոնում

<https://migrationdataportal.org/infographic/key-sources-migration-data>

Այն բաժանում է այս աղբյուրները՝

- Վիճակագրականի (օրինակ՝ մարդահամարներ և տնային տնտեսությունների հետազոտություններ):
- Վարչականի (օրինակ՝ մուտքի արտոնագրերի և սահմանի անցման մասին տվյալներ):
- Նորարարականի (օրինակ՝ մեծ տվյալներ):

Ճիշտ օգտագործման դեպքում (նաև եթե համապատասխան մարմիններն ի սկզբանե ճիշտ են հավաքագրել տվյալները) աղբյուրներից յուրաքանչյուրը կարող է չափազանց օգտակար լինել, սակայն դրանք բոլորն էլ ունեն իրենց թերությունները:

- Մարդահամարի տվյալները ոսկե ստանդարտ են ներկայացված տեղեկությունների համապարփակ և ճշգրիտ լինելու տեսանկյունից, սակայն մարդահամարը շատ

ծախասատար է և, սովորաբար, կազմակերպվում է տասը տարին մեկ, ինչը նշանակում է, որ տվյալները հնանում են: Բնակչության մարդահամարը և տնային տնտեսությունների ամբողջական հետազոտությունը տեղեկություններ է հավաքում ընտրանքի շրջանակի յուրաքանչյուր տնային տնտեսությունից, սակայն որոշ երկրներ իրականացնում են նաև ավելի փոքրածավալ և ավելի հաճախակի միկրոհետազոտություններ, որոնք ընդգրկում են բնակչության ավելի փոքր, բայց դարձյալ ներկայացուցչական խումբ:

- Մինևույն ժամանակ, տնային տնտեսությունների հետազոտություններն իրականացվում են կանոնավոր և ներկայացնում թարմ տվյալներ, սակայն դրանք միշտ ունեն ավելի փոքր ընտրանք, քան լիարժեք մարդահամարը և, հետևաբար, ունեն ավելի մեծ սխալանք (որոնք հայտնի են նաև որպես «վստահության միջակայք»), այսինքն՝ դրանց ճշտությունն ավելի ցածր է:
- Մուտքի արտոնագրերի և բնակչության թույլտվությունների մասին տվյալները կարող են օգտակար լինել այն մասով, որ տեղեկացնում են ձեզ՝ ով իրավունք ունի գտնվել ձեր երկրում, և ինչ անելու իրավունք ունեն նրանք, սակայն դրանք հաճախ չեն կարող ասել՝ ով է փաստացի գտնվում երկրում, քանի որ մուտքի արտոնագիր ունենալը դեռևս չի նշանակում, որ անձն օգտվում է դրանից: Այդուհանդերձ, եթե դուք կարող եք գտնել տվյալներ տարբեր տեսակի մուտքի արտոնագրերի և բնակչության թույլտվությունների վերաբերյալ (թե՛ հոսքեր, թե՛ թվաքանակներ), կարող եք եզրակացություն անել երկրում միգրացիայի տեսակների մասին: Վարչական տվյալները հաճախ տալիս են ժամանակի որոշակի կետում բնակչության ընդհանուր պատկերը, սակայն չեն ներկայացնել ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները, մասնավորապես, եթե նույն անհատին հնարավոր չէ հետևողականորեն նույնականացնել կամ ժամանակի ընթացքում հնարավոր չէ ներդաշնակեցնել տվյալների աղբյուրներում նրանց մասին մուտքերը:
- Միջազգային կազմակերպությունների կամ ազգային բանկերի կողմից հավաքվող տվյալները փոխանցումների մասին ոչ միայն տեղեկություն է տալիս ֆինանսական փոխանցումների ծավալների մասին, այլև կարող է կարևոր ցուցիչ լինել, որն օգնում է ավելի լավ հասկանալ արտագաղթի ուղղությունները և անգամ դրա չափերը:
- Ապաստանի հայցերի և կայացված որոշումների մասին տվյալները, որոնք հավաքում են ապաստանի համար պատասխանատու մարմինները, սովորաբար այժմեական են, ինչը հնարավորություն է տալիս ձեզ ավելի լավ հասկանալ՝ ով է դիմում ապաստանի համար և ինչ է կազմում այսպես կոչված ճանաչման գործակիցը (դրական որոշումների տոկոսը):
- Սահմանի անցման մասին տվյալները հաճախ կարող են ասել ձեզ՝ երբ (և որտեղից) են անձինք մուտք գործել երկրի տարածք, սակայն շատ բան չեն կարող ասել ձեզ, թե ինչ է լինելու հաջորդիվ: Այդ տվյալները կարող են նաև սխալ ներկայացնել շարժերի մեծությունը, քանի որ դրանք հնարավորություն չեն տալիս՝ նույնականացնել և հետևել կոնկրետ անհատների: Եթե նույն անձն անցնում է սահմանն օրական տասն ազամ, ապա սահմանի անցման մասին տվյալները նշում են 10 անցում, սակայն ցույց չեն տալիս, որ այդ տեղաշարժերը կատարել է նույն անձը:
- Միգրոցե ցանկություն լինի ծանոթանալ նաև միգրացիոն օրենսդրության հարկադրման տվյալների հետ, որոնք կարող են ցույց տալ հարկադիր մեկնած կամ վերադարձած անձանց քանակը և քաղաքացիությունը:
- Նորարարական տվյալների աղբյուրները, օրինակ՝ սոցիալական ցանցերի վերլուծությունից, բջջային հեռախոսների տվյալներից կամ այլ աղբյուրներից

ստացված տեղեկությունները կարող են չափազանց հետաքրքիր լինել, սակայն դրանք էլ հաճախ ընկերությունների սեփական տվյալներն են, և կարող է դժվար լինել՝ հստակ պարզել, թե ինչ են դրանք ասում ձեզ կամ ինչպես են դրանք հավաքվել: Խնդիրներ կան նաև համաձայնություն ստանալու հետ կապված, մասնավորապես, երբ մարդիկ, որոնցից հավաքվում են տվյալները, չգիտեն այն մասին, որ իրենց տվյալները հավաքվում են և դրանցով կիսվում են:

Ինչո՞ւ է դա հետաքրքիր

Տվյալների աղբյուրը շատ կարևոր է, քանի որ տվյալները հաճախ ներկայացվում են որպես փաստ, երբ իրականում դրանք սխալանքի մեծ միջակայք ունեցող գնահատական են կամ, ինչն ավելի վատ է, հիմնված են կեղծ կամ ոչ ճշգրիտ տվյալների հավաքագրման վրա: Երբեմն տվյալները, որոնք օգտագործվում են որոշակի պնդումներ կատարելու համար, չեն ներկայացնում իրականությունը:

Որո՞նք են լուսաբանման ծուղակները: Ի՞նչն են հաճախ բաց թողնում լրատվականները

Ամենամեծ ծուղակը պնդումներն անվերապահ ընդունելն է: Եթե ուշադիր չեք ուսումնասիրել տվյալները, քննության չեք ենթարկել աղբյուրը և չեք հասկացել՝ ինչպես են ստացվել ներկայացված թվերը, ապա դուք ոչ թե լուսաբանում եք փաստեր, այլ հավատքի քայլ եք կատարում: Երբեմն ձեզ չի հաջողվի մինչև սահմանված ժամկետը ստանալ այս բոլոր տեղեկությունները, և այդ դեպքում ձեզ պետք է ներկայացնել տեղեկատվությունը ոչ թե հաստատուն, այլ ոչ միանշանակ կերպով:

Մեկ այլ դյուրին ծուղակ է, երբ շփոթում եք «կոռեյացիան» (երբ երկու փոփոխականներ անում կամ նվազում են հաճախականությամբ, որը, կարծես, նույնն է, և կարող է թվալ փոխկապակցված) «պատճառականության» (երբ մի փոփոխականը փոխվել է մյուս փոփոխականի *պատճառով*) հետ:

Ո՞ր հարցերն է, որ ճիշտ է տալ ինքներդ ձեզ:

- Արդյոք պնդումը հավանական է թվում (կարո՞ղ եք ստուգել այն):
- Տեղեկատվությունը ճի՞շտ է (կարողացե՞լ եք ստուգել այն անկախ եղանակով: Կարո՞ղ եք ասել՝ երբ և ումից են հավաքագրվել տվյալները, որոնք ներկայացնում են պայմանները, որոնց դեպքում հավանական է, որ տվյալները ճիշտ են):
- Աղբյուրը քաղաքանապես անկախ է (ստուգե՞լ եք):
- Որտեղի՞ց է այս աղբյուրի ֆինանսավորումը: (Կարո՞ղ եք գտնել այն: Արդյո՞ք դա կարևոր է):
- Հայտնե՞լ եք ձեր վիճակագրության աղբյուրը, որ լսարանն անի ինքնուրույն դատողություններ:

Տվյալներ և վերլուծություն. Տվյալների լրագրություն և վիզուալիզացիա

Տվյալների լրագրություն

Վերջին ժամանակներում «տվյալների լրագրությունը» դարձել է նորաձև բառ: Հիմնականում դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալները և «մեծ տվյալները» դարձել են ժամանակակից մեդիա կազմակերպությունների կողմից օգտագործվող լրագրության գործիքների զինանոցի կարևոր տարրեր: Տեղեկատվական դարաշրջանը թույլ է տվել էապես բարելավել տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, ինչը լրագրողներին հնարավորություն է տվել՝ իրենց պատմությունները շարադրելուց այնպես օգտագործել թվերը, ինչպես գործնականում անհնար էր նույնիսկ 1990-ականներին:

Հինգ րոպեն, որոնք պահանջվում են վիճակագրական կազմակերպությունից աղյուսակ ներբեռնելու և թվերն ուսումնասիրելով անոմալիաներ և միտումներ գտնելու համար, ընդամենը մի քանի տասնամյակ առաջ կպահանջեր ժամերի տաժանակիր աշխատանք գրադարանում, իսկ գծապատկեր պատրաստելը, որը նախկինում մի ամբողջ աշխատանքային օր էր պահանջում գրաֆիկների թիմից, այսօր պարզապես պահանջում է կոնակի մի քանի սեղմում ընտրված որոշ տվյալների վրա:

Բայց, անկախ նրանից՝ դա արվում է բառերով, թվերով, գծապատկերներով կամ տեսանյութերով՝ լրագրության ընդհանուր նպատակը՝ կարևոր փաստական տեղեկատվության մասին պատմության գրավիչ շարադրումը, մնում է նույնը:

Խոսելով տվյալների լրագրության մասին՝ շատ մարդիկ ավտոմատ մտածում են ինֆոգրաֆիկայի, գծապատկերների և աղյուսակների մասին: Սակայն տվյալների լրագրությունը շատ ավելի լայն է և ընդգրկում է «տվյալների իմաստ ստանալու» ամբողջ գործընթացը, որի նպատակն է՝ «արարել, զարգացնել և ստուգել պատմությունը»: Տվյալների լրագրությունն օգնում է գիտելիքի վերածել տվյալների առանձին մասերը: Գեղեցիկ ինֆոգրաֆիկան պարզապես միջոց է, որով պատմությունը կյանքի է կոչվում:

Տվյալների լրագրության լավ օրինակ է ոչ թե անհասկանալի գծապատկերը, որն ունի հարյուրավոր տվյալների կետեր, այլ բարձրակարգ հոդվածը, որի բաղադրիչն են տվյալների վերլուծությունը և մեկնաբանությունը: Տվյալները լրագրողի գործիք են, ինչպես լուսանկարները՝ ֆոտոլրագրության մեջ, և կարևոր է հիշել, որ տվյալները վերացական չեն, այլ գործ ունեն մարդկանց և նրանց կյանքերի հետ: Արտաքսման կամ ապաստանի հայցերի թվերի տատանումներ ներկայացնող գծապատկերը, օրինակ, ցույց է տալիս նաև կոտրված կյանքեր, քաղաքական գերակայություններ, և կարող է անտեսել այլ վերաբերելի տվյալներ (օրինակ՝ արդյոք գծապատկերում ներկայացված մարդկանց մեծ մասը ներկայացնո՞ւմ են նույն ազգային կամ էթնիկ խումբը, սեռը կամ կրոնը): Չուտ տվյալները հազվադեպ են բավարար ամբողջ պատմությունը ներկայացնելու համար և դրանք պետք է ինչ-որ բացատրության միջոցով տեղադրվեն կոնտեքստում:

Նույնքան կարևոր է տվյալների օգտագործման գրագիտությունը: Տվյալներ վերցնելը և պարզապես դրանք հրապարակելը չի դարձնում ձեզ տվյալների լրագրող: Ինչպես քննարկվեց նախորդ բաժնում ([Ինչպես վերլուծել աղբյուրները](#)), շատ կարևոր է հասկանալ՝ ինչպես է տվյալը տեղ գտել այն տեղեկության մեջ, որը դուք ուսումնասիրում եք: Դուք պետք է հարցեր տաք տվյալների մասին, որոնք ներկայացվում են ձեզ, կարծես հարցաքննում եք դրանք արժանահավատությունը գնահատելու համար: Ո՞վ է հավաքագրել դրանք: Որքա՞ն մեծ է եղել ընտրանքը: Տվյալները ճիշտ տեղում են հավաքագրել: Ճիշտ ժամանակին: Արդյո՞ք կա դրանք այլ տվյալների հետ խաչաձև համեմատելու հնարավորություն, որպեսզի տեսնեք՝ նույն արդյունքը կստանա՞ք, իսկ չստանալու դեպքում՝ ի՞նչն է պատճառը:

Լրագրության եվրոպական կենտրոնը հետևյալ հղումով <https://datajournalism.com/> առաջարկում է մի շարք առցանց վերապատրաստման դասընթացներ տվյալների լրագրության զանազան բաղադրիչների վերաբերյալ:

Տվյալների վիզուալիզացիա

Տվյալների արդյունավետ վիզուալիզացիան կարող է արմատական ազդեցություն ունենալ ձեր լսարանի կողմից պատմությունն ընկալելու վրա, իսկ տվյալների վատ վիզուալիզացիան կարող է ակտիվորեն թաքցնել տեղեկատվությունը կամ շփոթություն առաջացնել:

Չկա տվյալները վիզուալիզացնելու միակ ճիշտ ձև, սակայն կան տվյալների վիզուալիզացման որոշ հիմնական սկզբունքներ, որոնք կարող եք նկատի առնել՝

- Սկսեք որակյալ տվյալներից. եթե ձեր օգտագործած նյութերը մոլորեցնող են կամ սխալ, դուք կստանաք տվյալների վատ վիզուալիզացիա, և կարևոր չէ՝ որքան գեղեցիկ է տեսքը:
- Պահեք կոնտենտը պարզ և հստակ. եթե անհրաժեշտ է, տեղեկատվությունը «մի կերպ» տեղավորելու փոխարեն օգտագործեք մեկից ավելի գծապատկեր.
- Տպավորիչ ազդեցություն ստանալու համար մի «խաղացեք» պարամետրերի հետ. տվյալների վիզուալիզացիայի մահացու մեղքը գրոյից չսկսվող առանցքի օգտագործումն է, որի նպատակն է՝ ավելի մեծ դարձնել կորերը:
- Հիշեք, որ ձեր օգտագործած տվյալները պարզ թվեր չեն, այլ մարդիկ են և երևույթներ:
- Մտածեք ձեր լսարանի մասին: Ձեր ակնկալածով՝ ի՞նչ են նրանք անելու վիզուալիզացիայի հետ՝ մակերեսորեն դիտելու են, թե՛ մանրամասն ուսումնասիրեն:

Տվյալների վիզուալիզացիայի հայտնի փորձագետ Էնդի Զիրկը խորհուրդ է տալիս հարց տալ՝ արդյոք վիզուալիզացիան «բացատրական է, թե՛ հետազոտական», այսինքն՝ այն մշակվել է ինչ-որ կոնկրետ բան ցույց տալու, թե՛ լսարանին դրանից դասեր քաղելու հնարավորություն տալու համար, և արդյոք այն «ընթերցելու, թե՛ զգալու» համար է, այսինքն՝ այն մշակվել է հստակ տեղեկություններ փոխանցելու, թե՛ ավելի լայն իմաստ գեներացնելու համար:

Օրինակի վերլուծություն. տվյալների օգտագործման գրագիտության օգտագործում կոնտեքստ ներկայացնելու համար

Մահմանագիծ՝ ճամփորդություն Եվրոպայի սահմաններով

Հրապարակող՝ Internazionale <https://www.internazionale.it/>

Հղում՝ <https://www.internazionale.it/webdoc/borderline-en/map.html>

Տվյալների ինտերակտիվ այս վիզուալիզացիայում օգտատերերը սեղմում են քարտեզի տարբեր հատվածների վրա և տեսագրությունների ու այլ կոնտենտի միջոցով ծանոթանում Եվրոպայում միգրացիոն ուղիներին: Օգտատերերը կարող են նաև օգտվել քարտեզի ներքևում առկա մեկուկից, որ գտնեն որոշ միգրացիոն տվյալներ, որոնք առանցքային են պատմության համար:

Սեղմեք հետևյալ հղումների վրա և կտեսնեք, թե ինչպես են ներկայացվում տվյալները՝ տալով վիզուալ կոնտեքստ մեծ թվերին, որոնց հետ աշխատելը հաճախ դժվար է լսարանի և լրագրողների համար:

- Ժամանողները թվերով՝ <https://www.internazionale.it/webdoc/borderline-en/numbers-arrived.html>
- Ծամփորդության արժեքը՝ <https://www.internazionale.it/webdoc/borderline-en/numbers-expences.html>
- Հետևանքները բարեկեցության վրա՝ <https://www.internazionale.it/webdoc/borderline-en/numbers-welfare.html>
- Ազդեցությունը բնակչության վրա՝ <https://www.internazionale.it/webdoc/borderline-en/numbers-demography.html>

Դիտարկման համար հարցեր՝

- Կա՞ վիճակագրություն, որը դուք կանոնավոր օգտագործում եք, և որն օգուտներ կքաղի այս մոտեցումը կիրառելուց:
- Երբևէ «անջատվո՞ւմ» եք կամ կորցնո՞ւմ ուշադրությունը, երբ ընթերցում կամ լսում եք մեծ թվերով նյութեր: Եթե անջատվում եք դուք՝ նույնը, հաստատ, անում է ձեր լսարանը: Խորհե՛ք, կարո՞ղ եք արդյոք գտնել ձեր աշխատանքում տվյալներ ներկայացնելու նոր ձևեր՝ կոնտեքստ ձևավորելու համար օգտագործելով տվյալների օգտագործման գրագիտության մեթոդներ:

ԵՉՐԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալները կարող են օգնել ձեզ՝ շարադրել ձեր պատմությունները հեղինակությամբ, սակայն տվյալների օգնությամբ վատ լուսաբանումը կարող է նշանակել, որ դուք առանց դիտավորության մոլորեցնում եք մարդկանց, հեղինակություն հաղորդում վատ որակի տեղեկատվությանը կամ, ավելի վատ, դառնում սխալ տեղեկատվություն տարածողներից մեկը:

Միգրացիոն տվյալները և վիճակագրությունը թվերի պարզ սյունակներ կամ վերլուծության էջեր չեն, քանի որ ներկայացնում են մարդկանց, երևույթներ և իրական կյանքի տարրեր: Լավ լրագրողը գիտի սա և դիտում է տվյալներն ու վիճակագրությունը՝ որպես այդ կյանքերի մասին դրանց ներկայացրածը հասկանալու միջոց: Լավ տվյալների լրագրողն արստրակտ

տեղեկությունները վերածում է հստակ և համոզիչ պատմությունների՝ տեքստի կամ պատկերների միջոցով (նույնիսկ փորձեր են եղել՝ տվյալները վերածելու երաժշտության⁹¹):

Հիշեք, որ միզրացիոն տվյալների վերլուծությունը պետք է սկսել նախ ինքներդ ձեզ հարցնելով՝ ինչպես է անձը կամ երևույթը հայտնվել տվյալներում: Մա հնարավորություն կտա ձեզ մտածել՝ որտեղ կարող են լինել տվյալների հետ կապված խնդիրները և հիշեցնել ձեզ պատմության կենտրոնում գտնվող մարդկանց մասին:

Ռեսուրսներ

Արևելյան Եվրոպայում և Կովկասում չկան մեծ թվով ծրագրեր տվյալների լրագրողների համար, սակայն բնագավառն ընդլայնվում է: Եթե ձեզ խորհուրդներ են անհրաժեշտ, թե ինչպես սկսել տվյալների լրագրություն, ապա [Լրագրողների միջազգային ցանցի \(ԼՄՑ\)](#) պատրաստած այս ռեսուրսն ունի խորհուրդներ, որոնք ներկայացնում են տվյալների լրագրության դասընթացավարներ Դրոգատանից, Բելառուսից, Ուկրաինայից և Վրաստանից:

Խորհուրդները հասանելի են ռուսերեն՝ <https://ijnet.org/ru/story/журналистика-данных-в-восточной-европе-центральной-азии-и-на-кавказе-истории-и-советы>

Տվյալների լրագրության վերաբերյալ Համաշխարհային հետաքննական լրագրության ցանցի (ՀՀԼՑ) աշխատանքի մեծ մասը թարգմանված է [ռուսերեն](#)⁹² և [անգլերեն](#):⁹³

Կան տվյալների վիզուալիզացիայի բազմաթիվ առցանց դասընթացներ, որոնց շարքում են Լրագրության եվրոպական կենտրոնի առաջարկած դասընթացները՝

- <https://datajournalism.com/read/longreads/the-unspoken-rules-of-visualisation>
- Ավելի ընդհանրական՝ <https://datajournalism.com/>
- Էնդի Քիրկի աշխատանքը՝ <https://www.visualisingdata.com/>, ներառյալ՝ իր «Տվյալների վիզուալիզացիա» գիրքը (2-րդ հրատարակություն) <https://www.visualisingdata.com/book/>

⁹¹ <https://www.ft.com/content/80269930-40c3-11e9-b896-fe36ec32aece>

⁹²

<https://gijn.org/2019/03/07/%D0%B6%D1%83%D1%80%D0%BD%D0%B0%D0%BB%D0%B8%D1%81%D1%82%D0%B8%D0%BA%D0%B0-%D0%B4%D0%B0%D0%BD%D0%BD%D1%8B%D1%85/>

⁹³ <https://helpdesk.gijn.org/support/solutions/articles/14000036505-data-journalism>

ԳԼՈՒԽ 10. ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Օգտագործեք այս գլուխը, որպեսզի՝

- Գտնեք գաղափարներ, առաջարկություններ և խորհուրդներ այն մասին, թե ինչպես է հնարավոր բարելավել միգրացիայի մասին լուսաբանումը հետևյալ առանցքային շահագրգիռ կողմերի գործողությունների միջոցով.
 - Մամուլի հարցերով խորհուրդներ և կարգավորողներ:
 - Լրագրությանն աջակցելու խորհուրդներ և միություններ:
 - Նյութումներ:
 - Քաղաքականություն մշակողներ:
 - Հետազոտողներ:
 - Լրագրության ուսումնական հաստատություններ:

Հաջորդող խորհուրդները հիմնականում վերցված են Գերմանիայի Դաշնային արտաքին գործերի նախարարության ֆինասավորած ՄՈՄԵՆՏԱ 2 ծրագրի շրջանակներում 2020 թվականի օգոստոսին Արևելյան գործընկերության երկրների լրագրողների միությունների և մեդիա աջակցության խմբերի հետ ՄՔՄՄԿ-ի կազմակերպած ֆոկլուս խմբերից: Այս գլուխն օգտագործում է նաև 2017 թվականին ՄՔՄՄԿ-ի հրապարակած [«Ինչպե՞ս է միգրացիան լուսաբանվում Միջերկրականի երկու կողմերում: Լրագրողների կատարած ուսումնասիրությունը լրագրողների և քաղաքականություն մշակողների համար»](#)⁹⁴ նյութի [եզրակացությունները](#) և [խորհուրդները](#), ինչպես նաև ՄՔՄՄԿ-ի [Մեդիա և մարդկանց թրաֆիքինգ. ուղեցույցներ](#) նյութից:⁹⁵

Ներածություն

Լրատվության միջոցների բազմաթիվ բաժիններում միգրացիայի բազմաթիվ պատճառների, մոտեցումների և հետևանքների համարժեք ենթատեքստ ապահովող որակյալ, խորը և լավ ուսումնասիրված լրագրության պակասը պետք է հասկանալ գերիշխող տնտեսական և քաղաքական մթնոլորտի շրջանակներում:

Հարկ է ընդունել, որ՝

- Բազմաթիվ երկրներում քաղաքական նախապաշարումը և միգրացիայի մակերեսային, պարզունակ կամ վատ տեղեկացված լուսաբանումը հաճախ կարելի է վերագրել անհարկի քաղաքական ազդեցությանը և նյութումների ներսում ինքնագրաբանությանը:
- ՔՈՎԻԴ-19-ի համաճարակն արագացրեց լրագրության կայունության և կենսունակության հետ կապված երկարատև բացասական միտումները՝ թողնելով նյութումներում ավելի քիչ թվով աշխատակիցներ, սահմանափակ ռեսուրսներ և ընկճված մարտական ոգի:

⁹⁴ https://www.icmpd.org/fileadmin/2017/Media_Migration_17_country_chapters.pdf

⁹⁵ https://www.icmpd.org/fileadmin/1_2018/THB/Media_and_THB_Guidelines_EN_WEB.pdf

- Լրագրողները, հատկապես՝ ազատ լրագրողները, հաճախ աշխատում են վտանգավոր պայմաններում:

Ընդհանուր խորհուրդներ լրագրությանն աջակցելու մասին

Մամուլի ազատության, մեդիա զարգացման և լրագրության աջակցության համայնքներից. մեդիայի զարգացման գլոբալ ֆորումի (ՄԶԳՖ)⁹⁶ «[Լրագրությանը և մեդիային աջակցելու մասին արտակարգ կոչը](#)», որը գործողության կոչ է անում կառավարություններին, դոնորներին և ֆինանսավորողներին, լրագրության և մեդիա կազմակերպություններին, տեխնոլոգիական և հեռահաղորդակցման ընկերություններին, ինտերնետ միջնորդներին, զովագրողներին և լսարանին:

Եվրոպայի խորհրդի Թ-վային դարաշրջանում որակյալ լրագրության հարցերով փորձագետների կոմիտե.

- [Թ-վային դարաշրջանում որակյալ լրագրության համար նպաստավոր միջավայր ձևավորելու հանձնարարականների նախագիծ](#)⁹⁷
- [Թ-վային դարաշրջանում որակյալ լրագրության ֆինանսական կայունության մասին Նախարարների կոմիտեի հայտարարությունը](#)⁹⁸

Մամուլի հարցերով խորհուրդները և կարգավորողները՝ որպես նախապաշարման դեմ պայքարի գործիք

Մամուլի հարցերով խորհուրդների ավանդական դերն ընթերցողների բողոքների քննությունն է: Բայց, երբ խոսքը լրագրությունը բարելավելու մասին է, այս մարմինները կարող են ունենալ առանցքային դեր: Հնարավոր է, որ մամուլի հարցերով պատասխանատու խորհուրդներն արդեն իսկ ցուցումներ են տալիս մեդիային և արձագանքում միգրանտների, ինչպես նաև էթնիկ, կրոնական և մշակութային փոքրամասնությունների դեմ խտրականության և նախապաշարման մասին բողոքներին:

Մամուլի հարցերով խորհուրդները կարող են աշխատել լրագրողների միությունների, հետազոտողների և շահագրգիռ այլ խմբերի հետ, ապահովելով տերմինաբանություն և էթիկական այլ հարցեր քննարկելու ֆորումներ, որոնց նպատակն է՝

- Հնարավոր դարձնել համատեղ համաձայնեցված տերմինաբանական բառարանների և չափանիշների ստեղծումը, որոնք հրատարակվում են համապատասխան բոլոր լեզուներով և կանոնավոր թարմացվում են:
- Խրախուսել էթիկայի գործող կանոնագրքերում նոր բաժինների ավելացումը (ազգային մակարդակով և առանձին լրատվական կազմակերպությունների համար), որոնք հասցեագրում են լուսաբանման կայուն խնդրահարույց միտումները:

⁹⁶ <https://gfmf.info/emergency-appeal-for-journalism-and-media-support-2/>

⁹⁷ <https://rm.coe.int/msi-joq-2018-rev7-e-draft-recommendation-on-quality-journalism-finalis/168098ab76>

⁹⁸ https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?objectid=090000168092dd4d

- Համալսարանների և հետազոտողների հետ համագործակցությամբ ստեղծել միգրացիայի հարցերի մեդիա լուսաբանման մշտադիտարկման և գնահատման կանոնավոր և շարունակական մեխանիզմ:

Հարկ է նաև նշել, որ մամուլի հարցերով խորհուրդների՝ միավորման և կարգավորման դերակատարման արդյունավետությունը երկրից երկիր տարբերվում է՝ պայմանավորված լինելով այդ կառույցների կայացած լինելով և դրանց հանդեպ լրագրողների ու հասարակության վստահությամբ: Դրանց ազդեցությունը կախված է նաև այն հանգամանքից, թե արդյոք դրանք կամավոր մարմիններ են, որոնց աջակցում են լրատվամիջոցներն ու լրագրողները և/կամ ստեղծված են օրենքով ու գտնվում են պետական մարմինների ազդեցության տակ:

Մամուլի հարցերով խորհուրդների հնարավոր դերակատարման մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս՝ [Մամուլի հարցերով անկախ խորհուրդների եվրոպական ալյանս](#)⁹⁹, որն անդամներ ունի՝

- Վրաստանում՝ <https://www.presscouncils.eu/members-georgia/> / www.qartia.ge/en
- Մոլդովայում՝ <https://www.presscouncils.eu/members-moldova/> / consiliuldepresa.md/ro
- Ուկրաինայում՝ <https://www.presscouncils.eu/members-ukraine/> / www.cje.org.ua/ua

Գրականություն

- [Մամուլի հարցերով խորհուրդները՝ որպես նախապաշարման դեմ պայքարի գործիք. մուսուլմանները՝ մեդիայում, դեպի ավելի մեծ հանդուրժողականություն և քաղաքականություն \(ԷԼՑ\)](#)¹⁰⁰ հրատարակումից:

Նյութումներ

Թեև նյութումները գտնվում են տնտեսական (իսկ որոշ դեպքերում՝ քաղաքական) ճնշման տակ, ունեն բազմաթիվ ճանապարհներով միգրացիայի լուսաբանումը և սեփական լրագրությունը բարելավելու ներուժ:

Չբաղվածություն և վերապատրաստում

- Երբ հնարավոր է, քայլեր ձեռնարկեք լրագրողների և մեդիա ոլորտի աշխատողների, այդ թվում՝ արտահաստիքային անձնակազմի աշխատանքային պայմանները բարելավելու համար:
- Այս ձեռնարկի և այլ ռեսուրսների օգնությամբ կազմակերպեք աշխատակազմի վերապատրաստում՝ իրենց կարիերայի բոլոր փուլերում՝ հաշվի առնելով բոլոր գործառնությունները:
- Վերապատրաստման հնարավորությունների դեպքում մի ուղարկեք միայն կրտսեր աշխատակիցներին:

Խմբագրական քաղաքականություն և կառավարում

⁹⁹ <https://www.presscouncils.eu/>

¹⁰⁰ <https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/muslims-media-tolerance-diversity>

- Աշխատեք ձեր ընթերցողներին ներկայացնել միգրացիայի մասին ավելի երկարաժամկետ տեսակետ և գերծ մնացեք միայն ճգնաժամերով կամ գերիշխող քաղաքական պատմություններով առաջնորդվելուց, հատկապես՝ ընտրությունների և այլ զգայուն շրջաններում: Միգրացիոն գործընթացը, դրա դերը մարդկային պատմության ընթացքում և ներդրումն ազգային և տարածաշրջանային զարգացման մեջ ավելի լավ բացատրելու հարցում մեղիային օգնելու համար գոյություն ունի նոր նախաձեռնությունների, այդ թվում՝ ֆինանսավորման և աջակցության նոր ձևերի հրատապ պահանջ:
- Փորձեք խուսափել շտապողական հրապարակումներից, որոնց նպաստում են սոցիալական ցանցերը և առցանց նորությունները, և առաջնահերթություն տվեք այն լուսաբանմանը, որն արժեքավոր է լսարանի համար և կնժճացնի վստահությունը ձեր լրագրության նկատմամբ:
- Ներքին հաշվետվողականության մեխանիզմներ, խմբագրական ուղեցույցներ և էթիկական կանոնագրքեր մշակելու համար ներառեք այս ձեռնարկում ներկայացված էթիկական խնդիրները և չափանիշները:
- Ակտիվորեն պայքարեք հանրային խոսույթում ասելության խոսքի, կարծրատիպերի ստեղծման և սխալ տեղեկատվության դեմ:

Համագործակցություն

- Միգրացիայի լուսաբանման խնդիրները քննարկելու և այն բարելավելու համար պատրաստ եղեք համագործակցել ազգային մեդիա գործընկերությունների մամուլի հարցերով խորհուրդների, հետազոտողների և քաղաքացիական հասարակության հետ:
- Բարեխղճորեն մասնակցեք մեդիա մշտադիտարկմանը և միգրացիայի վերաբերյալ այլ հետազոտություններին:
- Հնարավորություններ (և ֆինանսավորում) փնտրեք ձեր երկրից դուրս մեդիայի հետ համագործակցելու համար:

Նյութումի բազմազանություն

- Խրախուսեք միգրացիայի հարցերով աշխատելու փորձ ունեցող անձանց կամ միգրանտ կամ միգրանտի նախապատմություն ունեցող լրագրողների նշանակումը լրատվամիջոցներում աշխատելու համար:

Նորությունների բազմազանություն

- Մեդիա լուսաբանման մեջ ապահովեք ձայների բազմազանություն, մասնավորապես՝ միգրանտների խմբերից (նստակյաց և նոր ժամանած), հյուրընկալող համայնքներից: Ներքին վերլուծության կամ մեդիա մշտադիտարկման ծրագրերին մասնակցելու միջոցով հետևեք ձեր առաջընթացին:
- Չարգացրեք տեղեկատվության աղբյուրների բազմազանությունը:

Լրացուցիչ ընթերցանություն և գրականություն՝

- Լրագրողների եվրոպական դաշինք (ԼԵՂ)՝ [Նյութումները և խմբագրական խմբերն ավելի բազմազան դարձնելու 10 խորհուրդ](#) (2020թ.)

- Լրագրողների որակավորման բարձրացման ինստիտուտ (FOJO)՝ [Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի և Ուկրաինայի մեդիա ոլորտում գրադվածության և կարիերայի գենդերային հարցերը](#) (2020թ.)
- Մեդիա բազմազանության ինստիտուտ (ՄԲԻ)՝ [Թվային փոխակերպում և մեդիա բազմազանություն՝ նույն մանրադրամի երկու կողմերը](#) (2020թ.)
- ԷԼՑ/ՄՔՄՄԿ (2017թ.)՝ [Նյութումների ռազմավարություններ](#) բաժինը [Մեդիա և մարդկանց թրաֆիքինգ. Ուղեցույցներ](#)-ում:

Քաղաքականություն մշակողներ

- Կրթություն և մեդիա գրագիտություն: Մեդիա գրագիտության հարցերով հասարակությունը կրթելու և վերապատրաստելու գործին աջակցելու նպատակով դիտարկեք գոյություն ունեցող ծրագրերում միգրացիայի խնդիրներ ավելացնելու հարցը:
- Աջակցություն մեդիային: Ուսումնասիրեք, թե ինչպես կարող եք ֆինանսավորել ավելի որակյալ լրագրությունը և աջակցել դրան՝ չզիջելով ձեր խմբագրական անկախությունը (տե՛ս՝ [Ընդհանուր խորհուրդներ լրագրությանն աջակցելու մասին](#)):
- Տվյալներ և տեղեկատվության մատչելիություն: Ներդրումներ կատարեք բնակչության փոփոխությունների և միգրացիայի մասին տվյալներ հավաքագրելու մեջ և ապահովեք այս տեղեկատվության մատչելիությունը՝ հետազոտողներին և լրագրողներին:
- Մեդիային տեղեկատվություն տրամադրող բոլոր պաշտոնատար անձինք և գործակալությունները պարտավոր են ստուգել փաստերը և հաստատել տեղեկատվությունը՝ դրանով իսկ օժանդակելով հավասարակշիռ նյութերի նախապատրաստմանը:

Քաղաքականություն մշակողներ և համայնքի առաջնորդներ

- Քաղաքականություն մշակողները, համայնքների և քաղաքացիական հասարակության առաջնորդները պետք է ավելի ակտիվ դերակատարում ունենան միգրացիայի հարցերի հանրային քննարկման համար հանդուրժողականության և երկխոսության միջավայր ստեղծելու գործում:
- Քաղաքական առաջնորդները և հասարակական ակտիվ կյանքով ապրող անձինք, ովքեր ելույթ են ունենում լրատվամիջոցներով, պետք է իրենց հաղորդակցության մեջ օգտագործեն փաստեր և ինքնազսպվածություն դրսևորեն բառամթերքի և տերմինաբանության ընտրության հարցում:
- Քաղաքականություն մշակողները, համայնքների առաջնորդները և հանրային ուշադրության կենտրոնում գտնվող անձինք կարևոր դեր ունեն քաղաքացիական հանրային խոսույթ խրախուսելու և հասարակության վախերն ու անորոշությունը շահագործող աստեղության խոսքը, անգուսպ լեզուն և սադրիչ գործողությունները վերացնելու գործում:

Լրագրությանն աջակցելու ծրագրեր

Լրագրությանն աջակցելու ծրագրեր մշակող, ֆինանսավորող և իրականացնող անձինք պետք է՝

- Խրախուսեն լրատվամիջոցների գործողությունները, որոնք միգրանտներին և փախստականներին (նստակյաց համայնքերին և նոր ժամանածներին) թիրախող մեդիա նախաձեռնություններին, այդ թվում՝ համապատասխան լեզուներով ռադիո հաղորդումներին, միգրանտ մեկնաբանների բլոգներին, սյունակներին և հոդվածներին աջակցելու միջոցով ավելի բարձր ձայն են ապահովում միգրանտների համայնքներին:
- Աջակցեն կարողությունների հետագա ամրապնդմանը և/կամ նյութումների (լրագրողների, խմբագիրների, թողարկող և տեխնիկական աշխատակազմի) համար մշակեն պատմությունների շարադրմանն ու կոնտենտի առաջխաղացմանն առնչվող նորարարության շուրջ «կարճ մրցավազքեր/հաքթաթոններ»:
- Քաջալերեն լրագրողներին և մեդիա կազմակերպություններին՝ մշակել տարածաշրջանային և ենթատարածաշրջանային նախաձեռնություններ, որոնք բարելավում են միգրացիայի լուսաբանումը:
- Փնտրեն բնագավառներ, որտեղ դուք կարող եք խթանել միջազգային համագործակցությունը նյութումների միջև՝ սփյուռքի և միգրացիայի այլ խնդիրները լուսաբանելու ոլորտում:
- Տրամադրեն ռեսուրսներ հետազոտության և միգրացիայի բարդությունների մասին լուսաբանող համակողմանի լրագրության համար:
- Խրախուսեն ազգային մեդիա գործընկերությունները՝ միգրացիայի լուսաբանման ոլորտում:
- Քաջալերեն անկախ և այլընտրանքային մեդիա ձայների ստեղծումը, որոնք ներշնչված են միգրանտների համայնքների ներսից:
- Թիրախավորեն մեդիա կազմակերպությունների առանցքային դերակատարներին, այդ թվում՝ գլխավոր խմբագիրներին և սեփականատերերին՝ ցույց տալով, թե ինչպես միգրացիան կարող է խմբագրական հիմնական աշխատանքի մաս կազմել:

Քաղաքացիական հասարակություն

Որտե՞ղ ներշնչանք փնտրել

[Associazione Carta di Roma](#) (Հռոմի խարտիայի միություն) հիմնվել է Իտալիայում 2011 թվականին:¹⁰¹

Այս կազմակերպությունը ստեղծվել է Ներգաղթի հարցերով լրագրողի վարքականոնը կիրառելու նպատակով, որը 2008 թվականին ստորագրել էին երկրում լրագրության երկու խոշորագույն միությունները/ասոցիացիաները: Այն ապահովում է՝

- Ելակետ նրանց համար, ովքեր ամեն օր աշխատում են միգրացիայի և փոքրամասնությունների հարցերով:
- Կամուրջ մեդիա հաստատությունների և քաղաքացիական հասարակության միջև:

¹⁰¹ <https://www.cartadiroma.org/>

Լրագրողների վերապատրաստում և կրթություն

Լրագրողներին վերապատրաստող համալսարաններ և այլ հաստատություններ.

- Օրինակների վերլուծության, շարադրությունների և դասընթացների այլ բաղադրիչներում ընդգրկեք միգրացիայի հարցերը:
- Հրավիրեք հյուր խոսնակներ միգրացիայի հարցերով զբաղվող կազմակերպություններից, ինչպես նաև՝ միգրացիայի լուսաբանման փորձ ունեցող լրագրողներ և խմբագիրներ:
- Օգտագործեք այս և ուրիշ ձեռնարկներ՝ գործնական վարժություններ և վերապատրաստման այլ ձևեր մշակելու համար:

Լրագրության միություններ՝

- Օգտագործեք այս և ուրիշ ձեռնարկներ գործնական վարժություններ և վերապատրաստման այլ ձևեր մշակելու համար:
- Ստեղծեք ձեր անդամների հետ միգրացիայի լուսաբանման խնդիրները և վերապատրաստման ու այլ նախաձեռնությունների հնարավորությունները/կարիքները քննարկելու ֆորումներ կամ խրախուսեք գոյություն ունեցող ֆորումներից օգտվելը:

Մրցանակներ

Դոնորներ, մեդիա և միգրացիային առնչվող հաստատություններ. համատեղ աշխատելով՝ մրցանակներ սահմանեք Արևելյան գործընկերության տարածաշրջանում միգրացիայի մեդիա լուսաբանման համար: Դա կխթանի միգրացիայի մասին գրող լրագրողների մոտիվացիան: Մրցանակը պետք է պարզևատրի ազդեցությունը, էթիկան, օրիգինալությունը (նորությունների, պատմության շարադրման տեսանկյունից), նորարարությունը:

Հետազոտություն

Դոնորներ: Ապահովեք ռեսուրսներ՝ հետազոտության և միգրացիայի բարդությունների մասին լուսաբանող համակողմանի լրագրության համար:

Համալսարաններ, մեդիայի աջակցման խմբեր և մեդիա: Մշակեք (հնարավորության դեպքում՝ համագործակցելով) հետազոտական և մեդիա մշտադիտարկման ծրագրեր՝ միգրանտների պայմանների մասին հուսալի և օգտակար տեղեկատվություն, մեդիա լուսաբանման ազդեցություն և միգրացիայի խնդիրների շուրջ բոլոր շահագրգիռ կողմերի համար տեղեկատվական տարածք ստեղծելու նպատակով:

Օրինակի վերլուծություն՝ լուծումների լրագրություն

Ուսումնաստության նպատակներ՝

- Հասկանալ լուծումների լրագրության հիմունքները
- Ներշնչանքի աղբյուր սպասելով նորությունների նոր ռակուրսների և իրենց աշխատանքը կատարելու նոր մեթոդների համար

Հաջորդ գլուխը ՄՔՄՄԿ-ի Միգրացիայի հարցերով մեդիայի ուսումնական առաջին ակադեմիայի (ՄՈՄԵՆՏԱ) շրջանակներում Պրահայում գտնվող [Թրանզիշընս](#)¹⁰² մեդիա զարգացման կազմակերպության գործադիր տնօրեն և գլխավոր խմբագիր Ջերեմի Դրյուքերի անցկացրած «**Լուծումների լրագրություն. լրատվամիջոցների հանդեպ վստահության ամրապնդում՝ հասարակության խնդիրներին արձագանքների մանրակրկիտ լուսաբանման միջոցով**» սեմինարի խմբագրված ամփոփումն է:

- Հետևյալ հղումով կարող եք ընթերցել լուծումների լրագրության մասին «Թրանզիշընսի» ընտրած նյութերը՝ <https://tol.org/client/article/category/solutions-journalism>
- Մենք խորհուրդ ենք տալիս նաև ուսումնասիրել այն հնարավորությունները, որոնք «Թրանզիշընսը» առաջարկում է լրագրողներին «[Փրեսս ստարթ](#)» քրաուդֆանդինգի հարթակի միջոցով՝ <https://www.pressstart.org/>
- Բովանդակության որոշակի մաս վերցված է Լուծումների լրագրության ցանցից: Ցանցի աշխատանքի մասին լրացուցիչ տեղեկությունները՝ հետևյալ հղումով՝ <https://www.solutionsjournalism.org/>

Ամփոփումը հրապարակվում է Ջերեմի Դրյուքերի թույլտվությամբ:

Ներածություն

Լրագրության ամենահիմնարար դերերից մեկը լուծումներ պահանջող խնդիրների բարձրաձայնումն է: Մակայն, թերություններից մեկն այն է, որ դա կարող է վերածվել բացասականության անողոր թմբկահարման, և լրագրողների ու լսարանի մոտ նույնիսկ ձևավորել այն տեսակետը, որ «զավ լուրը» «իրական լուր» չէ:

Վերջին տարիներին «լուծումների լրագրության» գաղափարի ձևավորումը, որը նյութեր է պատրաստում խնդիրների մասին և նշում նաև դրանք լուծելու ճանապարհները, եղել է այս երևույթին արձագանքելու ձևերից մեկը: Այս մոտեցումը չի ենթադրում անտեսել բացասականը, այլ, ավելի շուտ, ընդունում է այն դերը, որը լրագրությունը կարող է ունենալ ոչ միայն խնդրահարույց իրավիճակը պարզապես դիտարկելու, այլև բարելավելու գործում:

Ի՞նչ խնդիր է փորձում լուծել «լուծումների լրագրությունը»:

- **48%-ը չեն հետևում նորություններին**, քանի որ դրանք խիստ բացասական են¹⁰³

¹⁰² <https://tol.org/>

¹⁰³ Reuters Institute Digital News Report 2017.

https://reutersinstitute.politics.ox.ac.uk/sites/default/files/Digital%20News%20Report%202017%20web_0.pdf

- Երիտասարդները «նորություններից հոգնածություն» են զգում¹⁰⁴

Բացասականության ազդեցությունը

- Երբ մարդիկ ստանում են ցածր արդյունավետության, մտահոգիչ հաղորդագրություններ, դա կարող է հանգեցնել **պաշտպանողական կեցվածքի, վախի և անօգնականության**
- Մենք արձագանքում ենք «անջատվելով» կամ **մերժելով** հաղորդագրությունը

Լուծումների լրագրություն՝ «ուղեկցող շուն» և «պահապան շուն»

Լուծումների լրագրությունը նորությունների լուսաբանման նորարարական մոտեցում է, որը կենտրոնանում է սոցիալական հարցերին տրվող լուծումների և բուն խնդիրների վրա: Լուծումների մասին պատմությունները, որոնք խարսխված են արժանահավաստ ապացույցների վրա, բացատրում են՝ ինչպես և ինչու են աշխատում կամ չեն աշխատում լուծումները: Նման կարգի լուսաբանումը կարող է լսարանին փոխանցել ոչ թե ճնշվածության, այլ ներշնչման զգացում: Լրագրության այս ոճի նպատակն է՝ մարդկանց ներկայացնել այս խնդիրների մասին ավելի ճշմարիտ և լիարժեք պատկեր՝ նպաստելով քաղաքացու ավելի արդյունավետ կեցվածքին:

Լավ աշխատանքի դեպքում լուծումների լրագրությունը՝

- **Ներշնչում է:** Լսարանը դառնում է լիահույս և ներշնչված, այլ ոչ թե ընկճված:
- **Տալիս է հեռանկար:** Հավասարակշռում է լրատվամիջոցներում տրված աշխարհի պատկերը՝ լուծումների հեռանկար ավելացնելով խնդիրների հեղեղին:
- **Պատմում է ամբողջ պատմությունը:** Ճշմարտացի, ավելի ամբողջական տեսակետ, որը գրավում է քաղաքացիներին և ներգրավում նրանց հանրային խնդիրների մեջ:

Լուծումների լրագրության չորս որակները.

1. Պատկերում է ոչ թե միայն անձի, այլ խնդրի **արձագանք**, և թե **ինչպես** այն տեղի ունեցավ:
2. Ներկայացնում է ոչ թե մտադրություններ, այլ ազդեցության **ապացույցներ**՝ դիտարկելով արդյունավետությունը:
3. Ձգտում է ներկայացնել ոչ միայն ներշնչանք, այլև **գաղափարներ**, որոնք կարող են օգնել ուրիշների արձագանքմանը:
4. Քննարկում է արձագանքի **սահմանափակումները** կամ վտանգները (չկա կատարյալ լուծում):

Զգուշացեք կեղծիքներից

Ինչը ՉԷ լուծումների լրագրություն	ՓՈԽԱԲԵՆԸ...
ՀԵՐՈՍԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ	...օգտագործում է կերպարներ համակարգային փոփոխության մասին խոսելու համար, ԲԱՅՑ...

¹⁰⁴ Associated Press, 'A New Model For News: Studying the deep structure of young adult news consumption'; June 2008 <https://apo.org.au/sites/default/files/resource-files/2008-07/apo-nid15035.pdf>

	<p>...պատմությունը այն է ինչ կերպարներն անում են, ոչ թե ծրագրում անել:</p> <ul style="list-style-type: none"> • Յույց է տալիս նրանց, ովքեր փորձում են լուծել խնդիր: • Յույց է տալիս, թե ինչ արդյունքներ են ստանալու: • Յույց է տալիս, թե ինչով է դա տարբերվում ուրիշների արածից: • Յույց է տալիս, թե ինչ դասեր կարելի է սովորել դրանից: • Յույց է տալիս, ոչ թե պատմում: Թույլ է տալիս ընթերցողներին անել սեփական եզրահանգումները: • Բաց ներկայացնում է կերպարների մարտահրավերները: • Չի խուսափում մութ պահերից: • Փնտրում է արտասովոր կերպարներ:
<p>«ԱՐԾԱԹԵ ՓՎՓՄՈՒՇՏ»</p>	<p>...գսպում է հռետորաբանությունը:</p>
<p>ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՋԸ</p>	<p>...ուշադրությունն առավելությունների և թերությունների վրա է:</p>
<p>ՏԵՍՈՒԹՅՈՒՆ</p> <p>«Հետազոտական լրագրությունը» ակնարկում է լրագրությանը, որն առաջարկում է դեռևս գոյություն չունեցող բաներ:</p>	<p>...ինչ-որ բան, որ արդեն ընթացքի մեջ է:</p> <p>Լուծումների լրագրությունը նորությունների մասին է՝ այն, ինչ տեղի է ունենում այժմ:</p>
<p>ՈՒՇԱՑԱԾ ՄԻՏՔ</p> <p>Խնդրի մասին պատմության վերջում մի պարբերություն կամ սինխրոն:</p> <p>Լուծումները լրջությամբ չեն դիտարկվում, այլ արտաբերվում են որպես ուշացած մտքեր:</p>	<p>...լուծումները դարձնում է պատմության հիմնական մաս:</p>
<p>ԱԿՏԻՎԻՉՄ</p> <p>Մի բան, որը կարելի է տեսնել change.org նման կայքերում, որոնք կոչ են անում լսարանին՝ խդիրը «լուծելու» համար սեղմել կոճակը:</p>	<p>...տեղեկացնում է խնդիրների լուծումների մասին:</p> <p>Լուծումների լրագրությունը քաջալերում է լրագրողներին՝ ավելի հավատարմորեն ներկայացնել հասարակությունը նորություններում՝ պատմելով ամբողջ</p>

<p>Լուծումների լրագրության նպատակը լուծումներ գովազդելը կամ լսարանից նվիրատվություններ խնդրելը չէ:</p>	<p>պատմությունը: Ոչ միայն այն, ինչը «կոտորվել» է, այլև՝ ինչ է արվում այն «կարգի բերելու» համար:</p>
<p>ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ</p>	<p>...չի չափազանցնում պնդումները, ներկայացնում է հակառակ կարծիք, օգտագործում է տվյալներ, հավելյալ գոյություն է ցուցաբերում:</p> <p>Չի օգտագործում «ներշնչող», «լուծում», «հրաշալի», «սուպեր», «յուրահաստուկ», «հանճար» կարգի բառեր:</p>
<p>«ԲԼԵՖ»</p> <p>Ոգեշնչող, արտասովոր, միանգամյա, հաճախ թռուցիկ կամ ազգային տոներին ներկայացվող՝ տրամադրությունն քարձրացնող նյութ:</p>	<p>... ցույց է տալիս լուծման կորիզը</p> <p>Եթե լսարանը պահանջում է, մի փոքր «բլեֆ» արեք, բայց մի մոռացեք անցնել կառուցվածքային խնդիրներին:</p>

ՕՐԻՆԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Լուծումների լրագրության օրինակ՝ հողված-կարծիք.

Կարծիք՝ Արտասահմանում տան մաքրման աշխատանքի վտանգները. *The Perils of Housecleaning Abroad: Միջին Արևելքում տան միգրանտ աշխատողները շարունակում են ենթարկվել մեկուսացման և բռնության: Հեղինակ՝ Լատրա Սերորուն*

Հղում՝ <https://www.nytimes.com/2018/08/06/opinion/international-world/domestic-workers-middle-east.html>

Լուծումների լրագրությունը՝

- Սոցիալական խնդիրների **լուծումների** մասին **մանրակրկիտ և ապացույցների վրա հիմնված** լուսարանում է:
- Լուսարանում է այն, ինչ **տեղի է ունենում այժմ** և դրա **ազդեցությունները**: Հնարավորությունների մասին զուտ տեսությունների և պարզապես բարի մտադրությունների փոխարեն ներկայացնում է մոդելներ, որոնք օգնում են լուծել խնդիրը:

Ինչո՞ւ գրադվել լուծումների լրագրությամբ

- Այն կարող է **ավելի ազդեցիկ** դարձնել ձեր լուսարանումը:
- Լուծումների լուսարանումը կարող է **մեծացնել հաշվետվողականությունը**:
- Այն **լավ լրագրություն է**:
- Այն կարող է **մեծացնել լսարանը, ներգրավվածությունը և վստահությունը**:

Փաստեր

ԲիԲիՍի-ի Համաշխարհային ծառայության՝ մինչև 35 տարեկան իր թվային լսարանի հետազոտությունը ցույց տվեց, որ **64%-ը ցանկանում է, որ նորությունները հաղորդեն խնդիրների լուծումների մասին**: Կոնտենտից նրանց ամենատաքսային պահանջն ավելի մեծ ծավալի լուծումների լրագրությունն էր:¹⁰⁵

Ինչպե՞ս զբաղվել լուծումների լրագրությամբ

1. Նույնականացրեք մտահոգող **խնդիրը կամ հարցը**

Մասերի բաժանեք մեծ խնդիրը.

- Ավելի ծավալուն խնդրի մեջ ո՞րն է այն **առանձնահատուկ հիմնահարցը**, որը ցանկանում եք հասցեագրել:
- Եղեք հնարավորինս **ճշգրիտ**:
- **Օղի աղտոտվածությունը**, որպես այդպիսին, **լուծում չունի**, սակայն խնդրի առանձին մասերն ունեն բազմաթիվ լուծումներ:

2. Հարցրեք՝ **ի՞նչն է բացակայում** հանրային քննարկումից:

Լուծումների լրագրության համար պատմության նպատակահարմար լինելը որոշելու համար օգտվեք այս պարզ, քայլ առ քայլ ուղեցույցից՝

ՔԱՅԼ 1	ՔԱՅԼ 2	ՔԱՅԼ 3
«Արդյոք կա՞ խնդրի մասին իրազեկման պակաս»:	Եթե «ԱՅՈ», ապա այս պատմությունը կարող է ավելի հարմար լինել լրագրության համար, որը բացահայտում է խնդիրը:	
	Եթե «ՈՉ», ապա հարցրեք. «արդյոք կա՞ հնարավոր լուծումների մասին իրազեկման պակաս»:	Եթե «ՈՉ», ճնշում գործադրեք որոշումներ կայացնողների հաշվետու պահելու համար:
		Եթե «ԱՅՈ», անցեք լուծումների լրագրության

3. Սկսեք **թեկնածուներ** որոնել լուծումների պատմությունների համար:

¹⁰⁵ <https://www.journalism.co.uk/news/five-key-research-findings-about-young-online-audiences-from-bbc-world-service/s2/a588021/>

Որտե՞ղ կարող եք գտնել նման պատմություններ՝

- [Հետազոտական կենտրոններից](#), քաղաքական կամ [գլխնական](#) փորձագետներից (տե՛ս՝ [Ինչպես գտնել և օգտագործել փորձագետների](#)):
- Տվյալների խոշոր շտեմարաններից (տե՛ս՝ [Տվյալների լրագրություն և վիզուալիզացիա](#)):
- Խնդրում ներգրավված մարդկանցից:
- Հիմնադրամների և ՀԿ-ների ծրագրերի պատասխանատուներից (տե՛ս՝ [Հասարակական կազմակերպություններ \(ՀԿ-ներ\)](#)):
- Անաչառ աչքով նայեք ձեր կյանքին:
- «Սոլյուշընս սթորի թրեքըր» տվյալների շտեմարան (<https://storytracker.solutionsjournalism.org/>):

Որպես կողմնացույց՝ օգտագործեք խնդիր-լուծում առանցքը.

- Արդյոք ընտրված լուծումն արձագանքո՞ւմ է այն կոնկրետ խնդրին, որը ցանկանում եք հասցեագրել:
- Արդյոք ընտրված լուծումն ունենո՞ւմ է իրական ազդեցություն: Որտեղի՞ց գիտեք:
- Կենտրոնացե՞ք ընտրված լուծման շուրջ: Մի շեղվեք ուղուց:

Երբ պատմում եք ձեր պատմությունը, հիշե՛ք՝

- Կենտրոնանալ **ԻՆՉՊԵՄ-ի** վրա...
- Ով, ինչ, երբ, որտեղ, ինչու ...և **ինչպես**:
- Փորձե՛ք ժամանակագրական, քայլ առ քայլ կառուցվածքը՝ ինչպես է անձն անցել խնդրից լուծման:

Ինչպե՞ս ձեր թեմատիկային ավելացնել լուծումների լրագրության պրիզման

- Լուսաբանական տեղական ծրագիր:
- Տեղայնացրեք այլ տեղում եղած լուծում:
- Համեմատեք երկու դեպքերը:

Գտե՛ք դրական շեղումը՝

- Ծարժվեք հետադարձ՝ արդյունքից, որպեսզի գտնեք դրական շեղումը՝ անհատի, ում արտաստվոր, բայց հաջողություն արձանագրած վարքը կամ ռազմավարությունը հնարավորություն է տվել նրան՝ գտնել խնդրի ավելի լավ լուծումներ, քան իրեն հավասար անձինք, չնայած, որ դիմակայում է նմանատիպ մարտահրավերների և չունի հավելյալ ռեսուրսներ կամ գիտելիք:
- Հարցրե՛ք ինչպե՞ս է նա հասել այդ հաջողության: Ինչո՞ւ ուրիշները չեն անում նույնը:
- Հիշե՛ք: Կոռեկցիան հավասար չէ պատճառականությանը: Միշտ պետք է լրացուցիչ հետազոտություն կատարեք: Դա կարող է պարզապես անկանոնություն լինել տվյալների մեջ:

Առանցքային հարցեր լուծումների լրագրության համար

- Ո՞վ է դա ավելի լավ անում:
- Ինչպե՞ս է աշխատում արձագանքումը: (Դանդաղացրե՛ք հարցազրույցը):
- Խնդրի ո՞ր մասերը չի հասցեագրում արձագանքումը:
- Որտեղի՞ց է ծագել այս գաղափարը:
- Այն ինչ-որ տեղ կրկնվո՞ւմ է: Ի՞նչ արդյունքներով:
- Ի՞նչ է ասում հետազոտությունը:

- Ի՞նչ են ասում քննադատները:
- Ո՞ր պարամետրերն են կարևոր, երբ պետք է չափել հաջողությունը:
- Ի՞նչ եղանակներով է աշխատում արձագանքումը, ի՞նչ եղանակներով այն չի աշխատում և որտեղի՞ց գիտենք:
- Որո՞նք են այն կրկնելու արգելքները:

Երբ ընտրում եք պատմություն, հիշե՛ք՝

- Պարտադիր չէ, որ այն լինի «Լուծումը»: Այն կարող է հասցեագրել խնդիրն ամբողջությամբ կամ մասամբ:
- Հավաքեք ապացույցներ, որոնք հիմնավորում են հաջողության մասին պնդումները, սակայն տեղեկացրեք լսարանին դրա սահմանափակումների մասին:

Լուծումների լրագրության ձևերը

ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ ՇԱՐՔԻ ՎԵՐՋԻՆ ՄԱՍԸ

- Լուծման պատմություն ներառելը բացառում է արդարացումները և այն շարքի ավելի հարուստ, բովանդակային ավարտ է:

Օրինակ՝ <https://www.wnyc.org/story/being-kid-adult-prison-here-vs-other-countries/>

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ

- Ինչպե՞ս է անձը կանխում վատ վարքագիծը:
- Ներկայացրե՛ք՝ ինչ է հնարավոր անել կարգավորումը և հաշվետվողականությունը բարելավելու համար:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՁԱԽՈՂՈՒՄ

Համոզվեք, որ ձախողումն ուսուցողական է: Հանգիստ ընդունեք մոխրագույնի երանգները:

Հարցրե՛ք՝

- Կարո՞ղ են ուրիշները դաս քաղել դրանից:
- Ի՞նչը կարելի էր այլ կերպ անել:
- Ինչո՞ւ է մարդկանց գրավում ձախողված գաղափարը:

ՀԱՄԵՄԱՑՈՒԹՅՈՒՆ. ԽՆՁՈՐՆԵՐ ԵՎ ԽՆՁՈՐՆԵՐ

- Հարցրեք ձեր աղբյուրներին՝ ուրիշ ո՞վ է դա անում ավելի լավ: Հաճախ նրանք կուղղորդեն ձեզ դեպի այլ համայնքներում առկա մոդելներ:
- Նախ որոշեք՝ որքանով են այդ համայնքները նման այն մեկին, որը լուսաբանում եք, որպեսզի համապատասխան լինեն ձեր լսարանի համար: Արդյոք խնդիրը նմանատիպ է: Արդյոք այդ խնդրի խթանիչները և կոնտեքստը նմա՞ն են: Եթե այո, ապա իմաստ ունի խորանալ նաև լուծման մեջ:
- Այստեղ մեծ նշանակություն ունի ոչ թե մեկ առաջնորդի կամ կոնկրետ մեթոդի հետ ծանոթանալը, այլ մեծ գաղափարին հասնելը: Այդ մեծ գաղափարն ամենահեշտն է տեղափոխել աշխարհագրական տեսանկյունից:

ՀԱԿԻՐԾ

- Եթե խնդիրը լավ հայտնի է, մի նախադասություն նվիրեք դրան և անցեք արձագանքին:

ՏԵՂԱՆՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

- Ինչպե՞ս է տեղանքը բարելավվում ժամանակի ընթացքում:
- Տեղանքի փոխակերպումը վերաբերելի տեղեկատվություն է տալիս համադրելի քաղաքների համար:

ՆՈՐ ԵՎ ԶՓՈՐՁՎԱԾ ԳԱՂԱՓԱՐ

Եթե գաղափարն արդեն իսկ փորձարկվել է ինչ-որ տեղ, և դուք կարող եք ներկայացնել մատչելի ապացույցներ:

ԳԼՈՒԽ 11. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Երկրում միգրացիայի մասին տեղեկատվության աղբյուրներ

Հայաստան

Միգրացիոն ծառայություն

Միգրացիոն ծառայությունը (ՄԾ), որը ստեղծվել է 2010 թվականին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կազմում գործող գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը պատասխանատու է միգրացիոն գործընթացների կառավարման ոլորտի պետական քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար: ՄԾ-ը պատասխանատու է նաև միգրացիայի հարցերին առնչվող պետական մարմինների կողմից քաղաքականության և օրենսդրական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները համակարգելու համար: ՄԾ առցանց ռեսուրսները ներկայացնում են միգրացիային առնչվող ամբողջական տվյալներ և կարող են օգտագործվել որպես Հայաստանում միգրացիային առնչվող տեղեկատվության առաջնային աղբյուր:¹⁰⁶

Արտաքին գործերի նախարարություն

Արտաքին գործերի նախարարությունը (ԱԳՆ) պատասխանատու է մուտքի արտոնագրերի տրամադրման քաղաքականություն մշակելու և իրականացնելու, ինչպես նաև մուտքի արտոնագրերի (ինչպես նաև վերադարձի արտոնագրերի և Հայաստանում օտարերկրյա քաղաքացիներին հատուկ կացության կարգավիճակի) տրամադրման համար: Միգրացիային առնչվող տվյալները, որոնք հնարավոր է ստանալ ԱԳՆ-ից, ընդգրկում են մուտքի արտոնագրերի պահանջների և հյուպատոսական ծառայությունների մասին տեղեկություններ:¹⁰⁷

Ոստիկանություն

Ոստիկանությունը պատասխանատու է սահմանային անցակետերում մուտքի արտոնագրեր տրամադրելու, մուտքի արտոնագրերի ժամկետը երկարացնելու, բնակության կարգավիճակ/թույլտվություն շնորհելու, երկրում օտարերկրյացիներին գրանցելու, Հայաստանի քաղաքացիներին ելքի կնիք (անձնագրի վավերացում) տրամադրելու համար: Ոստիկանությունը վարում է նաև Հայաստանի քաղաքացիների

¹⁰⁶ <http://www.migration.am/>

¹⁰⁷ www.mfa.am/en/visa

անձնագրերի և հաշվառման տվյալների շտեմարան: Մատչելի տեղեկատվությունը սահմանափակվում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարով:¹⁰⁸

Զբաղվածության պետական գործակալություն

Զբաղվածության պետական գործակալությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առանձնացված ստորաբաժանում է, որի խնդիրը զբաղվածության կարգավորման պետական քաղաքականության իրականացումն է: Գործակալության հիմնական նպատակն է՝ բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովմանը միտված զբաղվածության պետական ծրագրերի իրականացման ապահովումը: Հասանելի տվյալներն ընդգրկում են տեղեկատվություն աշխատանքային միգրանտների մասին:¹⁰⁹

Վիճակագրական կոմիտե

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն վիճակագրական ծրագրերին համապատասխան մշակում, արտադրում և տարածում է պաշտոնական վիճակագրություն, իրականացնում համատարած հաշվառումներ, վիճակագրական փաստաթղթերի միջոցով հավաքում վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ վարչական ռեգիստրներից), վարում վիճակագրական ռեգիստրներ, տվյալների շտեմարաններ և այլն: Միգրացիային առնչվող տեղեկություններ կարելի է ստանալ վիճակագրական հաշվետվություններից («Հրապարակումներ» բաժնում) և տվյալների շտեմարաններից, որոնց մեծ մասը հայերեն և ռուսերեն է:¹¹⁰

ՀՀ Կենտրոնական Բանկ

ՀՀ Կենտրոնական Բանկը (ՀՀ ԿԲ) հավաքում և վերլուծում է փոխանցումների ներհոսքի և արտահոսքի մասին տվյալները, որոնք կարելի է գտնել ՀՀ ԿԲ պաշտոնական կայքում:¹¹¹

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ

Գրասենյակը պատասխանատու է հայկական սփյուռքի հետ կապերի պահպանման համար: Տեղեկություններ կարելի է գտնել գրասենյակի պաշտոնական կայքում, ստանալ հեռախոսով կամ պաշտոնական ֆեյսբուքյան էջից:¹¹²

¹⁰⁸

<https://www.police.am/%D5%A9%D6%80%D5%A1%D6%86%D5%AB%D6%84%D5%AB%D5%B6%D5%A3.html>

¹⁰⁹ <http://employment.am/>

¹¹⁰ <https://www.armstat.am/en>

¹¹¹ <https://www.cba.am/en>

¹¹² Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ՝ <http://diaspora.gov.am/>, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի պաշտոնական ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/pg/DiasporaHighCommissionerOfficeArmenia/about/?ref=page_internal.

Հայկական Կարիտասն իրականացնում է միգրացիոն և ինտեգրման/վերաինտեգրման ծրագրեր:¹¹³

Առաքելություն Հայաստանն իրականացնում է փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց աջակցման ծրագրեր:¹¹⁴

Հայկական կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է փախստականների պաշտպանության և տնտեսական ինտեգրման ու աջակցման ծրագրեր Հայաստանում Միրիայից փախստականների համար:¹¹⁵

Միգրացիայի և սոցիալական փոփոխությունների ինստիտուտն իրականացնում է միգրացիոն հետազատությունների և հանրային քաղաքականության մշակման ծրագրեր:¹¹⁶

Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն

Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոնը (ՄՈՒԿ) հիմնադրվել է 2011 թվականին ԵՄ Տեմպուս IV ծրագրի շրջանակներում՝ համագործակցելով Թբիլիսիի պետական համալսարանի (Վրաստան), Գրացի համալսարանի (Ավստրիա), Ալիկանտեի համալսարանի (Իսպանիա), Օլդենբուրգի համալսարանի (Գերմանիա) և այլ գործընկերների հետ: ՄՈՒԿ-ի առաքելությունն է՝

- Տեղեկատվական առցանց հարթակի ստեղծումն՝ ուղղված ամբողջ աշխարհում միգրացիայի բնագավառում գիտահետազոտական կենտրոնների և մասնագետների միջև արդյունավետ համագործակցության ապահովմանը և խթանմանը՝ միգրացիայի ժամանակակից ուսումնասիրությունների տվյալների շտեմարանի և տեղական և համատեղ ծրագրերի օգնությամբ:
- Միգրացիայի քաղաքականության և կարգավորման իրավական տվյալների շտեմարանի տրամադրումը:
- Միգրացիայի բնագավառում ուսումնասիրություններին և հետազոտություններին աջակցելու նպատակով աշխարհում և տարածաշրջանում միգրացիոն գործընթացի վիճակի մասին գիտական և հետազոտական նյութերի, գրականության և արդիականացվող տվյալների տրամադրումը:
- Ծարունակական մշտադիտարկումը և կանխատեսումը:
- Ազգային և միջազգային հետազոտական ծրագրերի և միջոցառումների իրականացումը, համաժողովների և աշխատաժողովների կազմակերպումը:
- Միգրացիայի ուսումնասիրությունների բնագավառում համապատասխան հետազոտական մեթոդաբանության մշակումը և գնահատումը:
- Միգրացիոն քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ փորձագիտության ապահովումը:

¹¹³ <https://caritas.am/>

¹¹⁴ <http://www.mission.am/>

¹¹⁵ <https://www.redcross.am/en/home.html>

¹¹⁶ <http://imsc.am/>

ՄՈԱԿ-ը նաև հանդիսասանում է Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի «Միգրացիայի և կոնֆլիկտների ուսումնասիրություններ» մագիստրոսական ծրագրի գործընկեր:¹¹⁷

ՄՔՄՄԿ-ը Հայաստանում¹¹⁸

ՄՄԿ-ը Հայաստանում¹¹⁹

ՄԱՓԳՀ-ը Հայաստանում¹²⁰

Ադրբեջան

Միգրացիոն պետական ծառայություն

Միգրացիոն պետական ծառայությունը (ՄՊԾ) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որն ունի իրավապահ մարմնի կարգավիճակ և իրականացնում է ներպետական օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները միգրացիոն պետական քաղաքականության, միգրացիոն գործընթացների կառավարման և կանոնակարգման բնագավառներում: ՄՊԾ պաշտոնական կայքում ներկայացված են միգրացիային առնչվող վիճակագրական տվյալներ: Լրագրողները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ վերոնշյալ հարցերի վերաբերյալ ՄՊԾ Հանրային կապերի վարչությունից կամ մամուլի ճեպագրույցներից և այլն: ՄՊԾ ղեկավարությունը նաև կազմակերպում է առցանց մամուլի ասուլիսներ, առցանց հեռարձակվող տեղեկատվական և հանրային քննարկումներ, լրագրողների բարձրագրած հարցերին պատասխանում են ինտերակտիվ ռադիոհաղորդումների միջոցով:¹²¹

Արտաքին գործերի նախարարություն

Արտաքին գործերի նախարարությունը (ԱԳՆ) պատասխանատու է մուտքի արտոնագրերի քաղաքականության, այդ թվում՝ մուտքի արտոնագրերի տրամադրման, Ադրբեջանի Հանրապետությունում հատուկ դասերի (Ադրբեջանի Հանրապետության ստորագրած միջազգային պայամանագրերի համաձայն դիվանագիտական առաքելությունների, հյուպատոսությունների և միջազգային կազմակերպությունների աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների, Ադրբեջանի Հանրապետություն դիվանագիտական կամ հատուկ նպատակներով այցելող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց) հաշվառման և իր դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսությունների միջոցով Ադրբեջանի քաղաքացիներին արտասահմանյան երկրներում հյուպատոսական ծառայությունների մատուցման համար: ԱԳՆ-ը պատասխանատու է նաև արտասահմանում մշտապես կամ ժամանակավոր բնակվող Ադրբեջանի քաղաքացիների ռեգիստրի վարման, ինչպես նաև միգրացիայի բնագավառում միջազգային կազմակերպությունների և գործընկեր երկրների հետ համագործակցության

¹¹⁷ <http://mcc.yso.am/>

¹¹⁸ www.icmpd.org

¹¹⁹ <https://www.iom.int/countries/armenia>

¹²⁰ <https://www.unhcr.org/armenia.html>

¹²¹ <https://migration.gov.az/>

խթանման և զարգացման համար: Միգրացիային առնչվող տվյալները, որոնք հնարավոր է ստանալ ԱԳՆ-ից, ընդգրկում են տեղեկատվություն մուտքի արտոնագրի պահանջների և հյուպատոսական ծառայությունների վերաբերյալ:¹²²

Ներքին գործերի նախարարություն

Ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ), ի թիվս այլ բաների, պատասխանատու է Ադրբեջանի Հանրապետության անձր հաստատող փաստաթղթերի (նույնականացման քարտերի և անձնագրերի) տրամադրման և կազմակերպված հանցավորության և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համար: Լրագրողներին հասանելի են մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ բաց տեղեկատվությունը/տվյալները:¹²³

Աշխատանքի և բնակչության սոցիալական պաշտպանության նախարարություն

Աշխատանքի և բնակչության սոցիալական պաշտպանության նախարարությունը (ԱԲՍՊՆ) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը պատասխանատու է ազգային աշխատաշուկայի կառավարման համար: ԱԲՍՊՆ-ը, մասնավորապես, զբաղվում է աշխատանքային միգրացիայի հարցերով՝ որոշումներ կայացնելով աշխատանքի թույլտվությունների տրամադրման վերաբերյալ: Աշխատանքային քվոտաների մասին տվյալները փակ են և դրանք հնարավոր է ստանալ միայն հարցման միջոցով:¹²⁴

Պետական սահմանապահ ծառայություն

Պետական սահմանապահ ծառայություն (ՊՄԾ) սահմանային հսկողության համար պատասխանատու գործադիր իշխանության հանրապետական մարմին է: Ծառայությունը հաշվառում է օտարերկրյա քաղաքացիներին սահմանային անցակետերում (ՍԱԿ-երում), պայքարում անկանոն միգրացիայի դեմ և ստուգում օտարերկրացիների մուտքի հիմքերը: Գործող օրենսդրության համաձայն՝ ՊՄԾ հիմնական գործառույթներն են. ապահովել սահմանների անվտանգությունը և անձեռնմխելիությունը, պայքարել միջազգային ահաբեկչության դեմ, պայքարել անկանոն միգրացիայի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և զենքի ու զինամթերքի մաքսանենգության դեմ, կանխել զանգվածային ոչնչացման զենքերի և դրանց բաղադրիչ տարրերի տարածումը: Բաց տվյալներ չկան, լրագրողները կարող են տվյալներ ստանալ միայն հարցման միջոցով:¹²⁵

Սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմիտե

Սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմիտեն աջակցում և համակարգում է ադրբեջանական սփյուռքի կազմակերպությունների գործունեությունը: Կոմիտեի հիմնական խնդիրներն են՝ հավաքել և վերլուծել արտասահմանում բնակվող ադրբեջանցիների մասին տվյալներ, կազմակերպել միջոցառումները սփյուռքի ներկայացուցիչների համար Ադրբեջանում և արտասահմանում, սփյուռքի

¹²² <https://mfa.gov.az/en>

¹²³ <https://www.insanalveri.gov.az/?/en/menu/59/>, <https://mia.gov.az/?/en/mainpage/>

¹²⁴ <http://sosial.gov.az/>

¹²⁵ <http://www.dsx.gov.az/>

կազմակերպությունների միջոցով աջակցության տրամադրում սփյուռքի ներկայացուցիչներին: Աշխարհի տարբեր երկրներում գործող ադրբեջանական սփյուռքի քարտեզները մատչելի են հանրությանը Սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմիտեի պաշտոնական կայքում:¹²⁶

Փախստականների և ներքին տեղահանված անձանց հարցերի պետական կոմիտե

Փախստականների և ներքին տեղահանված անձանց հարցերի պետական կոմիտեն անմիջական պատասխանատվություն է կրում Ադրբեջանում փախստականների և ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) համար և տարածքային գործադիր կոմիտեների հետ համատեղ ուղղակի օժանդակություն է տրամադրում այս խմբերին: Բաց տվյալներ չկան, լրագրողները կարող են տվյալներ ստանալ միայն հարցման միջոցով:¹²⁷

Կրթության նախարարություն

Կրթության նախարարությունը հավաքագրում է տվյալներ Ադրբեջանում օտարերկրյա ուսանողների և, հնարավորության սահմաններում, արտասահմանում ադրբեջանցի ուսանողների մասին: Տվյալները հնարավոր է ստանալ նախարարության կայքի և պաշտոնական թերթի («Azərbaycan müəllimi») միջոցով: Լրագրողները կարող են տվյալներ ստանալ միայն հարցման միջոցով:¹²⁸

Պետական վիճակագրական կոմիտե

Պետական վիճակագրական կոմիտեն համատարած հաշվառումների միջոցով տվյալներ է հավաքագրում բնակչության մասին, այդ թվում՝ միգրացիային առնչվող տվյալներ սահմանի անցման, աշխատանքային քվոտաների, մշտական բնակության համար երկիր ժամանողների (ներգադրողների), մշտական բնակության երկրից մեկնողների (արտագադրողների), ինչպես նաև զուտ միգրացիայի մասին:¹²⁹

Ադրբեջանի Կենտրոնական Բանկ

Կենտրոնական Բանկը հավաքում է Ադրբեջան փոխանցումների ներհոսքի և երկրից արտահոսքի մասին տվյալները:¹³⁰

Ադրբեջանի կարմիր մահիկի ընկերություն

Կարմիր մահիկի ընկերության ադրբեջանական մասնաճյուղը տարբեր տեսակի մարդասիրական օգնություն է տրամադրում միայնակ տարեցներին, փախստական և ՆՏԱ ընտանիքներին, բնական և մարդածին աղետներից տուժածներին և խոցելի այլ անձանց, այդ թվում՝ միգրանտների որոշ խմբերի:¹³¹

¹²⁶ <http://diaspor.gov.az/en/>

¹²⁷ <http://idp.gov.az/en/>

¹²⁸ <https://edu.gov.az/en/page/292>

¹²⁹ <https://www.stat.gov.az/source/demography/?lang=en>

¹³⁰ <https://www.cbar.az/page-39/statistics>

¹³¹ <http://eng.redcrescent.az/>

Աղբրեջանի Միգրացիոն կենտրոն

Աղբրեջանի միգրացիոն կենտրոնը գործում է հետևյալ ուղղություններով. իրավաբանական օգնության տրամադրում Աղբրեջանում բնակվող օտարերկրյա քաղաքացիներին (էքսպատրիատներին), քաղաքացիություն չունեցող անձանց և մարդկանց թրաֆիքինգի գոհերին, նրանց շահերի ներկայացում պետական կառավարման և դատական մարմիններում, վերապատրաստումների և աշխատաժողովների կազմակերպում համապատասխան պետական մարմինների և թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ակտիվ ՀԿ-ների անձնակազմի համար, էքսպատրիատների, քաղաքացիություն չունեցող անձանց և միգրացիոն հակումներ ունեցող բնակչության ծանոթացում ներպետական և միջազգային օրենքների պահանջներին, անվճար իրավաբանական օգնության տրամադրում փախստականներին և ՆՏԱ և այլն:¹³²

ՄԶՄՄԿ-ն Աղբրեջանում¹³³

ՄՄԿ-ն Աղբրեջանում¹³⁴

ՄԱՓԳՀ-ն Աղբրեջանում¹³⁵

Բելառուս

Քաղաքացիության և միգրացիայի վարչություն

Ներքին գործերի նախարարության Քաղաքացիության և միգրացիայի վարչությունը միգրացիայի ոլորտի ազգային քաղաքականության իրականացումը համակարգելու համար պատասխանատու հիմնական պետական մարմինն է: Վարչությունը կանոնավոր հրապարակում է միգրացիային առնչվող տվյալներ: Վիճակագրությունն ընդգրկում է տվյալներ աշխատանքային արտագաղթի և ներգաղթի, հարկադիր միգրացիոն հոսքերի, անկանոն և օրինական միգրացիայի մասին: 2011 թվականից սկսած՝ աշխատանքային արտագաղթի և ներգաղթի մասին վիճակագրական տվյալները, որոնք բացված են ըստ մասնագիտության, պաշտոնի, մեկնման ժամանակահատվածի և այլ պարամետրերի, կարելի է գտնել վարչության պաշտոնական կայքում: Տվյալները թարմացվում են երեք ամիսը մեկ:¹³⁶

Ազգային վիճակագրական կոմիտե

Ազգային վիճակագրական կոմիտեն (ԲԵԼՍՏԱՏ) տվյալներ է տրամադրում Բելառուսում ներքին և արտաքին միգրացիայի վերաբերյալ: Արտաքին միգրացիայի տվյալները թարմացվում են տարին մեկ: Կոմիտեն հրատարակում է իր հիմնական Վիճակագրական

¹³² <https://www.facebook.com/Azerbaijanmigrationcenter/>

¹³³ www.icmpd.org

¹³⁴ <https://azerbaijan.iom.int/>

¹³⁵ <https://www.unhcr.org/azerbaijan.html>

¹³⁶ <https://www.mvd.gov.by/en/page/departament-po-grazhdanstvu-i-migraci/migraciya/statistika-po-migracii>,
<https://mvd.gov.by/ru/page/uchet-trudyashihsya-emigrantov-i-trudyashihsya-immigrantov>

տարեգիրքը յուրաքանչյուր տարվա օգոստոս/սեպտեմբեր ամիսներին: Վերջին հրատարակությունը ներկայացնում է 2019 թվականի տվյալները:¹³⁷

Ազգային Բանկ

Ազգային Բանկը փոխանցումների մասին վիճակագրությունը հավաքագրում և տրամադրում է սկսած 2017 թվականի սկզբից:¹³⁸

ՄՏՀԿ Բելառուս

Տնտեսական հետազոտությունների «ՄՏՀԿ Բելառուս» կենտրոնն իրականացնում է զանազան ծրագրեր, այդ թվում՝ նախաձեռնություններ միգրացիայի բնագավառում: Միգրացիային առնչվող տվյալները մատչելի են այս ծրագրերի միջոցով: Կենտրոնի վերջին ծրագրերից մեկը նվիրված է Բելառուսի, Լեհաստանի, Սլովակիայի և Չեխիայի միջև շրջանառու միգրացիային:¹³⁹

«Հյուսան կոնստանտա»

«Հյուսան կոնստանտա» մարդու իրավունքների պաշտպանության բելառուսական խումբ է: Կազմակերպության կենտրոնական խնդիրներից է օգնությունը միգրանտներին: Այս նպատակով այն երբեմն հրապարակում է նաև միգրացիայի մասին տվյալներ: Վերջին օրինակներից մեկը կազմակերպության հրապարակած՝ Բելառուսի և Լեհաստանի միջև սահմանին փախստականների վիճակի մասին ամփոփումն է:¹⁴⁰

ԲԵՌՈԿ

Տնտեսական հետազոտությունների ԲԵՌՈԿ կենտրոնը ժամանակ առ ժամանակ հրապարակում է աշխատություններ, որոնք անդրադառնում են միգրացիայի խնդիրներին: Կենտրոնի վերջին հրապարակումներից մեկը՝ «Ժողովրդագրությունը՝ որպես տնտեսական աճի մարտահրավեր»-ն ընդգրկում է բաժիններ, որոնք անդրադառնում են արտագաղթի և ներգաղթի հարցերին, ինչպես նաև ներկայացնում թեմայի վերաբերյալ որոշ տվյալներ:¹⁴¹

ՄՄԿ-ը Բելառուսում¹⁴²

ՄԱՓԳՀ-ը Բելառուսում¹⁴³

¹³⁷ <https://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/solialnaya-sfera/naselenie-i-migratsiya/>,

https://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/publications/izdania/public_compilation/index_18023/

¹³⁸ https://www.nbrb.by/system/settlements/money_remittances/db

¹³⁹ <https://case-belarus.eu/circular-migration-between-belarus-and-poland-slovakia-and-czechia/>

¹⁴⁰ <https://humanconstanta.by/situaciya-s-bezhencami-na-belarussko-polskoj-granice-yanvar-mart-2020-g/>

¹⁴¹ http://beroc.by/publications/policy_papers/demografiya-kak-vyzov-dlya-ekonomicheskogo-rosta/

¹⁴² <https://www.iom.int/countries/belarus>

¹⁴³ <https://www.unhcr.org/by/ru>

Վրաստան

Հանրային ծառայությունների զարգացման գործակալություն

Վրաստանի արդարադատության նախարարության Հանրային ծառայությունների զարգացման գործակալությունը (ՀԾԶԳ) պատասխանատու է քաղաքացիության, քաղաքացիություն չունենալու, բնակության թույլտվությունների և փաստաթղթերի (բնակության թույլտվություններ, անձնագրեր, նույնականացման քարտերի, ճամփորդական փաստաթղթերի) տրամադրման մասին որոշումների կայացման, քաղաքացիական կացության գրանցման և բնակության վայրի հաշվառման, տվյալների շտեմարանների վարման և այլ գործառույթների համար: ՀԾԶԳ պաշտոնական կայքից կարելի է ստանալ տեղեկատվություն հետևյալ ծառայությունների մասին. Վրաստանի քաղաքացիություն ստանալու պահանջները, Վրաստանում բնակության թույլտվությունները, ազգային անձնագիր կամ ճամփորդական այլ փաստաթղթեր ստանալու պահանջները, արտասահմանում Վրաստանի հյուպատոսություններում հաշվառումը, Վրաստանի քաղաքացիությունը ճանաչումը, արտագաղթի թույլտվությունները:¹⁴⁴

Միգրացիայի հարցերով պետական հանձնաժողով

ՀԾԶԳ-ն իրականացնում է նաև Միգրացիայի հարցերով պետական հանձնաժողովի (ՄՀՊՀ) քարտուղարության գործառույթները: Հանձնաժողովը միավորում է միգրացիայի հարցերով զբաղվող նախարարությունները և գործակալությունները, այդ թվում՝ Արդարադատության, Ներքին գործերի, Արտաքին գործերի, Ֆինանսների, Գրավյալ տարածքներից ներքին տեղահանված անձանց, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունները, Ազգային անվտանգության ծառայությունը և Ազգային վիճակագրական գրասենյակը: ՄՀՊՀ-ի նիստերին հրավիրվում են նաև միգրացիայի բնագավառում գործող միջազգային կազմակերպությունները և ՀԿ-ները: ՄՀՊՀ-ը, ի թիվս այլ աշխատանքների, նախաձեռնում, կազմակերպում և մշտադիտարկում է միգրացիայի ոլորտի օրենսդրության և ռազմավարական փաստաթղթերի մշակման աշխատանքները, ապահովում է միգրացիայի մասին տվյալների միջգերատեսչական փոխանակման հարթակ և մշտադիտարկում միգրացիայի ծրագրերի իրականացումը: ՄՀՊՀ-ի կայքից հնարավոր է ստանալ տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- Ներգաղթ. Վրաստանում բնակության հաստատում, վրացական մուտքի արտոնագրի դասակարգեր և տեսակներ, ով կարող է ճամփորդել Վրաստան՝ առանց մուտքի արտոնագրի, բնակության թույլտվությունների և կացության քարտերի տրամադրում, հայրենակցի կարգավիճակի և վկայականների, քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի տրամադրում և այլն:
- Արտագաղթ – օրինական միգրացիա, Վրաստանի ազգային անձնագիր, անձնագրի տրամադրում արտասահմանում Վրաստանի քաղաքացիներին, Վրաստանի

¹⁴⁴ <https://www.sda.gov.ge>

քաղաքացիների հյուպատոսական հաշվառում, Վրաստան վերադարձի համար ճամփորդական փաստաթղթեր և այլն:

- Վերաինտեգրում. տեղեկատվություն վերաինտեգրման ծրագրերի մասին:
- Կամավոր վերադարձ. կամավոր վերադարձի վերաբերյալ 2012-ից 2019 թվականների վիճակագրությունը:
- Փախստականներ և ապաստան. տեղեկատվություն Վրաստանում միջազգային պաշտպանության, փախստականի և մարդասիրական կարգավիճակի, իրավունքների մասին:¹⁴⁵

Ներքին գործերի նախարարություն

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ), ի դեմս Պարեկային ոստիկանության ղեկարտամենտի, պատասխանատու է Վրաստանի սահմանների պահպանության, քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից սահմանի հատման և հումանիտար հիմքերով սահմանին մուտքի արտոնագրերի տրման համար: ՆԳՆ Միգրացիայի ղեկարտամենտը հետընդունման համաձայնագրերի և հարակից ընթացակարգային և կազմակերպական հարցերի իրականացման, Վրաստանի տարածքում առանց օրինական հիմքերի գտնվող օտարերկրացիների հայտնաբերման, նույնականացման և վտարման, Ժամանակավոր տեղավորման կենտրոնի (ԺՏԿ) կառավարման համար պատասխանատու լիազոր մարմին է: Վերջերս Միգրացիայի ղեկարտամենտին է փոխանցվել փախստականներին, հումանիտար կարգավիճակ ունեցող անձանց և ապաստան հայցողներին առնչվող պետական քաղաքականությունների իրականացման փաթեթը, ինչպես նաև միգրացիոն ընդհանուր հսկողությունը: Միգրացիայի ղեկարտամենտի կայքում տեղադրված են երկու խումբ ուղեցույցներ՝ օրինական արտագաղթի և օրինական ներգաղթի մասին՝ ընթացակարգերի և մատչելի ռեսուրսների վերաբերյալ գործնական տեղեկություններով:¹⁴⁶

Արտաքին գործերի նախարարություն

Արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) Հյուպատոսական վարչությունը հիմնականում իրականացնում է Վրաստանի մուտքի արտոնագրերի քաղաքականությանն առնչվող գործառնություններ: Նախարարությունը մասնակցում է Եվրոպական Միության հետ կնքված Մուտքի արտոնագրերի դյուրացման և Հետընդունման համաձայնագրերի իրականացմանը և գլխավորել է վրացական պատվիրակությունը կոմիտեի համատեղ նիստերին: Հյուպատոսական վարչությունը և վրացական դիվանագիտական ներկայացուցչությունները պատասխանատու են արտասահմանում Վրաստանի քաղաքացիների դիվանագիտական և հյուպատոսական պաշտպանության համար:¹⁴⁷

Վրաստանի դեսպանատներ և հյուպատոսություններ

Վրաստանի դիվանագիտական առաքելություններն արտասահմանում զբաղվում են մուտքի պահանջների, փաստաթղթերի տրամադրման և վավերացման, քաղաքացիության և մուտքի արտոնագրերի հարցերով: Առաքելությունները միգրանտներին խորհրդատվություն են տրամադրում համապատասխան նշանակետ երկրի իրավական

¹⁴⁵ <http://migration.commission.ge>

¹⁴⁶ <http://police.ge/>

¹⁴⁷ <http://www.mfa.gov.ge/>

հարցերով, պաշտպանում նրանց իրավունքները՝ բարձրացնելով իրազեկումը երկրում գործադ օրենքների և միգրացիոն քաղաքականության վերաբերյալ, տրամադրում օժանդակության այլ տեսակներ: Վրաստանի դիվանագիտական կորպուսի կայքում բաց տեղադրված տեղեկատվությունն ընդգրկում է մի շարք օգտակար ցուցակներ հետևյալ տեղեկություններով. Վրաստանում դիվանագիտական առաքելությունները և ներկայացուցչությունները, արտասահմանում Վրաստանի առաքելությունների հասցեները և կոնտակտային տվյալները, արտասահմանում Վրաստանի պատվավոր հյուպատոսների անունները և կոնտակտային տվյալները, Վրաստանում օտարերկրյա պետությունների պատվավոր հյուպատոսների անունները և կոնտակտային տվյալները: Կայքը ներկայացնում է նաև մուտքի արտոնագրերի մասին տեղեկություններ օտարերկրյա և Վրաստանի քաղաքացիների համար, և այլն:

Սփյուռքի հետ կապերի վարչություն

Արտաքին գործերի նախարարության Սփյուռքի հետ կապերի վարչությունը պատասխանատու է վրացական սփյուռքի քաղաքականության կատարելագործման, այդ թվում՝ արտասահմանում բնակվող վրացիների հետ կապերի պահպանման և բարելավման համար: Վարչությունը համակարգում է նաև վրացական սփյուռքի մասին տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը, վարում է ամբողջ աշխարհում վրացական սփյուռքի կազմակերպությունների տվյալների շտեմարանը:

Եվրաինտեգրման վարչություն

ԱԳՆ Եվրաինտեգրման վարչությունը պատասխանատու է ԵՄ գործընկերության նախաձեռնության շրջանակներում բազմակողմ համագործակցության և փոխկապակցված միգրացիոն հարցերի համակարգման համար: Վարչությունը համակարգում է նաև ԵՄ հետ Շարժունակության գործընկերության շրջանակներում համագործակցությունը ԵՄ անդամ պետությունների հետ:

Գրավյալ տարածքներից ՆՏԱ, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Վրաստանի Գրավյալ տարածքներից ՆՏԱ, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է փախստականների և ապաստան հայցողների, ներքին տեղահանված անձանց, հայրենադարձների, բնական աղետներից տուժածների, այս խմբերի տեղավորման և երկրում միգրացիայի կառավարման մասով պետական քաղաքականությունների կանոնակարգման համար: Նախարարությունը վերաինտեգրման աջակցություն է տրամադրում վրաց միգրանտներին, այդ թվում՝ ժամանակավոր տեղավորում, սոցիալական պաշտպանության փաթեթներ, ՓՄՁ դրամաշնորհներ և այլն:¹⁴⁸

Մարդկանց թրաֆիքինգի (օրինական) զոհերին պետական աջակցության և օժանդակության տրամադրման գործակալություն

«Ատիպֆոնդ Վրաստան» Մարդկանց թրաֆիքինգի (օրինական) զոհերի պետական աջակցության և օժանդակության տրամադրման գործակալությունը «Մարդկանց

¹⁴⁸ <http://www.mra.gov.ge/eng>

թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Վրաստանի օրենքի համաձայն ստեղծված հանրային իրավունքի իրավաբանական անձ է (ՀԻԻԱ): Գործակալության նպատակներն են. մարդկանց թրաֆիքինգի գոհերին պետական աջակցության և օժանդակության տրամադրում, մարդկանց թրաֆիքինգի գոհերին և ազդակիր անձանց փոխհատուցումների վճարում, նրանց օգնության տրամադրում և վերականգնում, ընտանեկան բռնությունից տուժածների պաշտպանություն, նրանց աջակցության տրամադրում և վերականգնում, ընտանեկան բռնությունից ենթադրյալ տուժածներին ճգնաժամային կենտրոնի ծառայությունների մատուցում, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար արժանապատիվ կյանքի պայմանների ապահովում, սեռական բռնության գոհերին և դրա ազդակիրներին վերականգնողական ծառայությունների և աջակցության տրամադրում: Թրաֆիքինգի գոհերի ապաստարանի շահառուների և թրաֆիքինգի գոհերին խորհրդատվության տրամադրման մասին վիճակագրությունը կարելի է գտնել գործակալության պաշտոնական կայքում:¹⁴⁹

Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակ

Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակը (ԳեոՍտատ) միջազգային վիճակագրական չափանիշներին և պահանջներին համապատասխան պաշտոնական վիճակագրություն արտադրելու և տարածելու համար պատասխանատու պետական մարմինն է: Վարչության հիմնական նպատակներն են՝ սպառիչ, վերջին, հուսալի և համադրելի վիճակագրական տվյալների հավաքագրումը, խմբագրումը, մշակումը, պահպանումը, վերլուծությունը և տարածումը: Մեկ այլ հիմնական գործառնություն է պաշտոնական վիճակագրության տրամադրումը քաղաքացիական հասարակությանը, պետական մարմիններին, ՀԿ-ներին, լրատվամիջոցներին, բիզնես և գիտական համայնքներին և օգտագործողների այլ խմբերին: ԳեոՍտատի տեղեկությունները բաց են և հասանելի բոլորին, ընդգրկում են տվյալներ ներգնա և արտագնա միգրացիայի, փոխանցումների և բնակչության մարդահամարի մասին: ԳեոՍտատի կայքում բաց տեղադրված են վիճակագրական տվյալներ բնակչության և ժողովրդագրության, այդ թվում՝ արտաքին միգրացիայի, ներգնա և արտագնա գրոսաշրջության, ըստ տարիքի և սեռի բացված ներգաղթողների և արտագաղթողների թվի, ըստ քաղաքացիության ներգաղթողների և արտագաղթողների թվի և այլ կետերի մասին:¹⁵⁰

Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՎԵԻԱ) նպատակ ունի երկրում ձևավորել բարձր իրավական չափանիշներ և պաշտպանել յուրաքանչյուր անհատի իրավունքները: Կազմակերպությունը տրամադրում է անվճար իրավաբանական խորհրդատվություն բոլորին, այդ թվում՝ ներգաղթողներին և վերադարձող միգրանտներին, ապահովում միգրանտների իրավունքների պաշտպանությունը:¹⁵¹

¹⁴⁹ <http://atipfund.gov.ge/eng>

¹⁵⁰ <https://www.geostat.ge/en>

¹⁵¹ <https://gyla.ge/en/>

Քաղաքացիական զարգացման գործակալություն

Քաղաքացիական զարգացման գործակալությունը (ՔԶԳ) ծառայում է Վրաստանի բնակչության սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանությանը, հանրահռչակմանը և իրազորմանը՝ բիզնես կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների, մեդիայի, քաղաքացիական հասարակության և Վրաստանի կառավարության հետ համագործակցելու միջոցով: ՔԶԳ-ն աջակցում է նաև էկոմիգրանտների, ՆՏ անձանց, միգրանտների, գյուղաբնակ խոցելի խմբերի, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, նախկին դատապարտյալների, էթնիկ փոքրամասնությունների, վաղաժամ պայմանական ազատվածների և օրենքի հետ խնդիրներ ունեցող անձանց ապրելու միջավայրի և անհատական զարգացման բարելավմանը: Նախկինում կազմակերպությունն իրականացրել է միգրանտների իրավունքների պաշտպանության ծրագրեր, որոնք առնչվել են իրազեկմանը, էկոմիգրանտների համար տնտեսական և ենթակառուցվածքային հնարավորությունների ամրապնդմանը, Վրաստանի մարզերում օրինական միգրացիայի հարցերի հասցեագրմանը:¹⁵²

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (ՀՌԿԿ) գիտահետազոտական հաստատություն է, որը մեկ տասնամյակ է՝ Վրաստանում և տարածաշրջանում կարևորագույն միտումների և ակնկալիքների մասին տվյալներ է տրամադրում հետազոտողներին, կառավարությանը, դոնորներին, ՀԿ-ներին և մասնավոր հատվածին: ՀՌԿԿ-ն փորձված մեթոդաբանության միջոցով իրականացնում է հետազոտություններ, վերլուծություններ և վերապատրաստումներ, ինչը հնարավորություն է տալիս ճշգրիտ համեմատություններ կատարել ոլորտների, բնակչության խմբերի և երկրների միջև: Կազմակերպության իրականացրած տնային տնտեսությունների հետազոտությունները, ի թիվս այլ ոլորտների, պարունակում են տեղեկություններ արտագաղթի, միգրացիայի շարժառիթների և արտասահմանում միգրանտների զբաղվածության ոլորտների մասին: Կենտրոնը տալիս է իր տվյալների արխիվից ազատ օգտվելու հնարավորություն: ՀՌԿԿ հետազոտություններն անդրադառնում են այնպիսի թեմաներին, ինչպիսիք են խտրականությունը, ատելության խոսքը և ատելության հիմքով հանցագործությունները Վրաստանում, Վրաստանում ԵՄ-ի մասին իմացությունը, վերաբերմունքը ԵՄ նկատմամբ և այլն: ՀՌԿԿ տնային տնտեսությունների հետազոտությունների վիճակագրական հաշվետվությունները և հում տվյալները կարելի գտնել կենտրոնի կայքում:¹⁵³

Փախստականների դանիական խորհուրդը Հարավային Կովկասում

Վրաստանում Փախստականների դանիական խորհրդի (ՓԴԽ) նպատակն է՝ հումանիտար սկզբունքների և մարդու իրավունքների հիման վրա երկարատև լուծումներ առաջարկել տեղահանման հետ կապված խնդիրներին: 1999 թվականից սկսած՝ ՓԴԽ ծրագրերը երկրում մշակվել են տեղահանվածների համար լայնածավալ կայուն լուծումներին աջակցելու ուղղությամբ: Մոտեցումը կենտրոնանում է հարկադիր տեղահանվածներին, վերադարձողներին, հյուրընկալող համայնքներին և փախստականին մոտ իրավիճակում գտնվող անձանց բնորոշ խոցելիությունները հաղթահարելուն աջակցելու շուրջ՝ նրանց

¹⁵² <http://www.cida.ge/mission-strategy>

¹⁵³ <http://www.crrcenters.org/2>

միջնաժամկետից երկարաժամկետ սոցիալ-տնտեսական կարիքների առաջնահերթությունները սահմանելու միջոցով:¹⁵⁴

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ) – Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ). տարածաշրջանային միջոցառումներ է իրականացնում երեք հիմնական ուղղություններով՝ ժողովրդավարություն, տեղական ինքնակառավարում և իրավունքի գերակայություն, կայուն տնտեսական զարգացում և շրջակա միջավայր և բնական պաշարների կայուն օգտագործում: Վրաստանում իր Միջազգային միգրացիայի ծրագրերի կենտրոնի միջոցով կազմակերպությունը տարիներ շարունակ աջակցել է վերադարձած միգրանտներին՝ Վրաստանում զբաղվածության հնարավորությունների և փորձի փոխանակման տեսանկյունից:¹⁵⁵

ՄԶՄՄԿ-ը Վրաստանում¹⁵⁶

ՄՄԿ-ը Վրաստանում¹⁵⁷

ՄԱՓԳՀ Վրաստանում¹⁵⁸

Մոլդովա

Ներքին գործերի նախարարություն

Մոլդովայի Ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ) մշակում է միգրացիայի բնագավառի, ապօրինի միգրացիայի դեմ պայքարի և անդրսահմանային հանցագործությունների դեմ պայքարի քաղաքականությունները: ՆԳՆ-ի կազմում գործում են մասնագիտացված հաստատություններ/մարմիններ, որոնք պատասխանատու են միգրացիոն խնդիրների համար՝ Միգրացիայի և ապաստանի բյուրոն և Սահմանապահ ոստիկանությունը:¹⁵⁹

Միգրացիայի և ապաստանի բյուրո

Միգրացիայի և ապաստանի բյուրոն երկրի իմիգրացիոն քաղաքականության իրականացման և համակարգման համար պատասխանատու հիմնական մարմինն է: Լինելով **Ներքին գործերի նախարարության** կազմում՝ Բյուրոն կանոնավոր վերբեռնում է վիճակագրություն ամեն տարի օտարերկրացիներին տրամադրված բնակության թույլտվությունների մասին:¹⁶⁰

¹⁵⁴ <https://drc.ngo/where-we-work/europe/georgia>

¹⁵⁵ <https://www.giz.de/en/worldwide/359.html>

¹⁵⁶ www.icmpd.org

¹⁵⁷ <https://georgia.iom.int/>

¹⁵⁸ <https://www.unhcr.org/georgia.html>

¹⁵⁹ <https://gov.md/en/content/ministry-internal-affairs>

¹⁶⁰ <http://bma.gov.md/en/documente/modele-de-documente>

Սահմանապահ ոստիկանություն

Սահմանապահ ոստիկանությունը գործում է ՆԳՆ կազմում և իրականացնում է սահմանների համալիր կառավարման, անկանոն միգրացիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի, անդրսահմանային հանցագործությունների դեմ պայքարի ոլորտների պետական քաղաքականությունը: Սահմանապահ ոստիկանությունը չի հրապարակում սահմանի անցման մասին վիճակագրություն, սակայն տվյալներն ու տեղեկատվությունը կարելի է ստանալ էլ. փոստով հարցման միջոցով:¹⁶¹

Պետական քարտուղարություն

Պետական քարտուղարությունը՝ Սփյուռքի հետ կապերի իր բյուրոյի միջոցով, ի թիվս այլ պարտականությունների, պատասխանատու է սփյուռքի ներգրավման, արտագաղթի, վերադարձի և վերաինտեգրման քաղաքականությունների համար: Բյուրոյի կայքում կան ենթաբաժիններ, որոնք պարունակում են միգրացիայի մասին տվյալներ և վիճակագրություն (ընտրված ժամանակահատվածների և թեմաների համար):¹⁶²

Մասնագիտական քաղաքականության և միգրացիայի կանոնակարգման վարչություն

Առողջապահության, աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության (ԱԱՄՊՆ) Մասնագիտական քաղաքականության և միգրացիայի կանոնակարգման վարչությունը մշակում և իրականացնում է նորմատիվային ակտեր աշխատանքային միգրացիայի վերաբերյալ, բանակցում և ստորագրում է աշխատանքային միգրացիայի հոսքերը կանոնակարգող երկկողմ համաձայնագրեր: Վարչությունը մշակում և իրականացնում է նաև աշխատուժի զբաղվածության և աշխատուժի միգրացիայի կարգավորման մասին պետական քաղաքականությունը: Այն մի շարք կարևոր փաստաթղթեր է հրապարակում ԱԱՄՊՆ կայքում:¹⁶³

Աշխատուժի զբաղվածության ազգային գործակալություն

Մասնագիտական քաղաքականության և միգրացիայի կանոնակարգման վարչության ենթակայությամբ գործող Աշխատուժի զբաղվածության ազգային գործակալությունը մասնակցում է աշխատուժի միգրացիայի մասին քաղաքականության իրականացմանը, մշտադիտարկում զբաղվածության մասնավոր գործակալությունների գործունեությունը և ունի աշխատուժի միգրացիայի հետ կապված պարտականություններ (օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքի թույլտվությունների տրամադրում, դրանց երկարացում և չեղարկում, արտասահմանում Մոլդովայի քաղաքացիների զբաղվածության և Մոլդովայում աշխատելու նպատակով վերադարձող մոլդովացիների վերաինտեգրման մեխանիզմների մշակում):

¹⁶¹ politia.frontiera@border.gov.md

¹⁶² <http://brd.gov.md/ru/advanced-page-type/statistika>

¹⁶³ <https://msmps.gov.md/informatie-de-interes-public/domenii-de-politici/munca/>

Գործակալությունը կարևոր տեղեկատվություն է հրապարակում կարճաժամկետ արտագաղթով/արտասահմանում աշխատանքով հետաքրքրված անձանց համար:¹⁶⁴

Արտաքին գործերի և եվրոպական ինտեգրման նախարարություն

Արտաքին գործերի և եվրոպական ինտեգրման նախարարությունը մշակում է մուտքի արտոնագրերի քաղաքականություն, տրամադրում Մոլդովա մուտքի արտոնագրեր և ճամփորդական փաստաթղթեր Մոլդովայի քաղաքացիներին, իր դիվանագիտական առաքելությունների միջոցով հյուպատոսական ծառայություններ տրամադրում և պաշտպանում արտասահմանում գտնվող Մոլդովայի քաղաքացիներին: Նախարարության կայքում առանձին բաժնով ներկայացված են մարդկանց թրաֆիքինգի (ՄԹ) խնդիրները:¹⁶⁵

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային կոմիտե

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային կոմիտեն Մոլդովայի կառավարության խորհրդատվական մարմին է, որը համակարգում է ՄԹ-ի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին առնչվող աշխատանքները: Կոմիտեն մասնակցում է ՄԹ-ի կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտի քաղաքականության մշակմանը, մշտադիտարկում է ՄԹ-ի կանխարգելման և դրա դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացումը: Կոմիտեն հավաքագրում և ուսումնասիրում է ազգային մակարդակում ՄԹ-ի տարածվածության, կարգավիճակի և միտումների մասին տվյալներ, ինչպես նաև հրապարակում պարբերական հաշվետվություններ ՄԹ-ի հարցերի վերաբերյալ:¹⁶⁶

«Միգրանտ ընտանիքներ»

«Միգրանտ ընտանիքներ» ՀԿ-ը («Familii migrante») ազգային և միջազգային մակարդակներում միգրանտներին և նրանց ընտանիքներին է տրամադրում տեղեկություններ, խորհրդատվական և կողմնորոշման ծառայություններ: ՀԿ-ի թիրախն են միգրացիոն գործընթացի տարբեր փուլերում (արտագաղթ, միգրացիա, տուն վերադարձ) գտնվող անձինք: Այն համագործակցում է Մոլդովայի Հանրապետության դիվանագիտական առաքելությունների, սփյուռքի կազմակերպությունների, Մոլդովայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և տեղական իշխանությունների հետ:¹⁶⁷

ՄԹ-ի զոհերի և հնարավոր զոհերի աջակցման և պաշտպանության կենտրոն

Աջակցման և պաշտպանության կենտրոնը Մոլդովայում ՄՄԿ աջակցությամբ ստեղծված քաղաքացիական հասարակության կազմակերպություն է: Այն աջակցում է մարդկանց թրաֆիքինգի զոհերին և հնարավոր զոհերին՝ ընդգրկելով նաև ընտանեկան բռնության ենթարկվածներին: Շահառուներն են՝ զոհերը, դժվար իրավիճակներում գտնվող միգրանտները, հայրենադարձ երեխաները:¹⁶⁸

¹⁶⁴ <https://www.anofm.md/>

¹⁶⁵ <https://mfa.gov.md/ro/content/traficul-de-fiinte-umane>

¹⁶⁶ <http://www.antitrafic.gov.md/lib.php?l=ro&idc=30&t=/Rapoarte/Nationale>

¹⁶⁷ <https://www.facebook.com/pages/category/Community/AO-Familii-Migrante-107990167233631/>

¹⁶⁸ <https://www.cap.md/en/>

Փախստականների համար բարեգործական կենտրոն

Փախստականների համար բարեգործական կենտրոնը (ՓԲԿ) հիմնականում զբաղվում է հասարակության մեջ խոցելի խմբերի նախահնտեգրմանն աջակցելու հարցերով՝ կազմակերպելով մշակութային կողմնորոշման և ֆակուլտատիվ միջոցառումներ: Այլ ՀԿ-ների, կառավարության և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելով՝ ՓԲԿ-ն իրականացրել է զանազան մշակութային և սոցիալական միջոցառումներ փախստականների/ապաստան հայցողների համար, որոնք ուղղված են եղել այդ խմբերի ինտեգրմանը մոլդովական հասարակությանը, դրանց համայնքների ամրապնդմանը և ինքնաբավ լինելուն: Իսրախուսվել է նաև տեղական բնակչության մասնակցությունն այս միջոցառումներին՝ վերջինիս հանդուրժողականության մակարդակը բարձրացնելու և փախստականների/ապաստան հայցողների նկատմամբ խտրականությունը բացառող վերաբերմունքը խթանելու համար:¹⁶⁹

Հետազոտությունների և խորհրդատվության կենտրոն

Հետազոտությունների և խորհրդատվության կենտրոնը (ՀԽԿ «ՄոցիոՊոլիս») շահույթ չհետապնդող հետազոտական հաստատություն է, որը մասնագիտացած է սոցիալական ոլորտի սոցիոլոգիական հետազոտությունների, վերլուծության, գնահատման և խորհրդատվության բնագավառներում: Կենտրոնն իրականացնում միգրացիային առնչվող զանազան հարցերի հետազոտություններ, օրինակ՝ միգրանտների խոցելիությունը ՄԹ-ի և շահագործման տեսանկյունից, ուր գնահատվում են սփյուռքի կազմակերպությունների կին առաջանորդների կարողությունների զարգացման կարիքները և կարողությունների զարգացման պլանները, միգրացիայի հետևանքով անտեսված երեխաների և տարեցների հատուկ կարիքները և այլն:¹⁷⁰

«Լա Ստրադա Մոլդովա» միջազգային կենտրոն

«Լա Ստրադա Մոլդովա» միջազգային կենտրոնն ապահովում և խրախուսում է բնակչության սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այն հանդիսանում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի եվրոպական ցանցի՝ «Լա Ստրադա Ինթերնեյշնլ»-ի անդամ (ԼՄԻ). «Լա Ստրադա Մոլդովա»-ն աշխատում է չորս ուղղությամբ՝ մարդկանց թրաֆիքինգի, ընտանեկան և սեռական բռնության, երեխաների սեռական շահագործման կանխարգելում և առցանց հարթակներում երեխաների անվտանգության բարելավում:¹⁷¹

ՄԶՄՄԿ-ը Մոլդովայում¹⁷²

ՄՄԿ-ը Մոլդովայում¹⁷³

ՄԱՓԳՀ-ը Մոլդովայում¹⁷⁴

¹⁶⁹ www.ccr.md

¹⁷⁰ <https://sociopolis.md/resurse>

¹⁷¹ <http://lastradainternational.org/>

¹⁷² www.icmpd.org

¹⁷³ <https://moldova.iom.int/>

¹⁷⁴ <https://www.unhcr.org/republic-of-moldova.html>

Ուկրաինա

Ներքին գործերի նախարարություն

Ուկրաինայի Ներքին գործերի նախարարությունը¹⁷⁵ մշակում է միգրացիոն պետական քաղաքականությունը, այդ թվում՝ ներգաղթի, արտագաղթի, անկանոն միգրացիայի, փախստականների և օրենքով սահմանված միգրանտների այլ դասակարգերին առնչվող ոլորտներում: Նախարարությունը պատասխանատու է նաև անկանոն միգրացիային և մարդկանց թրաֆիքինգին (ՄԹ) առնչվող հանցագործությունները նախականելու, բացահայտելու և խափանելու համար: Ուկրաինայի Պետական միգրացիոն ծառայությունը (ՊՄԾ)¹⁷⁶ պետական միգրացիոն քաղաքականությունն իրականացնող կենտրոնական գործադիր մարմինն է: Յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր ամսին ՊՄԾ-ը հրապարակում է «Ուկրաինայի միգրացիոն պրոֆիլի» թարմացված տարբերակը, որտեղ ներկայացված է երկրում միգրացիայի իրավիճակի և առկա միտումների վերլուծություն:¹⁷⁷ ՊՄԾ կայքը յուրաքանչյուր տարվա երեք, վեց, ինը և տասներկու ամիսների համար ներկայացնում է վիճակագրական տվյալներ՝ քաղաքացիության, ապաստան հայցողների, փախստականների, ներգաղթողների, հետընդունման, կամավոր և հարկադիր վերադարձի և այլ թեմաների մասին:¹⁷⁸ Ավելին՝ շաբաթական տվյալները մատչելի են չորս թեմատիկ ոլորտների համար՝ քաղաքացիություն, ներգաղթ, անկանոն միգրացիա և փախստականներ:¹⁷⁹

Պետական վիճակագրական ծառայություն

Ուկրաինայի Պետական վիճակագրական ծառայությունը (ՊՎԾ) միգրացիոն հոսքերի մասին տվյալների և միջազգային միգրանտների մասին ըստ սեռի, տարիքի, տարածաշրջանի և այլ պարամետրերի վիճակագրական տեղեկատվության աղբյուր է:¹⁸⁰ Ժամանակավորապես գրավյալ տարածքների վերահսկողության նախարարությունը¹⁸¹ և Սոցիալական քաղաքականության նախարարությունն ընդհանուր վիճակագրություն են տալիս Ուկրաինայում ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) մասին:¹⁸²

Պետական սահմանապահ ծառայություն

Ուկրաինայի պետական սահմանապահ ծառայությունը (ՈւՊՄԾ) պետական սահմանների պահպանության համար պատասխանատու գործադիր կենտրոնական մարմինն է:¹⁸³ ՈւՊՄԾ կայքում տեղադրված է վիճակագրական տվյալներով քարտեզ, որը ներկայացնում է երկրի սահմաններին տեղակայված սահմանային անցակետերով ամսական մուտքի և

¹⁷⁵ <https://mvs.gov.ua/ua/>

¹⁷⁶ <https://dmsu.gov.ua/pro-dms/zagalna-informacziya.html>

¹⁷⁷ <https://dmsu.gov.ua/diyalnist/monitoring-migracijnix-procesiv/migracijnij-profil.html>

¹⁷⁸ <https://dmsu.gov.ua/diyalnist/statistichni-dani/statistika-z-osnovnoj-diyalnosti.html>

¹⁷⁹ <https://dmsu.gov.ua/diyalnist/statistichni-dani/shhotizhevi-pokazniki-diyalnosti.html>

¹⁸⁰ https://ukrstat.org/uk/operativ/menu/menu_u/ds.htm

¹⁸¹ <https://mtot.gov.ua/ua/kilkist-vpo>

¹⁸² <https://www.msp.gov.ua/news/18807.html>

¹⁸³ <https://zakon2.rada.gov.ua/laws/show/533-2014-%D0%BF>

երբի թվերը:¹⁸⁴ ՈւՊՄԾ վարչական դեպարտամենտը ՊՎԾ միջոցով տրամադրում է Ուկրաինայի տարածք մուտքերի վիճակագրություն՝ ըստ մեկնման երկրի, թեև այդ տվյալները չկան ՈւՊՄԾ կայքում:¹⁸⁵

Սոցիալական քաղաքականության նախարարություն

Ուկրաինայի սոցիալական քաղաքականության նախարարությունը (ՍՔՆ) կանոնակարգում է երկրում աշխատանքային միգրացիայի, սոցիալական պաշտպանության և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերը: ՍՔՆ-ը համակարգում է նաև Չբաղվածության պետական կենտրոնի աշխատանքը, որն, այլ գործառնությունների շարքում, պատասխանատու է օտարերկրյա քաղաքացիներ կամ քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքի ընդունելու ցանկացող գործատուներին թույլտվություններ տալու համար: Նախարարության կայքում ներկայացված են վիճակագրական տվյալներ՝ գործազրկության մակարդակի, տնտեսության ճյուղերում առկա թափուր աշխատատեղերի և արտասահմանում Ուկրաինայի քաղաքացիների զբաղվածության վերաբերյալ, ինչպես նաև՝ աշխատուժի դեֆիցիտի կանխատեսումներ, թեմատիկ հաշվետվություններ ու ինֆոգրաֆիկա:¹⁸⁶

Տնտեսական զարգացման, առևտրի և գյուղատնտեսության նախարարություն

Տնտեսական զարգացման, առևտրի և գյուղատնտեսության նախարարությունը կանոնակարգում է աշխատանքային միգրացիան Ուկրաինայից: Նախարարության կայքում կարող եք գտնել իրավական փաստաթղթեր և այն ընկերությունների ցանկը, որոնք ունեն արտասահմանում զբաղվածության միջնորդության տնտեսական գործունեություն իրականացնելու լիցենզիա:¹⁸⁷

Հանրային տեղեկատվության մատչելիության մասին Ուկրաինայի թիվ 2939-VI օրենքի¹⁸⁸ համաձայն՝ յուրաքանչյուր ոք կարող է հանրային տեղեկատվություն ստանալ պետական մարմիններից: Բազմաթիվ նախարարություններ ունեն առցանց օրինակելի ձևեր, օրինակ՝ Ուկրաինայի Արտաքին գործերի նախարարությունն ունի մուտքի արտոնագրերի դիմումների, հյուպատոսական կամ միգրացիոն այլ հարցերով տվյալների հարցման ձևեր:¹⁸⁹ Հնարավոր է կապ հաստատել Ուկրաինայի Ժամանակավորապես գրավյալ տարածքների վերաինտեգրման և ՆՏԱ նախարարության,¹⁹⁰ Ներքին գործերի նախարարության,¹⁹¹ Պետական սահմանապահ ծառայության¹⁹² և Սոցիալական քաղաքականության նախարարության¹⁹³ հետ և ստանալ նրանց՝ համապատասխան մասնագիտական ոլորտներին առնչվող տվյալներ:

Ուկրաինայի խորհրդարանի՝ Մարդու իրավունքների հարցերով հանձնակատար

¹⁸⁴

<https://app.powerbi.com/view?r=eyJrIjojOTU4ODVjYTktNjk3ZC00N2E5LTlkNTQtYzk3ZTYzNzliYjk4IiwidCI6IjdhNTE3MjMzLTE1ZGYtNDQ1MC04ZjMyLWE5ODJmZTBhYTYyNSIsImMiOjhh9>

¹⁸⁵ http://www.ukrstat.gov.ua/operativ/operativ2007/tyr/tyr_u/arh_vig.html

¹⁸⁶ <https://www.dcz.gov.ua/analytics/67>

¹⁸⁷ <https://www.me.gov.ua/Documents/Download?id=64e0060e-afd9-445e-b1cf-ab3ee35e768a>

¹⁸⁸ https://minjust.gov.ua/m/str_35409

¹⁸⁹ <https://mfa.gov.ua/gromadskosti/publiczna-informaciya/elektronnij-zapit>

¹⁹⁰ <https://mtot.gov.ua/ua/elektronna-forma-zapitu>

¹⁹¹ https://mvs.gov.ua/ua/info_access/form_request/

¹⁹² <https://dpsu.gov.ua/ua/info/>

¹⁹³ https://www.msp.gov.ua/content/zapit_na_publichnu_informaciyu.php

Ուկրաինայի խորհրդարանի՝ Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարը¹⁹⁴ մշտադիտարկում և պաշտպանում է Ուկրաինայի քաղաքացիների մարդու իրավունքներն ու ազատությունները: Տվյալ օմբուդսմենի տարեկան հաշվետվությունն ընդգրկում է տեղեկություններ ազգային փոքրամասնությունների, օտարազգի ուկրաինացիների, ՆՏ անձանց և հակամարտության ազդակիր անձանց իրավունքների մասին:¹⁹⁵

«Պաշտպանության իրավունք» բարեգործական հիմնադրամ

«Պաշտպանության իրավունք» բարեգործական հիմնադրամ ՀԿ-ը (R2P) ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱՓԳՀ) գործադիր գործընկերն է ՆՏ անձանց, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ աշխատանքում: R2P մշտադիտարկում է Ուկրաինայում ՆՏ անձանց և հակամարտության ազդակիր անձանց իրավիճակը, թեմայի վերաբերյալ պարբերաբար պատրաստում սեղմագրեր և վերլուծական նյութեր:¹⁹⁶

«Դոնբաս-SOS» և «ԴրիմSOS»

ՆՏ անձանց և հակամարտության ազդակիր անձանց իրավաբանական և մարդասիրական օգնություն տրամադրելու նպատակով 2014 թվականին հիմնադրվեցին «Դոնբաս-SOS»¹⁹⁷ և «ԴրիմSOS»¹⁹⁸ հանրային կազմակերպությունները և «East-SOS»¹⁹⁹ բարեգործական հիմնադրամը: Այս կազմակերպությունները վերլուծական հաշվետվություններ են պատրաստում ՆՏ անձանց մասին, պաշտպանում մարդու իրավունքները և փաստաթղթավորում խախտումները, մշակում օրենսդրական զարգացումների գրավոր պարզաբանումներ:

ՌՈԿԱԴԱ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԻՄՆԱԿՐԱԾ

ՌՈԿԱԴԱ բարեգործական հիմնադրամը ՄԱՓԳՀ-ի գործադիր գործընկերն է: Հիմնադրամը մոբիլիզացնում է փախստականների համայնքները, սոցիալական աջակցություն տրամադրում փախստականներին և ապաստան հայցողներին, խթանում նրանց ինտեգրումն ուկրաինական հասարակությանը:²⁰⁰

Խարկովի՝ մարդու իրավունքների պաշտպանության խումբ

Խարկովի՝ մարդու իրավունքների պաշտպանության խումբը (ԽՄԻՊԽ) պաշտպանում է մարդու իրավունքների խախտման զոհերին, օրինակ՝ խոցելի խմբերի, այդ թվում՝ ապաստան հայցողների և միգրանտների իրավունքները, ՆՏ անձանց հիմնարար իրավունքները, պայքարում խտրականության, ռասիզմի, այլատյացության և ատելության

¹⁹⁴ <http://www.ombudsman.gov.ua/>

¹⁹⁵ <http://www.ombudsman.gov.ua/ua/page/secretariat/docs/presentations/&page=4>

¹⁹⁶ <https://r2p.org.ua/analityka/>

¹⁹⁷ <http://www.donbasssos.org/ru/>

¹⁹⁸ <https://krymsos.com/en/>

¹⁹⁹ <https://vostok-sos.org/shcho-mi-robimo/>

²⁰⁰ <https://rokada.org.ua/>

հիմքով հանցագործությունների դեմ, այս թեմաներով հրապարակում տեղեկատվություն և վերլուծություն:²⁰¹

Ուկրաինայի Մարդու իրավունքների հելսինկյան միություն

«Ուկրաինայի՝ Մարդու իրավունքների հելսինկյան միություն» (ՈւՄԻՀՄ) քաղաքացիական հասարակության կազմակերպությունն Ուկրաինայում մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունների խոշորագույն ասոցիացիան է, որը միավորում է 29 իրավապաշտպան ՀԿ-ներ և նպատակ ունի բարելավել մարդու իրավունքների պաշտպանությունը: ՈւՄԻՀՄ ամսական ամփոփագիրը տեղեկացնում է ընթերցողներին Ուկրաինայում մարդու իրավունքների ոլորտում, այդ թվում՝ ՆՏ անձանց և հակամարտության ազդակիր անձանց առնչվող ընթացիկ իրադարձությունների մասին:²⁰²

«ՉՄԻՆԱ»

«ՉՄԻՆԱ» մարդու իրավունքների կենտրոնը հասարակական կազմակերպություն է, որը մշտադիտարկում է համապատասխանությունը խոսքի, տեղաշարժի ազատության, խտրականության դեմ պայքարի պահանջներին, աջակցում է Ուկրաինայում, այդ թվում՝ Դրիմում մարդու իրավունքների պաշտպաններին և քաղաքացիական հասարակության ակտիվիստներին, պաշտպանում Ուկրաինայում զինված հակամարտության զոհերին: Կենտրոնը նաև վերլուծում է միգրացիային առնչվող բազմաթիվ թեմաներ, օրինակ՝ ըստ բնակության վայրի հաշվառման համակարգի ազդեցությունն Ուկրաինայում:²⁰³

Միջազգային զբաղվածության համաուկրաինական ասոցիացիա

Միջազգային զբաղվածության համաուկրաինական ասոցիացիան զբաղվում է արտասահմանում Ուկրաինայի քաղաքացիների զբաղվածությանն առնչվող հարցերով: Իր գործունեության ընթացքում Ասոցիացիան իրականացնում է նաև ուկրաինացիների միգրացիոն մտադրությունների հետազոտություն և խորհուրդներ հրապարակում աշխատանք գտնելու նպատակով գաղթող անձանց համար:²⁰⁴

Առողջության և շրջակա միջավայրի «Կարպատների տարածաշրջան» միջազգային հիմնադրամ

Արևմտյան Ուկրաինայում գտնվող Առողջության և շրջակա միջավայրի «Կարպատների տարածաշրջան» միջազգային հիմնադրամը (ՆԵԵԿԱ) տրամադրում է իրավաբանական, բժշկական և սոցիալական աջակցություն քաղաքացիություն չունեցող անձանց, քաղաքացիությունը կորցնելու վտանգի տակ գտնվող անձանց, փախստականներին և ապաստան հայցողներին:²⁰⁵

²⁰¹ <http://khpg.org/>

²⁰² <https://helsinki.org.ua/>

²⁰³ <https://zmina.ua/publication/>

²⁰⁴ <https://ampua.org/>

²⁰⁵ <http://new.neeka.org/>

«Դեսյատե Կվիտնյա»

«Դեսյատե Կվիտնյա» ՀԿ-ը պաշտպանում է խոցելի խմբերի՝ փախստականների, ՆՏ, քաղաքացիություն չունեցող կամ քաղաքացիությունը կորցնելու վտանգի տակ գտնվող անձանց իրավունքները: Կազմակերպությունը հրապարակում է վերլուծական հետազոտություններ և մշտադիտարկման հաշվետվություններ, օրինակ՝ դատական վիճակագրություն ապաստանի վարույթի վերաբերյալ:²⁰⁶

Ժողովրդագրության և սոցիալական հետազոտության ինստիտուտ

Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի Մ.Վ. Պտուխայի անվան ժողովրդագրության և սոցիալական հետազոտության ինստիտուտը (Միգրացիոն հետազոտությունների բաժինը) գիտահետազոտական հաստատություն է, որը հրատարակում է «Ժողովրդագրություն և սոցիալական տնտեսություն» գիտական ամսագիրը: Ամսագրում հրապարակվում են վերլուծական հոդվածներ միգրացիային առնչվող թեմաներով՝ աշխատանքային միգրացիա, միգրացիայի հեռանկարներ, ներգաղթ և ներգաղթողների ինտեգրում, Ուկրաինայում միգրացիոն իրավիճակի գնահատումներ և այլն:²⁰⁷

Աշխատանքի և բնակչության զբաղվածության գիտահետազոտական ինստիտուտ

Ուկրաինայի սոցիալական քաղաքականության նախարարության Աշխատանքի և բնակչության զբաղվածության գիտահետազոտական ինստիտուտը և Գիտությունների ազգային ակադեմիան հետազոտություններ է իրականացնում զբաղվածության, գործազրկության, ազգային աշխատաշուկայի միտումների, երկրում և տարածաշրջանում միգրացիոն գործընթացների թեմաներով:²⁰⁸

Տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտ

Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Ի. Դոլիշնիի անվան Տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտը վերլուծական հոդվածներ է հրատարակում միգրացիային առնչվող թեմաներով, որոնց ուշադրության կենտրոնում Արևմտյան Ուկրաինան է:²⁰⁹

«Եվրոպան առանց արգելապատերի»

«Եվրոպան առանց արգելապատերի» վերլուծական կենտրոնն ակտիվ գործունեություն է իրականացնում տեղաշարժի ազատությանն աջակցելու և խրախուսելու հարցերում: Կենտրոնն, ի թիվս այլ թեմաների, փորձագիտություն է ապահովում եվրոպական ինտեգրման, իրավունքի գերակայության, միգրացիայի և սահմանների կառավարման հարցերով: Վերլուծական կենտրոնը, ակտիվորեն հետազոտելով այս թեմաները, պատրաստում է վերլուծական նյութեր, ինֆոգրաֆիկա և թեմատիկ սեղմագրեր:²¹⁰

²⁰⁶ <http://www.dk.od.ua/news>

²⁰⁷ <http://dse.org.ua/nomera.html>

²⁰⁸ <http://ipzn.org.ua/>

²⁰⁹ <http://ird.gov.ua/ird01/p1062>

²¹⁰ <https://europewb.org.ua/category/analytics/>

CEDOS

CEDOS վերլուծական կենտրոնն իրականացնում է որակական և քանակական հետազոտություններ և քաղաքականության վերլուծություն, մասնավորապես՝ միգրացիայի ոլորտում: CEDOS կայքում կարելի է գտնել հաշվետվություններ, թեմատիկ հոդվածներ և խորհուրդներ միգրացիային առնչվող թեմաներով:²¹¹ CEDOS-ը, մասնավորապես, մատնանշում է միգրացիայի մասին պետական վիճակագրության և տվյալների հավաքագրման մեթոդաբանության մեջ առկա բացերը:²¹²

Փախստականների դանիական խորհուրդ

Փախստականների դանիական խորհուրդը (ՓԴԽ) վերակսել է Ուկրաինայում իր գործունեությունը 2014 թվականից՝ ի պատասխան երկրում աճող մարդասիրական կարիքների: ՓԴԽ-ը նախկինում աշխատել է Ուկրաինայում՝ 1998-2000 և 2007-2013 թվականներին՝ կենտրոնանալով Կենտրոնական Ասիայից Ղրիմ վերադարձող թաթարների վերաբնակեցման խնդիրներով, ապաստանի համար պատասխանատու ուկրաինական իշխանությունների և փախստական երեխաների հետ աշխատող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարողությունների զարգացման հարցերով:²¹³

ՄԲՄԿ-ն Ուկրաինայում²¹⁴

ՄՄԿ-ն Ուկրաինայում²¹⁵

ՄԱՓԳՀ-ն Ուկրաինայում²¹⁶

Կարևոր միջազգային կազմակերպություններ

- **EASO** Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակ
- **Eurostat** Եվրոպական Միության վիճակագրական գրասենյակ
<https://ec.europa.eu/eurostat/home>
- **CERD** ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման հանձնաժողով
- **GCIM** Միջազգային միգրացիայի հարցերով գլոբալ հանձնաժողով
- **GMG** Գլոբալ միգրացիայի խումբ
- **ICAT** Թրաֆիքինգի դեմ պայքարը համակարգող միջգերատեսչական խումբ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից լիազորված քաղաքական ֆորում, որը կոչված է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի, այդ թվում՝ թրաֆիքինգի զոհերի պաշտպանության և նրանց աջակցման ոլորտում ամբողջական և համապարփակ մոտեցմանն օժանդակելու նպատակով բարելավել

²¹¹ <https://cedos.org.ua/uk/articles/immihrantky-v-ukraini-dostup-do-rynku-pratsi-ta-intehratsiia-do-suspilstva>

²¹² <https://cedos.org.ua/en/articles/yevropeiska-statystyka-mizhnarodnoi-mihratsii-shcho-potribno-zrobyty-ukraini>

²¹³ <https://drc.ngo/our-work/where-we-work/europe/ukraine>

²¹⁴ www.icmpd.org

²¹⁵ <https://www.iom.int/countries/ukraine>

²¹⁶ <https://www.unhcr.org/ua/en>

ՄԱԿ-ի մարմինների և համապատասխան միջազգային կազմակերպությունների միջև համակարգումը:

- **ICMPD** Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն
- **ICRMW** Միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանության կոնվենցիա
- **IDMC** Տեղահանման մշտադիտարկման միջազգային կենտրոն
- **ILO** Աշխատանքի միջազգային կազմակերպություն <https://ilostat.ilo.org/>
- **IOM** Միգրացիայի միջազգային կազմակերպության [IOM Data Portal](#) և [Global Migration Data Analysis Centre \(GMDAC\)](#)
- **Frontex** Սահմանային հսկողության եվրոպական գործակալություն
- **MIPEX** Միգրանտների ինտեգրման քաղաքականության համաթիվ
- **MMD** Միգրացիայի և շարժունակության երկխոսություն (Աֆրիկա)
- **OECD** Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
- **OHCHR** Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ
- **OSCE** Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
- **PICUM** Չփաստաթղթավորված միգրանտների հարցերով համագործակցության միջազգային հարթակ
- **UNESCO** ՄԱԿ-ի Կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն
- **UNHCR** ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
- **UNICEF** ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ: Տե՛ս՝ կազմակերպության ռեսուրսները [Child migration](#), [Migration and refugee crisis](#) և [Migrant and displaced children](#):
- **UN Population Division** ՄԱԿ-ի Բնակչության բաժին
- **World Bank** Համաշխարհային Բանկ

Կարևոր ազգային վիճակագրական ծառայություններ

- Հայաստան՝ <https://www.armstat.am/en/>
- Ադրբեջան՝ <https://www.stat.gov.az/?lang=en>
- Բելառուս՝ www.belstat.gov.by
- Վրաստան՝ <https://www.geostat.ge/en>
- Մոլդովա՝ <http://statistica.gov.md/index.php?l=en>
- Ուկրաինա՝ <http://www.ukrstat.gov.ua/>
- Ռուսաստան՝ <https://eng.gks.ru/>

Կարևոր հասարակական կազմակերպություններ

Միջազգային

- Կարմիր խաչի/Կարմիր մահիկի միջազգային կոմիտե (ԿԻՄԿ, որը լայն իմաստով ՀԿ չէ) <https://www.icrc.org/>
- Փախստականների դանիական խորհուրդ <https://drc.ngo/>
- Փախստականների և արտաքսվածների հարցերով եվրոպական խորհուրդ <https://www.ecre.org/>

- ԱՄԵԽ - Ապաստանի և միգրացիայի հարցերով եվրոպական ՀԿ հարթակ https://ec.europa.eu/knowledge4policy/organisation/epam-european-ngo-platform-asylum-migration_en
- Բժիշկներ առանց սահմանների (Médecins Sans Frontières) <https://www.msf.org/>
- Օքսֆամ <https://www.oxfam.org/>

Տարածաշրջանային

- Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ) <http://www.crrcenters.org/20142/Contact>

Միջպետական, հասարակական և այլ աղբյուրների օգտագործման մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ Գլուխ 8. [Ինչպես գտնել և օգտագործել փորձագետներին](#):

Կարևոր քաղաքական նախաձեռնություններ

- **Ռաբաթի գործընթաց.** Միգրացիայի և զարգացման հարցերով եվրաաֆրիկյան երկխոսություն <https://www.rabat-process.org/en/>
- **Խարթումի գործընթաց.** Եվրոպական Միության և Աֆրիկյան եղջյուրի միջև միգրացիոն ուղու նախաձեռնության՝ աֆրիկյան մայրցամաքային երկխոսություն՝ Միգրացիայի և շարժունակության հարցերով երկխոսության շրջանակում (ՄՇԵ) <https://www.khartoumprocess.net/>:
- **Բուդապեշտի գործընթաց.** Խորհրդակցական գործընթաց՝ 50 երկրների միջև՝ հանուն կանոնակարգված միգրացիայի <https://www.budapestprocess.org/>:
- **Պրահայի գործընթաց.** Միգրացիայի հարցերով թիրախային երկխոսություն՝ Եվրոպական Միության, Շենգենյան տարածքի, Արևելյան գործընկերության, Արևմտյան Բալկանների, Կենտրոնական Ասիայի երկրների, Ռուսաստանի և Թուրքիայի միջև <https://www.pragueprocess.eu/en/>:
- **Միջերկրականի տարանցիկ միգրացիայի հարցերով երկխոսություն.** միգրացիայի և հարակից հարցերով զբաղվող պաշտոնատար անձանց միջև խորհրդակցական երկխոսություն <https://www.icmpd.org/our-work/migration-dialogues/mtm/>:
- **Միգրացիայի մասին գլոբալ պայմանագիր.** միգրացիայի հարցերին ամբողջական մոտեցման ՄԱԿ-ի նախաձեռնություն <http://refugeesmigrants.un.org/migration-compact>:
- **Անձանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների գլոբալ պլան.** մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ՄԱԿ-ի ռազմավարություն <http://www.un.org/pga/72/event-latest/global-plan-ofaction-to-combat-trafficking-in-persons/>:
- **Թրաֆիքինգի դեմ պայքարը համակարգող միջգերատեսչական խումբ.** թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում համատեղ գործող ՄԱԿ-ի գործակալություններ <http://icat.network/>:
- **Անձանց թրաֆիքինգի դեմ պայքարի պլանս.** Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ստեղծած լայն միջազգային ֆորում <http://www.osce.org/secretariat/107221>:

- **Այլանս 8.7.** մանկական աշխատանքի դեմ պայքարի միջազգային ալյանս <http://www.alliance87.org/>;
- **Միգրացիոն լրահոս.** ստեղծվել է լրագրողների համար՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից <https://www.iom.int/press-room/newsdesk>;
- **Միգրացիոն պատմություններ.** ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի բրիֆինգներ <http://www.unhcr.org/uk/news-and-stories.html>;

Ապաստանի և միգրացիայի մասին միջազգային և ԵՄ օրենսդրություն

ՀԻԵՄԳ – Եվրոպական Միության հիմնարար իրավունքների խարտիայի կիրառումն ազգային մակարդակում օրենսդրության և քաղաքականության մշակման աշխատանքներում, Ուղեցույց: (2018թ.)՝

<https://fra.europa.eu/en/publication/2018/applying-charter-fundamental-rights-european-union-law-and-policymaking-national>

ՀԻԵՄԳ – Ապաստանի, սահմանների և ներգաղթի մասին եվրոպական օրենսդրության ձեռնարկ (2014թ.)՝

<https://fra.europa.eu/en/publication/2014/handbook-european-law-relating-asylum-borders-and-immigration>

ՖՐՈՆՏԵՔՍ - 2019 թվականի ռիսկերի վերլուծության զեկույց (2019թ.)՝

<https://frontex.europa.eu/publications/risk-analysis-for-2019-RPPmXE>

ՄԱԹՎԳ – Մարդկանց թրաֆիքինգի մասին գլոբալ հետազոտություն (2018թ.)՝

<https://www.unodc.org/unodc/data-and-analysis/glotip.html>

ՄԱԹՎԳ - Մաքսանենգ ճանապարհով միգրանտների փոխադրման մասին գլոբալ հետազոտություն՝ <https://www.unodc.org/unodc/en/data-and-analysis/glosom.html>

ՄԱՓԳՀ – Համաշխարհային միտումներ (լույս է տեսնում ամեն տարի)՝

<https://www.unhcr.org/uk/statistics/unhcrstats/5ee200e37/unhcr-global-trends-2019.html>

Խոցելի իրավիճակներում գտնվող միգրանտների մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներ և ուղեցույցներ՝ կից օժանդակ գործնական ձեռնարկով:

Ռեսուրսներ միջպետական կազմակերպություններից

ՄՄԿ Միգրացիոն տվյալների պորտալ՝

<https://migrationdataportal.org/>

ՄՄԿ Գլոբալ միգրացիոն տվյալների վերլուծության կենտրոն՝

<https://gmdac.iom.int/>

Միգրացիայի (և միգրացիայի և մեդիայի) մասին հետազոտություններ

ԷԼՑ. Հուզիչ պատմություններ՝ միգրացիայի մեդիա լուսաբանման միջազգային տեսություն (2015թ.)՝

<https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/moving-stories>

ՄՔՄՄԿ/ԷԼՑ. Ինչպե՞ս է մեդիան լուսաբանում միգրացիան Միջերկրականի երկու կողմերում (2017թ.)՝

https://www.icmpd.org/fileadmin/2017/Media_Migration_17_country_chapters.pdf

ՄՄԻՍՀԵ. Միգրացիոն հետազոտությունների կենտրոն՝

<https://migrationresearch.com/>

ՄՄԿ Համաշխարհային միգրացիայի 2018 թվականի զեկույց. մեդիա և միգրացիա՝

https://publications.iom.int/system/files/pdf/wmr_2018_en_chapter8.pdf

«ՌԵՄԱՅՆԴԵՌ» ծրագիր՝

<https://www.reminder-project.eu/>

Աշխատանքային փաթեթ 11 – Մեդիա սովորույթներ՝ <https://www.reminder-project.eu/publications/work-packages/wp11-media-practices/>

Բլոգ՝

<https://www.reminder-project.eu/blog/turning-the-camera-around-who-watches-the-watchers/>

Աշխատանքային փաթեթ 8 – Խոսույթի քարտեզագրում՝

<https://www.reminder-project.eu/publications/work-packages/wp8-mapping-discourse/>

Միգրացիայի լուսաբանումը եվրոպական լրատվամիջոցներում. ինչպես է մեդիան լուսաբանում միգրացիան և ԵՄ տարածքում շարժունակությունը տեսանկյունային, տրամադրության և ձևակերպումների տեսանկյունից՝

<https://www.reminder-project.eu/publications/reports/european-media-migration-report-how-media-cover-migration-and-intra-eu-mobility-in-terms-of-salience-sentiment-and-framing/>

Միգրացիայի լուսաբանում. Խորհուրդներ պրակտիկ լրագրողներին՝

<https://www.reminder-project.eu/wp-content/uploads/2019/11/D8.8.pdf>

Բացերի վերացում (Օբսֆորդի համալսարանի հրատարակչություն), մասնավորապես՝ 4-րդ գլուխ՝

<https://fdslive.oup.com/www.oup.com/academic/pdf/openaccess/9780198834557.pdf>

Գիտակրթական

- ՄՄԻՍՀԵ-ի Միգրացիայի փորձագետների տվյալների միջազգային շտեմարան՝ <https://migrationresearch.com/experts>
- ԿՈՄՊԱՍ, Օբսֆորդի համալսարան՝ <https://www.compas.ox.ac.uk/>
- ՄԱՈՒ-ՄԵՐԻՏ/Մասսոթիիտի համալսարան՝ <https://www.merit.unu.edu/themes/6-migration-and-development/>
- Փախստականների հարցերի ուսումնասիրությունների կենտրոն՝ <https://www.rsc.ox.ac.uk/research>

- Միգրացիոն քաղաքականության կենտրոնը՝ <http://www.migrationpolicycentre.eu/>
- Միգրացիայի օբսերվատորիա (կենտրոնացված ՄԹ-ի շուրջ)՝ <https://migrationobservatory.ox.ac.uk/>

Վերլուծական կենտրոններ

- Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ (ՄԶԻ)՝ <https://www.migrationpolicy.org/>
- Փյուլ՝ <https://www.pewresearch.org/>
- ՏՀԶԿ՝ <https://data.oecd.org/society.htm#profile-Migration>

Միգրացիայի լուսաբանման առնչվող խարտիաներ, կանոնակարգեր և ուղեցույցներ

Էթիկական լրագրության ցանց (ԷԼՑ). *Միգրացիայի լուսաբանման էթիկական ուղեցույցներ (2016թ.):*

Անգլերեն՝ <https://ethicaljournalismnetwork.org/resources/infographics/ethical-guidelines-on-migration-reporting>

Ռուսերեն՝ <https://ethicaljournalismnetwork.org/resources/infographics/ethical-guidelines-on-migration-reporting-russian>

Լրագրողների եվրոպական դաշինք (ԼԵՊ) - Միգրացիայի լուսաբանման 8 խորհուրդներ (2016թ.)՝

<https://europeanjournalists.org/blog/2016/11/28/8-practical-tips-for-migration-coverage/>

ԱՄԿ Աշխատանքային միգրացիա. ուղեցույց լրագրողների համար՝

<http://www.ilo.org/global/topics/labour-migration/policy-areas/guidance-for-journalists/lang-en/index.htm>

ՄԶՄԿ/ԷԼՑ *Մեդիա և մարդկանց թրաֆիքինգ. ուղեցույցներ (2017թ.)՝*

<https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/media-trafficking-guidelines>

Հիմնարար իրավունքների Եվրոպական Միության գործակալություն (ՀԻԵՄԳ) - (2019թ.)՝ <https://e-learning.fra.europa.eu/>

Նշում. հիմնարար իրավունքների տեսանկյունից միգրացիայի լուսաբանման գործիքակազմ մեդիա մասնագետների համար:

Ներկայացնում է Ֆրանսիայի և ՄԹ լրատվական կազմակերպություններից վերցված ութ օրինակների վերլուծություն:

Համաշխարհային հետաքննական լրագրության ցանց (ՀՀԼՑ)

- «Մարդկանց թրաֆիքինգի ռեսուրսներ. լուսաբանման լավագույն պրակտիկա»-ն հրաշալի ռեսուրս է, որը ներկայացնում է լավագույն պրակտիկայի օրինակներ և խորհուրդներ լրագրողների և մեդիա կազմակերպությունների համար՝ <https://gijn.org/human-trafficking-resources-best-practices-in-reporting>

- Տե՛ս նաև՝ ՀՀԼՑ-ի [Տվյալներ և փորձագիտություն](https://docs.google.com/spreadsheets/d/1a3yzhzzzJslzxtVGVZ7uNx7Q_GhpAVDIboQGDbwy0B4/edit?usp=sharing)ն ծավալաթերթիկը, որում ներառված են 60-ից ավելի աղբյուրներ, որտեղ կարելի է գտնել տվյալներ և փորձագիտություն՝ https://docs.google.com/spreadsheets/d/1a3yzhzzzJslzxtVGVZ7uNx7Q_GhpAVDIboQGDbwy0B4/edit?usp=sharing

Միգրացիայի հարցեր. կարճ, կրթական տեսանյութեր միգրացիային և բազմազանությանն առնչվող թեմաներով՝ <http://migrationmatters.me/episode/media-welcoming/>

«Մարդը կարիքի մեջ» - Տոդերի արանքում գտնվող մարդիկ. միգրացիայի մասին ձեռնարկ (ապագա) լրագրողների համար (2020թ.)՝ https://www.clovekvtisni.cz/media/publications/1424/file/en_people-between-the-lines_final.pdf

Բազմազանություն և փոքրամասնություններ

Եվրոպայի խորհուրդ *Գործիքակազմ. լրագրողների վերապատրաստում, խտրականություն և բազմազանություն՝* https://www.coe.int/t/dg4/anti-discrimination-campaign/ressources/Training_toolbox/Toolbox_Journalisme_Training_Discrimination_Diversity_en.pdf

Եվրոպական հեռարձակողների միություն (ԵՀՄ) Մեծ տվյալներ. կարծրատիպերի և նախապաշարման դեմ պայքարի գործիք լրագրողների համար (2016թ.)՝ <https://www.ebu.ch/news/2016/10/big-data-a-tool-to-fight-stereotypes-and-preconceptions>

Մեդիա բազմազանության ինստիտուտ. Բազմազանության լուսաբանման ձեռնարկ (2004թ.)՝ [http://www.media-diversity.org/additional-files/documents/A%20Guides/MDI%20Reporting%20Diversity%20manual/Reporting%20Diversity%20Manual%20-%20Caucasus%20\[EN\].pdf](http://www.media-diversity.org/additional-files/documents/A%20Guides/MDI%20Reporting%20Diversity%20manual/Reporting%20Diversity%20Manual%20-%20Caucasus%20[EN].pdf)
Ընդգրկում է օրինակներ Ադրբեջանից, Հայաստանից և Վրաստանից:

ԵԱՀԿ/ԵԼՑ ԷԼՑ. *Մուսուլմանները՝ մեդիայում. դեպի ավելի մեծ հանդուրժողականություն և բազմազանություն (2018թ.)՝* <https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/muslims-media-tolerance-diversity>
Ընդգրկում է գլուխներ, որոնք ներկայացնում են հարցազրույցներ լրագրողների և փորձագետների հետ, ինչպես նաև օրինակների վերլուծություններ, որոնք ներկայացնում են լավ և վատ պրակտիկան:

«Նախապաշարումից ազատել լուրերը». *ինչո՞ւ է բազմազանությունը կարևոր լրագրության համար.*
«Հոսթոյթեր»-ի հրատարակած [Unbias the News-ը](https://www.unbiasnews.com/) նյութումները նախապաշարումից

ագատելու գործնական ուղեցույց է և նոր տեսակի լրագրության մեկնարկային հարթակ, որն ավելի է նմանվում այն հասարակությանը, որին ծառայում է:

ՅՈՒՆԻՍԵՖ – Երեխաների էթիկական լուսաբանման սկզբունքներ և ուղեցույցներ՝

https://www.unicef.org/media/media_tools_guidelines.html

Երեխաներին՝ ըստ տարիքի և նրբանկատ կերպով լուսաբանելու ուղեցույց: Նպատակն է՝ աջակցել «էթիկական լրագրողների լավագույն մտադրություններին՝ սպասարկելով հանրային շահերն առանց երեխաների իրավունքներին վնաս հասցնելու»:

Ատելության խոսք

Հոդված 19 - «Ատելության խոսքի» բացատրություն. գործիքակազմ.

Անգլերեն՝ <https://www.article19.org/resources/hate-speech-explained-a-toolkit/>

Ռուսերեն՝ <https://www.article19.org/ru/resources/hate-speech-explained-a-toolkit/>

ԷԼՅ – Ատելության խոսքի հինգ կետից թեստ (2014թ.).

Անգլերեն՝ <https://ethicaljournalismnetwork.org/resources/infographics/5-point-test-for-hate-speech-english>

Ռուսերեն՝ <https://ethicaljournalismnetwork.org/resources/infographics/5-point-test-for-hate-speech-russian>

Ուկրաիներեն՝

<https://ethicaljournalismnetwork.org/resources/infographics/5-point-test-for-hate-speech-ukrainian>

Ամբողջական նյութը՝

<https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/hate-speech>

Վերաբերելի միջազգային չափանիշներ՝

- Յեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին կոնվենցիա (1951թ.):
- Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու մասին միջազգային կոնվենցիա (1969թ.):
- Ապարտեիդի հանցագործությունն արգելելու և պատժելու մասին միջազգային կոնվենցիա (1976թ.):
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1976թ.):
- Ռասայի և ռասայական նախապաշարմունքների մասին ՅՈՒՆԵՍԿՈ-ի հռչակագիր (1978թ.):
- Ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և դրանց հետ կապված անհանդուրժողականության դեմ համաշխարհային համաժողով. Դուրբանի հռչակագիր և գործողությունների ծրագիր (2001):

Վերաբերելի միջազգային գործընթաց՝

- [Ուարաթի գործողությունների ծրագիր](#):

Միայն տեղեկատվություն և միգրացիա

Եվրոպայի խորհուրդ – Պրոպագանդայի, սխալ տեղեկատվության և կեղծ լուրերի հետ աշխատելու ռեսուրսներ՝

<https://www.coe.int/en/web/campaign-free-to-speak-safe-to-learn/resources-on-dealing-with-propaganda-misinformation-and-fake-news>

Լրագրության եվրոպական կենտրոն. Ստուգանքային ձեռնարկ.

Անգլերեն՝ <http://verificationhandbook.com/>

Ուկրաիներեն՝ http://verificationhandbook.com/book_ua/

«**First Draft News**»

Մշտադիտարկում և նորությունների հավաքում՝

<https://firstdraftnews.org/training/monitoring-newsgathering/>

Ստուգանքային՝ <https://firstdraftnews.org/training/verification/>

Ֆաթմ Social Monitoring Toolkit, որն ստեղծվել է ի պատասխան լրագրողների համար COVID-19-ով պայմանավորված տեղաշարժման սահմանափակումների՝

<https://fathmtoolkit.netlify.app/>

Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ՝ Երբ փաստերը կարևոր չեն. ինչպես ավելի արդյունավետ հաղորդակցվել ներգաղթի դրական և բացասական հետևանքների մասին՝

<https://www.migrationpolicy.org/research/when-facts-dont-matter-immigration>

Միգրացիայի տերմինաբանական բառարաններ

ԱՀԿ՝ Մեղիային հարմարեցված միգրացիայի տերմինաբանական բառարան (2014թ.)՝

https://www.ilo.org/global/topics/labour-migration/publications/WCMS_310235/lang-en/index.htm

ՄՄԿ՝ Միգրացիայի ոլորտի հիմնական եզրույթներ (2011թ.)՝

<https://www.iom.int/key-migration-terms>

ՄՄԿ՝ *Միջազգային միգրացիոն իրավունք Շարք No 25 – Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան* (2011թ.)՝

https://publications.iom.int/system/files/pdf/iml25_1.pdf

ԱՀԿ/ՄԱԲԱ՝ *Միգրացիայի ոլորտի տերմինների բառարանից ադապտացված մեղիային հարմարեցված տերմինաբանական բառարան*՝

<https://readymag.com/ITCILO/1720704/>

(Այս տերմինաբանական բառարանն ադապտացվել է ԱՀԿ և ՄԱԲԱ-ի համատեղ հեղինակային իրավունքով մշակված Մեղիային հարմարեցված միգրացիայի տերմինաբանական բառարանից):

ՄՄԻԱՀԵ՝ *Միգրացիոն հետազոտությունների կենտրոն. Տարանմիասներ*՝

<https://migrationresearch.com/taxonomies>

ՄԱՔԱ՝ Մեդիային հարմարեցված միգրացիայի տերմինաբանական բառարան (2015թ.)՝
<https://www.unaoc.org/resource/media-friendly-glossary-for-migration/>

ՄԱՓՉ՝ Փախստականների մասին լուսարանում. Ուղեցույց լրագրողներից՝
լրագրողների համար՝
<https://www.unhcr.org/uk/publications/brochures/58e1ed994/reporting-on-refugees-guidelines-by-and-for-journalists.html>

Բանավեճեր բառամթերքի օգտագործման շուրջ

«Ալ Ջազիրա»- Ինչո՞ւ «Ալ Ջազիրա»-ն չի օգտագործի Միջերկրական «միգրանտներ» բառակապակցությունը, Մելոուն, Բ. (20-ն օգոստոսի 2015թ.)՝
<https://www.aljazeera.com/features/2015/08/20/why-al-jazeera-will-not-say-mediterranean-migrants/>

«Վաշինգտոն Փոստ»- Ժամանակն է հրաժարվել «միգրանտ» բառից, Թեյլոր, Ա. (24-ն օգոստոսի 2015թ.)՝ <https://www.washingtonpost.com/news/worldviews/wp/2015/08/24/is-it-time-to-ditch-the-word-migrant/>

«Նյու Յորք Թայմզ»- Միգրանտ, թե՞ փախստական: Կա տարբերություն՝ իրավական հետևանքներով, Սենգուպտա, Ս. (27-ն օգոստոսի 2015թ.)՝
https://www.nytimes.com/2015/08/28/world/migrants-refugees-europe-syria.html?_r=0

«ԲիբիՍի Նյուզ» Միգրանտներին նկարագրելու համար օգտագործվող բառերի շուրջ «մարտ»: – Կամիլա Ռուզ (28 օգոստոսի 2015թ.)՝ <https://www.bbc.co.uk/news/magazine-34061097>

«Գարդիան» Մենք ծաղրում ենք նրանց՝ որպես «միգրանտներ»։ Ինչո՞ւ չկոչել նրանց մարդ: – Մարշ, Դ. (28 օգոստոսի 2015թ.)՝
<https://www.theguardian.com/commentisfree/2015/aug/28/migrants-people-refugees-humanity>

Օքսֆորդի համալսարանի Իրավաբանության ֆակուլտետ- Փախստականները նույնպես միգրանտներ են, և բոլոր միգրանտները կարևոր են, Բարլինգ, Ջ. (4 սեպտեմբերի 2015թ.)՝ <https://www.law.ox.ac.uk/research-subject-groups/centre-criminology/centreborder-criminologies/blog/2015/09/refugees-are-also>

«Բոնվերսեյշն»- Միգրանտ, թե՞ փախստական: Ինչո՞ւ է կարևոր՝ որ բառն եք ընտրում: Թեյլոր, Չ. (14 սեպտեմբերի 2015թ.)՝ <https://theconversation.com/migrant-or-refugee-why-it-matters-which-word-you-choose-47227>

«Լենգվիջ օն դը մուվ»- Ո՞վ է իրական փախստական, Բոդիս, Ա. (23 սեպտեմբերի 2015թ.)՝
<https://www.languageonthemove.com/who-is-a-real-refugee/>

Գենդերային հարցեր և մեդիա

ՀԻԵՄԳ – Գործիքակազմ լրագրողների համար՝

<https://e-learning.fra.europa.eu/course/view.php?id=28#section-3>

ՀՀԼՑ – Ռեսուրսներ կին լրագրողների համար՝

<https://gijn.org/gijn-guide-resources-for-women-journalists/>

ՄՄԿ – Գենդերային հարցեր և միգրացիա՝

<https://www.iom.int/gender-and-migration>

ՎԱՆ-ԻՆՖՐԱ – «Կանայք՝ նորություններում» [ռեսուրս կենտրոնը](#) ներկայացնում է մեդիայում գենդերային հավասարության մասին վերջին գեկույցները և տվյալները, ինչպես նաև՝ պրակտիկ գործիքներ, որոնց նպատակն է՝ օգնել մեդիա կառավարիչներին՝ ստեղծել միջավայր տաղանդավոր կանանց հաջողությունն ապահովելու համար: Բոլոր նյութերը հասանելի են անվճար:

[Ով է հեղինակում նորությունները](#) – ՌՀՆ-ը գիտելիքի, տեղեկատվության և ռեսուրսների պորտալ է մեդիայի, գենդերային հարցերի և խտրականության այլ առանցքների վերաբերյալ: Այն հյուրընկալում է [Մեդիա մշտադիտարկման գլոբալ նախագիծը](#) (ՄՄԳՆ)՝ աշխարհի խոշորագույն և ամենաերկարակյաց հետազոտական և ջատագովական նախաձեռնությունը, որի նպատակն է՝ խրախուսել գենդերային հավասարությունը լրատվական մեդիայում և դրա միջոցով՝

[Ուսումնական ռեսուրսային փաթեթ՝ գենդերային տեսանկյունից էթիկական լրագրության և մեդիա քաղաքականության համար:](#)

ՄԱԿ-Կանայք՝ մեդիայում. գենդերային հավասարության մասին իրազեկման բարձրացում՝

[ՄԱԿ-Կանայքը](#) փնտրում է մեդիայի անդամների միջավայրում գենդերային հավասարության հարցերի վերաբերյալ իրազեկումը բարձրացնելու հնարավորություններ, այդ թվում՝ հատուկ աշխատաժողովների և գործիքակազմների միջոցով, ինչը հնարավորություն կտա նրանց՝ սկսել գենդերային հարցերի նկատմամբ զգայուն լուսաբանում: Կազմակերպությունը խրախուսում է ավելի մեծ թվով կանանց աշխատանքը մեդիա ոլորտում, այդ թվում՝ ղեկավար պաշտոններում: Աջակցությունը կին փաստաբաններին օգնում է նրանց՝ զարգացնել հաղորդակցության և մեդիա հմտությունները՝ լրագրողների հետ ավելի արդյունավետ շփվելու համար:

Ռադիոյում և հեռուստատեսությունում կանանց միջազգային միություն (ՌՀԿՄՄ) –

Անվտանգության մասին ռեսուրսներ հատուկ կանանց համար, օրինակ՝ միության մշակած [Ի՞նչ, եթե: Անվտանգության ձեռնարկ կին լրագրողների համար](#): Միությունը մանրակրկիտ կազմում է գենդերային հավասարությանն առնչվող փաստաթղթեր և հրապարակումներ, որոնցից մեկը հետևյալն է՝ [Մեդիայում գենդերային հավասարության ուղղությամբ աշխատանքի ձեռնարկ. ՌՀԿՄՄ-ը և գենդերային մեյնսթրիմինգի նախագիծ](#):

Միգրացիայի լուսարանման մրցանակներ

- **Աշխատանքային միգրացիայի և աշխատանքի բնդունման արդարացի պրակտիկայի ոլորտում ԱՀԿ Գլոբալ մեդիա մրցույթ**: 2020 թվականին մասնակիցներին խրախուսել են անդրադառնալ միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների վրա ԲՈՎԻԴ-19-ի ազդեցություններին:²¹⁷
- **Միգրացիայի մասին ֆիլմերի համաշխարհային փառատոնը** նախաձեռնել է ՄԱԿ-ի միգրացիայի հարցերով գործակալությունը՝ Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ), որի ընթացքում ներկայացվում են «նոր ֆիլմեր, որոնք պատկերում են միգրացիայի հեռանկարները և մարտահրավերներն այն անձանց համար, ովքեր ցանկանում են լքել իրենց տներն՝ ավելի լավ կյանք գտնելու համար, և ներկայացնում այն բացառիկ օգուտները, որոնք միգրանտները բերում են իրենց նոր համայնքներին»:²¹⁸
- **Միգրացիայի ոլորտի մեդիա մրցանակը** ԵՄ հովանավորած տարեկան մրցույթ է, որն անց է կացնում ՄԶՄՄԿ-ը: Հաղթողների հետ կնքվում է նոր պատմություն պատրաստելու պայմանագիր, որը տեղադրվում է նաև ՄԶՄՄԿ-ի կայքում:²¹⁹ Ներշնչման համար ծանոթացեք [2017](#), [2018](#) և [2019](#) թվականների հաղթողների հետ:
- **«Մեկ աշխարհ» մեդիա մրցանակների** 14 կարգերից մեկը Փախստականների լուսարանման մրցանակն է:²²⁰
- **«Ճամպուրակը»** միգրացիայի խնդիրների լուսարանման ամենամյա լրագրողական մրցույթ է, որը կազմակերպվում է Հայաստանում 2009թ.-ից: 2016-2019 թթ.-ին այն անցկացվել է ՄԶՄՄԿ հայաստանյան գրասենյակի հովանավորությամբ՝ ՄԱՓԳՀ և «Repat Armenia» հիմնադրամի հետ համատեղ:²²¹
- **Մամրո եվրոպական մրցանակը** նախատեսված չէ հատուկ միգրացիայի մասին պատմությունների համար, սակայն մրցանակներ է տալիս միգրացիայի լուսարանման համար:²²²

²¹⁷ https://www.ilo.org/global/topics/labour-migration/news-statements/WCMS_755234/lang--en/index.htm

²¹⁸ <https://www.iom.int/global-migration-film-festival>

²¹⁹ <http://www.migration-media-award.eu/en/>

²²⁰ <https://www.oneworldmedia.org.uk/awards/>

²²¹ <https://www.mibma.eu/en/news/150-icmpd-announces-the-winners-of-suitcase-2019-annual-journalism-contest-on-migration-issues>

²²² <https://www.europeanpressprize.com/>

Ինչպես տեսանք այս ձեռնարկում՝ մեդիան կարող է հսկայական ազդեցություն ունենալ միգրանտների ընդհանուր պատկերի և բուն միգրացիայի վրա՝ էապես նպաստելով այս թեմայի վերաբերյալ հանրային խոսույթի և կարծիքների ձևավորմանը, ինչպես նաև ընդգծելով միգրացիայի ոլորտի ամենահրատապ մարտահրավերները կամ միգրացիայի զանազան օգուտները: Քանի որ հասարակությունը ձգտում է տեղեկացված լինել մեդիայի միջոցով, վերջինիս ազդեցությունը երկրի ազգային միգրացիոն քաղաքականությունը սահմանելու վրա դարձել է ավելի որոշիչ: Հետևաբար, բնակչության մեծամասնության դիրքորոշումը և վերաբերմունքը միգրանտների նկատմամբ մեծապես պայմանավորված է մեդիայի կողմից նրանց ներկայացնելու ձևով, ինչպես նաև այն խնդիրներով, որոնք մեդիան ընտրում է լուսաբանման համար կամ անտեսում: Մեդիան կարող է կամ կրկնել և վերահաստատել գոյություն ունեցող տարածված կարծրատիպերը, կամ նպաստել միգրանտների՝ ավելի տարբերակված և փաստահեն ընկալմանը: Ավելին՝ վերջին տարիներին մեծացել է տարբեր մեդիա ալիքներով ապատեղեկատվության տարածման խնդիրը նաև այս տարածաշրջանում: Այս պատճառով էլ Գերմանիայի ֆինանսավորած և ՄԶՄԿ իրականացրած ՄՈՄԵՆՏԱ-2 ծրագրի շրջանակներում մշակվեց այս ձեռնարկը, որի նպատակն է լուծել խնդիրը և նպաստել ապացույցների վրա հիմնված, օբյեկտիվ և ճշմարտացի լուսաբանմանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՓ	Ատշիեյթդ փրես
ԱՌԴ	Գերմանիայի հանրային հեռարձակող
ԲԻԲԻՍԻ	Բրիտանական հեռարձակող ընկերություն
ՍԱԿ	Սահմանային անցակետ
ԲԵԼՍՏԱՏ	Բելառուսի ազգային վիճակագրական կոմիտե
ԲԵՌՈԿ	Բելառուսական տնտեսական հետազոտությունների կենտրոն
ՍՏՀԿ	Սոցիալական և տնտեսական հետազոտությունների կենտրոն
ԽԴԿ	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա
ՀՀ ԿԲ	ՀՀ կենտրոնական բանկ
ՓԲԿ	Փախստականների համար բարեգործական կենտրոն
ՈւՀՎԿ	Ուկրաինական հետազոտական և վերլուծական կենտրոն
ՌԽՎՀ	ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման հանձնաժողով
ՔԽԿ	Քննությունների և խորհրդակցությունների կենտրոն
ՔԶԳ	Քաղաքացիական զարգացման գործակալություն
ՄՄԿտ	Միջազգային միգրացիայի կենտրոն
ԿԺԱ	Կոլումբիայի համալսարանի ժուռնալիզմի ամսագիր
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԿՈՄՊԱՍ	Օբսֆորդի համալսարանի Միգրացիայի, քաղաքականության և հասարակության կենտրոն
ՔՈՎԻԴ-19	2019 թվականի կորոնավիրուս
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՓԴԽ	Փախստականների դանիական խորհուրդ
ԱԳ	Արևելյան գործընկերություն
ԱԱԵԳ	Ապաստանի աջակցության եվրոպական գրասենյակ
ԵՀՄ	Եվրոպական հեռարձակողների միություն
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՓԱԵԽ	Փախստականների և արտաքսվածների հարցերով եվրոպական խորհուրդ
ԺԵՖ	Ժուռնալիստների եվրոպական ֆեդերացիա
ԷԼՑ	Էթիկական լրագրության ցանց
ԵՄՑ	Եվրոպական միգրացիոն ցանց
ԱՄԵԽ	Ապաստանի և միգրացիայի հարցերով եվրոպական ՀԿ հարթակ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՎՐՈՍՏԱՏ	Եվրոպական Միության վիճակագրական գրասենյակ
ՀԻԵՄԳ	Հիմնարար իրավունքների Եվրոպական Միության գործակալություն
ՖՐՈՆՏԵ-ԶՍ	Սահմանային հսկողության եվրոպական գործակալություն
ՖԹ	Ֆայնենշլ թայմզ
ՄԲ	Մեծ Բրիտանիա
ՄԲՓ	Ֆունտ ստերլինգ

ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ԳԵՈՍՏԱՏ	Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակ
ՄՉԳՖ	Մեղիա զարգացման գլոբալ ֆորում
ՀՀԼՑ	Համաշխարհային հետաքննական լրագրության ցանց
ՎՀԿԻ	Վրաստանի Հասարակության հետ կապերի ինստիտուտ
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
ԳՄՏՎԿ	Գլոբալ միգրացիոն տվյալների վերլուծության կենտրոն
ԳՄԽ	Գլոբալ միգրացիայի խումբ
ՄՄԳՆ	Մեղիա մշտադիտարման գլոբալ նախագիծ
ՎԵԻՄ	Վրաստանի երիտասարդ իրավաբանների միություն
ՌՀՎՄՄ	Ռադիոյում և հեռուստատեսությունում կանանց միջազգային միություն
ԹՊՀՄԽ	Թրաֆիքինգի դեմ պայքարը համակարգող միջգերատեսչական խումբ
ՄԶՄՄԿ	Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն
ԿԽՄԿ	Կարմիր խաչի միջազգային կոմիտե
ՄԱԻՊԿ	Միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանության կոնվենցիա
ՏՄՄԿ	Տեղահանման մշտադիտարկման միջազգային կենտրոն
ՆՏԱ	Ներքին տեղահանված անձ
ԼՄՑ	Լրագրողների միջազգային ցանց
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ՄՄԻՍՀԵ	Միջազգային միգրացիա, ինտեգրում և սոցիալական համերաշխություն Եվրոպայում
ԼԱՄԻ	Լուրերի անվտանգության միջազգային ինստիտուտ
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային ինստիտուտ
ԽՄԻԽ	Խարկովի մարդու իրավունքների պաշտպանության խումբ
ՄՉԳԳԳ	Միգրացիայի և զարգացման մասին գիտելիքների գլոբալ գործընկերություն
ՀԻԻԱ	Հանրային իրավունքի իրավաբանական անձ
ԼԳԲՏԶԻ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրասնգենդար, քվիր, ինտերսեքս
ԼԳՀ	Լոնդոնյան գրական հանդես
ԼՄԻ	Լա Ստրադա Ինթերնեյշնլ
ՄՈՒԿ	Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն
ՄԲԻ	Մեղիա բազմազանության ինստիտուտ
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԱՄՊՆ	Մոլդովայի առողջապահության, աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության Մասնագիտական քաղաքականության և միգրացիայի կարգավորման վարչություն
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՄԻԶՀ	Միգրանտների ինտեգրման քաղաքականության համաթիվ
ԱԲՄՊՆ	Ադրբեջանի աշխատանքի և բնակչության սոցիալական պաշտպանության նախարարություն
ՄՇԵ	Միգրացիայի և շարժունակության հարցերով երկխոսություն
ՄՈՍԵՆՏԱ	«Միգրացիայի հարցերով մեղիայի ուսումնական ակադեմիա» նախագիծ

ՍԶՆ	Ուկրաինայի սոցիալական քաղաքականության նախարարություն
ՄԶԻ	Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ
ՄԾ	ՀՀ Միգրացիայի ծառայություն
ԲԱՍ	Բժիշկներ առանց սահմանների
ՆԵԵԿԱ	Առողջության և շրջակա միջավայրի «Կարպատների տարածաշրջան» միջազգային հիմնադրամ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՄԻԳՀԳ	Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՕԶՍՖԱՄ	Սովյայներին օգնության օբսֆորդյան կենտրոն
ԶՄՀՄՀ	Զփաստաթղթավորված միգրանտների հարցերով համագործակցության միջազգային հարթակ
ՀԾԶԳ	Վրաստանի Հանրային ծառայությունների զարգացման գործակալություն
ՀՏՄԽ	Հետտրավմատիկ սթրեսային խանգարում
R2P	«Պաշտպանության իրավունք» բարեգործական հիմնադրամ
ՓՈՒԿ	Փախստականների ուսումնասիրության կենտրոն
ՈւՊՄԾ	Ուկրաինայի պետական սահմանապահ ծառայություն
ԱՊՄԾ	Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայություն
ՄՀՊԾ	Միգրացիայի հարցերի պետական հանձնաժողով
ՊՄԾ	Միգրացիոն պետական ծառայություն
ՊՎԾ	Ուկրաինայի պետական վիճակագրական ծառայություն
ԺՏԿ	Ժամանակավոր տեղավորման կենտրոն
ՄԹգ	Մարդկանց թրաֆիքինգ
ՈւՄԻՀՄ	Ուկրաինական մարդու իրավունքների հեղինակյան միություն
ՄԹ	Միացյալ Թագավորություն
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՅՈՒՆԵՍԿՈ	ՄԱԿ-ի Կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն
ՄԱՓԳՀ	ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՄԱԹՀԳ	ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակ
ՄԱՕԱԳ	ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալություն
ՄԱՈՒ-ՄԵՐԻՏ	ՄԱԿ-ի համալսարան – Մասատրիխտի նորարարությունների և տեխնոլոգիաների տնտեսական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ՎԱՆ-ԻՖՐԱ	Թերթերի և նորությունների հրատարակիչների համաշխարհային ասոցիացիա
ԱճՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ՈՀՆ	Ով է հեղինակում նորությունները
ԲՀՀ	Բնության համաշխարհային հիմնադրամ

Ahmed, S. (2020). “The Aids Epidemic Stigmatized Black Communities for Years. Now Coronavirus Threatens to do the same with Asian Communities”, Media Diversity Institute, 24 March 2020, <https://www.media-diversity.org/the-aids-epidemic-stigmatized-black-communities-for-years-now-coronavirus-threatens-to-do-the-same-with-asian-communities/>.

Allen, W., Blinder, S. and R. McNeil (2017). “Media Reporting of Migrants and Migration”. In: *World Migration Report 2018*, IOM, https://publications.iom.int/system/files/pdf/wmr_2018_en_chapter8.pdf.

Associated Press (2008). *A New Model for News: Studying the Deep Structure of Young-Adult News Consumption*, June 2008, <https://apo.org.au/sites/default/files/resource-files/2008-07/apo-nid15035.pdf>.

Ballantyne, N. and D. Dunning (2020). “Which Experts Should You Listen to during the Pandemic?”, *Scientific American*, Observations, 8 June 2020, <https://blogs.scientificamerican.com/observations/which-experts-should-you-listen-to-during-the-pandemic/>.

BELSTAT (2020) *Statistical Yearbook of the Republic of Belarus 2020*, 25 September 2019, https://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/publications/izdania/public_compilation/index_18023/.

BEROC (2020). *Demography as a Challenge for Economic Growth*, March 2020, http://beroc.by/publications/policy_papers/demografiya-kak-vyzov-dlya-ekonomicheskogo-rosta/.

Breeden, A. and A. Cowell (2018). “Paris ‘Spider-Man’ Saves Young Boy. Cue Debate on Migrants”, *The New York Times*, 28 May 2018, <https://www.nytimes.com/2018/05/28/world/europe/paris-migrant-hero-spiderman.html>.

CASE Belarus (2020). “Circular Migration Between Belarus and Poland, Slovakia, and Czechia”, 7 April 2020, <https://case-belarus.eu/circular-migration-between-belarus-and-poland-slovakia-and-czechia/>.

Colford, P. (2013). “‘Illegal immigrant’ no more”, AP Blog, 2 April 2013, <https://blog.ap.org/announcements/illegal-immigrant-no-more>.

Connor, P. and J. Passel (2019). “Europe’s Unauthorized Immigrant Population Peaks in 2016, Then Levels Off”, Pew Research Center, 13 November 2019, <https://www.pewresearch.org/global/2019/11/13/europes-unauthorized-immigrant-population-peaks-in-2016-then-levels-off/>.

Council of Europe (2020). *Guide on Article 8 of the European Convention on Human Rights - Right to respect for private and family life, home and correspondence*, https://www.echr.coe.int/documents/guide_art_8_eng.pdf.

Dart Center for Journalism and Trauma (2007). *Trauma & Journalism: A Guide for Journalists, Editors & Managers*, compiled and edited by Mark Brayne, https://dartcenter.org/sites/default/files/DCE_JournoTraumaHandbook.pdf.

Dugan, E. (2013). “Forced Labour and Human Trafficking: Media Coverage in 2012”, JRF Programme Paper, Forced labour, June 2013, <https://www.jrf.org.uk/sites/default/files/jrf/migrated/files/forced-labour-media-coverage-full.pdf>.

Eberl, J-M. et al. (2019). *European Media Migration Report: How Media Cover Migration and Intra-EU Mobility in Terms of Salience, Sentiment and Framing*, REMINDER, August 2019, <https://www.understandfreemovement.eu/wp-content/uploads/2020/01/D8.3.pdf>.

EJN (2016). The 5 Principles of Ethical Journalism, Who we are, <https://ethicaljournalismnetwork.org/who-we-are/5-principles-of-journalism>.

ESRC COMPAS (2018). *The COMPAS Approach: Considering the past, present and future of migration research*, https://www.compas.ox.ac.uk/wp-content/uploads/COMPAS-Framing-Report_brochure.pdf.

European Commission (2020). Migration and Home Affairs, What We Do, subsidiary protection, https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/networks/european_migration_network/glossary_search/subsidiary-protection_en.

European Commission (2017). Migration and Home Affairs, What We Do, Temporary protection, https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/asylum/temporary-protection_en.

European Commission (2017). Migration and Home Affairs Family Reunification, https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/legal-migration/family-reunification_en.

European Commission (2014). *The Impacts of Remittances on Developing Countries*, DG EXPO, [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2014/433786/EXPO-DEVE_ET\(2014\)433786_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2014/433786/EXPO-DEVE_ET(2014)433786_EN.pdf).

Eurostat (2020). Enforcement of immigration legislation statistics, modified 21 July 2020, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Enforcement_of_immigration_legislation_statistics#Non-EU_citizens_ordered_to_leave_the_EU-27.

Eurostat (2020). Top 20 countries of citizenship of non-EU citizens returned outside the EU-27, 2018 and 2019 (number), modified 3 July 2020, <https://ec.europa.eu/eurostat/statistics->

[explained/index.php?title=File:Top_20_countries_of_citizenship_of_non-EU_citizens_returned_outside_the_EU-27,_2018_and_2019_\(number\)_MI20.png](#).

Feinstein, A. and H. Storm (2017). *The Emotional Toll On Journalists Covering the Refugee Crisis*, Reuters Institute for the Study of Journalism, <https://reutersinstitute.politics.ox.ac.uk/sites/default/files/research/files/Storm%20and%20Feinstein%20-%20Emotional%20Toll.pdf>.

Fengler, S. and M. Kreutler (2020). “How do the European media cover migration?”, EJO, 14 January 2020, <https://en.ejo.ch/ethics-quality/how-do-the-european-media-cover-migration>.

Gibson, J. and D. McKenzie (2011). “Eight Questions about Brain Drain”, IZA Discussion Paper No. 5730, May 2011, <http://ftp.iza.org/dp5730.pdf>.

GIJN (2018). Working with Whistleblowers, <https://gijn.org/whistleblowing/>.

Hannaford, A. et al. (2016). “Reporting on Refugees: Tips on Covering the Crisis”, Dart Center for Journalism and Trauma, 26 February 2016, <https://dartcenter.org/resources/reporting-refugees-tips-covering-crisis>.

ICMPD (2017). *Media and Trafficking in Human Beings Guidelines*, https://www.icmpd.org/fileadmin/user_upload/Media_and_THB_Guidelines_EN_WEB.pdf.

ILO (2020). “ILO launches sixth Global Media Competition on Labour Migration and Fair Recruitment”, Labour migration, Media advisory, 15 September 2020, https://www.ilo.org/global/topics/labour-migration/news-statements/WCMS_755234/lang-en/index.htm.

ILO (2020). Reporting on forced labour and fair recruitment: An ILO toolkit for journalists, <https://readymag.com/ITCILO/1292461/>.

IOM (2020). “Global Migration Film Festival 2020”, Global Migration Film Festival, <https://www.iom.int/global-migration-film-festival>.

Karnitschnig, M. (2020) “5 years on from Angela Merkel’s three little words: ‘Wir schaffen das!’”, *Politico*, 31 August 2020, <https://www.politico.eu/article/angela-merkel-wir-schaffen-das-5-years-on/>.

Law, T. (2020). “Digital transformation and greater diversity be two sides of the same coin”, Media Diversity Institute, 13 March 2020, <https://www.media-diversity.org/digital-transformation-and-media-diversity-two-sides-of-the-same-coin/>.

Marchand, K. (2019). “Why are people moving within Europe? The complexity of migrant decision-making in the European Union”, REMINDER, Blog, 30 April 2019, <https://www.reminder-project.eu/blog/why-are-people-moving-within-europe-the-complexity-of-migrant-decision-making-in-the-european-union/>.

Matache, M. and J. Bhabha (2020). “Anti-Roma Racism is Spiraling during COVID-19 Pandemic”, *Health and Human Rights*, 22(1), June 2020, pp. 379-382, <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7348427/>.

Mattoscio, M. and M. MacDonald (2018). “Introduction: Gender, Migration, and the Media”, *Feminist Media Studies*, 8(6), 2 November 2018, pp. 1117-1120, <https://www.tandfonline.com/doi/full/10.1080/14680777.2018.1532142>.

McCauliffe, M., Weeks, W. and K. Koser (2017). “Media and migration: Comparative analysis of print and online media reporting on migrants and migration in selected countries”. In: *A Long Way to Go; Irregular Migration Patterns, Processes, Drivers and Decision-Making*, <https://library.oapen.org/bitstream/handle/20.500.12657/30709/643773.pdf?sequence=1#page=311>.

MIBMA (2019). “ICMPD announces the winners of «Suitcase 2019» annual journalism contest on migration issues”, News, 12 December 2019, <https://www.mibma.eu/en/news/150-icmpd-announces-the-winners-of-suitcase-2019-annual-journalism-contest-on-migration-issues>.

Migration Data Portal (2020). Types of migration, International students, updated 9 June 2020, <https://migrationdataportal.org/themes/international-students>.

Migration Data Portal (2020). Types of migration, Labour migration, updated 9 June 2020, <https://migrationdataportal.org/themes/labour-migration>.

Migration Observatory (2013). *Migration in the News: Portrayals of Immigrants, Migrants, Asylum Seekers and Refugees in National British Newspapers, 2010-2012*, University of Oxford, <https://migrationobservatory.ox.ac.uk/resources/reports/migration-in-the-news/>.

Migration Observatory (2011). *Thinking Behind the Numbers: Understanding Public Opinion on Immigration in Britain*, University of Oxford, <https://migrationobservatory.ox.ac.uk/resources/reports/thinking-behind-the-numbers-understanding-public-opinion-on-immigration-in-britain/>.

Migration Observatory (2011). “Mixed Migration: Policy Challenges”, Primers, 24 March 2011, <https://migrationobservatory.ox.ac.uk/resources/primers/mixed-migration-policy-challenges/>.

Migration Research Hub (2020). Migration governance, <https://migrationresearch.com/taxonomies/topics-migration-governance>.

Moore, J. (2011). *Covering Trauma - A Training Guide*, http://www.sfcg.org/programmes/rfpa/pdf/2011-Covering_Trauma_Color_EN.pdf.

Newman, N. (2020). “Executive Summary and Key Findings of the 2020 Report”, Digital News Report, <https://www.digitalnewsreport.org/survey/2020/overview-key-findings-2020/>.

- OHCHR (2014). “Human Rights and Human Trafficking” Fact Sheet No. 36, June 2014, https://www.ohchr.org/Documents/Publications/FS36_en.pdf.
- OHCHR (1966). *International Covenant on Civil and Political Rights. Adopted and opened for signature, ratification and accession by General Assembly resolution 2200A (XXI) of 16 December 1966 entry into force 23 March 1976, in accordance with Article 49,* <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/ccpr.aspx>.
- Orchard, C. (2018). “How to prepare asylum claims based on sexual identity”, Free Movement, 4 May 2018, <https://www.freemovement.org.uk/guest-post-preparing-asylum-claims-based-on-sexual-identity/>.
- Pekel, M. and M. van de Reijt (2017). “Refuge Images: Ethics in the Picture”, EJN, <https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/ethics-in-the-news/refugee-images>.
- Rahman, G. (2020). “Photo circulating of busy mosque was taken before lockdown”, Full Fact, 31 March 2020, <https://fullfact.org/online/coronavirus-mosque-shut-lockdown/>.
- Reilly, K. (2016). “Here Are All the Times Donald Trump Insulted Mexico”, *Time*, 31 August 2016, <https://time.com/4473972/donald-trump-mexico-meeting-insult/>.
- REMINDER (2020). WP5 – Labour market / public service impacts, Work Packages, <https://www.reminder-project.eu/publications/work-packages/wp5-labour-market-public-service-impacts/>.
- Reuters Institute for the Study of Journalism (2017). *Digital News Report 2017*, https://reutersinstitute.politics.ox.ac.uk/sites/default/files/Digital%20News%20Report%202017%20web_0.pdf.
- Scott, C. (2015). “5 key research findings about young online audiences from BBC World Service”, journalism.co.uk, 30 November 2015, <https://www.journalism.co.uk/news/five-key-research-findings-about-young-online-audiences-from-bbc-world-service/s2/a588021/>.
- Smith (2019). “Sonification: turning the yield curve into music”, *Financial Times*, 15 March 2019, <https://www.ft.com/content/80269930-40c3-11e9-b896-fe36ec32aece>.
- Solutions Journalism Network (2019). 22 Interview Questions to Complicate the Narrative, https://s3.amazonaws.com/sjn-static/CTN_Interview_Qs.pdf.
- Stasyuk, Y. (2020), “Refugee situation on the Belarusian-Polish border, January-March 2020”, Human Constanta, 6 April 2020, <https://humanconstantia.by/situaciya-s-bezhencami-na-belarussko-polskoj-granice-yanvar-mart-2020-g/>.
- The Guardian* (2013). “Modern-day slavery: an explainer”, 3 April 2013, <https://www.theguardian.com/global-development/2013/apr/03/modern-day-slavery-explainer>.

Tuller, D. (2004). *Reporting Diversity Manual*, Media Diversity Institute, [http://www.media-diversity.org/additional-files/documents/A%20Guides/MDI%20Reporting%20Diversity%20manual/Reporting%20Diversity%20Manual%20-%20Caucasus%20\[EN\].pdf](http://www.media-diversity.org/additional-files/documents/A%20Guides/MDI%20Reporting%20Diversity%20manual/Reporting%20Diversity%20Manual%20-%20Caucasus%20[EN].pdf).

UN (2019). United Nations Strategy and Plan of Action on Hate Speech, <https://www.un.org/en/genocideprevention/documents/UN%20Strategy%20and%20Plan%20of%20Action%20on%20Hate%20Speech%2018%20June%20SYNOPSIS.pdf>

Understanding Free Movement (2020). “What makes Poland unique?”, Impacts, <https://www.understandfreemovement.eu/article/what-makes-poland-unique/>.

UNHCR (2016). “Internally Displaced People | On the Run in Their Own Land”, Central Europe, 14 December 2016, <https://www.unhcr.org/ceu/80-enwho-we-helpinternally-displaced-people.html.html>.

UNHCR (2019). Figures at a Glance, UK, <https://www.unhcr.org/uk/figures-at-a-glance.html>.

UNODC (2017). “Annex II: The definition of trafficking in persons and the mandate for the Global Report”, Global Report on Trafficking in Persons, https://www.unodc.org/documents/data-and-analysis/glotip/Annex_II_-_Definition_and_mandate.pdf.

UNSD (1998). *Recommendations on Statistics of International Migration*, Revision 1, Department of Economic and Social Affairs, https://unstats.un.org/unsd/publication/SeriesM/SeriesM_58rev1e.pdf.

U.S. Citizenship and Immigration Services (2015). Humanitarian, Temporary Protected Status, <https://www.uscis.gov/humanitarian/temporary-protected-status>.

Warren, R. (2015). “A Syrian Refugee Shared His Struggle To Reach Europe In Real-Time On WhatsApp”, BuzzFeed, 6 December 2015, <https://www.buzzfeed.com/rossalynwarren/a-syrian-refugee-used-whatsapp-to-share-his-journey-through>.

White, A. (2018). “Introduction”, Words That Matter: A Glossary for Journalism in Cyprus, EJN, <https://ethicaljournalismnetwork.org/resources/publications/words-matter-glossary-journalism-cyprus>.

Zhvania, A. (2016). *Study in Georgia: Prospects of Internationalization of Higher Education*. PMC Research Center or Konrad Adenauer Foundation, https://think-asia.org/bitstream/handle/11540/6942/Georgia_Higher_Education.pdf?sequence=1.

Zitelmann, R. (2020). “The Corona Crisis: The Rothschilds? Bill Gates? The Search For A Scapegoat Has Begun”, *Forbes*, 23 March 2020, <https://www.forbes.com/sites/rainerzitelmann/2020/03/23/the-corona-crisis-the-rothschilds-bill-gates-the-search-for-a-scapegoat-has-begun/?sh=29b8b1242283#3af194332283>.